Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հրատարակութիւն «Կովկասեան դրամագլխոյ» Զ. Գրիգորեանցի

ՕՐԲԱԶԱՆ

ԳԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆԵՍԱՄԻ ԿՏԱՊԱՐԱՆՈՒՆՑ

ՀԱՅ ՏՂԱՅՈՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ Գ. ՍԻՄԷՈՆԵԱՆՑ

Հ Ա Տ Ո Ր Բ.

Զորրորդ տպագրութիւն

ԳԻՆՆ Է 60 Կ.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Ի ՏՊԱՐԱՆԻՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՑ

1881

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

ՍՐՈՒԱԶԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՀԱՅ ՏՂԱՅՈՑ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ

Հ Ա Տ Ո Ր Բ.

Զարտուղ տպագրութիւն

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

1881

Дозволено цензурою. Тифлисъ, 18 Октября 1880 года

Тип. И. Мартиросіанца. на Орбеліан. улицѣ д. № 5.

Իր սիրելի աշակերտուհիներին

Եր

Աշակերտներին

ՆՈՒԻՐՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ

ՆՈՐ ՈՒԽՏԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ Ա.

ԶԱՔԱՐԻԱՍ ԵՒ ԵԼԻՍԱԲԷԹ

Գլուխ. ա. 5.

ԵՐՈՎԴԷՍԻ թագաւորութեան ժամանակ, Յուդայի մի փոքրիկ քաղաքում, որ լեռների մէջ էր շինած, բնակում էր մի բարեպաշտ քահանայ Զաքարիա անունով, իր կնոջ Նէլիսաբէթի հետ միասին: Սոքա արդար էին Աստուծոյ առաջ և վարում էին առաքինի կեանք:

Սոքա անզաւակ էին և այս շատ տրտմեցնում էր նրանց, որովհետև բարի զաւակները ամէնից մեծ ուրախութիւն են առաքինի ծնողների համար: Նոքա երկար ժամանակ աղօթք էին անում Աստծուն, որ տայ իրանց որդի. բայց որովհետև երկուսն էլ արդէն ծերացան, բոլորովին կորցրին իրենց որդի ունենալու յոյսը: Նոցա ամէն ցանկութիւնները ուղղած էին մի նպատակի. այն է՝ կենդանի մնալ մինչև այն երջանիկ ժամանակը, երբ կ՚ծնի խոստացեալ Փրկիչը:

Քահանաները սովորաբար կարգով կատարում էին իրանց պաշտօնը Երուսաղէմի տաճարում: Կարգը հասաւ Զաքարիային և նա գնաց Երուսաղէմ: Երբ ժողովուրդը աղօթում էր տա-

ճարից դուրս, Զաքարիան քահանայական զգեստներով մտաւ տաճարը, ուր բացի քահանայից ոչ ոք չէր մտնում։ Այն տեղ դրեց նա խունկ խնկոց սեղանի վրան և յանկարծ տեսաւ սեղանի աջ կողմումը հրեշտակին կանգնած։ Զաքարիան խռովեցաւ և ահը պատեց նրան։ «Մի վախենար, Զաքարիա՛, ասաց հրեշտակը, քո աղօթքդ լսելի եղաւ, կինդ՝ Եղիսաբէթը կ՚ծնի որդի և դու կ՚անուանես նրան Յովհաննէս և կ՚լինի քեզ ուրախութիւն և ցնծութիւն ու շատերը կ՚ուրախանան նորա ծնունդեան վրայ։ Նա մեծ կ՚լինի Աստուծոյ առաջին։ Նա չի խմիլ գինի և ոչ օղի և կ՚լցվի Սուրբ Հոգով դեռ իր մօր յարգանդումը։ Նա իսրայէլացիներից շատերին կ՚դարձնէ դէպի իրենց Աստուածը, որի առաջը կ՚լինի նա Եղիայի հոգով և զօրութեամբ. նա կ՚դարձնէ որդուց իրանց հայրերի սիրտը, կ՚լուսաւորէ իմաստութեամբ նրանց, որոնք ընդդէմ են կենում նրան և կ՚պատրաստէ Տէրոջ համար ժողովուրդ կազմեալ (պատրաստ)։»

Այսպէս մեծ աւետիքը Զաքարիայի յոյսից վեր էր շատ։ Նա ոչ միայն բոլորովին յոյսը կտրել էր որդի ունենալու, այլ և անկարելի էր համարում այն արդէն. ուստի և ասաց հրեշտակին. «ինչպի՞ կարող եմ ես հաւատալ այս խոստմունքդ. ես ծեր եմ, նոյնպէս էլ իմ կինս»։ Հրեշտակը պատասխանեց. «ես Գաբրիէլն եմ, որ կանգնում եմ Աստուծոյ առաջին և ղրկած եմ, որ քեզ տամ աւետիքը։ Որովհետև չ՚հաւատացիր ինձ, դու համր կլինես, մինչև որ ամէնը, ինչ որ քեզ ասացի, կ՚կատարվի»։

Հրեշտակը հեռացաւ և Զաքարիան մնաց։ Ամէնքը, որոնք տաճարից դուրս էին, սպասում էին, երբ նա դուրս կ՚գայ տաճարիցը և զարմանում էին, որ նա ուշանում էր։ Վերջապէս Զաքարիան դուրս եկաւ Սրբութենից, միայն չէր կարողանում խօսիլ։ Նա չի կարողացաւ ասել սովորական օրհնութիւնն և լուռ արձակեց ժողովրդին. նա աշխատում էր նշաններով յայտնել, որ չէր կարող խօսիլ։ Այն ժամանակ աչքն հասկա-

ցան, որ նա տեսիլ է տեսիլ։ Երբ նորա պաշտօնի օրերը վերջացան, նա յետ դարձաւ տուն։ Եւ այրանից յետոյ Սղխաքէթը յղացաւ և երկար ժամանակ թագցնում էր իր ուրախութիւնը իր ազգականներից։

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԸ

Ղուկ. ա. 26.

Քրիստոսի Ծննդեան ժամանակները տարածվեցաւ ոչ միայն Հրէաների, այլ և հեթանոսների մէջ համբաւ, թէ շուտ կ՚յայտնվի մարգարէների գուշակած աշխարհի Փրկիչը։ Բայց Հրէաները լաւ մեծի մասին մարգարէութիւնները այնպէս չէին հասկանում, ինչպէս հարկն էր։ Նոքա կարծում էին, թէ Մեսիայն կ՚գայ երկրիս վրայ, պատած երկրային մեծութեան փառքով. կարծում էին, թէ իսրայէլացի աղջիկներից ամէնից երեւելին և հարուստը կ՚արժանանայ նրան մայր դառնալու։ Բայց Աստուած ուրիշ կերպի կարգեց բանը։

Գալիլեան, Իսրայէլացւոց առաջուան թագաւորութեան հիւսիսային մասը, ուր լաւ մեծի մասին հեթանոսներ էին բնակում, արհամարհելի էր համարվում Հրէից աչքումը։ Այս տակաւ նշանաւոր գաւառում կար մի փոքրիկ քաղաք Նազարէթ անունով.

Այստեղ էին բնակվում Մարիամ կուսի բարեպաշտ ծնողները՝ Յովակիմ և Աննան, որ Դաւիթ թագաւորի ցեղից էին։ Սոքա անզաւակ էին։ Ցաւախ ջերմեռանդութեամբ խնդրում էին Աստծուն, որ օրհնէ իրենց ամուսնութիւնը իրենց ցանկացած զաւակովը և այս պատճառով առատաձեռնութեամբ ողորմութիւն էին տալիս։ Շատ տարիներ աղօթեցին Աստծուն

այս մասին և մի անգամ խոստացան իրենց աղօթքումը նրան նուիրել այն երեխային, որով նա կ՚տայ իրեն օրհնութիւնը նրանց։

Ողորմած Աստուածը լսեց նոցա աղօթքը և բաշխեց բարեպաշտ ամուսիններին մի աղջիկ, որից յետ ժամանակաց հաճեցաւ ծնել աշխարհիս Փրկիչը։ Աստուծոյ շնորհած աղջկան արդար ծնողներն անուանեցին Մարիամ։

Այսպէս երևեցաւ գեղեցիկ արշալոյսը, ուստից որ պէտք է ծագէր ճշմարտութեան Արեգակը, որին որ վաղուց սպասում էին ամէն սրբերը։

Յովակիմը ջերմեռանդ շնորհակալութեամբ բերաւ Աստուծուն մեծագին զոհ։

Բարեպաշտ ծնողները կրթում էին սուրբ մանուկին ամենայն կարելի քնքշութեամբ և հոգատարութեամբ։ Իսկ երբ հասաւ իրենց խոստման ժամանակը, նուիրեցին նրան Աստուծուն տաճարում։ Այստեղ իմաստուն կարգադրութեամբն Աստուծոյ, որ կառավարում էր նորա ծնողաց սիրտը, մնաց նա, որ, ունենալով միջոց տաճարում լինելու և լսելու Աստուծոյ խօսքը, մանկութեան ժամանակից ընդունէ իր մէջ բարեպաշտ մտքեր, զգացմունքներ և ցանկութիւններ և լինի ընդունակ ծնելու Ամենասուրբ Բանին Աստուծոյ։

Իր աղջիկը Աստուն նուիրելից յետոյ, Սուրբ Յովակիմը փոխեցաւ այս կեանքից յաւիտենական կեանքը և փոքր ժամանակ նրանից յետոյ Սուրբ Աննան էլ։

Իսկ Մարիամը մնում էր Երուսաղէմի տաճարում և կրթվում էր քահանաների վերակացութեան և հոգատարութեան տակ։ Ունենալով ջերմեռանդ սէր Աստուծոյ, նա միտը դրեց իր բոլոր կեանքը նրան միայն նուիրել և խոստացաւ միշտ կոյս մնալ։ Աղքատութիւնը, մշանջենաւոր առանձնութիւնը, աղօթքը,

ընթերցմունքը և Աստուծոյ խօսքը լսելը ծնուցին նորա մէջ յոյս Աստուծոյ վրան և խորին խոնարհութիւն։

Հին աւանդութիւնը պատմում է, թէ երբ Մարիամը տաճարում տարեկան դառաւ, քահանաները հրամայեցին նրան հեռանալ տաճարից և ուրիշ աղջկերանց նման մարդու գնալ. բայց նա յեռ կացաւ այս առաջարկութիւնից, յայտնելով իր ուխտը, որ տուել էր Աստծուն, այն է՝ կոյս մնալ միշտ։ Այս յայտնութիւնը քահանաներուն խռովեցրեց, որովհետև Աստուծոյ օրէնքը ասում է, եթէ մէկը ուխտ կ՝դնէ Աստծուն պէտք է այն կատարէ։ Նոքա խորհուրդ կազմեցին և վճռեցին հարցնել Աստծուն։ Աստուած ցոյց տուեց նորա հետ պատկելու համար մի արդար մարդու՝ Յուդայի ցեղից։ Այս էր Յովսէփ։ Սա բնակում էր նոյն Նազարէթումը, ուր կենում էին Սուրբ Կուսի ծնողները։ Նա այն ժամանակը, ինչպէս աւանդութիւնն ասում է, արդէն մօտ ութսուն տարեկան էր. նա զառամեալ էր և կերակրվում էր նոյնպէս իր սեպհական աշխատանքով, թէև Մարիամի պէս Դաւիթ թագաւորի ցեղից էր։ Այս սուրբ մարդու հետ նշանվեցաւ Մարիամ Կոյսը, և այս միայն նորա համար, որ նա լինէր պահպանող սորա կուսութեան և ողջախոհութեան։

Այս Մարիամ Սուրբ Կուսին մօտ ղրկեց Աստուած իր Գաբրիէլ հրեշտակապետին։ Մարիամը, կարդալով մարգարէների գրքերը, գիտէր, որ շուտ կ՝գայ երկրիս վրայ խոստացեալ Մեսիան՝ Փրկիչը և շատ ուզում էր հասնել այն ժամանակին։ Եւ ահա միանգամ, երբ նա հանդրատ առանձնութեան մէջ պարապած էր Աստուծոյ վրայ մտածելով, յանկարծ երևեցաւ նրան Գաբրիէլը երկնային լուսով և ասաց. «ուրախացիր, բերկրեալդ, Տէրը քեզ հետ է, օրհնեալ ես դու կանանց մէջ»։

Մարիամը իր հեզութեամբ այնքան փոքր էր համարում իր արժանաւորութիւնները, որ չէր կարողանում հասկանալ

այս երկնային տեսիլի պատճառը։ Նա խռովեցաւ և սաստիկ էր մտքումը, թէ ի՞նչ է այս ողջոյնը և ի՞նչ էր կենում։

Հրեշտակը ասաց նրան. «Մի վախենար, Մարիամ, զի գտար շնորհք Աստուծոյ առաջև. զի կ՚ծնես որդի և կ՚անուանես նրան Յիսուս։ Նա կ՚լինի մեծ և կը կոչվի որդի Բարձրելոյն։ Տէր Աստուածը կ՚տայ նրան նորա հօր՝ Դաւթի աթոռը, նա կ՚թագաւորէ Յակոբի տան վրայ և նորա թագաւորութիւնը վերջ չի ունենալ։

Հեզ Կոյսը, թէև խօսեցած էր Յովսէփի հետ, բայց երբէք մտքումն էլ չունէր նորա կինը լինելու և այս պատճառով էլ ասաց. «բայց ի՞նչպէս կ՚լինի այս, ես մարդու չեմ ճանաչում (ես մարդ չունիմ)»։

Հրեշտակը պատասխանեց. «Հոգին սուրբ կ՚իջնի քո վրայ և բարձրելոյն զօրութիւնը հովանի կ՚լինի քեզ, պատճառ որ քեզնից ծնելու Մանուկը սուրբ է և կ՚կոչվի Աստուծոյ որդի։ Ահա քո ազգականդ Եղիսաբէթն էլ, որին ամէնքն էլ ամուլ էին համարում, վեցերորդ ամիսն է, որ յղի է։ Աստուծոյ համար անկարելի բան չկայ»։

Սուրբ Մարիամը, լի ջերմեռանդ շնորհակալութեամբ Աստուծուն, հեզութեամբ ասաց. «ես Աստուծոյ աղախինն եմ, թող լինի ինձ, ինչ որ ասացիր» և Հրեշտակը մեկնեցաւ նրանից ուերկինք գնաց։

ԳԼՈՒԽ Գ.

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄԸ ԵՒ ԱՐԴԱՐ ԵՂԻՍԱԲԷԹԸ

Ղուկ. ա. 39.

Ի՞նչպէս արտայայտենք այն, ինչ որ զգուս էր Սուրբ Կոյսը, երբ Հրեշտակի հեռանալիս յետոյ մէնակ մնաց։ Նորա

սիրտը լիքն էր կենդանի երկնային ուրախութեամբ։ Նա չէր կարող մենակ պարունակել իր մէջ բոլոր իր սիրտը. բայց ո՞ւմը կարող էր նա բաց անել իր սիրտը, եթէ ոչ իր պատուելի ազգական Եղիսաբէթին։ Ինքը հրեշտակը յիշեց նորա անունը և յայտնեց, որ նա էլ արժանացաւ երկնային ողորմութեան։ Երեքօրեայ լեռների միջով ճանապարհորդութեան ծանրութիւնը արդեօք չկարողացաւ լինել երիտասարդ Կուսին. նա նոյն րոպէին պատրաստուեցաւ ճանապարհ ընկնելու և շուտով գնաց Եղիսաբէթի մօտ, որ հաղորդէ նրան իր բաղդաւորութիւնը և մատակից լինի նորա ուրախութեանը։ Բարեպաշտ և բարեգործ մարդիկ, յայտնի բան է, կրկնապատկում են իրենց ուրախութիւնը, երբ բաժանում են այն միմեանց մէջ։ Նոքա ուրախանում են իրենց մերձաւորների յաջողութեան վրայ, որպէս թէ իրենց էր պատահել այն։ Եթէ ամէնքը լինէին ճշմարտու բարի մարդիկ, երկիրս կ'լինէր այն ժամանակ դրախտ։

Մարիամ, մանելով Զաքարիայի տունն, ողջունեց Եղիսաբէթին։ Երբ Եղիսաբէթը լսեց Սուրբ Մարիամի ձայնը, երեխան խաղաց նորա որովայնումը։ Եղիսաբէթը հոգւով Սրբով լցուեցաւ և բարձր աղաղակեց. «օրհնեալ ես դու կանանց մէջ. ո՞րտեղից է ինձ այս բաղդաւորութիւնը, որ իմ Տիրոջ Մայրը եկաւ ինձ մօտ։ Ինչպէս լսեցի թէ չէ քո ողջոյնդ, երեխան խաղաց որովայնումս ուրախութիւնից։ Երանի ես, որ հաւատացիր, թէ կը կատարուի ամէնը, ինչ որ քեզ Տիրոջից ասուեցաւ»։

Մարիամը շարժած մինչև սրտի խորը ասաց. «Մեծացուցանեմ անձս իմ Տիրոջս և հոգիս ցնծացաւ իմ Տէր Փրկչովս, որովհետև նա նայեցաւ իր աղախնի խոնարհութեան վրայ և այսուհետև ամէն ազգերը երանի կ'տան ինձ։ Հզօրը մեծացրեց ինձ, Սուրբ է նորա անունը. նորա ողորմութիւնը իր երկիւղածների վրայ ազգից ազգ է։ Նա յայտնեց իր բազկի զօրութիւնը. նա ջնջեց հպարտների խորհուրդները և բարձրացրեց

խոնարհներուն։ Աղքատներուն բարութեամբ լցուց և հարուստներուն ունայն թողեց։ Նա յիշեց իր ողորմութիւնները մեր հայրերին՝ Աբրահամին և նորա ազգին յաւիտեան։

Սուրբ Մարիամը մնաց Եղիսաբէթի հետ մօտ երեք ամիս և յետոյ դարձաւ իր տունը։

ԳԼՈՒԽ Գ.

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԻ ԾՆՈՒՆԴԸ

Զաքարիային և Եղիսաբէթին ծնաւ որդի, ինչպէս հրեշտակը գուշակել էր։ Այր և կին ընդունեցին երեխային, իբրև Աստուծոյ նուէր, մեծաւ շնորհակալութեամբ. բայց Եղիսաբէթն ունէր ուրիշ պատճառ էլ աւելի ուրախանալու. որովհետև այն ժամանակ ամուլ կինը անպատիւ էր համարվում ամէնի առջևը։ Նա ամբողջ կէս դար համբերում էր այս նախատինքին, որն որ այժմ առնվեցաւ նորա վրայից։ Այս և ուրիշ ամէն բաների համար շնորհակալ եղաւ նա Աստծուն, ասելով. «Ահա՛ իսկ ուրախութիւն է այս, որ զրկում է ինձ Աստուած ծերութեան ժամանակ։ Ողորմութեամբ նայեցաւ ինձ և առաւ իմ վրայից նախատինքը»։ Նորա ամէն դրացիները և ազգականները, լսելով այս ողորմութիւնը, որն որ արաւ Աստուած նրան, ուրախանում էին նորա հետ միասին։

Ութերորդ օրը, երբ հասաւ թլփատութեան անունը տալու ժամանակը, նրան կամենում էին Զաքարիա անուանել հօր պատուի համար, որովհետև ազգականները չէին իմանում, որ երեխայի անունը արդէն հրեշտակից նշանակած էր։ «Չէ՛, ասաց Եղիսաբէթը, նա պէտք է Յովհաննէս անուանվի»։ Այն ժամանակ ազգականները ասում էին նրան, որ նոցա ազգումը ոչ մի այդ անունը ունեցող մարդ չէ եղել և տալիս էին նշան Զա-

քարիային, որն որ դեռ էլի համր էր, որ նա նշանակէ երեխայի անունը։ Զաքարիան առաւ տախտակի կտոր և գրեց վրան յետագայ խօսքերը. «նորա անունը թող լինի Յովհաննէս։ Ամէնքը զարմացան այս բանի վրայ։

Այս րոպէին բացվեցաւ Զաքարիայի լեզուն, որովհետև այն ժամանակ կատարվեցաւ հրեշտակի ամէն ասածը։ Նա բարձր և հասկանալի ձայնով սկսաւ փառաւորել Աստուծուն։ Ամէն այնտեղ ներկայ գտնողներին և ամէնին, որոնք այն երկրում բնակում էին, տիրեց ահ և ամէնքը ասում էին իրենց մտքումը. «ի՞նչ կլինի այս երեխան». իսկ Զաքարիան՝ նորա հայրը, լցուած Հոգւով Սրբով, սկսաւ մարգարէանալ ասելով. «Օրհնեալ է Իսրայէլի Աստուածը. Նա այց եկաւ մեզ և արաւ փրկութիւն, իր ծառայի Դաւթի տնից, ինչպէս գուշակեցին այն սրբերը։ Նա կ՚փրկէ մեզ ամէն մեզ ատողների ձեռքից։ Նա ողորմեց մեր հայրերին և յիշեց իր ուխտը՝ իր երդմամբ տուած խոստմունքը մեր հօրը՝ Աբրահամին։ Մենք, փրկուածներս մեր թշնամիներից, կ՚պաշտենք նրան առանց երկիւղի, սրբութեամբ հայր Աբրահամի։ Մենք, փրկուածներս մեր թշնամիներից, կ՚պաշտպանենք նրան առանց երկիւղի, սրբութեամբ և արդարութեամբ բոլոր մեր կեանքի ժամանակ։ Իսկ դու, երեխայ, կ՚լինես Ամենաբարձրեալի մարգարէն, դու կերթաս Տիրոջ առաջին, նորա ճանապարհը պատրաստելու, կ՚խրատես մարդոց, որ փնտռեն մեզից թողութիւնաւ իրենց փրկութիւնը, որ պարգևեց մեզ իր ողորմածութեամբ մեր Աստուածը, որն որ ղրկեց մեզ երկնից Արեգակը, որ լուսաւորէ խաւարի և մահուան ստուերի մէջ նստողներին և ուղղէ մեր սրտերը դէպի խաղաղութեան ճանապարհը։

Երեխայն աճում էր և զօրանում Հոգւով. նա բնակում էր անապատումը, մինչև մարդոց յայտնվելու օրը։

ԳԼՈՒԽ Ե.

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Ղուկ. բ. 1. Մատ. ա. 18.

Յովսէփ, Մարիամ Կուսի այրը, չէր իմանում զեռ նրան եղած աւետիքը. բայց Աստուած յայտնեց նրան այս գաղտնիքը։ Երևեցաւ նրան հրեշտակը և ասաց. «Յովսէ՛փ, որդի Դաւթի, մի՛ վախենար առնել Մարիամին քեզ մօտ. նա կ՝լինի Աստուծոյ Որդւոյ մայրը, նրանից ծնած երեխային կ՝անուանես դու Յիսուս (այս անունը նշանակում է փրկիչ), որովհետև նա կ՝փրկէ իր ժողովուրդը մեղքից»։ Յովսէփը, երբ զարթեցաւ, իսկոյն կատարեց հրեշտակի հրամանը. նա տարաւ Մարիամին առաւ իր տուն և նոքա բնակվում էին նազարէթումը խաղաղութեամբ, լինքը երախտագիտութեամբ առ Աստուած և վարում էին անարատ կեանք։

Այս ժամանակ Հռովմայեցւոց Օգոստոս կայսրից հրաման եկաւ Հրէաստան, աշխարհագիր անելու ամեն նոքա հպատակներուն։ Ամենքը պէտք է գրել տային իրենց անունը իրենց հայրենիքում։ Յովսէփ և Մարիամ, Դաւիթ թագաւորի ցեղից լինելով, պէտք է գրէին իրենց անունը Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում, որ Դաւիթի հայրենիքն էր։ Այսպէս կատարվեցաւ հին մարգարէութիւններից մէկը, որ գուշակում էր, թէ Քրիստոս կ՝ծնի Բեթղեհէմումը։ Նոքա գնացին այնտեղ։

Նոքա հասան Բեթղեհէմ երեկոյեան։ Այստեղ շատ մեծ բազմութիւն ժողովեցաւ գրվելու համար. ամեն տները լիքն էին եկած մարդիկներով։ Յովսէփը 'ի զուր փնտռեց օթևան, որ գիշերն այնտեղ անց կացնէ. նրանց ոչ մի տուն չէին ներս թողնում. առաջինը՝ որ ամեն տները բռնած էին և երկրորդը՝ որ նոքա աղքատ էին։ Գիշերը վրայ հասաւ. նոքա դադրած էին

ճանապարհորդութիւնից և ոչ մի ապաստանի տեղ չէին գտնում։ Ի՞նչպիսի խղճալի դրութիւն է։ Քաղաքի ծայրումը կար մի այր (ծակ քարափ), ուր հովիւները վոտ եղանակներին և գիշերները հաւաքում էին իրենց խաշները։ Այս իսկ այրումը ծնաւ Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ որդին։ Սուրբ Մարիամը պատատեց նրան խանձարուրով և դրաւ մսրի մէջ, որովհետև ուրիշ տեղ չկար։

Այսպէս Աստուծոյ Որդին իր աշխարհի վրայ երևելիս պատահեցաւ աղքատութեան և անպատուութեան։ Նա ծնաւ այրումը, նորա հագուստի համար ոչինչ չկար բացի աղքատ խանձարուրից, նորա հանգստութեան համար ոչինչ բացի խոտից և յարդից, որ մսրումը փռած էին։ Որչափ հեռու է երկինքը երկրից այնքան բարձր են Աստուծոյ խորհուրդները մարդկային խորհուրդներից։ Ի՞նչ են փնտռում մարդիկ այս աշխարհումն՝ պատիւ, հարստութիւն. Յիսուս Քրիստոս իր աշխարհ գալու ժամանակը կամեցաւ ցոյց տալ մեզ խոնարհութեան և հեզութեան օրինակ։ Դուք, որոնք ցանկանում էք հարստութիւն, դուք որոնք լաց էք լինում ձեր աղքատութիւնը, միտերդ բերէք, որ Յիսուս Քրիստոս ծնաւ աղքատ երեխայ, որ նորա ընտրած երկրային ծնողները՝ Յովսէփ և Մարիամ սուրբ մարդիկը՝ էին աղքատ։ Մտածեցէք այս բանիս վրայ և մխիթարվեցէք։ Կան բարութիւններ, որոնք շատ աւելի լաւ են քան թէ հարստութիւնը։

ԳԼՈՒԽ Զ.

ԲԵԹՂԵՀԷՄԻ ՀՈՎԻՒՆԵՐԸ

Ղուկ. բ. 8.

Այն գիշեր, երբ ծնաւ Փրկիչը, բոլոր Բեթղեհէմը ընկղմած էր խոր քնի մէջ. չէին քնած միայն քանի մի հովիւներ,

որոնք գաշտումը պահապան էին իրենց խաշներին։ Սոքա բարի մարդիկ էին, հոգւով հեզ և խաղաղ ինչպէս իրենց գառները։

Այն գիշերն հովիւները յանկարծ տեսան իրենց առաջև հրեշտակին երկնային լուսով պատած։ Նոքա վախեցան, բայց հրեշտակը ասաց նրանց. «մի՛ վախենաք, ես աւետում եմ ձեզ մեծ ուրախութիւն, որ ամեն մարդոց համար կ՚լինի։ Այժմ Դաւթի քաղաքում ծնաւ Քրիստոս Փրկիչը։ Դուք կ՚ճանաչէք նրան, գտնելով երեխային խանձարուրով փաթաթած և մսրումը պառկած»։

Սրանից յետո հովիւները տեսան աւետարեր հրեշտակի հետ միասին անթիւ հրեշտակներ, որոնք փառաբանում էին Աստծուն յետագայ սուրբ երգովը. «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն»։

«Գնանք Բեթղեհէմ, ասում էին հովիւներն ուրախութեամբ։ Գնանք, կ՚տեսնենք ինքներս, ինչ որ Տէրը մեզ յայտնեց»։ Նոքա մտան իրենց ծանօթ այրը, այնտեղ գտան Յովսէփին և Մարիամին և տեսան Աստուածային մանուկին, որ պառկած էր մսրի մէջ։ Նոքա մօտեցան նրան և լուռ նայում էին յարգութեամբ։

Մարիամը և Յովսէփը, որոնք կարծում էին, թէ Մանկան ծնունդը բացի իրենցից ոչ ոքի յայտնի չէ, զարմացան, երբ տեսան, որ այն յայտնած էր, արդէն իրենց մօտ մտած հովիւները պատմեցին իրենց եկեալ երևոյթը և զուրա եկան այրից, փառաւորելով Աստծուն և գոհանալով նրանից տեսածների և լսածների համար և պատմում էին ամեն իրենց ծանօթներին։ Իսկ Մարիամը պահում էր իր սրտումն այս ամենը։

ԳԼՈՒԽ Է.

ՅԻՍՈՒՍԻ ՏԱՃԱՐ ՏԱՆՎԻԼԸ

Ղուկ. բ. 22.

Ութ օրից կատարվեցաւ. Մանկան վրայ թլփատութեան խորհուրդը և նա տուաց. Յիսուս անունը, որ նրան տուել էր հրեշտակը դեռ ծնունդից առաջ։

Քառասուն օրից Մովսէսի օրէնքով ծնողները պէտք է տանէին նորածին երեխային, եթէ արու էր, Երուսաղէմի տաճարը և իբրև անդրանիկ նուիրէին Աստուն և յետոյ յետ դնէին զոհով։ Հարուստները զոհ էին բերում գառ, իսկ աղքատները մի զոյգ տատրակ կամ աղաւնի։ Այս անդրանիկներուն Աստուծ նուիրելու օրէնքը դրել էր Մովսէս այն դիտերի յիշատակի համար, երբ Խորտէրացիները ապատվեցան Եգիպտացոց ծառայութենից, Եգիպտացոց բոլոր անդրանիկների սպանմամբը։

Այս օրէնքը կատարելու համար, Սուրբ մայրը գնաց իր երեխայով Երուսաղէմի տաճարը։ Բայց Մարիամ Հոյսը թէև Դաւիթ և Սաղոմոն՝ մեծ թագաւորների ցեղից էր, չկարողացաւ բերել հարուստների զոհը. նա տարաւ մի զոյգ աղաւնի։ Զամաչելով իր աղքատութիւնից, նա տարաւ ներկայացրեց իր հոգ նուէրը։

Մարիամը մեզ է հնգութեան ամենազեղեցիկ օրինակը։ Շատերին աղքատութիւնը չէր երևիլ այնպէս ծանր, եթէ հարստութիւնը արդեօք չլինէր նրան համբերելու։ Հարստութիւնն ինքն իրեն առաջ՝ մի արժանաւորութիւն չէ, այնպէս էլ աղքատութիւնը յանցանք չէ։ Միայն առաքինութիւնները կարող են բարձրացնել մարդուն և մեղքերը ցածացնել։

ԳԼՈՒԽ Ը.

ՍԻՄԷՈՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼԸ ԵՒ ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐԷՈՒՀԻՆ

Գոկ. բ. 25.

Այս ժամանակներս բնակում էր Երուսաղէմումը մի բարեպաշտ ծերունի, որն որ ապասում էր Իսրայէլի ուրախութեան՝ Փրկչի գալստեանը. նրան խոստացած էր Հոգին Սուրբից, որ չի մեռնիլ, առանց Մեսիային տեսնելու։ Այս ծերունիի անունը Սիմէոն էր։ Այն ժամանակ, երբ մանուկ Յիսուսին բերին տաճար, Սիմէոնն էլ Հոգին Սուրբի ազդմամբը գնաց այնտեղ։

Սիմէոն տաճար մտնելով՝ տեսաւ Յիսուս Մանկանը, ճանաչեց նրան, որ Փրկիչն էր և իր ձեռին վեր առնելով բարեբանեց Աստծուն և սրտանց ուրախացած ասաց. «այժմ արձակիր քո ծառայիդ՝ խաղաղութեամբ, Տէր, ինչպէս դու ասացիր. որովհետև իմ աչքերս տեսան փրկութիւնը, որ դու պատրաստել ես ամեն ազգերին։ Նա տեսայ Լոյսը, որն որ կը լուսաւորէ հեթանոսներուն։ Նա տեսայ քո ազգիդ՝ Իսրայէլի փառքը»։

Յովսէփ և Մարիամ զարմանում էին ամեն լսածների վրայ. Սիմէոնը օրհնեց նրանց և ասաց Մարիամին. «Նա շատերին կ'լինի պատճառ անկման և կանգնման։ Նա կ'լինի առարկայ շատ հակառակութեանց։ Քո սիրտդ էլ կ'խոցվի ու շատ սրտերի խորհուրդները նրանով կ'յայտնվին»։

Այնուհետև էր նմանապէս մի պառաւ այրի կին, Աննա անունով։ Նա արդէն ութսուն ու չորս տարեկան էր։ Սա իր մարդու հետ բնակեցաւ միայն եօթը տարի ու դեռ երիտասարդ՝ այրեցաւ։ Մարդու մահից յետո բոլոր իր կեանքը անց էր կացրել սա պահոմ, աղօթքով ու բարեգործութիւններով և միշտ ծառայում էր տաճարում։ Նա մարգարէուհի էր։ Երբ

Յիսուս Մանկանը տեսաւ, ճանաչեց նրան, որ ապագայ Փրկիչն է և առում էր այն ամենին, որոնք ապառում էին փրկութեան Երուսաղէմում:

ԳԼՈՒԽ Թ.

ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

Մատ. բ. 1.

Մի քանի բարեպաշտ մարդոց յայտնի էր Փրկչի Քրիստոսի ծնունդը, իսկ երկրային իշխանները, իմաստունները և քահանայապետները չէին իմանում ոչինչ այս մեծ դիպուածի վրայ:

Արևելքի հեռու երկիրներից եկան Երուսաղէմ երեք մարդիկ. սոքա էին մոգեր, այսինքն՝ իմաստուններ, որոնք պարապում էին զանազան գիտութիւններով և փնտռում էին բնութեան գաղտնիքները: Նոցա սովոր հագուստը, պատուելի կերպարանքը և մանաւանդ Մոգ անունը, իրենց վրայ դարձրին ամենի ուշադրութիւնը, որովհետև այն ժամանակները մեծ կարծիք ունէին արևելեան լուսաւորեալ երկիրների վրայ. բայց նոցա գալուստը ամենեցուն զարմանք պատճառեց: Երբ Երուսաղէմ հասան՝ նոցա առաջին. հարցմունքն էր. «ո՞ւր է Հրէից նորածին թագաւորը: Մենք տեսանք արևելքում նորա աստղը և եկանք երկրպագութիւն տալ նրան»: Այս համբաւը տարածվեցաւ բոլոր քաղաքի մէջ. Հերովդէսը երբ այն լսեց, խռովեցաւ, նոյնպէս էլ բոլոր Երուսաղէմը: Իշխանաւէր օտարականը վախում էր, որ իր գահից չգլորվի:

Հերովդէսը կանչեց իր մօտ քահանաներին և գիտուններին և հարցրեց նրանց. «ո՞ւր պէտք է ծնի Քրիստոս»: — Յուդայի Բեթղեհեմումը», պատասխանեցին նոքա, որովհետև Միքիայ Մարգարէն գրում է յետագայն. «և դու Բեթղեհէմ Յու-

գայլ երկիր, ոչինչ կրտեր չես Ցուզայ իշխանների մէջ, որովհետև քեզնից կ՝ծագի իշխանը, որն որ կ՝կառավարէ իմ ազգիս» *): Այն ժամանակ Հերովդէսը թագուն իր մօտ կանչեց Մոգերուն, նա վարվեցաւ նոցա հետ քաղցրութեամբ և հարցրեց աստղի երևելու ժամանակը: Նոքա պարզմտութեամբ պատմեցին նրան ամենը: Հերովդէս զրկեց նրանց Բեթղեհէմ, ասելով. «գնացէք. ստուգեցէք Մանկան մասին և երբ կ՝գտնէք նրան, իմաց արէք ինձ, որ ես էլ կարողանամ գալ երկրպագել նրան»:

Մոգերը գնացին Բեթղեհէմ, որ Երուսաղէմից միայն երկու ժամու ճանապարհ էր: Երբ Երուսաղէմից դուրս եկան, նրանց վերստին երևեցաւ աստղն ահեռաբեր. նա գնում էր նոցա առջևովը, առաջնորդելով նրանց և կանգնեցաւ այն տան գլխին, ուր էր Աստուածամայրն իր յաւիտենական Մանկան հետ:

Տուն որ մտան, տեսան Մարիամին իր երեխայով: Աղքատութիւնը, որ պատում էր նրանց, չխռովեց իմաստուններուն. նոքա գիտէին թէ ինչ է մարդուս իսկ արժանաւորութիւնը: Մաքուր, սուրբ անմեղութիւնը, մեծ ազնուութիւնը հոգւոյ, խոնարհութիւնը, հեզութիւնը, անձարնի բարութիւնը, որոնք երևում էին Սուրբ Կուսի երեսի վրայ, Մանկան գեղեցկութիւնն, այս ամենը յայտնի ցոյց էին տալիս բանը իսկութեամբ: Նոքա ընկան Աստուածային Մանկան առջևը, երկրպագութիւն տուին նրան և բաց անելով իրենց գանձն ընծայ բերին նրան՝ ոսկի, կնդրուկ և զմուռս:

Երեի նոցա հայրենիքումը սովորութիւն կար նորածիններին, մանաւանդ թագաւորական ցեղից եղողներին, ընծաներ տանել, միայն այս ընծաներն ուրիշ խորհրդաւոր նշանակութիւն ունին: Ոսկին՝ թագաւորների հարկ էր, կնդրուկը կամ

*) Մատ. Ե. 2.

խունկը՝ բուրում էին աստուածապաշտութեան ժամանակ, ոմանք՝ մեռոով օծում էին մեռածների մարմինները։ Ուրեմն նոքա բերին Յիսուս Քրիստոսին ոսկի՝ իբրև թագաւորին, կնդրուկ՝ իբրև Աստծուն և զմուռսը՝ իբրև մարդու։

Մոգերը կամենում էին դառնալ Հերովդէսի մօտ ուեւթքով, միայն հրեշտակը երազում նրանց արգելից այն և նոքա ուրիշ ճանապարհով գնացին իւրեանց հայրենիք։

ԳԼՈՒԽ Ժ.

ՓԱԽՈՒՍՏԸ ԵԳԻՊՏՈՍ

Մատ. բ. 13.

Հերովդէսը տեսնելով, որ մոգերը յետ չեն դառնում և վերջապէս իմանալով, որ նոքա ուրիշ ճանապարհով գնացել են, շարացաւ շատ և ուրեց չար, ոմարդի հրաման՝ կոտորել Բեթղէհեմի և նորա շրջականների մէջ ամէն երկու տարեկան և աւելի փոքր երեխանց, կարծելով, որ սոցա հետ կապանվի և Աստուածային Մանուկն էլ։ Բայց դեռ այս խիստ հրամանի հրատարակվելից առաջ, Աստուծոյ հրեշտակը երևեցաւ երազում Յովսէփին և ասաց նրան, «վեր կաց, առ Մանկանը և նորա մօրն ու փախիր Եգիպտոս և մնա այն տեղ մինչև երբ ես կ՚ասեմ. որովհետև Հերովդէսը փնտռում է Մանկան, որ ապանէ նրան»։

Յովսէփ երբ զարթեցաւ, նոյն րոպէին կատարեց հրեշտակի հրամանը, առաւ Մանկանը՝ Յիսուսին և նորա մօրն ու գիշերով նոցա հետ միասին հեռացաւ Եգիպտոս, ուր մնաց մինչև Հերովդէսի մահը։ Այ-պէս կատարվեցաւ մարգարէութիւնը, որ ասում է, «Եգիպտոսից կ՚կանչեմ իմ որդուս» (*)։

(*) Ովս. բ. 1.

Իսկ այս միջոցին Բեթղեհեմ և նորա շրջականները եկան Հերովդէսի ղրկած ապանիշները։ Սոքա յարիշտակում էին մոյրերի ձեռքերից անմեղ երեխաներուն և առանց խնայելու կոտորում էին նրանց։ Այն ժամանակ կատարվեցաւ Երեմիայի մարգարէութիւնը, որ ասում է. «Ձայն լսելի եղաւ Հռամայի մէջ, լաց, ողբ, և գուժումն։ Հռաքէլը լաց էր լինում իր որդւոց վրայ և չէր ուզում մխիթարվել, որովհետև նոքա չկային» (*)։

Հերովդէսը այս չարագործութիւնից յետո երկար չապրեցաւ։ Նորա մահից յետոյ հրեշտակն էլի երևեցաւ երազում Յովսէփին և ասաց. «Դարձիր Իսրայէլի երկիրը. նոքա, որոնք ցանկանում էին Մանկան մահը, մեռան»։ Յովսէփ, միտընդենում էր Մանկան և նորա մօր հետ միասին, դարձաւ Յուդայի երկիրը. բայց լսելով որ Յուդայի երկրում թագաւորում է Արքեղայոս, իր հօրը՝ Հերովդէսի տեղ, վախեցաւ այն տեղ մնալու և տեղափոխվեցաւ Գալիլիա, Նազարէթ քաղաքը, ուր որ առաջ բնակում էր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ ՏԱՃԱՐՈՒՄ

Ղուկ. բ. 21.

Յովսէփը և Մարիամը ամեն տարի զատկի տօնին գնում էին Երուսաղէմ։ Երբ Աստուածամարդ Յիսուսը տասներկու տարեկան դառաւ, նոքա նրան էլ առին իրանց հետ։ Երբ տօնի օրերը անցան, նոքա դարձան տուն, իսկ Յիսուս մնաց Երուսաղէմում։ Յովսէփ և Մարիամ նրան չգտնելով ուղեկիցների մօտ, շատ խռովեցան և դարձան Երուսաղէմ։ Այնտեղ երեք օր փնտ-

(*) Երեմ. Լ.Ա. 15.

տրելից յետո, վերջապէս գտան տաճարում նստած ուսուցչից մէջ, որոնց հարցնում էր և լսում նոցա պատասխանները մեծ ուշադրութեամբ։ Ամէն ներկայ գտնուողները շատ զարմանում էին նորա իմաստութեան և պատասխանների վրայ։ Նրան տեսնելով սուրբ Մայրը ասաց. «Որդեակ, այս ինչ բերիր դու մեր գլխին։ Մենք շատ անհանգստացանք և փնտռում էին քեզ։— Ինչու էիք փնտռում ինձ, պատասխանեց Աստուածային Մանուկը, մի՞թէ դուք չգիտէիք, որ ես պէտք է իմ Հօրս տանը լինէի»։ Այն ժամանակ ոչ ոք չհասկացաւ այս խօսքերը։ Նա դարձաւ առաջ Յոսէփի և Մարիամի հետ, բնակում էր նոցա հետ նազարէթումը և ամէն բանում հնազանդ էր նրանց։ Նորա մայրն իր սրտում պահում էր ամէն նորա խօսքերը։ Իսկ Յիսուս, ինչպէս պատմում է Սուրբ Ղուկաս Աւետարանիչը, զարգանում էր իմաստութեամբ և հասակով և շնորհքով Աստուծոյ և մարդոց առաջին (*)։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՅՈՎՀԱՆՆԷՍԸ ՔԱՐՈԶՈՒՄ Է ՅՈՐԴԱՆԱՆԻ ԱՆԱՊԱՏՈՒՄ

Մատ. գ. 1. Մարկ. ա. Ղուկ. գ. 1. Յովհ. ա. 6.

Հասնում էր ժամանակը, երբ Յիսուս Քրիստոս պէտք է յայտնի կատարէր փրկութեան մեծ գործը։ Յովհաննէս, ինչպէս հրեշտակը առաջուց յայտնեց, պէտք է պատրաստէր մարդոց սրտերը Փրկչին ընդունելու։

Յովհաննէսը Կարապետը անց կացրեց իր երիտասարդութեան օրերը բոլորովին առանձնութեան մէջ, հեռու զուրկ աշխարհից. նա բնակում էր անապատում և պատրաստվում էր խիստ կեանքով և ապօթքով իր մեծ կոչման համար։

(*) Ղուկ. բ. 1.

Այն ժամանակ Հրէից ազգի բարքը շատ փչացած էր. հարկաւոր էր խիստ խրատատու, որ ուղղէր նոցա կոշտացած սրտերը։ Սուրբ Յովհաննէսը յայտնվեցաւ իբրև խիստ ուսուցիչ. նորա մէջ ամէն բան արտաքոյ կարգի էր և իսկ նորա տեսիլն էլ ցոյց էր տալիս նորա մեծ բարեխառնութիւնը։ Նորա շորն էր կոպիտ ուղտի բրդից, գօտին էր կաշի, կերակուրը վայրի մեղը և մարախ։ Նա միայն ջուր էր խմում և երբէք բերանը չէր դնում ոչ գինի և ոչ մի ուրիշ թունդ խմիչք։ Անապատ լերան այրն էր նորա բնակարանը։

Յովհաննէսը յայտնվեցաւ իբրև քարոզիչ Յորդանանի շրջականներում։ «Ապաշխարեցէք, ասում էր նա, մօտացել է երկնային արքայութիւնը»։ Ապաշխարողներուն և նոր աստուածահաճոյ կեանք վարողներուն մկրտում էր նա Յորդանանի ջրում։ Այս արտաքին լուացումը յայտնում էր ապաշխարողների իրանց հոգին մեղքերից սրբելու ցանկութիւնը։

«Ապաշխարութեան արժանի պտուղ բերէք, ասում էր Յովհաննէս։—Ի՞նչ պէտք է անենք, հարցնում էին մարդիկ, որոնք ժողովել էին Յովհաննէսի քարոզութիւնը լսելու։—Ով ունի երկու շոր, պատասխանեց Յովհաննէս, նա պէտք է մէկը ոչ չունեցողին. ով որ ունի կերակուր շատ, պէտք է մասը հանէ նրանից չունեցողին։—Մենք ի՞նչ պէտք է անենք, հարցնում էին մաքսաւորները։—Մի՛ պահանջէք ժողովրդից օրէնքով հրամայածից աւելի, պատասխանեց Յովհաննէս։—Ի՞նչ պէտք է անենք, հարցնում էին զինուորները։—Ոչ ոքին մի՛ զրկէք և ոչ ոքին մի՛ զրպարտէք, այլ բաւականացէք ձեր թոշակովը, պատասխանեց Յովհաննէս։ Այս պատասխաններից ամէն մարդ կարող էր եզրակացնել, որ ապաշխարութեան արժանի պտուղն է ամէն մարդու իր պարտաւորութիւնները ճիշդ կատարելը և իր մերձաւորներին բարի կամենալը։

Յովհաննէսի մօտ եկան Փարիսեցիք և Սադուկեցիք էլ

Փարիսեցիքն էին երեսպաշտ մարդիկ, որոնք աւելի հոգում էին արտաքին բարեպաշտութեան վրայ, քան թէ արտի յատակութեան։

Աստուծոյ պատուիրանները կատարելու տեղ, նոքա աւելի սուրբ էին համարում մի քանի արտաքին ծէսերի կատարումն, որոնք հիմնված էին մարդկային աւանդութեանց վրայ։ Ընդհակառակը Սադուկեցիք ոչնչին չէին հաւատում բացի Մովսէսի օրինաց և մարգարէների գրածներից և Սուրբ գիրքը լաւ չըհասկանալով, չէին ընդունում մեռելոց յարութիւնը և հոգւոց գոհութիւնը։ Փարիսեցիք կատարեալ արբութիւն համարում էին ծէսերի արտաքին կատարումն. նոքա ամենևին չէին մտածում ոչ ապաշխարութեան և ոչ իրանց սրտերը ուղղելու վրայ, նոքա կարծում էին, թէ մեծ նահապետ Աբրահամի որդիքն անպատճառ պէտք է ժառանգեն երկնից արքայութիւն։ Իսկ Սադուկեցիք, որ արքայութիւնն և հաւատը համարում էին միջոց ժամանակաւոր օգտի համար և որոնք կարծում էին, թէ մահից յետո ոչինչ բանի պէտք չէ սպասել, կամենում էին միայն Յովհաննէսից իմանալ, արդեօք չի՞ ասիլ նա մի բան իրանց օգտի համար կամ իրանց թշնամիների՝ Փարիսեցիների հակառակ։

Յովհաննէս, երբ տեսաւ, ասաղակեց. «Արէ՛ք պտուղ արժանի ապաշխարութեան»։

—Մի՛ ասէք, շարունակում էր Յովհաննէս. «թէ մենք Աբրահամի զաւակներն ենք։ Աստուած այս քարերից էլ կարող է շինել Աբրահամի որդիք։ Տեսէ՛ք, կայծնը դրած է ծառի արմատին. ծառը, որ չէ բերում բարի պտուղ, կ՚կտրվի և կ՚գցվի կրակը։

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԿԱՅՈՒԹԻՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՎՐԱՅ

Մատ. գ. 11. Մարկ. ա. 7. Ղուկ. գ. 16. Յովհ. ա. 26.

Հրէից ազգի մէջ տարածված էր համբաւ, թէ Եղիա մարգարէն կամ մի ուրիշը մեծ մարգարէներից կ՝յայտնվի երկրիս երեսին, որ մարդոց Մեսիային ընդունելու պատրաստէ։ Այս պատճառաւ Երուսաղէմից զրկվեցան Յովհաննէսի մօտ քահանաներ և Ղեւտացիներ տեղեկանալու համար, թէ ո՞վ է նա։ Երբ նրան հարցրին, նա չէ՞ արդեօք Քրիստոսը, պատասխանեց նա. չէ՛. ես Քրիստոսը չեմ»—Եղիան չե՞ս դու արդեօք կամ մարգարէներից մէկը, հարցրին նրան։—Չէ՛, պատասխանեց Յովհաննէս։ Ուրեմն ո՞վ ես դու, ասացին եկած քահանաներն և Ղեւտացիները, մենք պէտք է զեկուցանենք քո մասին մեր մեծերին։

Ես նա եմ, որի վրայ Սուրբ Նայի Մարգարէն ասաց. «Խաստղի ձայնը անապատումն է. պատրաստեցէ՛ք Աստուծոյ ճանապարհը (Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զշաւիղս Տեառն). պատասխանեց Յովհաննէս։—Ուրեմն ինչո՞ւ ես մկրտում դու, եթէ ոչ Քրիստոսն ես, ոչ Եղիան և ոչ էլ մարգարէ, հարցրեցին քահանաները։—Յովհաննէս պատասխանեց. ես մկրտում եմ ջրով, բայց ձեր մէջն է այն, որին դուք չէք ճանաչում և որին ես արժանի չեմ կօշիկն էլ քակելը։ Նա կ՝գայ ինձանից յետոյ, թէև ինձնից առաջ էլ էր նա։ Նա կ՝մկրտէ ձեզ Հոգւով Սրբով և կրակով։ Հնձանոցը ձեռքին ունէ նա. նա կ՝ սրբէ կալը, ցորենը կ՝ժողովէ շտեմարանի մէջ, իսկ յարդը կ՝այրէ անշէջ կրակով։

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՄԿՐՏՎՈՒՄ Է ՅՈՎՀԱՆՆԷՍԻՑ

Մատ. գ, 13. Մարկ. ա. 9. Ղուկ. գ. 21. Յովհ. ա, 29.

Յովհաննէսին, որն որ հաւատի էր Քրիստոսի գալստեան, Աստուած ինքը յայտնեց թէ Նա, որի վրայ կ՚տեսնէ Հոգւոյ Սրբոյ իջնելը. կ՚մկրտէ հաւատացեալներուն Հոգւով Սրբով։ Երբ Յովհաննէս մկրտում էր ժողովրդին, Յիսուս Քրիստոսը եկաւ Նազարէթից, որ նմանապէս ընդունէ նրանից մկրտութիւն։ Յովհաննէսը Նրան տեսնելիս աղաղակեց. «Ահա Աստուծոյ Գառն։ Եւ երբ Քրիստոսը ժողովրդի բազմութեան հետ միասին կամենում էր մտնել գետը, որ մկրտվի, Յովհաննէսը լի յարգութեամբ արգելեց Նրան ասելով. «Ինձ պէտք է քեզնից մկրտվել և Դու ինձ մօտ ես գալիս։

Բայց Տէրը պատասխանեց և ասաց Նրան. «Թող տուր այժմ, որովհետև այսպէս կ՚վայելէ մեզ, որ արդարութիւնը կատարենք»։ Յովհաննէս չընդիմացաւ Նրան ասելի. Յիսուս Քրիստոսը մկրտվեցաւ Նրանից Յորդանանում. իսկ երբ Նա դուրս էր գալիս ջրից, երկինքը Նրա վերայ բացվեցաւ և Սուրբ Հոգին աղաւնիի կերպով իջաւ Նրա վրայ։ Մի և նոյն ժամանակ լսվեցաւ երկնքից ձայն. «Դա է որդի իմ սիրելի, ընդ որ ես հաճեցայ»։

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՓՈՐՁՎՈՒՄ Է ՍԱՏԱՆԱՅԻՑ

Մատ. դ. 1. Մարկ. ա. 12. Ղուկ. դ. 1.

Յիսուս Քրիստոս գոլով Աստուծոյ Որդի մի և նոյն ժամանակ մարդ էլ էր, որովհետև ընդունեց նա ամէն մարդկային կրքերն էլ բացի մեղքից. Նա իր օրինակով կամենում էր ցոյց

տալ մարդոց, ինչպէս պէտք է յաղթել փորձութեանց և գրապել բնութեան կրքերը: Փորձութեանց մէջ ելևեւմտ է մարդուս առաքինութիւնը: Ադամը փորձվեցաւ դրախտում, նոյպէս էլ Յիսուս Քրիստոս իր երկրիս վերայ լինելու ժամանակ փորձվեցաւ անապատում: Ադամը, պատած ամեն բարութիւններով, չընդդիմացաւ փորձութեան. Յիսուս Քրիստոս, սարսափելի անապատի մէջ ամեն բանի պակասութեան տանելով. յաղթեց փորձողին: Առաջին մարդու պատմութեանում մենք տեսանք, ինչպէս հեշտ կարող է մարդս գայթակղվիլ. Յիսուսի Քրիստոսի սուրբ աւետարանի մէջ կ'տեսնենք, ինչպէս մարդ պէտք է ընդդէմ կենայ փորձութեան:

Յովհաննէսից մկրտութիւն ընդունելից յետո, Յիսուս Քրիստոսը հեռացաւ անապատը՝ ուր պահում էր քառասուն օր և վերջապէս զգաց քաղց:

Այն ժամանակ շար գալը՝ փորձիչը ասաց Նրան. «եթէ դու Աստուծոյ Որդին ես, հրամայիր այս քարերին, որ հաց դառնան»: Բայց Տէրը պատասխանեց Նրան Սուրբ գրոց խօսքերով, թէ «Ոչ միայն հացով ապրում է մարդ, այլ ամեն խօսքով, որ դուրս է գալիս Աստուծոյ բերանից (*)

Այն ժամանակ սատանան կանգնեցրեց Նրան Երուսաղէմի տաճարի աշտարակի վերայ և ասաց. «Եթէ դու Աստուծոյ որդին ես, ընկի՛ր այս տեղից ներքև, որովհետև գրած է, թէ իր հրեշտակներին հրամայել է պահել քեզ, որ ոտք քարին չխփես (**)»: Յիսուս Քրիստոս պատասխանեց. «գրած է նմանապէս մի փորձիր քո Տիրոջդ Աստծուն, այսինքն քո Աստուծոյ կարողութիւնը փորձելու դիտաւորութեամբ ինքդ քո անձդ վտանգների մէջ մի՛ գցիր: Վերջապէս սատանան տարաւ Նրան ամենից բարձր լեռան գլուխը և այնտեղից ցոյց տալով երկրային թագաւորու-

(*) Երկր. Օրինաց. Գ.Լ. Ը. 3.
(**) Սաղմ. Դ. 11. 12.

թեանց մեծութիւնները, ասաց. «Այս ամենը քեզ կ՚տամ, թէ ինձ երկրպագութիւն տաս»։ Տէրը պատասխանեց. «Կորի՛ր, հեռացի՛ր ինձանից, սատանայ։ Պատուիրանումը գրած է՝ Տէր Աստուծուդ միայն երկրպագութիւն տուր, և Նրան միայն ծառայի՛ր (*)։ Այն ժամանակ սատանան թողեց Նրան և հրեշտակներն եկան և սկսան պաշտել Նրան։ Նոր մենք քշում ենք մեզնից շար գևերուն, նոցա տեղը բռնում են հրեշտակները։ Ցաղթութիւնը փորձութեան դէմ միշտ մեր հոգուն տալիս է երկնային ուրախութիւն։

Այս պատմութեանս ժամանակ չեմ կարող դէպի ձեզ չդառնալ, սիրելի երեխայք։ Դուք, որ այս կարդում էք, դեռ չէք իմանում ի՞նչ են փորձութիւնները, բայց ձեզ համար էլ կ՚գայ փորձութեան ապրելի ժամը։ Այս կլինի ձեզ բարոյ և շարի մէջ անելու ընտրութեան ծանր րոպէն։ Կարելի է մեղքի քաղցր տեսիլը, առաքինութեան դժուարութիւնը ձեզ դայթակղեցնէ. միայն քաջալերվեցէ՛ք այս ահալի րոպէում։ Հաւատացէ՛ք, որ մեղքը ինչպիսի շքով էլ պատած լինի, չէ կարող երբէ՛ք բաղդաւորութիւն տալ մարդուս։ Մեղաւոր մարդը գժոխք է կրում իր սրտում։ Նեղքին գառաւորը՝ խղճմտանքը և շար կիր.քերն են նրան չարչարողներն և արգելք են լինում նրան երջանկութիւն վայելելու։ Բայց առաքինութիւնը որպիսի աղքատութեան, որպիսի խոնարհութեան մէջ էլ որ լինի, տալիս է մարդուս երջանկութիւն։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Յովհ. ա. 36.

Յիսուսի Քրիստոսի մկրտութիւնից յետոյ, Յովհաննէսը Նրան տեսնելով՝ ասաց. «Ահա՛ Գառն Աստուծոյ»։

(*) Երկր. Օրինաց. Զ. 13.

Յովհաննէսի աշակերտներից երկուսը հետևեցին Յիսուսին, նա տեսնելով նրանց, որ գալիս են իր ետևից, հարցրեց. «ի՞նչ է.ք գուք փնտռում։ Վարդապե՛տ, պատասխանեցին նոքա, մենք կամենում ենք տեսնել, ո՞ր ես դու բնակում։ «Եկէ.ք, ասաց Տէրը և կ՚տեսնէ.ք»։ Նոքա հետևեցին Նրան մեծ ուրախութիւնամբ Նորա բնակարանը և մնացին Նորա մօտ բոլոր օրը։ Այս աշակերտներից մէկը անուանվում էր Անդրէաս և որովհետև սա առաջինը գտաւ Յիսուս Քրիստոսի աշակերտ, եկեղեցին անուանեց Նրան Նախակոչ։ Սա ունէր եղբայր Սիմոն անունով։ Անդրէասը գնալով իր եղբօր մօտ ասաց Նրան. «մենք տեսանք Մեսիային»։

Սիմոնը նմանապէս կամեցաւ տեսնել Փրկչին և գնաց Նորա մօտ։ Յիսուս Քրիստոսը անուանեց Նրան Կեփաս կամ Պետրոս, որ նշանակում է քար (վէմ)։ Այս անունով Յիսուս Քրիստոսը կամենում էր ցոյց տալ Նորա հաւատոյ հաստատութիւնը և այս պատճառաւ միանգամ ասաց Նրան. «այս քարի վրայ կ՚կանգնեմ իմ եկեղեցին և դժոխքի դռները չեն կարող Նրան յաղթել»։

Միւս օրը Յիսուս Քրիստոս Գալիլիա գառնալիս պատահեցաւ մի մարդ, որի անունը Փիլիպպոս էր և ասաց Նրան. «Եկ իմ ետևից»։ Փիլիպպոս գնալով Նաթանայէլի մօտ ասում է. «մենք տեսանք Նրան, որի վրայ գրել են մեզ Մովսէս և մարգարէները։ Այս Յիսուս Նազարէթցին՝ Յովսէփի որդին է. և մի՞թէ կարելի է, որ մի բարի բան դուրս գայ Նազարէթից» ասաց Նաթանայէլն։—«Ե՛կ, կրկնեց Փիլիպպոս, և տես»։ Յիսուս Քրիստոս, երբ տեսաւ Նաթանայէլին, ասաց Նորա մասին. «ահա իսկ Իսրայէլացի, որի մէջ նենգութիւն չկայ»։ Այս խօսքերը զարմացրին Նաթանայէլին, որ հարցրեց Տիրոջը. «ուստի՞ ես ճանաչում դու ինձ»։ Յիսուս Քրիստոս պատասխանեց. «դեռ Փիլիպպոսի քեզ կանչելից առաջ տեսայ քեզ թզենիի

տակը»։ Նաթանայէլը զարմացած ազաղակեց. «Ռաբբի։ (այս-
ինքն՝ վարժապետ) Դու ես Աստուծոյ Որդին, Դու ես Իսրայէլի
թագաւորը»։ Յիսուս Քրիստոս ասաց. «դու հաւատացիր ինձ
միայն այն պատճառաւ, որ ես ասացի, թէ տեսայ քեզ թզե-
նիի տակ, բայց կ՚տեսնես դեռ սրանից աւելի մեծ գործքեր։
Ճշմարիտ եմ՝ ասում ձեզ, դուք կտեսնէք Աստուծոյ հրեշտակ-
ներուն, որ բարձրանում են և իջնում մարդու որդու մօտ։

Յովհաննէս Մկրտիչը, երբ իմացաւ, որ մեծ բաղմութիւն
ժողովում է Յիսուսի վարդապետութիւնը լսելու, ասաց հեղու-
թեամբ, «այժմ ուրախութիւնս կատարեալ է. նա պէտք է աճի
այսուհետև և ես մեղմանամ։ Բարձրից եկածը, ամենից էլ
բարձր է, Նրան զրկից Աստուած իր պատուիրանները հրատա-
րակելու։ Հայրը սիրում է Որդուն և ամեն բան տուեց Նորա
ձեռքը։ Ով որ կ՚հաւատայ Որդուն, կ՚ստանայ յաւիտենական
կեանք. իսկ ով որ չէ հնազանդիլ Որդուն, նա չի տեսնիլ կեանք,
այլ Աստուծոյ բարկութիւնը կ՚լինի նորա վրայ (*)։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԳԱԼԻԼԻԱՅԻ ԿԱՆԱ ՔԱՂԱՔԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Յովհ. բ. 1.

Գալիլիացւոց մի փոքրիկ Կանա անուանված քաղաքում
հարսանիք էր, ուր ներկայ գտնվեցաւ Մարիամն էլ՝ Յիսուսի
մայրը։ Նորապսակները, իմանալով Յիսուսի Քրիստոսի գարձը
Գալիլիա, հրաւիրեցին նմանապէս Նրան էլ իր աշակերտներով
և Նա՝ ողորմածը, շարհամարհելով մարդկային անմեղ ուրա-
խութիւնները, եկաւ այս հարսանիքի հացկերոյթը իր աշա-
կերտներով։ Մի և նոյն ժամանակ Տէրը կամենում էր ցոյց տալ,

(*) Յովհ. գ. 27—36.

որ օրինաւոր ամուսնութիւնը արժանայարդ և բարձրից՝ Աստուծմէ օրհնած բան է։

Երբեմն նորապսակները աղքատ էին, որովհետև հացկերոյթի ժամանակ գինին պակասեցաւ։ Աստուածամայրը, նկատելով տանտիրոջ խռովութիւնը, իմացաւ նորա պատճառը և կամենալով ազատել նրան նեղ դրութիւնից, ասաց Յիսուս Քրիստոսին, որ նոցա գինին պակսեցաւ։ Տէրը, որի միտքը աւելի բարձր առարկաներով զբաղած էր, պատասխանեց նրան. «Ինձ և քեզ ի՞նչ բան կայ. իմ ժամանակս դեռ չէ հասել»։ Թէև այս պատասխանը նման էր բացասութեան. բայց Մարիամ Կուսին յայտնի էր իր Աստուածային Որդու բոլոր իմաստութիւնն և բարութիւնը, և այս պատճառաւ նա ասաց ծառաներին. «Կատարեցէ՛ք ամէնը, ինչոր նա ձեզ կ՚հրամայէ»։

Այնտեղ դրած էին վեց ջրի ամաններ լուացվելու համար։ Նրանցից ամէնքն ունէին սեղան նստելից առաջ և վերկենալից յետոյ ձեռքերը լուանալու և յաճախ՝ բոլոր մարմինն էլ։ Յիսուս Քրիստոս ասաց ծառաներին. «Լցրէ՛ք ամանները ջրով»։ Նորա հրամանը նոյն րոպէին կատարվեցաւ. ամանների մէջ ածեցին ջուր մինչև բերանը։ Այն ժամանակ Յիսուս ասաց. «Առէ՛ք այժմ և տարէ՛ք խնճոյքի վերատեսչին»։ Տիրոջ կամքով հասարակ ջուրը փոխվեցաւ ընտիր գինի։ Խնջոյքի կառավարողը չէր իմանում կատարված հրաշքը և կարծում էր թէ փեսան սխալվել է իր կարգադրութեանց մէջ. ուստի և կանչեց նրան և ասաց. «Սովորաբար ընտիր գինին առաջ են գործածում և յետոյ վատը, երբ հիւրերը արդէն բաւական խմած են լինում։ Իսկ դու լաւ գինին պահել ես վերջին»։ Բայց ծառաները, որոնք գիտէին թէ ուստի առած էր այս գինին, կանգնած էին զարմացած։

Այս սկսաւ Յիսուս Քրիստոս իր բարեբար հրաշագործ-

Ծուխիները մարդոց համար։ Նա առաջին անգամ յայտնեց այստեղ իր փառքն և աշակերտները հաւատացին Նրան։

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՐՏԱՔՈՒՄ Է ՀԱՏԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Մատ. իա. 12. Մարկ. ժա. 15. Ղուկ. ԺԲ. 45. Յովհ. բ. 15.

Պասէքի ոօնն էր Հրէից ամենամեծ հանդիսաւոր օրը։ Այս ոօնը ոօնում էին Երուսաղէմում, որ բոլոր Պաղէստինէի մայրաքաղաքն էր։ Այս տեղ հաւաքվում էր բազմաթիւ ժողովուրդ Իսրայէլի ամեն քաղաքներից և գեղերից, այս տեղ գալիս էին շատ կառապետներ էլ շրջակայ ազգերից երկրպագութիւն տալու ճշմարիտ Աստծուն նորա սուրբ տաճարում։ Պասէքի ոօնը մօտեցաւ և Յիսուս Քրիստոս, որ յարգում էր իր ազգի ամեն սուրբ կարգադրութիւններն և բարեպաշտ սովորութիւնները, նոյնպէս գնաց Երուսաղէմ։

Երուսաղէմի տաճարը հոյակապ շինուած էր։ Նա ունէր երեք բաժանումն. նրանցից առաջինը՝ արտաքինը ժողովրդեան համար էր, երկրորդը միայն քահանաների համար, իսկ երրորդը միայն քահանայապետի համար, այն էլ տարին մի անգամ։ Առաջին մասումը կանգնած էր բոլոր ժողովուրդը և աղօթում էր. նորա դրան մօտ չարագործութեամբ անարգել թողնում էին ծախել անասուններ և մանրում էին փողոց։ Ահա ինչպէս ծագեցաւ այս։ Իսրայէլացիները, գալով Երուսաղէմ, սովորաբար զոհ էին բերում Աստծուն եզներ, այծեր, ոչխարներ, իսկ ազգքաները աղաւնիներ և շատ անգամ ամենքը մանր փողի կարիութիւն էին քաշում։ Հեռու քաղաքներից եկողների համար շատ մեծ հեշտութիւն էր գտնել իսկ տաճարի մօտ անասուն զոհի համար և այնտեղ էլ մանրել իրենց փո-

գերը։ Տաճարի վերակացուները իրենց անհոգութեամբ կամ արծաթասիրութեամբ թոյլատր էին տաճարի նախասենեակում վաճառել անասուններ և մանրել փողեր։

Յիսուս Քրիստոս, տաճար մտնելիս, տեսաւ վաճառականների և սեղանաւորների բազմութիւն՝ տեսաւ եղների, այծերի, ոչխարների և աղաւնիների ջոկեր. մէկ խօսքով նա աղօթքի տեղը իսկ վաճառատեղոց դառած գտաւ։ Նորա սիրտը լցուեցաւ տրտմութեամբ, որ Աստուծոյ տաճարը հասել է այդ աստիճանի անարգութեան։ Նա շինեց շուանից խարտեան և քշեց տաճարից դուրս անասուններն և նրանց ծախողներին. իսկ աղաւնավաճառներին և սեղանաւորներին ասաց. դուրս տարէք այս ամենը և իմ Հօրս տունը մի՛ շինէք վաճառականութեան տուն։

Ամենքը հպատակեցան առանց ընդդիմութեան. ոչ ոք չի համարձակեցաւ ընդդէմ խօսել Տիրոջ. Նորա սուրբ նախանձը Աստուծոյ տան մասին ամենի մէջ երկիւղ զցեց և յարգանք։ Այն ժամանակուանից տաճարի նախագահութիւնը խստակեցաւ և այս սուրբ տեղուանից թագաւորեցին վերստին կարգ և լռութիւն։

Հաստատաճառների տաճարից հեռանալից յետոյ, քահանաները և ուրիշ անուանի Հրէաները մօտեցան Յիսուս Քրիստոսին։ Թէև նորա գիտէին, որ անվայել է Աստուծոյ տունը վաճառատեղի շինել. բայց զարմացած նորա իշխանութեան զօրութեան վրայ, որով Յիսուս Քրիստոս այնպէս շուտ և վճռաբար ջնջեց այս չարաբարոյութիւնը, հարցնում էին նրան. «ի՞նչ իրաւունք ունիս դու այսպէս այդպէս հրամայելու։ Յոյց տուր մեզ քո իշխանութեանդ ապացոյցը»։ Յիսուս Քրիստոս արդէն գործքով ցոյց տուեց, որ ունէր իշխանութիւն չարաբարոյութիւնները ջնջելու։ Նա կարող էր նրանց պատասխան չտալ էլ. բայց էլի արժանացրեց նրանց պատասխանի, թէև այլաբանաբար։ Նա ասաց. «քանդեցէ՛ք այս տաճարս և ես երեք օրուայ մէջ կ՚կանգնեմ այն»։ Դեռ ոչ ոք չկարողացաւ հասկանալ այս խօսքերի միտքը։

նրան հարցնողները կարծելով, թէ նա ասում է ճշմարտիւ տաճարի շինուածի համար, պատասխանեցին. «Քառասուն ու վեց տարի աշխատում էին այս տաճարը շինելու, կարելի՞ է միթէ որ դու երեք օրում կանգնես»: Այս ասելով բարկութեամբ հեռացան նրանից: Բայց Յիսուս Քրիստոս ասում էր իր մարմնոյ տաճարի համար, որին նա իր Աստուածութեամբ յարութիւն տուեց երրորդ օրը: Յետոյ աշակերտները յիշեցին այս մարգարէական խօսքերը:

Պասէքի ժամանակ, երբ Քրիստոս Երուսաղեմումն էր, շատերը տեսնելով Նորա գործած հրաշքները, հաւատում էին նրան. Բայց Յիսուս Քրիստոս նրանց հաւատ չէր ընծայում. որովհետև նա ճանաչում էր նրանց: Նա կարօտ չէր ուրիշի վկայութեան այս մարդոց համար: Նա ինքը կարդում էր նոցա սրտերի ամէն գաղտնիքը:

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՔՐԿՉԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՆԻԿՈԴԻՄՈՍԻ ՀԵՏ

Յովհ. գ. 1.

Փարիսեցիներից մէկը, Նիկոդիմոս անունով, եկաւ Յիսուսի Քրիստոսի մօտ գիշերով (որ ուրիշ Փարիսեցիները, որոնք կը հալածէին նրան սորա համար, չ'նկատեն իրեն) և ասաց. «Վարդապե՛տ, գիտեմ, որ Աստուծոյ ղրկածն ես դու, որովհետև ինչ որ դու անում ես, ոչ ոք չէ կարող անել, եթէ Աստուած չլինի նորա հետ»: Ձէրը պատասխանեց նրան. «Ճշմարիտը ասում եմ քեզ, ճշմարիտ. ով որ նորից չի ծնիլ, չէ կարող մտնել Աստուծոյ արքայութիւն»:— «Բայց ի՞նչպէս կարող է մարդ երկու անգամ ծնիլ», ասաց Նիկոդիմոս:— «Ո՛վ որ չի ծնիլ և հողից, նա չէ կարող մտնել Աստուծոյ արքայութիւնը», պատասխանեց Քրիստոս: «Ես չեմ ասում մարմնաւոր ծննդեան վրայ,

շարունակեց Նա, այլ հոգևոր ծննդեան վրայ։ Մի զարմանար նորա վերայ, որ ես քեզ ասացի, թէ մարդս պէտք է ծնի վերստին։ Հողմը, (քամին) ուր կամենում է շնչում է, նորա ձայնը լսում ես, բայց չես իմանում ո՞ւրտեղից է գալիս և ո՞ւր գնում, նոյնպէս էլ ամէն հոգիից ծնածն է։ «Բայց ի՞նչպէս կարող է այս լինիլ». հարցրեց Նիկոդիմոս։—Դու Իսրայելի վարդապետն ես և այդ չե՞ս իմանում. պատասխանեց Յիսուս Քրիստոս։ «Ես ասում եմ քեզ այն, ինչ որ գիտեմ, Ես վկայում եմ քեզ նորա մասին, ինչ որ տեսել եմ, իսկ դու՝ քո՛ վկայութիւնս չէ՞ք ընդունում։ Եթէ երբ ես ձեզ ասում եմ երկրաւոր բաներից, չէ՞ք հաւատում, իսկ եթէ երկնաւորները ասեմ, ի՞նչպէս կարող է՞ք հաւատալ։ Ոչ ոք բարձրացել է երկինք, եթէ ոչ միայն Նա, որ իջաւ երկնքից՝ Յիսուս Որդին մարդոյ. Նա որ է երկինքում։ Ինչպէս Մովսէս բարձրացրեց օձը անապատում, այնպէս պէտք է մարդոյ Որդին բարձրանայ, որ ամէնը, ով հաւատայ նրան, ստանայ յաւիտեան կեանք։ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ տուեց նորա համար իր Որդուն, որ ամէնը, ով որ նրան հաւատայ չկորչի, այլ յաւիտեան կեանք ստանայ։ Նա զրկեց աշխարհ իր որդուն, ոչ թէ աշխարհ դատելու, այլ նրան փրկելու համար։ Ով հաւատում է Որդուն, նա չի դատապարտվիլ. իսկ ով որ չէ հաւատում, նա արդէն դատապարտված է, որովհետև չհաւատաց Աստուծոյ միածին Որդուն։ Լոյսը եկաւ աշխարհ. բայց մարդիկ խաւարը աւելի սիրեցին քան լոյսը, որովհետև իրենց գործքերը չար էին, որովհետև խաւարում աւելի լաւ կարող էին ծածկել իրենց չար գործքերը։ Ով որ չար է գործում, նա փախչում է լոյսից, որ ոչ ոք չտեսնէ նորա չար գործքը. իսկ ճշմարիտ մարդը չունի ոչինչ թաքցնելու. նա գնում է լոյսի մօտ, որ ամէնքը տեսնեն նորա գործքերը, որոնք Աստուծոյ կամաց համեմատ են գործած (*)։

(*) Յով. գ. 1. 12.

Սրանից յետո Յիսուս Քրիստոս էլի մի քանի ժամանակ մնաց Հրէաստանի մէջ և ուսուցանում էր ամենուն։ Բայց փարիսեցիք իմանալով, որ Յիսուս գտնում է աշակերտներ, սկսան նախանձել Նրան և հալածել, ուստի և Նա վճռեց գառնալ Գալիլիա։

ԳԼՈՒԽ Ի.

ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆԸ

Տպ. գ. 7.

Երուսաղէմից Նազարէթ գառնալու ճանապարհն էր Սամարիայի վրայով, որն որ առաջ պատկանում էր Իսրայէլի թագաւորութեան և ստացել էր իր անունը իր Սամարիա մայրաքաղաքից։ Ճանապարհը անցնում էր Սիւքարի մօտով, որ հին ժամանակ կոչվում էր Սիւքէմ։ Այս քաղաքի մօտ էր երկիրը, որնոր Յակոբ ժառանգութիւն տուեց իր որդուն Յովսէփին։ Այստեղ կար մի ջրհոր, որն որ փորած էր Յակոբի հրամանով. ուստի և կոչվում էր Յակոբայ աղբիւր։ Յիսուս Քրիստոս նստաւ այս ջրհորի մօտ հանգստանալու. իսկ նորա աշակերտները գնացին քաղաք կերակուր գնելու։

Այս ժամանակ քաղաքից եկաւ մի կնիկ ջուր հանելու ջրհորից։ Հրէաները հնուց շատ ատում էին Սամարացիներին։ Նոքա չէին կամենում նոցա հետ ոչ խօսել և ոչ մի բան ունենալ. նոքա մեզք էին համարում նոցա հետ մի ամանից ուտելն և խմելը։ Թէև Յիսուս գիտէր, որ Սամարացիք շատ մոլորութեանց մէջ ընկած են. բայց Նա էլի պարտաւորում էր Հրէաներին այն անհաշտ ատելութեան համար։ Երբ Սամարացի կինը հանեց ջուր, Յիսուս Քրիստոս ասաց Նրան. «տուր ինձ ջուր խմելու»։

Այս կինը լսելով այսպիսի քաղցր և հեզ ձայն, չը կարողացաւ թաքցնել իր զարմանքը և ասաց Փրկչին. «Ի՞նչպէս, դու Հրեայ գոլով խնդրում ես ջուր խմելու ինձանից՝ Սամարացի կնոջից։ Հրէաները կապակցութիւն չունին Սամարացիների հետ։ Նոքա զզվում են մեզանից»։ Յիսուս Քրիստոս ոչ մի միջոց իրեն լսողների միտքը գէպ ՝ի բարձր առարկաներ դարձնելու ձեռից չէր թողնում։ Նա ասաց նրան. «Թէ դու գիտենայիր Աստուծոյ պարգևը և թէ ով է, որ քեզ հետ խօսում է, դու կ՝խնդրէիր ինձանից կենդանի ջուր»։

Սամարացի կինը չհասկացաւ այս խօսքերն և պատասխանեց. «բայց դու դոյլ չունես, որ ջուր հանես. իսկ ջրհորը շատ խոր է։ Ո՞րտեղից կ՝առնես կենդանի ջուր։ Մի՞թէ դու մեծ ես քան մեր նախահայր Յակոբը, որոնք մեզ այս ջրհորը թողեց, որից նա ինքը, որդիքը և խաշները խմում էին»։

Յիսուս Քրիստոս, շարունակելով իր խօսակցութիւնը նորա հետ այլաբանաբար, ասաց. «ով որ այս ջուրը խմում է, վերըստին ծարաւում է. բայց ջուրը, որն որ ես կ՝տամ, այնպիսի է, որ նորա խմողը յաւիտեան չի ծարաւիլ. և այն ջուրը, որ ես կ՝տամ, կ՝լինի նրան յաւիտենական կեանք տուող ջրի աղբիւր։

Բայց Սամարացի կինը դեռ էլի չհասկանալով, որ կենդանաբար աղբիւրն է ինքն Յիսուս Քրիստոս և նորա փրկարար վարդապետութիւնը, ասաց նրան. «Տէր, տուր ինձ այն ջրից, որ ես կարողանամ յաւիտեան հագեցնել իմ ծարաւս. այն ժամանակ ես էլ հարկաւորութիւն չեմ ունենալ ամենևին այստեղ ջրի գալու»։

Յիսուս Քրիստոս ասաց նրան. «գնա՛ կանչի՛ր քո մարդուդ էլ և եկ այստեղ նորա հետ միասին»։ —«Ես մարդ չունիմ» պատասխանեց կինը.—«Դու ճշմարիտ ես ասում», կրկնեց Յիսուս,

«զու ունեցել ես հինգ մարդ և նա որի հետ զու այժմ կենում ես, քո մարդդ չէ»։

Այս խօսքերը զարմացրին Սամարացի կնոջը. նա վախեցաւ լսելով այն անծանօթ մարդից, որ իրեն առաջին անգամն է տեսնում, իր կենաց մանրամասն հանգամանքները։ Խառնված և շուարած կանգնած էր նա նորա առաջին իրրև իր դատաւորի առջևը. վերջապէս յաղթելով ամօթին և արտանց զըլջալով ազատակեց. «Տէր, ես տեսնում եմ, որ զու մարգարէ ես»։

Տէրը նորա արտում կարդաց զղջումն և ցանկութիւնը ունդվելու. ուստի և չասաց ոչ մի յանդիմանութեան խօսք, Նա չի էր ուզում զղջոլ մեղաւորների համար և իր բոլոր կենցաղավարութեամբը ցոյց տուեց մեզ, որ նա եկել էր երկրիս վերայ ոչ թէ դատելու, այլ մեզ փրկելու, ոչ թէ յանդիմանելու մեղաւորներին, այլ ուղղելու նրանց։

Սամարացի կինը կամենում էր լուծանել մի երկբայութիւն, որն որ ծանր պարկած էր նորա սրտի վերայ։ Այս էր Հրէաների և Սամարացիների մէջ եղած հին վէճի առարկան. թէ ո՞ր է իսկ աղօթելու տեղը։ Սամարացիք հիմնեցին իրենց տհմար տաճար Գարիզին լերան վերայ, Սիքար քաղաքի մօտ, բայց Հրէաները հաստատում էին, թէ բացի Երուսաղէմի տաճարից, ուրիշ ոչ մի տեղ չէ կարելի արժանապէս փառաւորել Աստծուն և երկրպագել Նրան. ուստի քանդեցին Սամարացւոց նոր շինած այն տեղը, ուր էր Յակոբի ջրհորը, երևում էին Սամարացւոց տաճարի աւերակները։ Սամարացի կինը, ճշմարտապէս հաւատալով այս իրեն յայտնված մարգարէին, կամենում էր իմանալ նորա կարծիքն էլ այս առարկայի մասին. ուստի և ասաց. «մեր հայրերը երկրպագութիւն էին տալիս Աստծուն այն լերան վերայ. բայց Հրէաները ասում են թէ Նրան երկրպագութիւն պէտք է տալ միայն Երուսաղէմում։ «Հաւատա՛ իմ, պատասխանեց Տէրը», հասու ժամանակը, երբ մարդիկ երկրպագու-

թիւն կուան Հօրը ոչ այս լերան վերայ ու Երուսաղէմումը միայն. հասել է ժամը երբ ճշմարիտ հաւատացեալները երկրապագութիւն կ՚տան Աստուն Հոգով և ճշմարտութեամբ, որովհետև և Հայրը այսպիսի երկրպագուներ է փնտռում։ Աստուած Հոգի է և ով որ երկրպագում է Նրան, պէտք է երկրպագի Հոգով և ճշմարտութեամբ։

Սամարացի կինը չերմեռանդութեամբ լսում էր Փրկչի խօսքերն և ակամայ միտը բերից խոստացած Մեսիային, որ պէտք է ամենեցուն ուսուցանէ ճշմարիտ հաւատը։ «Ես գիտեմ», ասաց նա, «որ Մեսիան շուտ պէտք է գայ։ Նա կ՚սովորցնէ մեզ ամեն բան»։—«Ես եմ այն, որի վերայ դու խօսում ես», պատասխանեց Փրկիչը։

Այս կինը չէր գտնում խօսք, որ իր ուրախութիւնն և յարգութիւնը յայտնէր։ Նորա սիրտը վառվում էր ցանկութեամբ իր քաղաքակիցներին այս աւետիքը հաղորդելու։ Նա թողեց իրա սափորը, վազեց քաղաք և ասում է ամեն իրեն հանդիպողին. «գնացէք տեսէք այն մարդուն, որն որ ինձ չը ճանաչելով ասաց ինձ ամէն իմ գործքերս։ Տեսէք նա չէ՞ արդիօք Քրիստոսը»։

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԱՄԱՐԻԱՈՒՄ ԿԵՆԱԼԸ

Յովհ. գ. 27.

Յիսուս Քրիստոսի աշակերտները, քաղաքում ամեն հարկաւոր քաները գնելից յետո, զարձան Նորա մօտ և տեսնելով, որ իրենց վարդապետը խօսում է Սամարացի կնոջ հետ, զարմացան Նոքա շատ հետաքրքիր էին ու կամենում էին իմանալ, ինչի վրայ էր խօսում Յիսուս Քրիստոս այս կնոջ հետ. բայց

չէին համարձակվում հարցնել։ Լռութեամբ առաջարկեցին Նրան գնած կերակուրը։ Բայց տեսնելով, որ Նա ընկղմած է մտածմունքի մէջ, ասացին. «Վարդապետ, ահա՛ հաց»։ Քրիստոս պատասխանեց. «Ես ունիմ կերակուր, որնոր դուք չգիտէք»։ Աշակերտները չհասկանալով Նրան ասում էին միմեանց. «երևի՛ մէկը բերել է Նրան կերակուր»։ Այն ժամանակ Տէրը ասաց նրանց. «Իմ կերակուրս է ինձ զրկողի կամքը կատարել և կատարել այն գործը, որի համար Նա ինձ զրկեց։ Դուք ասում էք, որ չորս ամսից յետոյ կ՚գայ հնձի ժամանակը. բայց ես ասում եմ, որ հնձի ժամանակը արդէն եկել է, նայեցէ՛ք արտերի վերայ, ժամանակ է արդէն հնձելու։ Հնձողը կ՚ստանայ վարձ և կ՚ժողովէ պտուղ յաւիտենական կեանքի համար։ Միասին կ՚ուրախանան թէ սերմանողն և թէ հնձողը։ Միայն Նա չի հնձիլ, ով որ ցանել է։ Ես զրկում եմ ձեզ հնձելու այն տեղ, ուր դուք չէք ցանել. ուրիշները աշխատեցին, իսկ դուք կ՚ժողովէք նոցա աշխատանքները»։

Սամարացի կնոջ խօսքով շատերը նորա քաղաքակիցներից հաւատացին Յիսուս Քրիստոսին, իսկ ժողովուրդը, դալով Նորա մօտ քաղաքից, խնդրում էր Նրան որ իրենց մօտ մնայ։ Տէրը մնաց Սիւքարումը երկու օր և այս միջոցում հաւատացեալների թիւը բազմացաւ՝ Սիւքարի բնակիչները ասում էին այս կնոջը. «այժմ մենք հաւատում ենք ոչ թէ քո խօսքերովդ, այլ մենք իրենքս լսեցինք Նորա վարդապետութիւնն և գիտենք. որ Նա ճշմարտիւ Քրիստոսն՝ աշխարհիս Փրկիչն է»։

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԹԱԳԱՒՈՐԱԶՆԻ ՈՐԴՒՈՅ ԲԺՇԿԵԼԸ ԿԱՓԱՌՆԱՑՈՒՄ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ

Յոգն. ԺԲ. 46.

Երկու օրից յետոյ Յիսուս Քրիստոս գնաց Գալիլիա, ուր Նրան ուրախութեամբ ընդունեցին։ Գալիլեացիք Պասէքի տօնին գնում էին Երուսաղէմ և վկայ էին ամէն գործերին, որոնք գործել էր Յիսուս Քրիստոս։ Նորա հրաշքները ապրածել էր արդէն բոլոր այն երկրումը։

Կապառնաումի մէջ, որ Գալիլեայի ամենահարուստ քաղաքներից մէկն էր, բնակում էր մի թագաւորական երևելի, որ ամենին յարգելի էր իր ունեցած պաշտօնի պատճառաւ։ Այս ազնիւ անձնաւորը ունէր մի որդի, որ պառկած էր մահուան մահճումը և ամէն րոպէ սպասում էին նորա վախճանելուն։

Ընդարձակ հայրը, լսելով Յիսուսի Քրիստոսի Հրէաստանից Գալիլեա դառնալը և նորա այն ժամանակ Կանայումն լինելը, որոնք Կապառնաումից մի ժամու ճանապարհ էր, շուտ գնաց այն տեղ Յիսուս Քրիստոսի մօտ և խնդրեց Նրան, որ իր տունը գայ որդուն բժշկելու։ Յիսուս Քրիստոս ասաց. «դուք չէք հաւատում մինչև նշան չտեսնէք»։ — «Տէր» ասում էր մեծաւորը, «շտապիր, գնա մինչև որդիս չէ վախճանել»։ — «Գնա՛ տուն, ասաց Փրկիչը. «որդիդ առողջ է»։ Մեծաւորը հաւատաց Տիրոջ խօսքին և դարձաւ տուն։ Տան դրան մօտ հանդիպեցաւ իր ծառաներին, որոնք աղաղակում էին ուրախութեամբ. «Որդիդ կենդանի է»։ Ստուգելով տեսաւ որ իր որդին թեթևութիւն զգացել էր այն ժամին, երբ Տէրը ասաց. «որդիդ առողջ է»։ Նա և բոլոր նորա ընտանիքը հաւատացին Յիսուս Քրիստոսին։

ԳԼՈՒԽ ԼԳ.

ՅԻՍՈՒՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ ՆԱԶԱՐԷԹՈՒՄ

Դամկ. Կ. 16.

Յիսուս Քրիստոս դարձաւ Նազարէթ, ուր ծնած էր և իր սովորութեամբ մտաւ շաբաթ օր ժողովրդանոց կամ աղօթքատունը։ Երբ ամենքը հաւաքուեցան, Յիսուս Քրիստոս վեր կացաւ իր տեղից, որ էր նշան թէ կամենում է օրինաց գրքից կարդալ։ Նրա գործոց համբաւը հասել էր Նազարէթ էլ. ուստի և առանց ընդդիմաբանութեան տուին Նրան Եսայի մարգարէի գիրքը։ Յիսուս Քրիստոս բաց արաւ և սկսաւ կարդալ յետագայ խօսքերը։ «Աստուծոյ Հոգին իմ վրայ է. Նա օծեց ինձ և ղրկեց աղքատներուն աւետարանելու, սրտով փրկեալներուն բժշկելու, գերիներին փրկութիւն քարոզելու, կոյրերին լոյս տալու և Աստուծոյ տարեկանը ընդունելի քարոզելու»(*)։

Այս կարդալից յետոյ Յիսուս Քրիստոս փակեց գիրքը, տուեց այն ծառային և վերադարձուցեց իր տեղը։ Ամեն ներկայ գտնուողները իրենց հայեցուածքը Նորա վերայ դարձրին։ Փրկիչը սկսաւ խօսել, թէ այժմ իսկ կատարուեցան մարգարէի այս խօսքերը։

Ամենքը վկայում էին սրան և զարմանում էին այն շնորհալի խօսքերի վրայ, որ Նորա բերանից դուրս էին գալիս և ասում էին. «Սա Յովսէփի որդին չէ՞»։ Յիսուս Քրիստոսին յայտնի էին նոցա մտքերը, ուստի և ասաց նա. «Դուք գիտեմ յիշեցիք հին առակը, որ ասում է. բժիշկ, բժշկիր քո անձդ։ Դուք ասում էք. լսեցինք այն հրաշքը, որ Դու Կափառնաումի մէջ գործեցիր, արա՛ նոյնը այս տեղ՝ քո հայրենիքումդ էլ։ Բայց ճշմարիտն եմ ասում ձեզ, ոչ մի մարգարէ ընդունելի չէ լինում

(*) Եսայի ԿԱ. 12.

իր հայրենիքումը։ Յիշեցէ՛ք Նղիսա մարգարէի ժամանակը, երբ երկինքը փակվեցաւ երեք տարի և վեց ամիս և երբ եղաւ մեծ սով բոլոր երկրումը. շատ էին խեղճեր Իսրայէլի մէջ, բայց Մարգարէն խրկվեցաւ միայն մի խեղճ այրի մօտ Սիդոնեացւոց Սարեփթա քաղաքը։ Նոյնպէս էլ Նղիսէ Մարգարէի ժամանակը շատ էին բորոտներ Իսրայէլի մէջ. բայց բժշկվեցաւ միայն Նէեման Ասորին։

Երբ այս խօսքերը լսեցին, ամեն ներկայ եղողները բարկացան յոյժ, Յիսուս Քրիստոսին հանեցին քաղաքից դուրս և տարան Ներան այն լերան գագաթը ուր շինած էր Նազարէթը։ Նոքա կամենում էին Ներան լեառնից ներքև գցել, բայց Փրկիչը անցաւ նոցա միջովը և հեռացաւ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՁԿԱՆ ՀՐԱՇԱԼԻ ՈՐՍԸ

Ղուկ. Ե. 1.

Յիսուս Քրիստոս Նազարէթից գնաց Գեննեսարեթայ ծովակի մօտ, որ իր մեծութեան պատճառաւ կոչվում էր ծով Գալիլացւոց կամ Տիբերիական։ Այս ծովակի շրջակայքն էին յոյժ գեղեցիկ և նման էին սիրուն այգիի. ամեն տեղ բուսանում էին պտղաբեր ծառեր, ամէն տեղ երևում էին քաղաքներ և գեղեր։ Մեծ բազմութիւն գնում էր Քրիստոսի ետևից, ամենքը կամենում էին նորա քարոզած Աստուծոյ խօսքը լսել և բժշկվել ախտերից. ամենքը հաւաքվում էին նորա շուրջը։ Երկու դարդակ ձկնորսի նաւակներ կանգնած էին ափումը։ Ձկնորսները նրանցից դուրս եկած լուանում էին իրենց գործիքները։ Յիսուս Քրիստոս մտաւ նրանցից մէկի մէջ, որոնք պատկանում էր Սիմոն Պետրոսին և խնդրեց նրան, որ փոքր

ինչ հեռանայ ափից, որ ինքը աւելի հեշտութեամբ կարողանայ ուսուցանել ժողովրդին։ Իր քարոզութիւնը աւարտելից յետո, Տէրը հրամայեց Սիմոնին Պետրոսին նաւել հեռու ծովի մէջ և գցել ուռկանը։—«Վարդապետ, մենք բոլոր գիշերը աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք», պատասխանեց Սիմոնը։ Միայն քո հրամանով հնազանդելով այժմ կրկին կ՚գցեմ ուռկանս»։

Սիմոնը և նորա եղբայր Անդրէասը նաւեցին ծովակի մէջ տեղը, գցեցին գործիքը և բռնեցին այնքան ձուկ, որ ծանրութիւնից նոցա ուռկանը պատռվեցաւ։ Նոքա նշան տուին իրանց որսակիցներին՝ Յոհաննէսին և նորա եղբօր Յակոբին միւս նաւի վրայ, որ իրենց օգնութիւն հասնին։ Նրա սոքա մօտեցան, հանեցին ուռկանն և այնքան ձուկը բարձեցին երկու նաւակներումն էլ, որ հազիւ կարողանում էին նոքա ջրի երեսին մնալ։ Սիմոնը Պետրոսը սարսեցաւ թէ Տիրոջ ամենակարողութիւնից և թէ իր արժանաւորութիւնից։ Նա ընկաւ Յիսուսի ծնկները ապաշխարելով. «Տէր, հեռացիր ինձանից. ես մեղաւոր մարդ եմ»։ Սմենքը, որ Սիմոնի Պետրոսի հետ էին, զարմացան նոյնպէս և զարհուրեցան։ Բայց Տէրը պատասխանեց Սիմոնին Պետրոսին. «Մի վախենար, այսուհետև դու կլինիս մարդոց որսորդ, և նրանց երկնային արքայութիւնը կ՚մտցնես»։

Երբ ափը հասան, նաւակները ցամաք հանեցին և ամեն ամեն բան թողնելով գնացին Յիսուսի Քրիստոսի ետևից։

ԳԼՈՒԽ ԻԵ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԿԱՓԱՌՆԱՈՒՄԻ ՄԷՋ ԿԵՆԱԼԸ ԵՒ ԳԱԼԻԼԵԱՈՒՄ ՇՐՋԻԼԸ

Ղուկ. գ. 31.

Յիսուս Քրիստոս մտաւ Կապառնաում, որ Գենեզարէթայ ծովակի ափումն էր։ Այս քաղաքումը Սիմոնը Պետրոս և նորա

եղբայրը ունէին տուն։ Յիսուս Քրիստոս այս քաղաքը ընտրեց իրեն բնակութեան տեղ թշնամի Նազարէթի փոխանակ։ Այս տեղ էլ ամենից առաջ մտաւ ժողովրդանոցն և ուսուցանում էր ժողովրդեան։

Ժողովրդանոցից դուրս գալից յետո, Յիսուս Քրիստոս մտաւ Պետրոսի տուն. Յակոբն և Յովհաննէսը ուղեկից էին Նրան։ Պետրոսի դընքաջը սաստիկ տենդով հիւանդ պառկած էր։ Պետրոսը յայտնեց այս տիրոջ և խնդրեց, որ օգնէ հիւանդին։ Յիսուս Քրիստոս մօտեցաւ հիւանդի մահճին, բռնեց նորա ձեռքը և տենդը իսկոյն թողեց նրան. նա վեր կացաւ և ծառայում էր Յիսուս Քրիստոսին և նորա աշակերտներին ճաշի ժամանակ։

Այս բժշկութեան համբաւը տարածուեցաւ բոլոր քաղաքում։ Շաբաթ էր օրը ու Հրէաները շաբաթ օրը մինչև արեգակի մայր մտնելը ոչինչ չէին գործում. բայց երբ երեկոյ եղաւ ամէն հիւանդներուն, ոչքան որ կային քաղաքի մէջ, բերին Փրկչի մօտ։ Բոլոր քաղաքացիք հաւաքուեցան Պետրոսի դրան մօտ։ Տէրը ձեռնադրութեամբ կամ շփելով միայն բժշկում էր ամէն հիւանդներուն։ Նա չէր բացատրում օգնել և բարերարութիւն անել նոցա, որոնք խնդրում էին Նրանից օգնութիւն, ոչքին չէր հեռացնում Իրանից առանց մխիթարութեան։ Ինչպիսի գեղեցիկ և խրատական տեսարան է ցոյց տալիս մեզ մեր բարի Տէրը այս ողորմելիների բազմութեամբը պատած։ Ո՞րպիսի սէր. ո՞րպիսի կարողութիւն։ Ո՞վ չի յանձնիլ իրեն նորա բարութեանը։

Յիսուս Քրիստոս երկար ժամանակ գեր գիշերն էլ շարունակում էր բժշկել հիւանդներուն. միւս օր առաւօտեան արշալուսի երևելիս, նա դուրս եկաւ քաղաքից և բարձրանալով սարի վրայ աղօթք արաւ այնտեղ։ Նոյն ժամանակ այն քաղաքումն էլ որին Յիսուս այնքան բարերարութիւն արաւ, հասարակից առաջ ամէն բան սկսաւ շարժել կենդանանալ։ Ամէնքը

կամենում էին Նրան տեսնել, ամենքը փնտռում էին Նրան։ Յիսուս Քրիստոս գիտէր այս և պատուից փախչելով հեռացաւ այն տեղից։

Պետրոս առաքեալը, պատած ժողովրդեան բազմութեամբ, վերջապէս գտաւ Նրան և ասաց. «Ամենքը փնտռում են քեզ, Վարդապետ, ամենքը խնդրում են քեզ, որ էլի մի քանի ժամանակ մնաս նոցա մօտ։ Բայց Յիսուս Քրիստոս, որ մի րոպէ չէր մոռանում իր բարձր նպատակն ու հաւատարմապէս սիրում էր բոլոր մարդկութիւնը, պատասխանեց. «Ես գնում եմ քարոզելու ուրիշ քաղաքներումն ու գեղերումն էլ. որովհետև ես այս բանի համար եկել եմ»։ Տէրը անցաւ բոլոր Գալիլիան, ուսուցանելով ժողովրդանոցներում, քարոզելով Աստուծոյ արքայութիւնն և բժշկելով ամեն ախտեր և հիւանդութիւններ։ Երկնային իմաստութիւնը, որ բղխում էր Նորա շրթունքներից, աստուածային սէրը, որով Նա թեթևացնում էր ամեն վիշտ, յոյսի եզան ամեն տեղ։ Նրան մօտ գալիս էր մեծ բազմութիւն Գալիլեայից, Հրէաստանից, Յորդանանի միւս կողմից և Երուսաղէմից էլ։ Նորա համբաւը հասաւ մինչև Ասորիք և ուրիշ սահմանակից թագաւորութիւններ. Նորա մօտ բերում էին զանազան ցաւերով հիւանդներն՝ դիւահարներն, անդամալուծներն, կոյրերն, խուլերն, համրերն, կաղերն և Նա բժշկում էր ամենուն։ Առողջութիւն և կեանք էին բղխում Նորա առաջից։ Նորա երևելիս հեռանում էին վիշտն և ցաւը. Նա ամեն տեղ տանում էր իր հետ ուրախութիւն և միխթարութիւն։

ԳԼՈՒԽ ԻԶ.

ԿԱՓԱՌՆԱՈՒՄ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԸ

Մատ. ը. 5. Ղուկ. է. 1.

Իր ճանապարհորդութիւնը Գալիլիայի միւս քաղաքներում աւարտելից յետո, Յիսուս Քրիստոս վերադարձաւ Կապառնայում, որն որ ընտրեց Նա իրեն բնակութեան տեղ: Այս տեղ էր մի Հռովմայեցի հարիւրապետ այսինքն հարիւր զինուորների գլխաւոր: Հարիւրապետը ունէր մի հաւատարիմ և մօտերիմ ծառայ, որին նա շատ սիրում էր, և որն որ հիւանդ էր, ամենքը սպասում էին նորա մահուան:

Հիւրապետը, երբ լսեց Յիսուսի Քրիստոսի դարձը, ղրկեց Հրէից ծերերից մի քանիսին, որ Նրան խնդրել գալ և ազատել հիւանդին: Ծերերը գնալով Փրկչի մօտ յայտնեցին Նրան հարիւրապետի խնդիրքը, աւելացնելով այս էլ. «նա արժանի է որ սատանայ այս շնորհքը. որովհետև նա սիրում է մեր ազգին և շինեց մեզ համար ժողովրդանոց»: Յիսուս Քրիստոս գնաց նոցա հետ և արդէն մօտ էր հարիւրապետի տանը: Այն ժամանակ սա ղրկեց նորա առաջ իր բարեկամներին, իսկ յետոյ ինքն էլ եկաւ և ասաց. «Տէր, մի՛ աշխատիր Ինքդ գալու, ես չեմ արժանի, որ Դու իմ տունս մտնես. այս պատճառաւ ես ինքս ինձ արժանի չհամարեցի գալու Քեզ մօտ, այլ ասա՛ միայն մի խօսք— և իմ հիւանդս կառողջանայ: Ես էլ թէև իշխանութեան տակ կարգած մարդ եմ, բայց ունիմ մարդիկ իմ հրամանիս տակ, որոնք ինձ հպատակում են և կատարում են, ինչ որ նրանց ես հրամայում եմ»:

Յիսուս Քրիստոս, երբ այս լսեց, զարմացաւ և դառնալով Իր չորս կողմը ժողոված ժողովրդեան ասաց. «Հաւատացնում եմ ձեզ, որ ես այսպիսի հաւատ Իսրայէլի մէջ էլ չեմ գտել և

ասում եմ ձեզ, որ շատերը կ՚գան Արևելքից և Արևմուտքից ու մասնակից կ՚լինեն Երկնային առաքինութեան ուրախութեանը Աբրահամի, Իսահակի և Յակոբի հետ միասին. իսկ արքայութեան որդիքը (Իսրայելացիք) կ՚արտաքսվին արտաքին խաւարը. այն տեղ կլինի լացն ու ատամանց կրճտելը»: Յետոյ դառնալով Հարիւրապետին ասաց. «գնա՛, թո՛ղ, ինչպէս Հաւատացիր, լինի քեզ». նոյն րոպէին հիւանդը առողջացաւ։

ԳԼՈՒԽ ԻԷ.

ԱՆԴԱՄԱԼՈՒԾԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Մարկ. բ. 3. Ղուկ. և. 18.

Հարիւրապետի ծառայի հրաշալի բժշկութիւնից յետո Յիսուսի Քրիստոսի մօտ հաւաքվեցաւ շատ ժողովուրդ։ Ոչ միայն տունը, ուր նա էր, այլ և նորա շուրջն էլ լիքն էր ժողովրդով։

Յիսուս Քրիստոս ամեն էլ էր ուսուցանում նա իր Աստուածային զօրութեամբ բժշկում էր ամենուն, Նորա մօտ գալիս էին ողորմելիներ ամեն կողմից՝ Գալիլեայից, Հրէաստանից և իսկ Երուսաղէմից էլ։ Մի քանիսը գալիս էին, որ Նրանից բժշկութիւն գտնեն, մի քանիսը որ լսեն Նորա մխիթարիչ քարոզութիւնը. իսկ այլք՝ հետաքրքրութիւնից։ Սոցա հետ միասին եկան նմանապէս շատ գրիչներ և Փարիսեցիներ, ոչ թէ Նրանից մի բան սովորելու մտքով, այլ Նորա ամեն մի գործքը նկատելու համար։ Նոքա յոյս ունէին գտնել Նորա մէջ իրենց կարծիքով մի նախատանաց արժանի բան, լսել մի սուտ խօսք, որ զրպարտեն Նրան ժողովրդի առաջը և այսպէս ջնջեն կամ գոնեա նուազցնեն պատիւն և յարգը, որ Նրան տալիս

էին։ Բայց Յիսուս Քրիստոս նրանց հնայելով շարունակում էր ուսուցանել և բժշկել։

Այն ժամանակ մահճի վերայ պրած բերում էին Փրկչի մօտ մի անդամալոյծ։ Մարդիկ, որոնք նրան տանում էին, չը կարողանալով մտնել ներս ժողովրդի միջովը, հնարեցին միջոց տատուածային հրաշագործին մօտենալու։ Հրէաստանում տների տանիքը բոլորովին տափարակ էին և երբեմն այնպէս թեթև, որ նրանց հեշտութեամբ կարելի էր վեր քաշել. որովհետև այն տեղն տաք և անանձրև կլիմայումը (եղանակումը) հարկաւոր չէր աւելի պաշտպանութիւն վատ եղանակի դէմ։ Իսկ մի և նոյն ժամանակ այս տանիքները լաւ եղանակներին ճեմելու տեղ էլ էին լինում. նոքա սանդուղներ դրին տանիքի վրայ վեր գնալու համար։ Այսպէս հիւանդին բարձրացրին սանդուղի վրայ, հաւաքեցին տանիքը, որ մի և նոյն ժամանակ տան առաստաղն էլ էր և նեղա թողին հիւանդին Փրկչի ոտների մօտ։

Յիսուս Քրիստոս ոչ միայն չնեղացաւ նոցա այս համարձակութեան վերայ, այլ և այս գործքում տեսաւ նոցա հաստատ հաւատի ապացուցութիւնը։ Ընդհակառակը գրիչների և Փարիսեցիների մէջ նախանձը բոլորովին խեղդում էր հիւանդներին և ողորմելիներին ցաւակից և ողորմած լինելու զգացմունքը։

Յիսուս Քրիստոս կարդում էր, ինչ որ Նոցա սրտումը կար, նոյնպէս էլ այն ողորմելիի սրտինը, որտեղ պառկած էր նորա ոտի տակ։ Յայտնի բան է, նա տեսնում էր նորա մէջ իր հին մեղաց զղջումն, որտեղ աւելի զօրեղ էր, քան թէ նրան չարչարող ախտի ցաւը. որովհետև Ողորմածը ասաց նրան. «քաջալերվի՛ր. ներվում են քո մեղքերդ»։

Գրիչներն և Փարիսեցիները այս լսելով ասացին իրենք իրենց. «Նա Աստուն հայհոյում է։ Ո՞վ բացի Աստուծոյ կարող է թողուլ մարդոց մեղքերը»։ Տէրը, որ տեսնում էր նոցա

գաղտնի խորհուրդը, ասաց. «ի՞նչու դուք վատ խորհուրդներին տեղ էք տալիս ձեր սրտումը։ Ո՞րն է հեշտ ասել, թողած լինին մեղքերդ, թէ վեր կաց, առ մահիճդ և գնա։ Բայց զիտացէք, մարդու Որդին ունի իշխանութիւն երկրիս վրայ մեղքերին թողութիւն տալ։ Ես ասում եմ, և զառնալով անդամալուծին, շարունակեց Նա. «վեր կաց, առ մահիճդ և գնա»։

Հիւանդը վեր կացաւ, առաւ իր մահիճը և գնաց։ Ամէն ներկայ գտնուողները զարմացան յոյժ. ոչ ոք չէր տեսել այսպիսի հրաշք, ամէնքը Աստծուն փառաբանում էին։

ԳԼՈՒԽ ԻԸ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐՈՒԹԻՒՆ Է ՏԱԼԻՍ ՅԱՑՐՈՍԻ ԱՂՋԿԱՆ ԵՒ ԲԺՇԿՈՒՄ Է ՀԻՒԱՆԴ ԿՆՈՋԸ

Մատթ. թ. 22. Մարկ. ը. 41.

Յիսուս դուրս գալից այն տնից, ուր բժշկեց անդամալուծին, տեսաւ մի Մատթէոս անունով մարդու, որ մաքսաւորութեամբ էր պարապում։ Տէրը ասաց. «եկ իմ ետևից»։ Մատթէոսը հետևեց Նրան և մաքսաւորը դարձաւ Առաքեալ և յետոյ Աւետարանիչ ու Մարտիրոս։ Մատթէոսը ուրախացած հրաւիրեց Յիսուս Քրիստոսին իր տուն։ Տիրոջ և Նորա աշակերտների հետ միասին սեղանի վրայ էին Մատթէոսի առաջվան ընկերները՝ մաքսաւորներն և ուրիշ ծանօթները։ Փարիսեցիք, որոնք իրենց արդար էին համարում և հպարտութիւնից չէին կամենում ուրիշ մարդոց հետ ոչինչ հասարակաց ունենալ և մանաւանդ մաքսաւորների հետ, որոնց սաստիկ էին ինչպէս անարժան մեղաւորներու, այս տեսնելով հարցրին Յիսուսի աշակերտներուն. «ի՞նչպէս կարող է ձեր Վարդապետը մաքսաւորների հետ մի սեղանից ուտել ու խմել։

Յիսուս Քրիստոս, երբ այս լսեց, ասաց. «Բժիշկը առողջներին հարկաւոր չէ, այլ հիւանդներին։ Ես եկայ ապաշխարելու կանչել ոչ թէ արդարներուն, այլ մեղաւորներուն»։

Այն ժամանակ Յովհաննէսի աշակերտները մօտեցան նրան և ասացին. «Ինչու մենք և Փարիսեցիք այսպէս շատ պահում ենք, իսկ Դու և քո աշակերտներդ չէք պահում։ Տէրը պատասխանեց նրանց. «Հարսանիք հրաւիրածները չեն կարող սգել մինչև որ փեսայն նոցա մօտ է, բայց երբ փեսայն կ՚հեռանայ նրանցից, նոքա էլ կ՚պահեն»։

Այս ժամանակ ներս մտաւ Հրէից իշխաններից մէկը Յայրոս անունով։ Նա ընկաւ Յիսուսի ոտքերն ասելով. «Աղջիկս մեռնում է։ Եկ դիր ձեռք նորա վերայ և նա կ՚կենդանանայ»։ Յիսուս Քրիստոս այն րոպէին վեր կացաւ և գնաց Յայրոսի հետ. Նորա ետևից գնում էին աշակերտներն և ժողովրդեան բազմութիւնը։

Բազմութեան մէջ, որ Նորա ետևից գնում էր, կար մի կին, որն որ տասներկու տարի հիւանդ էր։ Շատ բժիշկներ կանչեց իր մօտ, գրեթէ բոլոր իր ունեցածը ծախեց, բայց ոչինչ թեթևութիւն չզտաւ։ Լսելով, որ Յիսուս Քրիստոս այս երկրումն է, յոյս ունէր, որ Նա կբժշկէ իրեն, միայն իր կանացի երկչոտութեամբ չէր համարձակում այնքան բազմութեան մէջ յայտնել իր հիւանդութիւնը։ Ա՛յն հաւատը միայն, թէ կը բժշկվէ ինքը եթէ միայն ձեռը տայ Նորա շորին, ստիպեց նրան Յիսուսին հետևելու (ետևից գնալու)։ Նա բազմութեան միջով անցաւ, մօտեցաւ Նրան ետևից, կամաց ձեռը տուեց Նորա շորի ծայրին—և յանկարծ իրեն բոլորովին առողջ զգաց։

Նա կարծում էր, թէ ոչ ոք այս բանը չիմացաւ և կամենում էր արդէն հեռանալ. միայն Փրկիչը, որից ոչինչ չէր ծածկվում, դառնալով հարցրեց. «Ո՞վ ինձ մերձացաւ»։ Աշակերտները պատասխանեցին. «Տէր, Դու տեսնում ես, որքան ժողո-

վուրդ է քո շուրջդ, ի՞նչպէս կարելի է իմանալ թէ դուք Քեզ մերձացաւ»։ Բայց Յիսուս Քրիստոս ասաց. «Ես գիտեմ, որ մէկը գիտութեամբ մերձաւ ինձ. որովհետև Ես զգացի, որ ինձանից զօրութիւն դուրս եկաւ»։ Յայտնի բան է, Տէրը գիտէր, ով Իրեն մօտեցաւ, բայց կամենում էր յայտնի անել բժշկված կնոջ հաւատն և համեստութիւնն ուրիշների օրինակի համար։ Նա տեսանելով, որ չէ կարող թաքչել, վախեցաւ և դողալով ընկաւ Նորա ոտքն ու պատմեց ամենը։ Փրկիչը ողորմութեամբ նայելով Նորա վերայ ասաց. «քաջալերվի՛ր, աղջիկս, քո հաւատդ փրկեց քեզ, գնա՛ խաղաղութեամբ»։

Այս ժամանակից կինը բոլորովին առողջացաւ։ Մինչև որ Յիսուս խօսում էր դեռ, Յայրոսի ծանօթներից մի քանիսը եկան Նորա մօտ և ասացին. «վարդապետին մի՛ անհանգստացնիր. քո աղջիկդ մեռաւ։ Թշուառ հայրը մնաց կանգնած իբրև կայծակնահար. բայց Փրկիչը քաջալերելով Նրան ասաց. «մի՛ վախենար. այլ հաւատա՛ միայն — և Նա կ՚փրկվի»։

Երբ նոքա եկան տուն, ամենքն բան խառնութեան մէջ էր։ Մեծ բազմութիւն հաւաքվել էր. մի քանիսը լաց էին լինում և ոգբում հանգուցեալ աղջկան վերայ, միւսները պատրաստվում էին Նրան թաղելու։ Յիսուս Քրիստոս ասաց ներկայ գտնուողներին. «ինչո՞ւ է այդ լացն և ձայնը, աղջիկը մեռած չէ, այլ քնում է»։ Ամենքը կան Նորա վերայ ծիծաղել. որովհետև հաստատ գիտէին, որ Նա մեռաւ։ Բայց Տէրը հրամայեց Նրանց հեռանալ։ Երբ ամենքը դուրս գնացին, Նա մնաց մեռելի հօր, մօր և Իր երեք աշակերտների՝ Պետրոսի, Յակոբի և Յովհաննէսի հետ միայնակ ու մօտենալով հանգուցեալին բռնեց Նորա ձեռքից և ասաց. «աղջիկ, քեզ եմ ասում, վեր կաց»։ Մեռածը այն րոպէին վեր կացաւ և սկսաւ մանգալ։ Սա տասներկու տարեկան էր։ Ամենքը սարսափեցան տեսնելով այս հրաշքը։

Յիսուս Քրիստոս հրամայեց յարութիւն ստացող աղջկանը կերակուր տալ և ամենին սաստիկ արգելեց այս անցքը պատմել։

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՀԻՒԱՆԴԸ ՊՐԱՊԱՏԻԿԷ ԱՒԱԶԱՆԻ ՄՕՏ

Յովհ. ե. 2.

Յիսուսի Քրիստոսի իր քարոզութիւնը սկսելից յետո եկաւ երկրորդ անգամ Պասէքի տօնը։ Այս տօնի համար հաւաքվեցաւ Երուսաղէմ ըստ սովորութեան մեծ բազմութիւն, այստեղ եկաւ Տէրն էլ։ Այս ժամանակ ինչպէս էլ միշտ նա բարերարութիւն էր անում խեղճերին։

Երուսաղէմում այն դրան մօտ, որն որ կոչվում էր ոչխարի դուռը, կար առողջարար ջրի մի աւազան, որ Եբրայեցերէն անուանում էր Բեթհեղդա, այսինքն՝ տուն ողորմութեան, որովհետև այս աւազանի չորս կողմում շինած էին հինգ սրահ, ուր պառկած էր հիւանդների բազմութիւն, այն է՝ կոյրեր, կաղեր, անդամալուծներ և ուրիշ զանազան ցաւերով հիւանդներ։ Սոքա ամենքը սպասում էին ջրի յուզմանը, որովհետև այս ջուրը միշտ առողջարար չէ, այլ տարին մի անգամ, երբ հրեշտակը յուզում էր նորան։ Երբ աւազանի ջուրը սկսում էր աղեկոծվել, հիւանդները շտապում էին ընկնելու նորա մէջ և ով առաջինը լուացվում էր ջրի յուզմանից յետո, նա առողջանում էր, ինչ հիւանդութիւն էլ որ ունենար։

Սորա հիւանդանոցումը կար մի խեղճ հիւանդ, որն որ չունէր ոչ եղբայր, ոչ որդի և ոչ բարեկամ, որ օգնէր նորան աւազանը մտնելու, իսկ ինքը անկարող էր այդ անել։ Նա այստեղ պառկած էր երեսուն ութը տարի և առանց երկբայու-

թեան կերակրվում էր ողորմութեամբ. բայց ամենից կարևոր ժամանակը ոչ ոք չէր ուզում նրան օգնել։ Աղքատ մարդը թշուառութեան մէջ հաղիւ է գտնում բարեկամ երկրիս երեսին, այլ միշտ ունի նա պաշտման երկնքումը։

Յիսուս Քրիստոս, երբ եկաւ աւազանի մօտ ու տեսաւ հիւանդին, հարցրեց. «կամենում ես առողջ լինիլ»։ «Տէր, պատասխանեց հիւանդը, ես չունիմ ոչ ոք, որն որ ինձ մոցնէ աւազանը, երբ ջուրը սկսում է յուզվիլ. իսկ ես ինքս այնպէս թոյլ եմ, որ երբ հասնում եմ աւազանի մօտ, տեսնում եմ, որ արդէն մէկ ուրիշը մտել է ինձանից առաջ»։ Քրիստոսը ասաց. «վեր կաց, առ մահիճդ և գնա»։ Նոյն րոպէին այն մարդն իրեն բոլորովին առողջ զգաց. նա վեր կացաւ, վեր առաւ մահիճն և հեռացաւ այն տեղից երախտագիտութեամբ լիքը սրտով և ուրախութեամբ։ Այս միջոցին Յիսուս Քրիստոս առանց նկատվելու հեռացաւ այնպէս, որ իրանից բժշկութիւն ստացող հիւանդը չկարողացաւ իմանալ Նորա անունն էլ։

Այս բժշկութեան օրը շաբաթ էր, Մովսէսի օրէնքով արգելած էր ամենայն աշխատանք այս օրը։ Տեսնելով, որ հիւանդը տանում էր իր մահիճը, Նորա մօտիկ գտնուողները ասացին նրան. «դու չպէտք է բարձրացնես մահիճդ, մի՞թէ չես իմանում, որ այսօր շաբաթ է։ Առողջացածը պատասխանեց. «Ով որ ինձ բժշկեց, հրամայեց ինձ վեր կենալ, առնել իմ մահիճս և երթալ»։ Նա չէր երկրայում թէ նա, ով մի խօսքով իշխանութիւն ունի երեսուն ութը տարուան հիւանդութիւնը բժշկելու, յայտնի բան է, կարող է հրամայել նմանապէս շաբաթ օրը վեր առնել մահիճն և տանել։ Ամենքը սկսան հարցնել, թէ ո՞վ նրան բժշկեց. Բայց Յիսուս Քրիստոս արդէն հեռացել էր և Նորա բարերարածը չէր ճանաչում նրան։ Մի քանի ժամանակից տէրը հանդիպեցաւ այն մարդուն տաճարում և

ասաց նրան. «այժմ դու առողջ ես, զգույշ եղիր, այսուհետև էլ մեղք մի գործեր, որ աւելի վատ չլինի քեզ»։

Բժշկվածը ճանաչելով իր բարերարին ամենին պատմում էր, որ իրեն Յիսուսը բժշկեց։ Յայտնի բան է, նա այս անում էր երախտագիտութիւնից, կարծելով, թէ ամենքը իրեն հետ միասին կ՝փառաւորեն Աստուն այսպիսի հրաշքի համար։ Բայց Հրէաների սրտերը բոլորովին հեռի էին ճշմարիտ բարեպաշտութիւնից և սէրից դէպի իրենց բարեկամները։ Նոքա հաստատ էին միայն արտաքին ծէսերին, որոնց ներքին խորհուրդը ամենևին չէին հասկանում։ Նոքա շատ ատում էին Յիսուս Քրիստոսին, աշխատում էին մինչև Նրան սպանել անգամ միայն նորա համար, որ Նա բարերարութիւն էր անում շաբաթ օրը։ Յիսուս Քրիստոս պատասխանում էր նրանց. «Իմ Հայրս մինչև այժմ գործում է և ես էլ գործում եմ»։

Հրէաները աւելի ևս զայրացան Յիսուս Քրիստոսի վերայ և ամեն կերպի աշխատում էին նրան զրկել կեանքից այն պատճառաւ, որ Նա իրեն անուանում էր Աստուծոյ Որդի և հաւասար Աստուծոյ։ Բայց Տէրը ոչինչ համարելով նոցա սպառնալիքը ասում էր. «Հայրը սիրում է որդուն և սովորցնում է նրան գործել այն, ինչ որ ինքն է գործում։ Դուք կ՝տեսնէք դեռ աւելի մեծ հրաշքներ։ Ինչպէս Հայրը յարութիւն է տալիս մեռելներին և կենդանացնում, նոյնպէս էլ որդին։ Հայրը ամեն դատաստանը տուեց Որդուն, որ ամենը պատուեն Որդուն, ինչպէս պատուում են Հօրը. ով չէ պատուում Որդուն, չէ պատուում Հօրն էլ, որն որ Նրան զրկեց։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, ով որ լսում է իմ խօսքերս և հաւատում է Ինձ Ղրկողին, Նա կ՝ստանայ յաւիտենական կեանք։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, կ՝գայ ժամը և եկած էլ է արդէն, երբ ամեն գերեզմաններում գտնվողները կ՝լսեն Աստուծոյ Որդու ձայնը և այն լսելով կ՝կենդանանան։ Նոքա, որոնք բարի գործք են գոր-

ծել, յարութիւն կ՝առնեն յաւիտենական կեանքի համար. իսկ նոքա, որոնք չարիք են գործել, յարութիւն կ՝առնեն դատապանի համար։

Այս ասելով Նա թողեց իր դէմ հաւաքված Հրէաներուն և նոցանից ոչ ոք չհամարձակվեցաւ յարձակիլ Նորա վերայ, որովհետև դեռ չէր հասած Նորա ժամը։

ԳԼՈՒԽ Ա.

ՄԻ ՔԱՆԻ ԽՐԱՏԱԿԱՆ ԱՆՑՔԵՐ

Մատ. ժբ. 1. Մարկ. բ. 23 Ղուկ. գ. 1. ժկ. 1.

Յիսուս Քրիստոս Երուսաղէմից Գալիլիա յետ դառնալիս իր աշակերտներովը շաբաթ օր անց էր կենում արտերի միջով։ Աշակերտները քաղցեցան, ուստի և կորզում էին հասկ, շփում բռնումը և ուտում։ Փարիսեցիներից մի քանիսը այս տեսան։ Մովսէսի օրէնքով ուրիշ ծանր աշխատանքների հետ միասին արգելված էր նմանապէս ցորեն աղալն էլ շաբաթ օրը։ Փարիսեցիները, որոնք կամենում էին երևիլ ամենից սուրբ և իմաստուն, հատուցում էին որ այս օր հասկ շփելն ընդդէմ է օրինաց և պախարակում էին այս բանի համար Յիսուսի աշակերտներուն։ Այս բանի համար Յիսուս Քրիստոս ասաց նրանց յետագայ խրատական խօսքերը. «եթէ դուք հասկանայիք, «Ողորմութիւն կամենում եմ և ոչ զոհ», բառերի բուն միտքը, դուք չէիք դատապարտիլ անմեղներուն։ Շաբաթը մարդուս համար է ստեղծած և ոչ թէ մարդս շաբաթի համար։ Մարդու Որդին Շաբաթի տէրն էլ է»։

Յայտնի բան է մենք պէտք է չգործենք ոչն և կիրակի օրերը, որոնք Աստուած ինքը նշանակել է մեր հանգստութեան համար, պէտք է դադարեցնենք ամեն ծանր աշխատանքներս,

նուիրենք այս օրը աղօթքի և ուրիշ փրկարար պարապմունքների։ Բայց էլի այս օրերն, որոնք առանձնապէս նուիրած են Աստուծոյ պաշտման համար, կարող ենք պարապել օգտակար գործքերով էլ, մանաւանդ այնպիսիներով, որոնք չէ կարելի ուշացնել, նոյնպէս էլ մարդասիրութեան գործքերով։

Յիսուս Քրիստոս միանգամ ճաշում էր մի Փարիսեցու մօտ։ Այն ժամանակուան սովորութիւնը, որ սուրբ էր համարվում, պահանջում էր, որ ճաշից առաջ և յետո մարդիկ ձեռքերը լուանային։ Փարիսեցին ջերմեռանդութեամբ կատարում էր այս սովորութիւնը. Յիսուս Քրիստոս իր աշակերտներով միշտ չէր հետևում այս սովորութեան, ցոյց տալու համար, որ արտաքին լուացումն ինքն ըստ ինքեան ոչինչ նշանակութիւն չունի։ Փարիսեցին անբարեակամութեամբ նկատեց այս և մտածում էր. «Ինչո՞ւ ոչ նա և ոչ նորա աշակերտները չեն լուանում ձեռքերը»։ Տէրը, որին յայտնի են ամեն մարդու խորհուրդները, ասաց. «դուք Փարիսեցի՛ք զգ սովորութիւն ունիք սրբել բաժակի և պնակի արտաքինը, իսկ ձեր ներքինը յափշտակութեամբ և չարութեամբ լի՛ք էր»։

Պիղատոս՝ Հրէաստանի Հռովմայեցի կառավարիչը հրամայեց դատապարտել՝ մահ մի քանի Գալիլիացիներուն, որոնք կասկածելի էին Հռովմայեցւոց կառավարութեանը. նրանց դատապարտեցին և սպանեցին ոչ օրին և նոցա արիւնը խառնվեցաւ բերած զոհերի արիւնի հետ։ Երբ այս բանը պատմեցին Յիսուս Քրիստոսին, Նա պատասխանեց. «դուք կարծում էք, որ այս Գալիլիացիները ուրիշներից աւելի մեղաւոր են նորա համար, որ այնպիսի մահով մեռան։ Չէ՛, բայց եթէ դուք չէք ապաշխարիլ, դուք էլ ամենքդ մի և նոյն կերպով կ՝ կորչի՛ք»։

Մի և նոյն ժամանակներումն պատահեցաւ Երուսաղէմում մի ուրիշ դժբաղդութիւն էլ։ Աշտարակը, որ կանգնած էր Սելոամի աւազանի մօտ, քանդվեցաւ և սպանեց տասն և ութ

հոգի։ Յիսուս Քրիստոս ասաց. «կարծո՞ւմ է ք դուք, որ մարդիկ, որոնք Սելոամի աշտարակի տակը մնացին, ամենից մեծ մեղաւորներն էին բոլոր Իսրայէլի մէջ։ Հաւատացնում եմ ձեզ, որ այդպէս չէ։ Եթէ դուք չէք ապաշխարիլ, դուք էլ նոցա նման կ՚կորչի ք»։

Այնպէս էլ մենք, որանց նման անց քերը լսելով պէտք է մտածենք՝ եթէ մեզ էլ յանկարծակի մահը վրայ հասնի, ի՞նչպէս պէտք է դուր գանք Աստուծոյ՝ մեր դատաւորի առաջը։ Մեր մերձաւորի դժբաղդութիւնը տեսնելով պարտական ենք զգուշանալու։

ԳԼՈՒԽ ԼԱ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԲԺՇԿՈՒՄ Է ԳՕՍԱՑԵԱԼ ՁԵՌՔՈՎ. ՄԱՐԴՈՒՆ

Մատ. ժբ. 10. Մարկ. գ. 1. Ղուկ. գ. 6.

Գալիլիաումը ճանապարհորդութիւն անելու ժամանակ միանգամ շաբաթ օր Փրկիչը մտնելով ժողովրդանոց քարոզում էր ժողովրդեան։ Նորա ունկնդիրների մէջ էր մի հիւանդ մարդ էլ, որի աջ ձեռքը բոլորովին գօսացած էր այնպէս, որ նա ամենևին չէր կարողանում նրան գործածել։

Այսաեղ գտնվող Դպիրներն և Փարիսեցիները նայում էին Յիսուսի Քրիստոսի գործքերին և սպասում էին թէ արդեօք չի բժշկիլ նա մէկին շաբաթ օրը, որ կարողանան նրան ամբաստանել այն գործքի համար, որնոր նոցա կարծիքով արժանի էր պատժի, որովհետև նոքա այն համարում էին պատուիրանի ընդդէմ։

Տէրը, որնոր գիտէր նոցա խորամանկութիւնը, դառնալով գօսացածին ասաց. «վեր կաց և եկ մէջ տեղը առաջ»։ Գօսացածը կատարեց հրմանն և վեր կացաւ բոլոր ժողովրդեան

առաջին. ամեն բարի մարդ կ'ցաւէր այն ողորմելի վրայ, որնոր զուրկ էր այն ձեռքից, որով նա վաստակում էր իր օրուան հացը. բայց նայողները ոչինչ չէին զգում բացի հեռաքրքրութիւնից, նոքա կամենում էին տեսնել, ինչպէս այս ամենը կ'վերջանայ։

Յիսուս Քրիստոս ասաց Դպիրներին և Փարիսեցիներին. «Ես հարցնում եմ ձեզանից. ի՞նչ պէտք է գործել շաբաթ օրը բարի թէ չար, կորցնել մարդու թէ փրկել նրան»։ Ամենքը լուռ կեցան, որովհետև ոչ կարող էր ասել, որ շաբաթ օր չպէտք է գործել բարի, չպէտք է փրկել մի մարդ։

Տէրը շարունակեց. «եթէ ձեզնից մէկը ունի ոչխար և նա ընկնի փոսը, չի՞ հանիլ նրան շաբաթ օրն էլ անգամ. բայց մարդս ո՞րչափ առաւել է քան ոչխարը»։ Այս խօսքին դէմ էլ ոչինչ չէր կարելի ասել. ամենքը պահեցին կրկին լռութիւն։

Փրկիչը ցաւում էր նոցա սրտերի քարանալու վրան և դառնալով գօսացածին ասաց. «Ձգի՛ր ձեռքդ»։ Նա ձգեց չորացած ձեռքն, որնոր նոյն րոպէին առողջացաւ և դարձաւ միւսի նման։

Դպիրներն և Փարիսեցիները, որոնք կամենում էին նուազեցնել Յիսուսի փառքը, ամօթով մնացին ժողովրդեան բարմութեան առաջին։ Նոքա զայրացան և դուրս գալով ժողովրդանոցից խորհուրդ էին անում իրենց մէջ, թէ ի՞նչ միջոցներով կորցնեն Նրան, Որնոր բարերարութիւն էր անում ամենին և որնոր Նրանց էլ ոչ մի յանդիմանութեան խօսք չասաց։ Բայց Յիսուս Քրիստոս իմանալով նոցա խորհուրդը հեռացաւ և գնաց իր աշակերտներով Գալիլիացւոց ծովի մօտ։

ԳԼՈՒԽ ԼԲ.

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ.

Մատ. Ժ. 1.

Երբ Յիսուս Քրիստոս գարձաւ կրկին Գալիլիա, Նորա մօտ ժողովեցաւ էլի մեծ բազմութիւն ամեն կողմից։ Գալիս էին ոչ միայն Իսրայէլի երկրից, այլ և կռապաշտ քաղաքներից՝ Տիւրոսից և Սիդոնից, որ տեսնեն Նրան և լսեն Նորա վարդապետութիւնը։ Շատերը բերում էին Նորա մօտ իրենց հիւանդներին և Նա բժշկում էր նրանց։ Շատերը բաց էին անում նրան իրենց ցաւերը, Նա մխիթարում էր նրանց։ Շատերը կամենում էին լսել Նորա քարոզութիւնները, Նա խրատում էր նրանց լինել առաքինի և երանելի։ Ողորմածը ոչ ոքից չէր հեռանում, մինչև մեղաւորներից էլ անգամ. Նա պատրաստ էր ամենին օգնելու։

Յիսուս Քրիստոս շատ անգամ հեռանում էր ժողովրդից և աշակերտներից, որ մենակ աղօթք անէ։ Մի անգամ բոլոր գիշերը աղօթքով անցկացնելից յետո, Նա գարձաւ Իր աշակերտների մօտ և տեսնելով ամեն կողմից հաւաքված բազմութիւնը, որ եկել էր լսելու Նորա վարդապետութիւնը, շատ ցաւեցաւ այս մարդոց վրայ, որոնք ցրուում էին ինչպէս ոչխարներ առանց հովիւի։ Յիսուս Քրիստոս ասաց իր աշակերտներին. «Հունձը շատ է, իսկ մշակները սակաւ են։ Խնդրեցէք հնձի Տիրոջն, որ նա կանչէ շատ հնձողներ իր արտը»։ Սրանից յետոյ կանչեց Իր մօտ աշակերտներուն և ընտրեց նրանցից Իսրայէլի տասնմէկ թուովը տասներկուսին. սոքա պէտք է քարոզէին Փրկչի վարդապետութիւնը։ Նա անուանեց սրանց Առաքեալներ։

Այս տասներկու Առաքեալների անուններն են. Սիմոնը՝ Պետրոս անուանածը և Անդրէաս նորա եղբայրը, Յակոբոս և

Յովհաննէս՝ Զէբեդեայ որդիքը, Փիլիպպոս և Բարթուղիմէոս, որն որ արդէն յայտնի է Նաթանայէլ անուանով, Թովմաս և Մաթէոս մաքսաւորը, Յակոբոս Ալփեայ Ղէբէոս՝ Թադէոս անուանածը, Սիմոն Կանանացի, այսինքն՝ Կանանայից և Յուդա Իսկարիովտացին։ Բայց այս տասնեքկուսից Տէրը ընտրեց էլի ութը եօթանասուն առաքեալներ։

Յիսուս Քրիստոս նրանց երկու երկու զրկելով ասաց. «Մինչև սահմանած ժամանակի գալը մի՛ գնաք ոչ Սամարացւոց քաղաքները և ոչ հեթանոսների մօտ, այլ գնացէ՛ք առանձնապէս Իսրայելի տան կորած ոչխարների մօտ։ Քարոզեցէ՛ք նրանց Աստուծոյ արքայութեան մօտենալը, հիւանդներուն բժշկեցէ՛ք, բորոտներուն սրբեցէ՛ք, մեռելներին յարութիւն տուէ՛ք, դեւերուն աքսորեցէ՛ք։ Դուք անվարձ ստացաք այս պարգևը, իրեն՛ք էլ առանց վարձի տուէ՛ք ուրիշներին։ Ճանապարհի համար մի՛ առնէ՛ք ձեր հետ ոչ ոսկի, ոչ արծաթ, ոչ պղինձ. մի՛ առնէ՛ք ոչ պարկ հացով, ոչ աւելորդ շոր և կօշիկ և ոչ գաւազան. ամեն մշակ արժանի է վարձի իր աշխատանաց համար»։

«Երբ կ՚մտնէ՛ք մի քաղաք կամ գիւղ, իմացէ՛ք ամենից արժանաւորն ո՞վ է և նորա տանը բնակեցէ՛ք, մինչև որ թողնէ՛ք այն տեղը։ Երբ տունը կ՚մտնէ՛ք, ողջոյն տուէ՛ք տան տիրոջը այս խօսքերով. «խաղաղութիւն այս տանս»։ Եթէ նա արժանի է ձեր օրհնութեան, նա կ՚իջնի նորա վերայ, իսկ եթէ արժանի չէ, ձեր օրհնութիւնը ձեզ մօտ կ՚դառնայ»։

«Եթէ մէկը չի ընդունիլ ձեզ և չի լսիլ ձեր խօսքերը, դուրս գալով անից կամ այն քաղաքից, թափ տուէ՛ք ձեր ոտների փոշին։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ Սոդոմին և Գոմորին առաւել հեշտ կլինի դատաստանի օրը քան թէ այն քաղաքին»։

«Ես զրկում եմ ձեզ ինչպէս ոչխարներուն գայլերի մէջ և այս պատճառաւ եղէ՛ք խոլ ագէտ իբրև օձ և միամիտ ինչպէս աղաւնի։

Ոչ ապաքէն երկու ճնճղուկը մի դանդով (փոքրիկ դրամ է) են ծախուում, բայց և ոչ մէկը նոցանից առանց ձեր երկնաւոր հայր կամքին չէ ընկնում երկրիս վերայ. իսկ ձեր գլխի մազերն էլ համարած են։ Մի վախենաք, դուք շատ ճնճղուկներից էլ լաւ էք»։

Ով որ ինձ կ՝խոստովանի և կ՝փառաւորէ մարդոյ առաջին, նա էլ նրան կ՝խոստովանում և կ՝փառաւորում իմ երկնային Հօրս առաջին. բայց ով որ ինձ կ՝ուրանայ մարդոց առաջին, նա էլ նրան կ՝ուրանամ իմ երկնային Հօրս առաջինն։

«Ով որ սիրում է իր հօրը կամ իր մօրը աւելի քան թէ ինձ, նա ինձ արժանի չէ։ Ով չի առնիլ իր խաչն ու չի գալ իմ ետևիցս, նա ինձ արժանի չէ»։

Ով ձեզ ընդունում է, ընդունում է ինձ. իսկ ով ինձ ընդունում է, ընդունում է ինձ Ղրկողին։ Ով որ այս փոքրիկներից մէկին կ՝տայ մի բաժակ սառը ջուր իմ աշակերտներիս անունով, ճշմարիտ եմ ասում, ճշմարիտ եմ ասում ձեզ, նա առանց վարձի չի մնայ»։

Յիսուս Քրիստոս վերջացնելով այս խրատն և թողնելով աշակերտներուն, որոնց Նա ղրկեց, իր մօտ մնացածների հետ միասին գնաց ուրիշ քաղաքներ քարոզելու և բարերարելու։

ԳԼՈՒԽ ԼԳ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐՈՒԹԻՆ Է ՏԱԼԻ ՆԱՑԻՆԻ ԱՑՐԻ ԿՆՈՋ ՈՐԴՈՒ

Ղուկ. Է. 11.

Իր ճանապարհորդութեան ժամանակ Գալիլիաստանը Յիսուս Քրիստոս մօտեցաւ մի քաղաքի, որնոր անուանվում էր Նային։ Նրան ուղեկից էին աշակերտներն և ժողովրդեան բազմութիւնը։

ելք մտեցան քաղաքի դրան, հանդիպեցան մարդոց, որոնք տանում էին թաղելու մի երիտասարդ, որ մի խնդճ այրիի միամոր որդին էր։ Որբացած, անօգնական մայրը արտասուքով և յուսահատութեան մէջ գնում էր իր որդու անշունչ մարմնի ետևից. քաղաքացիներից շատերը, որոնք ցաւակից էին նրան, գնում էին նորա հետ։ Յիսուս Քրիստոս ցաւեցաւ մօր տրտմութեան վրայ և ասաց նրան. «մի՛ լար։ Նա նշան արաւ մարմինը տանողներին, որ կանգնեն և նոքա հպատակեցան։ Փրկիչը մօտեցաւ դիակին և ասաց. «սպասանի՛, քեզ եմ ասում, վեր կաց»։ Մեռելը իսկոյն կենդանացաւ, նստաւ ու սկսաւ խօսել։ Յիսուս յանձնեց նրան իր մօրը։ Ամէն այս հրաշքը տեսնողները զարհուրեցան. ամէնքը փառաւորում էին Աստծուն և ասում էին. «մեծ մարգարէ յայտնվեցաւ մեր մէջ և Տէրը այցելութիւն արաւ իր ժողովրդեան»։ Այս հրաշքի համբաւը տարածվեցաւ բոլոր Հրէաստանում և շրջակայ երկիրներումը։

ԳԼՈՒԽ ԼԴ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՕՏ ԳՐԿՈՒԱԾՆԵՐԸ

Մատ. ժա. 2. Ղուկ. է. 18.

Յովհաննէսը՝ այս մեծ և սուրբ մարդը արգելած էր բանտումը։ Նորա բանտարկելութեան պատճառը յետոյ կ՚յայտնվի։ Նորա աշակերտներն, որոնք նրան այցելութիւն էին անում բանտումն էլ, պատմեցին նրան այն հրաշքներն, որոնք Յիսուս գործում էր։ Յովհաննէս ղրկեց նոցա մօտ իր երկու աշակերտներուն հրամայելով նրանց հարցնել. «Դու այն ես արդեօք, որնոր պէտք է գայ, թէ ուրիշին սպասենք։

Յովհաննէսի աշակերտները գտան Յիսուսին պատած խնդճերի բազմութեամբ։ Ամէն նորա մօտ հաւատով եկողներուն

բժշկում էր նա, մխիթարում և ուսուցանում։ Երբ իր գործը աւարտեց, Տէրը ասաց Յովհաննէսի աշակերտներին. «գնացէ՛ք, ասացէ՛ք Յովհաննէսին, ինչ որ ձեր աչքով տեսաք՝ կոյրերը տեսնում են, կաղերը ման են գալիս, բորոտները սրբվում են, խուլերը լսում են, մեռելները յարութիւն առնում և աղքատներն աւետարանվում են։ Երանելի է նա, որ չէ գայթակղվում Ինձմով։

Երբ Յովհաննէսի աշակերտները գնացին, Յիսուս Քրիստոս սկսաւ խօսել ժողովրդեան հետ Յովհաննէս Մկրտչի վերայ։ Նա ասաց. «ի՞նչ տեսնելու գնացիք անապատը, եղեգն, որ շարժվում է հողմից, ի՞նչ տեսնելու գնացիք, արդեօք փափկութեան շորերով զարդարած մարդո՞ւ։ Բայց փափկութեան շորերով զարդարվողները թագաւորների պալատներումն են։ Ի՞նչ տեսնելու գնացիք, մարգարէի՞ն արդեօք։ Այո՛, ես ասում եմ ձեզ, նա առաւել է քան թէ մարգարէ։ Նա այն է, որի համար գրած է գրից մէջ. «ղրկում եմ իմ հրեշտակին քո առաջ, որ յարդարէ քո ճանապարհդ»։

Սրանից յետոյ Յիսուս Քրիստոս սկսաւ ցաւակցութեամբ նախատել այն քաղաքներն, որոնց մէջ կատարեց այնքան հրաշքներ և որոնք չապաշխարեցան, ինչպիսի են Քարոզին, Բեթսայիդա, Կափառնայում։ Նախադուշակեց այս քաղաքների քանդումն և ամայանալն և նոցա բնակիչների ծանր պատիժն Աստուծոյ դատաստանի օրը։ Այս միջոցին Առաքեալներն, որոնց նա քարոզելու ղրկել էր, յետ դարձան և պատմում էին Նրան իրենց գործոց յաջողութիւնն և հրաշքներն, որոնք նոքա գործել էին, մանաւանդ այն թէ դեւերն էլ հպատակում են նոցա վախենալով Քրիստոսի անունից։ Բայց Փրկիչը ասաց Նրանց. «մի՛ ուրախանաք Նրանով, որ դեւերը հպատակում են ձեզ, այլ որ ձեր անունները գրուած են երկնքումը»։ Այն ժամանակ նա ուրախացաւ հոգւով և ասաց. «շնորհակալ եմ Քեզնից, Հա՛յր՝

երկնքի և երկրի Տէրը, որ Դու ծածկեցիր Քո գաղտնիքը իմաստուններից և գիտուններից ու յայտնեցիր այն երեխաներին։ Այսպէս էր Քո կամքը։ Ամենը Ինձ է տուել իմ Հայրս և ոչ ոք չէ ճանաչում Որդուն բայց եթէ Հայրը և Հօրն էլ միայն Որդին է ճանաչում և նոքա միայն, որոնց որդին կ՚յայտնէ։ Եկէք ինձ մօտ ամէն աշխատեալներդ և ես կ՚հանգստացնեմ ձեզ։ Առէք ձեր վրայ իմ լուծս և սովորեցէք Ինձանից, որովհետև ես հեզ եմ և խոնարհ սրտով և կ՚գտնէք ձեր անձանց հանգիստ. իմ լուծս քաղցր է և իմ բեռնս փոքրիկ»։

ԳԼՈՒԽ ԼԵ.

ՍԵՐՄԱՆԱՑԱՆԻ ԵՒ ՀՆՁԻ ԱՌԱԿԸ

Մատ. ժգ. 4. Մարկ. դ. 3. Ղուկ. բ. 5.

Յիսուս Քրիստոս միանգամ կանգնած էր Գէնեսարէթի ծովակի ափումը և քարոզում էր. ժողովուրդը մեծ բազմութիւնով հաւաքվում էր նորա մօտ։ Ի ժամանակ Յիսուս Քրիստոս նաւում նստած էջ և սկսաւ ուսուցանել առակներով։

«Մէկ սերմնացու դնաց սերմանելու, ասում էր Քրիստը, և սերմանելիս մի բանիսը սերմերից ընկան ճանապարհի եզրը ոտնակոխ եղան անցկենդանիներից կամ կերուկոր թռչուններին, միւսները ընկան ապառաժի վերայ, ուր կար շատ հող, որ արմատ բռնէին, նոքա բուսան, բայց արեգակի տապը չորացրեց նրանց, որովհետև արմատ չունէին։ Միւսները ընկան փշերի մէջ և աճեցին. որովհետև փշերից խեղդվեցան, բայց ոմանք ընկան լաւ երկրի վերայ ու տուին պտուղ, մի բանիսը հարիւրապատիկ, միւսները վաթսնապատիկ և ոմանք երեսնապատիկ։ Ով որ ունի ականջ լսելու, թող լսէ»։ Աւելացրեց Յիսուս Քրիստոս։

Աւելի բան ևս խնդրեցին նրանից, որ մեկնի այս առակի

միաքը և նա մեկնեց այն յետադայ կերպով. ասերին է Աստուծոյ խօսքը։ Ճանապարհի վրայ ընկած սերմերը նշանակում են Աստուծոյ խօսքը, որ քարոզած է այնպիսի մարդոց, որոնք լսում են այն, բայց իրենց կոպտութեամբ չեն հասկանում նրան, ուստի և սատանայն հեշտութեամբ խլում է նրան նոցա սրտերից։ Հոլով ծածկած ապառաժը նշանակում է սրտերը այն մարդոց, որոնք լսում են Աստուծոյ խօսքերը, խնդութեամբ ընդունում են նրանց. բայց չեն թողնում արմատ բռնելու և այն պատճառաւ նրանց պատահած նեղութիւններն և հալածանքն ուրանալ են տալիս նրանց ճշմարիտ հաւատը. փորձանաց ժամանակը շուտ թողնում են նոքա նրան։ Փշերի մէջ ընկած սերմերը նշանակում են Աստուծոյ խօսքը, քարոզած այնպիսի մարդոց, որոնք լսում են այն. ընդունում են նրան. բայց աշխարհային հոգսերն ու մեծութեան պատրանքը խեղդում են նրան և նա պտուղ չէ բերում։ Իսկ լաւ երկրում ցանածը նշանակում է այն մարդոց, որոնք լսում են Աստուծոյ խօսքը, հասկանում են նրան և ուրախութեամբ ընդունում են իրանց սրտումն և նա բերում է պտուղ, երբեմն հարիւր, երբեմն վաթսուն և երբեմն երեսուն։

Յիսուս Քրիստոս ասաց ժողովրդեան ուրիշ առակ էլ։

«Երկնից արքայութիւնը նման է այն մարդուն, որնոր ցանեց լաւ սերմն իր ագարակումն։ Բայց մինչև որ նորա մարդիկը քնում էին, եկաւ նորա թշնամին և ցանեց որոմն (վասրոյս) ցորենի մէջ։ Բուսաւ ցորենը, բուսաւ նմանապէս որոմն էլ։ Ծառաները գնացին իրենց տիրոջ մօտ և ասացին. «Տէր, Դու ցանեցիր լաւ սերմն. ո՞րտեղից է որոմն գոյացել։ Տէրը պատասխանեց. «իմ թշնամիս է ցանել այն։ Ծառաները ասացին նրան. «թո՞յլ տուր մեզ, որ գնանք ու քաղենք նրանց։—«Չէ», պատասխանեց Տէրը, «կարող է պատահել, որ որոմն քաղելիս ցորենն էլ հետը հանէք։ Այժմ թո՛ղ բուսնեն ամենքը միասին.

բայց հնձի ժամանակ ես կպատուիրեմ հնձողներին հաւաքել որոմն, կապել միասին և գցել կրակը. իսկ ցորենը կ՚ժողովեմ իմ շտեմարանիս մէջ»։

Սեկնիր մեզ որոմնի առակը». ասացին աշակերտները Փրկչին առանձին։

Յիսուս Քրիստոս ասաց նրանց. «Նա» որնոր ցանեց լաւ սերմն, Մարդու Որդին (այսինքն ինքն Յիսուս Քրիստոս) է, իսկ ագարակը աշխարհս, ցորենը նշանակում է արքայութեան որդուոցը, իսկ որոմն չարի որդուոցը։ Թշնամին, որ ցանեց որոմն, է սատանան։ Հնձողները հրեշտակներն են և հունձը աշխարհիս կատարածը։ Ինչպէս որ ժողովում են որոմն և այրում են նրան կրակումը, այնպէս կ՚լինի աշխարհիս կատարածին. Մարդու Որդին կ՚զրկի Իր հրեշտակներուն, նոքա կժողովեն ամեն անօրէնութիւն գործողներուն և կ՚գցեն կրակը. այնտեղ կ՚լինի լացն և ատամանց կրճատելը։ Բայց արդարները կ՚ծագին իրենց Հօր արքայութիւնումն ինչպէս արեգակ։ Ով ականջ ունի լսելու, թող լսէ»։

ԳԼՈՒԽ 13.

ՓՐԿՉԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱԿՆԵՐՆ ԷԼ.

Մատ. ժգ. 31. Մարկ. դ. 30. Գ.ուկ. ժգ. 18. Գ.ուկ. ժԵ. 4.

«Ինչի՞ նմանացնեմ ես երկնից Արքայութիւնը», ասում էր Յիսուս Քրիստոս, «ի՞նչպէս նկարագրեմ ես նրան ձեզ։ Նա նման է մանանեխի հատին, որն որ մարդ ցանում է իր ագարակումը։ Այս հատը ամենափոքրիկ սերմերից մէկն է. բայց երբ աճում է, լինում է ամեն բանջարներից բարձր այնպէս, որ նորա շուաքի տակը թռչունները նստում են»։

Այսպէս ամեն բարի բան մարդուս մէջ սկսում է հապիւ

նկատելի կերպով, բայց երբ արմատ է թողնում, գործում է մեծ և երևելի առաքինություններ. նոյնպէս էլ ընդհակառակն չարությունը մնում է մարդուս սիրտը հաղիւ նկատելի կերպով, բայց արմատանալով խեղդում է ամեն բարի զգացմունքներն և դարձնում է նրան չարագործ: Ուստի և մարդ պէտք է զգոյշ լինի ամեն փոքրիկ բանումն էլ. նա պէտք է սնուցանէ իր սրտումը հակամիտութիւն դէպի բարին, մինչև շնչին պատահմունքներումն էլ հարկաւոր է հաստատ մնալ առաքինության և բարեպաշտության կանոնների մէջ. նա պէտք է ջնջէ ամենափոքրիկ հակամիտությունը դէպի չարը և փախչի փորձությունից: Ահա երկնից արքայության արժանանալու միջոցը:

«Երկնից արքայությունը», շարունակեց Փրկիչ, «նման է խմորին, որնոր կինը խառնելով երեք գրիւ ալիւրի հետ թողնում է, մինչև որ ամենը խմորվում է»:

Փոքր խմորը խառնվում է այնքան շատ ալիւրի հետ և խմորվում է նրանով բոլոր ալիւրը: Այս խմորած ալիւրից շինվում է հաղով և ածեցական հաց: Այսպէս թող Փրկչի խօսքերը մնան մեր սիրտն և արժանի անեն մեզ երկնային արքայության: Բայց եթէ մենք կուանք շարության իշխանությունը մեր վրայ, նա խմորի պէս կ'ոիրէ մեր սրտին և չի թողնիլ տեղ ոչ մի բարի զգացմունքի համար:

«Երկնից արքայությունը», ասում էր Յիսուս Քրիստոս, «նման է գանձին, որ ծածկած է ագարակումը. ով որ գտնում է այն, ուրախությամբ շտապում է ծախելու ամեն բան, ինչ որ ունի, որ գնէ երկրի մասը, ուր ծածկած է գանձ»:

Մենք պարտական ենք ամեն բան զոհելու, որ հաստատուն մնանք Քրիստոսի վարդապետության և պահպանենք նրան ինչպէս մեր ամենալաւ գանձն, որնոր կարող է մեզ տալ երանություն և յաւիտենական կեանք: Մի և նոյն խրատը պարունակում է իւր մէջ յետագայ առակն էլ:

«Երկնից արքայութիւնը նման է վաճառականին, որոնք ծախում է մարգարիտ։ Երբ գտնում է մի թանգագին գեղեցիկ մարգարիտ, բոլոր ունեցածը ծախում է նրան գնելու համար»։

«Երկնից արքայութիւնը նման է ուռկանին, որոնք գցած է ծովը, նորա մէջ հաւաքվում են ամէն տեսակի ձկներ։ Բայց երբ այն լցվում է և հանում են նրան ափը, լաւ ձկներին ընտրում են, դնում են ամանի մէջ, իսկ վատերուն դէն են գցում։ Այսպէս կ'լինի աշխարհիս կատարածին էլ. կ'գան հրեշտակները, կ'բաժանեն չարերուն արդարներից և կ'գցեն նրանց կրակը։ Այստեղ կ'լինի լացն և ատամների կրճտալը»։

Աւելացնենք էլի մի քանի առակներ։

«Այն մարդը, որոնք ունի հարիւր ոչխար և եթէ նրանից մէկին կորցնէ, չի՞ թողնիլ արդեօք բոլոր խաշնը անապատում, որ գանէ կորածին։ Երբ գտնում է նրան, ուրախանում է ու շալակած իր ուսին բերում է տուն, կանչում է իր բարեկամներուն ու դրացիներուն և ասում է. «ուրախացէ՛ք ինձ հետ միասին, ես գտայ իմ կորած ոչխարս»։

Ինչպէս բարի հովիւը փնտռում է կորած ոչխարին, այնպէս էլ Փրկիչը կանչում է ապաշխարելու ամէն մեղաւորին։ Ինչպէս հովիւն ուրախանում է կորած ոչխարը գտնելուն վրայ, այնպէս էլ ուրախանում է երկնաւոր Հայրը մեղաւորի ապաշխարելուն վրայ։

Ո՞ր կինը, եթէ ունի տասն դրամ և կորցրեց մէկը նրանցից, չի վառիլ լապտեր, չի փնտռիլ անկիւններումը, չի աւելիլ սենեակը, որ գտնէ կորած դրամը։ Երբ գտնում է, հրաւիրում է իր բարեկամներուն և դրացիներուն և ասում է նրանց. «ուրախացէ՛ք ինձ հետ միասին, ես գտայ իմ կորցրած դրամս»։

Այս համեմատութիւնը մեկնելու համար Յիսուս Քրիստոս ասաց. «այսպէս իսկ ուրախանում են հրեշտակները երկնքումը մի մեղաւորի դարձի վրայ»։

Եթէ մէկը ձեզանից ունի մշակ, որնոր գործում է նորա ագարակը կամ արածում է նորա հօտը, շնորհակալութիւն անում է արդեօք նա մշակին, երբ սա յետ դառնում է օրվան աշխատանքից կամ վարձատրում է արդեօք նորա համար, որ նա լաւ կատարել է իր տէրտջ հրամանը. Ես կարծում եմ, որ չէ: Նոյնպէս էլ դուք, երբ ճշդութեամբ կատարում էք ձեր պարտաւորութիւնը, ջղէաք է պարծենանք. այլ ասէք, «մենք ինչպէս լաւ ծառաներ կատարեցինք մեր պարտքը, արինք այն, ինչ որ մեզ հրամայած էր»:

«Ծառայն, որնոր գիտէ իր տէրտջ կամքը և չէ կատարում այն, կ՚պատժվի խստութեամբ. իսկ նա. որնոր չէ կատարում իր տէրտջ կամքը, որովհետև չէ իմանում այն, կ՚պատժվի աւելի քիչ Ում շատ է տուած. նրանից շատ էլ կ՚պահանջվի. բայց ում սակաւ է տուած, նրանից քիչ էլ կ՚պահանջվի:

«Ով ձեզնից, եթէ կամենում է սկսել մի մեծ շինութիւն անել, առաջուց չի՞ հաշուիլ, որքան այն կնստի իրեն և արդեօք այնքան կարողութիւն ունի՞, որ հիմն գցելից յետո չսխալվի շինութիւնը դադրեցնելու և ծաղր լինելու մարդոց, որոնք կասեն. «ահա մարդ, որնոր սկսաւ շինութիւն և չունի կարողութիւն որ վերջացնէ այն»:

«Կամ ո՞ր թագաւորը, որնոր պատերազմում է ուրիշ թագաւորի հետ, առաջուց չէ հաշուում արդեօք կարո՞ղ է իր տասն հազար զօրքը ընդդէմ կենալ թշնամուց քսանհազարին: Եթէ չէ, նա զրկում է դեսպաններ և խնդրում է խաղաղութիւն»:

«Ով ձեզնից չունի այնքան հաստատութիւն, որ թողնելով ամեն բան զայ իմ ետևից, չէ կարող իմ աշակերտս լինել»:

ԳԼՈՒԽ ԼԷ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՐԱՏԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ՍՈՎՈՐՑՆՈՒՄ ԵՆ, ԹԷ ԱՂՕԹՔԸ ԱՆՄԵՐԺԵԼԻ Է

Գուկ. ԺԸ. 2.

«Խնդրեցէք», ասաց Տէրը, և կ՝տրվի ձեզ, փնտռեցէք և կ՝գտնէք. բաղխեցէք և կ՝բացուի ձեզ։

Մէկը ունէր մի բարեկամ, որի մօտ մի անգամ եկաւ նա գիշերով և ասաց. «բարեկամ, տուր ինձ փոխ երեք հաց. ինձ մօտ հեռուից եկաւ մի ծանօթս և ես չունիմ ոչինչ, որ կարողանամ նրան կերակրել»։ — Բարեկամը պատասխանեց նրան. «մի տաղտկացներ ինձ. ես դուռս փակել եմ, իմ որդիքս ամենքը քնում են. ես չեմ կարող այժմ վեր կենալ և քեզ համար հաց բերել»։ Բայց նա կանգնած է դրան եռեքը անդադար էլի բաղխում էր և խնդրում։ Այն ժամանակ բարեկամը ասաց. «եթէ բարեկամութիւնից չէ, գոնեա որ ապատվեմ նորա ձանձրացնելից կ՝տամ նրան, ինչոր ուզում է»։

Յիսուս Քրիստոս ուրիշ առակով էլ յորդորում էր Իր ունկնդիրներուն, թէ երբէք չպէտք է աղօթքից ձանձրանալ։

«Մէկ քաղաքումը», ասում էր նա, «կար մի դատաւոր, որնոր ոչ Աստուծմէ էր վախենում և ոչ մարդիկներից ամաչում. և նոյն քաղաքում բնակում էր մի այրի կին էլ, որնոր այս դատաւորից խնդրում էր պաշտպանութիւն իրեն նեղացնող թշնամիների դէմ։ Դատաւորը երկար ժամանակ չէր ականջ դնում նորա խնդրքին, վերջապէս ասաց ինքը իրեն. «եթէ ես Աստուծոյ երկիւղից և մարդասիրութիւնից պարտական չլինիմ էլ արդարութիւն տալու այս այրիին. գոնեայ միայն նորա համար կ՝կատարեմ նորա խնդիրը, որ ինձ ձանձրացնելից դադարէ»։ Եթէ անարիրտ դատաւորը լսեց վերջապէս խեղճ այրի կնոջ

ինգիրքը, մի՞թէ դուք կարծում էք, որ ողորմած Աստուածը չի լսիլ իր ընտրեալների աղօթքը, որոնք աղօթում են նրան գիշեր ու ցերեկ։ Մի՞թէ կարծում էք, որ նա կ՚թողնէ նրանց առանց պաշտպանութեան։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ նա շուտ կ՚զրկէ նրանց օգնութիւն։

ԳԼՈՒԽ ԼԸ.

ԱՊԱՇԽԱՐՈՂ ՄԵՂԱՒՈՐ ԿԻՆԸ

Դուկ. է. 31.

Իսրայէլացւոց սովորութիւնները ճաշի ժամանակ շատ բանում զանազան էին մերերից. զորօրինակ այսպիսի էին. սովորութիւնները լուանալու հիւրերի ոտները, ծխելու նրա համար հոտաւետ ծխանելիք, սրսկելու նրան անուշահոտ նիւթերով։ Այն երկիրների բնակիչները կօշկի կամ մաշկի տեղ հագնում էին հողաթափ և որովհետև նոքա ոտները չէին ծածկում, ուստի և սոքա շուտ փոշոտվում էին ու կեղտոտվում շատ։ Իսրայէլացիները, որոնք շատ սիրում էին մաքրութիւն, ճաշից առաջ լուանում էին հիւրերի ոտները և ձեռները, ու գլուխը օծում էին իւղով. իսկ ով բաւական հարուստ էր, ձիթապտղի ձէթի տեղ, որնոր այն երկրում հասարակ բան է, պատրաստում էր իր հիւրի համար անուշահոտ օծանելիք։

Փարիսեցիներից մէկը, Սիմոն անունով, աղաչից Յիսուս Քրիստոսին, որ իր հետ հաց ուտէ և Քրկիչը մտնելով Փարիսեցւոյ տունը սեղան բազմեցաւ։ Նոյն քաղաքում կար մի կին էլ, որին ամենքը ատում էին. որովհետև մեղաւոր էր նա։ Բայց այս կինը, ճանաչելով Յիսուս Քրիստոսին, մեծ յարգութիւն ցոյց տուեց Նրան ապաշխարելով իր մեղքերը։ Լսելով, որ Յիսուս Քրիստոս Սիմոն Փարիսեցւոյ տանն է, նա շուտով գնաց

այնտեղ Նրանից հոգևոր ողորմութիւն և մխիթարութիւն գտնելու համար։

Տուն ներս մտաւ թէ չէ, ընկաւ Փրկչի ոտները ու առանց մի խօսք ասելու թափում էր արտասուք, որով թաց էր անում Յիսուսի ոտները, և իր երկար մազերով սրբում ու համբուրում էր Նրանց։ Նմանապէս բերեց նա իր հետ շիշով ազնիւ իւղ, որով օծեց Փրկչի ոտները։

Փարիսեցին, որնոր վերծաթեց Յիսուս Քրիստոսին, լռութեամբ նայում էր ամեն բանին, ինչոր պատահում էր այնտեղ։ Նա իրեն պարտաւորութիւն էր համարում ասել ամեն յայտնի մեղաւորներուն և ասում էր ինքը իրեն. «եթէ Սա ճշմարտիւ մարգարէ լինէր, պէտք է իմանար, թէ ով է այս կինը, որնոր հանդիպակում է մերձենալ Նրան. նա մեղաւոր կին է»։

Յիսուս Քրիստոս իմանալով նորա խորհուրդն ասաց. «Սիմոն, ես քեզ մի բան ունիմ ասելու։—Ասա վարդապետ, պատասխանեց Սիմոնը։—«Մէկ փոխատու ունէր երկու պարտապան» ասաց Փրկիչը, «առաջինը պարտ էր Նրան յիսուն դահեկան, իսկ երկրորդը հինգհարիւր, բայց ոչ մէկը չէր կարողանում տալ իր պարտքը. փոխատուն երկուսին էլ ներեց նոցա բոլոր պարտքը։ Ի՞նչ ես կարծում, ո՞ր երկուսից աւելի սիրեց իր բարերարին»։—«Ես կարծում եմ նա, որին աւելի ներեց». պատասխանեց Սիմոնը։—«Ուղիղ դատեցիր». ասաց Տէրը։

Փարիսեցին չէր հասկանում, որ բանին է վերաբերվում այս առակը։ Այն ժամանակ Փրկիչը, դառնալով կնկանը, ասաց Սիմոնին. «տեսնում ես դու այս կնոջը։ Երբ ես քո տունը եկայ, դու ինձ ջուր էլ անդամ չտուիր որ Իմ ոտները լուանայի. իսկ սա անդադար Նրանց իր արտասուքով լուանում էր և մազերովը սրբում։ Դու Ինձ ընդունելիս չտուիր սովորական համբոյրն էլ. իսկ սա համբուրում է Իմ ոտները էլ։ Դու չօծեցիր իւղով Իմ գլուխս. իսկ սա աւծեց իւղ թանգագին Իմ ոտներիս վրայ, ուստի

և ասում եմ քեզ, որ ներվում են որա մեծ մեղքերն. որովհետև Սա շատ սիրում է Ինձ. իսկ ում սակաւ է ներվում, նա քիչ է սիրում»։

Յետոյ դառնալով դէպի կինը ասաց Տէրը. «ներվում են քո մեղքերդ»։ Այն ժամանակ սեղանի մօտ նստողները սկսան տրտնջալ, խօսելով միմեանց հետ. «Թէ ով է Նա, որ սեպհականում է իրեն մեղքեր թողնելու իշխանութիւնը»։ Բայց Յիսուս Քրիստոս չնայելով նոցա այս տրտնջանքին ասաց կնոջը. «քո հաւատդ փրկեց քեզ. գնա խաղաղութեամբ»։

ԳԼՈՒԽ ԼԹ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱԱՍՏՈՒՄ Է ՄՐՐԿԻՆ

Մարկ. գ. 55. Ղուկ. ը. 32.

Մի անգամ Յիսուս Քրիստոս, երբ Գեննեսարէթայ ծովակի մօտ էր, մտաւ նաւակը Իր աշակերտներով և ասաց նրանց. «եկէք անցնենք ծովակի միւս ափը»։—Եւ նաւեցին։ Գնալու ժամանակ Յիսուս Քրիստոս քնեցաւ։

Արդէն լճի մէջտեղումն էին և ահա վեր կացաւ սաստիկ հողմ. լիճը խիստ ալեկոծվեցաւ. ալիքները ծածկում էին նաւակն էլ ու փոքրիկ նաւը մեծ վտանգի մէջ էր. իսկ Յիսուս քնած էր։

Վախեցած աշակերտները պատեցին Նրան և զարթեցրին ասելով. «Տէր, փրկիր մեզ, մենք կորնչում ենք»։

Յիսուս Քրիստոս վեր կացաւ, ասաց հողմին փչել, իսկ ծովին ալեկոծել և տիրեց սրան մեծ խաղաղութիւն։

Այն ժամանակ Փրկիչը դառնալով իր աշակերտներին ասաց. «ո՞ւր է ձեր հաւատը»։ Նորա հետ եղողները, որոնք Նորա մէկ խօսքովը ապատեցան, ասում էին մէկ մէկու շատ զարմա-

ցած. «ով է Սա, որնոր իշխում է հողմերի և ալիքների վրայ էլ և նոքա հպատակում են նրան»:

ԳԼՈՒԽ Խ.

ՓՐԿՉԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔԵՐԸ

Օրինականներից (Փարիսեցիներից) մէկը հարցրեց Յիսուս Քրիստոսին. «Վարդապետ, ո՞ր պատուիրանը օրինաց մէջ ամենից մեծն է»: Տէրը պատասխանեց. «Սիրիր քո Տիրոջդ՝ Աստծուդ բոլոր սրտովդ, անձնովդ և մտքովդ. այս է մեծ և առաջին պատուիրանն և երկրորդն էլ սրան նման. սիրիր քո ընկերոջդ իբրև քո անձդ»: Սրանցից աւելի պատուիրան չկայ. այս երկու պատուիրանների մէջ պարունակվում են մարգարէների ամէն օրէնքներն և վարդապետութիւնները»:

Մէկ դպիր պատահելով Յիսուս Քրիստոսին ճանապարհին ասաց. «Տէր, ուր էլ գնաս կ՝հետևիմ քեզ»: Նա կարծում էր, թէ Յիսուս Քրիստոս շուտով կ՝ստանայ երկրաւոր թագաւորութիւն և կ՝հարստացնէ նրան այսպիսի հաւատարմութեան համար: Տէրը կարդում էր նորա սրտում եղածը, ուստի և պատասխանեց. աղուէսներն իրենց որջն ունին և թռչուններն իրենց բոյնը. իսկ Մարդու Որդին չունի մի տեղ էլ, ուր դնէ իր գլուխը»:

Ժողովրդից մէկը ասաց Յիսուս Քրիստոսին. «Տէր, հրամայիր իմ եղբօրս, որ բաժանէ ինձ հետ իր կայանքը»: Յիսուս Քրիստոս չէր ուզում խառնվել աշխարհային բաների մէջ. ուստի և պատասխանեց. «ո՞վ է դրել ինձ դատաւոր, որ ձեզ դատեմ և բաժանեմ»: Յետոյ ասաց երկու եղբայրներին էլ. «հեռացէ՛ք արծաթասիրութիւնից. հարստութիւնը մարդուս կեանք չէ տալիս»:

Մի անգամ Պետրոս Առաքեալը մոտենալով Փրկչին ասաց. «Տէր, եթէ եղբայրս ինձ զրկէ. քանի՞ անգամ ես պէտք է ներեմ նրան։ Ներե՞մ արդեօք եօթն անգամ։ Նա կարծում էր թէ զրկանքը եօթն անգամ ներելը մեծահոգութիւնից վեր բան է. բայց Տէրը պատասխանեց. «ոչ թէ եօթն, այլ եօթն եօթանասուն անգամ պէտք է ներես քեզ զրկողին»։

Յովհաննէս առաքեալը միանգամ ասաց Տիրոջը. «Վարդապետ, մենք տեսանք մէկ մարդ, որոնը մեզ հետ չէր մանդալիս. նա Քո անունով դեւեր էր հալածում։ Մենք արգելեցինք նրան այն գործելու»։—Ի զուր արգելեցիք նրան», պատասխանեց Տէրը, «Ով իմ անունով հրաշքներ է գործում, չի չարախօսիլ Իմ վրայ. ով մեզ ընդդէմ չէ, նա մեզ հետ է»։

Մի անգամ մի կին որոնը ժողովրդի բազմութեան մէջ էր և լսում էր Փրկչի քարոզութիւնները, հոգով չափ շարժվեցաւ նորա խօսքերից։ Նա սրտանց ուրախացած աղաղակեց. «երանելի է նա, ով որ Քեզ իր որովայնում ունէր և ով որ Քեզ իր ստինքով կերակրել է»։ Յիսուս Քրիստոս պատասխանեց. «այո պատճառաւ երանելի են նոքա էլ, որոնք լսում են Աստուծոյ խօսքը և պահում են նրան»։

Մի անգամ Յիսուս քարոզում էր Իր շուրջ կոլմը հաւաքված ժողովրդեան. ամենքը մեծ ուշադրութեամբ լսում էին նրան։ Մէկը ասաց Նրան. «ահա եկել են Քո մայրը և եղբայրներդ. նոքա կամենում են Քեզ տեսնել»։ Բայց Յիսուս Քրիստոս պատասխանեց. «ո՞վ է Իմ մայրս և Իմ եղբայրներս»։—Եւ ցոյց տալով Իրեն պատող ունկնդիրների վրայ աւելացրեց. «ահա՛ Իմ մայրս և Իմ եղբայրներս. նոքա, որոնք կատարում են իմ Հօրս կամքը, են Իմ մայրս էլ, եղբայրներս էլ, քոյրերս էլ»։

Փրկիչը մի անգամ նստած էր տաճարումը այն գանձանակի դէմ, որի մէջ ամենքը գցում էին, որքան կամենում էին նուէր տաճարի ծախսի համար։ Շատ հարուստներ բերում էին

մեծ ընծաներ, բայց մի խեղճ կին գցեց երկու լումայ (ամենից փոքր փողն էր)։ Այն ժամանակ Տէրը ասաց իր աշակերտներին. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այս խեղճ այրի կինը ուրիշներից աւելի տուեց։ Ուրիշները իրենց աւելորդից տալիս են Աստուծուն ընծայ. իսկ սա իր չքաւորութիւնից բոլոր ունեցածը գցեց»։

Մի քանի Փարիսեցիք հարցնում էին Յիսուս Քրիստոսին. «Երբ կ'գայ Աստուծոյ արքայութիւնը»։ Նա պատասխանեց. «Աստուծոյ արքայութիւնը չէ գալիս տեսանելի կերպով։ Չէ կարելի ասել նա այս տեղ կամ այն տեղ է։ Աստուծոյ արքայութիւնը ձեր միջումն է»։

ԳԼՈՒԽ ԽԱ.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ՎՐԱՑ

Մատ. ժդ. 3. Մարկ. 17. Ղուկ. զ. 19.

Հերովդէս, որնոր կոտորեց Բեթղեհէմի և նորա շրջակաների երեխանցը, վախուց արդէն մեռած էր։ Նորա երկիրը բաժանվեցաւ չորս մասն նորա որդւոց մէջ, որոնք արդէն թագաւոր անունին արժանի չհամարվեցան. այլ անուանվում էին չորրորդապետ։ Նորա որդւոց մէկը՝ Հերովդէս Անդիպասը Գալիլիայի չորրորդապետն էր։

Հերովդէսը շատ բաներ լսելով Յովհաննէս Մկրտչի վրայ, իրրև գերբնական և բոլոր թագաւորութեան մէջ պատուելի մարդու վրայ, կամեցաւ նրան տեսնել և կանչեց իր մօտ։ Հերովդէսը սիրում էր լսել նորա խրատները, պատվում էր այս ամբի մարդուն և շատ բանում լսում էր նրան։

Բայց Հերովդէսը խլեց իր եղբօր՝ Փիլիպպոսի կնոջը և ամուսնացաւ նորա հետ։ Յովհաննէսը յանդիմանում էր նրան այս

գործքի համար և ասում էր, որ այս օրինաց ընդդէմ է։ Միայն այս բանումը Հերովդէսը չլսեց ոչ Յովհաննէսի խօսքին և ոչ իր խղճմտանքի ձայնին. իսկ Հերովդիա (Հերովդիադա) Հերովդէսի կինը այն ժամանակից յետ այնպէս ատեց Յովհաննէսին, որ ամէն կերպով աշխատում էր Նրան սպանել տալու։

Նա յորդորում էր Հերովդէսին, որ զրկէ մարգարէին կեանքից. բայց սա ոչ մէկ կերպով չէր համաձայնում, առաջինը որ ինքը պատում էր Յովհաննէսին և հաւատի էր նորա արդարութիւնը, ու երկրորդը որ վախենում էր ժողովրդից, որնոր Յովհաննէսին մեծ մարգարէ էր ճանաչում։ Բայց Հերովդիան խնդրելով և շողոքորթութիւններով այն տեղ հասցրեց, որ Հերովդէսը հրամայեց Յովհաննէս Մկրտչին բանտը գցել։ Միայն սրանով չբաւականացաւ Հերովդիադան. նա գտաւ միջոց իր չարութեանը բաւականութիւն տալու։ Հերովդէսը տօնում էր իր ծննդեան օրը և տուաւ մեծ խնջոյք ամէն պալատականներին, զօրավարներին, ուրիշ ատիճանաւորներին և ամէն երևելի Գալիլացիներին։ Խնջոյքի ժամանակ Հերովդիադայի աղջիկը ներս մտաւ և պար եկաւ թագաւորին ուրախացնելու համար։ Դորա կարելի է հաւատալ ամէն ներկայ գտնուողները, բայց Հերովդէսը այնպէս ուրախացաւ, որ ասաց. «Խնդրիր ինձանից ինչ ուզում ես. ես քեզ իմ թագաւորութեանս կէսն անգամ տալու պատրաստ եմ։» Նա երդումով հաստատեց իր խոսքը։

Աղջիկը գնաց մօր մօտ, որ խորհուրդ հարցնէ, թէ ի՞նչ խնդրի թագաւորից։ — «Խնդրիր Յովհաննէս Մկրտչի գլուխը», ասաց նրան մայրը։ Եւ աղջիկը դարձեալ ներս մտաւ թագաւորի դահլիճը ասաց թագաւորին. «Ես խնդրում եմ, թող որ հրամայես այս րոպէին բերել ինձ ամանի մէջ Յովհաննէս Մկրտչի գլուխը»։

Թէև խիստ տրտմեցրեց Հերովդէսին այսպիսի ծանր խնդիրը, բայց սա, որովհետև շատերի ներկայութեամբ տուել

էր երդումն աղջկան խնդիրը կատարելու, չկամեցաւ կոտրել իր խօսքը. Նա նոյն րոպէին ղրկեց դահճին, որնոր մտնելով բանդը Յովհաննէսի մօտ կտրեց նորա գլուխը և ամանի վրայ դրած բերաւ աղջկան մօտ։ Սա վեր արաւ արիւնաթաթախ գլուխն և տարաւ նրան իր մօր մօտ։

Զարհուրելի՛ անց.ք։ Բայց ի՞նչ եզրակացութիւն կարող ենք հանել նրանից.—Տեսնելով որ անօրէնութիւնը յաղթական է հանդիսանում առաքինութեան վրայ, տեսնելով, որ արդարները հալածվում են, մենք պէտք է ասենք. «Ո՜հ, յայտնի բան է, կայ ուրիշ աւելի լաւ կեանք, ուր մեղքերը կ՚պատժվին. իսկ առաքինութիւնը կ՚վարձատրվի։ Աստուած արդարադատ է»։

ԳԼՈՒԽ ԽԲ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՔԻՉ ՀԱՅՈՎ, ԿԵՏԱՅՆՈՒՄ Է ՔԱՆԻ ՄԻ ՀԱՅԱՐ ՀՈԳԻՆԵՐ

Մատ. ժդ, 15. Մարկ. դ. 35. Ղուկ. Թ. 12. Յովհ. դ. 5.

Յօանում էր Պասէքի ծոնը՝ երրորդը Փրկչի մկրտվելից յետու Ժողովուրդը, որնոր ամեն կողմից հաւաքվում էր Յիսուսի Քրիստոսի մօտ, չէր ուզում և ոչ մի ազատ րոպէ ոչ Նրան և ոչ Նորա աշակերտներին. ուստի և ասաց Նա նրանց. գնացէ՛ք դուք առանձին անապատ տեղ և հանգստացէ՛ք այն տեղ փոքր ինչ։ Ինքն էլ նստաւ նաւակն և անցաւ Գալիլիայի ծովը մի անապատ տեղ։

Ժողովուրդը նկատելով, թէ որ կողմը նաւակը գնաց, շտապեց ինքն էլ ոտով այն տեղ. մերձակայ քաղաքներից և գիւղերից նոցա հետ միացան նոր բազմութիւններ էլ այնպէս որ Տէրը կրկին գտաւ իրեն պատած մեծ բազմութեամբ։ Նա քաղցրութեամբ ընդունում էր եկողներին և մի սարի վրայ բարձ-

քանալով կարողանում էր տեսնել ամեն իր մօտ հաւաքվողնե-
րուն։ Նա երկար ժամանակ քարոզում էր Աստուծոյ արքայու-
թեան վրայ, բժշկում էր հիւանդներուն և օգնում էր ամենին,
որոնք կարօտում էին նորա օգնութեանը։

Արեգակը սկսաւ մայր մտնել։ Աշակերտները մօտեցան
Փրկչին և ասացին. «այժմ ուշ է արդէն, մենք անապատ տե-
ղումն ենք։ Արձակիր այս մարդոց, որ երթան, գնեն իրենց
համար կերակուր մերձակայ քաղաքներում և գեղերում»։

«Այդ հարկաւոր չէ, ասաց Տէրը, դուք կերակրեցէք
նրանց».—«Անկարելի է, պատասխանեցին աշակերտները, որ
մենք կարող ենք գտնել և գնել հաց այսքան բազմութեան
համար»։

«Գնացէք» ասաց Յիսուս Քրիստոս, «տեսէք, չկա՞յ արդեօք
փոքր ինչ հաց»։ Անդրէաս Առաքեալը մօտեցաւ և ասաց Նրան.
«կայ այս տեղ մի պատանեակ, որնոր ունի հինգ հաց և երկու
ձուկը, բայց այն ի՞նչ է այսքան բազմութեան համար»։

«Բերէք նրանց ինձ մօտ», ասաց Յիսուս Քրիստոս։ Մինչև
հրամայեց Նա նստացնել բոլոր ժողովրդին խոտի վրայ դաս
դաս։ Երբ այսպէս ամենքը նստեցան, հարիւր հարիւր կամ յի-
սուն յիսուն հոգի ամէն մէկ դասումը, կարելի էր նրանց հա-
մարել։ Ամենքը էին այն տեղ հինգ հազար հոգիք, կանանց և
երեխանց չհամարելով։

Այն ժամանակ Յիսուս Քրիստոս վերցուցաւ հինգ հացն
և երկու ձուկը, աչքերը դէպի երկինք գցեց, զոհացաւ Աս-
տուծմէ, և օրհնեց հացերն ու ձկները։ Յետոյ կոտրեց նրանց
և տուաւ աշակերտներին, որ բաժանեն ժողովրդեան։ Ամենքը
կերան որքան կամենում էին և կշտացան։

Սրանից յետո Փրկիչը հրամայեց Իր աշակերտներին հա-
ւաքեցին այն և լցրին տասներկու տակառ։

Ժողովուրդը, որ տեսաւ այս հրաշքը, ասում էր. «այս

մարգարէն յիրաւի Այն է, որին մենք սպասում էինք — Սա Մեսիան է։ Նոքա համաձայնեցան միմեանց մէջ տանել Նրան Երուսաղէմ և անուանել Նրան Իսրայէլացւոց թագաւոր։ Յիսուս Քրիստոս հասկանալով ժողովրդեան միտքը, մենակ հեռացաւ անկատելի կերպով լեռան գլուխը աղօթելու համար։

ԳԼՈՒԽ ԽԴ.

ՓՐԿԻՉԸ ԳՆՈՒՄ Է ՋՐԻ ԵՐԵՍԻՆ

Մատ. ժԸ. 23. Մարկ. գ. 46. գ. 15.

Սարի գլուխը հեռանալիս Իր աղօթքը կատարելու համար Յիսուս Քրիստոս հրամայեց աշակերտներին նստել նաւակի մէջ և առանց իրեն սպասելու նաւել ծովի միւս ափը։ Այս նաւագնացութեան ժամանակը վեր կացաւ հակառակ հողմ, ծովակը ալեկոծվեցաւ և նաւակը վտանգի մէջ էր։

Մինչև գիշերն էլ վրայ հասաւ և բոլորովին մթնեցաւ։ Ծովակի մէջ տեղում յանկարծ աշակերտները տեսան մէկ մարդ, որոնք գալիս էր ալիքների վրայով. սարսափանք պաշարեց նրանց. այս՝ Ինքն Աստուածային Վարդապետն էր։ Տէրը ասաց նրանց. «Ես եմ, մի՛ վախենա՛ք»։ Պետրոս Առաքեալը ասաց. Տէր, եթէ այդ Դու ես, հրամայիր ինձ էլ գալ Քեզ մօտ ջրի վրայով։— «Եկ, պատասխանեց Տէրը։ Պետրոսը դուրս գալով նաւակից սկսաւ գնալ ջրի երեսին, միայն երբ տեսաւ իր շուրջը բարձր ալիքներ, վախեցաւ և խեղդվում էր։ «Տէրս ազատեցէ՛ զիս, օգնիր ինձ. ես խեղդվում եմ»։ Այն ժամանակ Յիսուս Քրիստոս ձգեց իր ձեռքը, բռնեց նրան և ասաց. «Թերահաւատ ինչո՞ւ երկմտեցիր»։

Երբ մտան նաւակի մէջ, մրրիկը հանդարտեցաւ. շուտ

հասան իրենց ցանկացած ափը։ Ամեն նոցա հետ նաւորդներն, ընկնում էին Յիսուսի Քրիստոսի առաջին և ասում էին. «Ճշմարտիւ Դու Աստուծոյ որդի ես։»

ԳԼՈՒԽ ԽԴ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՕՐՀՆՈՒՄ Է ԵՐԵԽԱՆՑ

Մատ. ժԸ. 1. Մարկ. 35. ժ. 13. Ղուկ. Ի. 46. ժ. 75.

Մի քանի բարեպաշտ մայրեր, լեռքը երկնային վարդապետի սիրով և հաւատով բերին նորա մօտ իրենց երեխանց կամենալով, որ Նա նրանց օրհնէ, բայց աշակերտները նեղուածքի պատճառաւ երեխանց Յիսուսի Քրիստոսի մօտ չէին թողնում։

Սիրելի Յիսուսը աշակերտների այս վարմունքից անբաւական եղաւ։ Նա ասաց նրանց. մի՛ արգելէք երեխանցը ինձ մօտ գալու, որովհետև այսպիսիներին է երկնից արքայութիւնը, ով որ երեխայի նման չէ կարող մաքուր սրտով և հեզութեամբ ընդունել վարդապետութիւնը երկնից արքայութեան վրայ, նա չի մանիլ նորա մէջ։

Ամեն նորա մօտ բերած երեխանցը օրհնում էր Յիսուս ձեռքը նոցա վրայ դնելով։

Մի՛ւս անգամ էլի երբ Յիսուսի աշակերտները վիճում էին, թէ ով է մեծը իրանցից, Նա կանչեց Իր մօտ մի երեխայի և ասաց նրանց իբրև խրատ. «ով որ կ՚ընդունէ այսպիսի երեխաներից մէկին Իմ անունովս, նա Ինձ է ընդունում. իսկ ով Ինձ կ՚ընդունէ, ընդունում է Ինձ Ղրկողին։ Ընդհակառակն, ով կը գայթակղեցնէ այս փոքրիկներից մէկին, որ Ինձ հաւատացել են, լաւ էր այն մարդուն, որ վզին քար կապէր ու ծովը ընկնէր»։

«Վա՛յ այն մարդուն, որի ձեռքով գայթակղութիւն մրտնում է աշխարհս։ Անկարելի է, որ աշխարհումս գայթակղու-

թիւն չլինի. միայն վայ այն մարդուն, որի ձեռքով լինում է այն»։

«Սա փոքրիկներից ոչ մէկին մի՛ արհամարհէք. որովհետև երկնքումը նոցա հրեշտակները միշտ տեսնում են իմ երկնաւոր Հօրս երեսը։ Եւ մարդու Որդին էլ նորա համար եկաւ աշխարհ, որ գտնէ և կեցուցանէ կորածներուն։

ԳԼՈՒԽ ԽԵ.

ԽՐԱՏ ՀԵՋՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԴԺՈՒԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՅ

Մատ. ի. 20.

Յիսուսի երկու աշակերտներին՝ Յակոբի և Յովհաննէսի մայրը եկաւ մի անգամ իր երկու որդւոցը հետ Փրկչի մօտ և ասաց. «խնդրում եմ Քեզ, կատարիր իմ խնդիրս։ «Ի՞նչ ես ցանկանում, հարցրեց Տէրը։ Մայրը լռեցաւ նորա առաջին և խնդրում էր իր որդոց համար. «Սրան այնպէս», ասում էր նա, «որ Քո արքայութիւնումդ որդիքս նստեն Քո մօտը՝ մէկը աջ կողմումդ և միւսը ձախումդ։ Յիսուս Քրիստոս պատասխանեց. «դուք չգիտէք ի՞նչ էք խնդրում։ Կարող է՞ք արդեօք դուք խմել այն բաժակը, որոնը Ես կ՚խմեմ։ Նոքա պատասխանեցին. «կարող ենք»։

Սրանից երևում է, որ այս երկու աշակերտների մայրը չունէր ուղիղ բարձր հասկացողութիւն երկնային Արքայութեան վերայ, այլ գաղում էր նորա վերայ այն ժամանակուան Հրէաների մեծ մասի թոյլ հասկացողութեամբը. այսինքն նմանեցնում էր այն երկրային թագաւորութեան, ուր շատ բան կարելի է ձեռք բերել հովանաւորութեամբ և խնդիրով։ Նա կարծում էր նմանապէս, որ որդիքը բաղդաւոր կ՚լինէին, եթէ կարողանային անուանի լինել ու հարուստ. այլ Տէրը այլապէս էր ուսուցա-

նում։ Ոչ թէ մեծութիւնն ու հարստութիւնն են մոցնում մարդուս Աստուծոյ արքայութիւնը, այլ հեզութիւնն և արդարութիւնը։ Ով որ ջերմեռանդութեամբ կ՚խմէ վշտերի բաժակը, կը ստանայ պսակ երկնային արքայութիւնում։ Բացի սրանից Տէրը ասաց այն աշակերտներին. «Իմ բաժակս դուք կարող էք խմել, այլ Իմ առաջիս աջ կամ ձախ կողմումը նստել կարող են միայն նոքա, որոնց համար այդ պատրաստել է իմ Հայրս»։

Մի օր տասն Առաքեալները, լսելով Յակոբի և Յովհաննէսի խնդիրը, բարկացան նոցա վրայ։ Յիսուս Քրիստոս կանչեց Իր աշակերտներուն և ասաց նոցա. «Ով ձեզնից կամենում է լինել առաջինը, թող լինի ձեր ամենից ծառան. որովհետև մարդոյ որդին էլ եկաւ աշխարհ ոչ թէ, որ Նրան ծառայեն, այլ որ ինքը ծառայէ ամենին և Իր անձը դնէ շատերի փրկութեան համար»։

ԳԼՈՒԽ ԽԶ.

ՄԵԾԱՏՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Մատ. ժբ. 16. Մարկ. ժ. 17. Ղուկ. ժը. 18.

Ճանապարհին հանդիպեցաւ Յիսուս Քրիստոս մի հարուստ երիտասարդի, որնոր մօտենալով Նրան ընկաւ Նորա ոտներն և ասաց. «Վարդապետ բարի, ի՞նչ պէտք է անեմ, որ յաւիտենական կեանք ստանամ»։

«Ինչո՞ւ ես Ինձ բարի կոչում, ասաց Յիսուս Քրիստոս, բարի է միայն Աստուած. իսկ եթէ կամենում ես ստանալ յաւիտենական կեանք, կատարիր պատուիրանները»։

—«Որ պատուիրանները»։ Հարցրեց երիտասարդը։

Տէրը պատասխանեց, «պատուիրանները յայտնի են՝ մի

ապանիր, մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայիր, պատուիր քո հօրդ և մօրդ և սիրիր ընկերոջդ իբրև քեզ։

Այս ամենը ես մանկութիւնից կատարել եմ, պատասխանեց երիտասարդը։ Ինչ պէտք է անեմ։

Յիսուս Քրիստոս քաղցրութեամբ նայեցաւ նորա վրայ և ասաց. «այժմ մնում է քեզ մէկ բան։ Եթէ կամենում ես կատարեալ լինել, ծախիր ունեցածդ և բաժանիր աղքատներին։ այն ժամանակ դու կ՚ստանաս գանձ երկնքումը։ Ցնորդ եկ իմ ետևից»։

Երիտասարդը, երբ այս լսեց, տրտմեցաւ. որովհետև շատ հարուստ էր և չէր կամենում իր ստացուածքը կորցնել։

Երբ երիտասարդը հեռացաւ, Յիսուս Քրիստոս ասաց. «դժուար է հարստին երկնային արքայութիւն մտնել» Այս խօսքերը զարմացրին աշակերտներին. բայց Տէրը շարունակեց ասելով. «անկարելի է երկնային արքայութիւնը մտնելը նրան, ով որ իր բոլոր յոյսը դնում է հարստութեան վրայ։ Աւելի դիւրին է մալուխին ասեղի ծակը մտնելը քան թէ հարստին Աստուծոյ արքայութիւնը»։

Աշակերտները աւելի ևս զարմացան և ասում էին միմեանց. «ուրեմն ո՞վ կարող է փրկվելը, Բայց Փրկիչը ասաց. «ինչ որ անհնարին է մարդոց համար, Աստծուն հնարաւոր է»։

ԳԼՈՒԽ ԽԷ.

ՔԱՆԱՆԱՅԻ ԿԻՆԸ

Մատ. ժե. 21.

Մի անգամ Յիսուս Քրիստոս Փիլիպէի Ծովեզերեայ մեծ քաղաքներին՝ Սիդոնի և Տիրոսի սահմաններումն էր։ Սոցանից մէկից եկաւ մի կռապաշտ Քանանացի կին և մօտենալով Յի-

առային աղաչում էր Նրան այս խօսքերով. «Տէր, Դաւթի որդի՛, ողորմի՛ր ինձ։ Աղջիկս այսահար է և տանջվում է յոյժ»։

Փրկիչը, որ կարդաց, ինչոր նորա սրտումն կար, կամեցաւ ամենի առաջին յայտնի անել նորա հաւատն ու ամաչացնել Իրեն պատող Իսրայէլացիներուն. իսկ միևնոյն ժամանակ կամենալով փորձել խնդրող կնոջն էլ, նա ոչինչ չպատասխանեց նրան։

Բայց Քանանացի կինը, Նրան հետևելով, անդադար Նրան աղաչում էր։ Աշակերտները մօտենալով Յիսուսին ասում էին. «արձակի՛ր դրան. որովհետև կանչում է մեր ետևից»։ Յիսուս Քրիստոս պատասխանեց նրանց. «Ես ղրկած եմ Իսրայէլի տան կորած ոչխարների մօտ»։

Քանանացի կինը մօտենալով ընկաւ Յիսուսի ոտները ասելով. «Տէր, օգնի՛ր»։

Իսրայէլացիները այնքան ատում էին կռապաշտներուն, որ նրանց շուն էին կոչում։ Յիսուս Քրիստոս, նոցա մտածութեան եղանակին հետևելով, ասաց Քանանացի կնոջը։ «Անարդար կ՚լինի հացը երեխաներից խլել ու շներին տալ»։ «Ճշմարտիւ այդպէս է, Տէր». պատասխանեց Քանանացի կինը. «միայն շներն էլ կերակրվում են փշրանքներով. որոնք նոցա տէրերի սեղանից թափվում են։

Այն ժամանակ Յիսուս Քրիստոս աղաղակեց. «ո՛վ կին, քո հաւատդ մեծ է, թող կատարվի, ինչ որ ցանկանում ես, դնա խաղաղութեամբ»։

Այն րոպէից նորա աղջիկը բժշկվեցաւ և մայրը գնալով տուն գտաւ Նրան բոլորովին առողջ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Մատ. ժէ. 1. Մարկ. Թ. 1. Ղուկ. Թ. 28.

Յիսուս Քրիստոս իր հետ առնելով երեք աշակերտներուն՝ Պետրոսին, Յակոբին և Յովհաննէսին, գնաց Թափոր լերան վրայ։ Երբ հասաւ Նորա գագաթը, Յիսուս Քրիստոս աղօթք արաւ, և աղօթելիս Նորա կերպարանքը այլակերպվեցաւ, փոխվեցաւ. Նորա երեսը լուսաւորվեցաւ ինչպէս արեգակը, շորերը սպիտակացան ինչպէս ձիւն։ Նորա մօտ երևեցան երկու մարդիկ, պատած երկնային լուսով, ոքա էին Մովսէս և Եղիա Մարգարէները. Սոքա խօսում էին Տիրոջ հետ Նորա վրայ, ինչ որ Երուսաղէմում պատահելու էր Նրուսաղէմում։

Պետրոս առաքեալը զուարճացած այն հրաշալի տեսիլքի վրայ ասաց. «Տէր, մեզ լաւ է այս տեղ մնալ։ Եթէ կ'հրամայես, մենք կ'շինենք երեք տաղաւար (վրան) մէկը Քեզ համար, միւսը Մովսէսի և երրորդը Եղիայի համար»։ Ուրախութիւնից ինքն էլ չէր իմանում, ինչ էր ասում։

Մինչև որ Պետրոսը խօսում էր, նկաւ մի լուսաւոր ամպ, և ամպից լսելի եղաւ ձայն, որնոր ասում էր. «Սա է իմ սիրելի որդին, Սրան լսեցէ՛ք»։ Աշակերտները, երբ լսեցին այս երկնային ձայնը, զարհուրեցան, ընկան գետնի վրայ և սկսան աղօթք անել։

Տէրը մեռելներից և ասաց, ասեր կացէ՛ք, մի վախենաք։ Ասելից վեր կենալից յետոյ աշակերտները ոչոքին չտեսան բայց միայն Յիսուսին իր սովորական կերպարանքով։

Այն ժամանակ Տէրը արգելեց իր աշակերտներին պատմել այս տեսիլքը ուրիշներին մինչև Իր յարութիւն առնելը։

ԳԼՈՒԽ ԻԹ.

ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ԱՌԱԿԸ

Ղուկ. ժե. 11.

Մի անգամ Յիսուս Քրիստոս պատմեց ժողովրդին յետագայ առակը։

«Մէկ մարդ ունէր երկու որդի»։ Կրտսերը ասաց Իր հօրը. տո՛ւր ինձ ստացուածքիդ մէկ մասը։ Հայրը բաժանեց ստացուածքը երկու որդւոց մէջ և տուեց կրտսերին բոլորը, ինչ որ ներան ընկաւ։ Այս հարստութիւնով երիտասարդը գնաց հեռաւոր երկիր, ծախեց, փչացրեց ամէն իր հօրից ստացածը շռայլ և զեղխ կեանք վարելով։

Երբ որ այն երկրում, ուր նա գտնվում էր, սով ընկաւ, արդէն նա ոչինչ չունէր ու ամէն բանում պակասութիւն էր քաշում. ուստի և ստիպվեցաւ ծառայել մի գեղացիի, որնոր դրկեց ներան իր խոզերը արածելու ու ոչինչ կերակուր ներան չէր տալիս։ Նա ուրախութեամբ կ՚անցկացներ իր քաղցը այն եղջիւրներով (մի տեսակ պտուղ է), որով խոզերուն են կերակրում, միայն այն էլ չկար։ Վերջապէս զղջալով ասաց նա. քանի՞ վարձկաններ ունի հայրս, որոնց նա կշատացնում է հացով. իսկ ես այստեղ սովից մեռնում եմ։ Կերթամ հօրս մօտ և կ՚ասեմ ներան. Հայր իմ, ես մեղայ քո առաջիդ, ես այժմ արժանի չեմ քո որդիդ կոչվելու. բայց ընդունիր ինձ ինչպէս քո ծառաներիցդ մէկին։ Նա պատրաստվեցաւ ճանապարհ և եկաւ իր հօրմօտ։ Դեռ հեռուից հայրը տեսնելով եկողին զգաց մեծ կարեկցութիւն իր դժբաղդ որդւոյ վրայ և շտապով գնաց նորա առաջը։ Նա վրայ ընկաւ, գրկեց ներան և սկսաւ համբուրել։ Այն ժամանակ ասաց որդին. «Ես մեղայ երկնքումն և քո առաջիդ և էլ արժանի չեմ կոչվելու քո որդի»։ Բայց հայրը

ընդմիջեց նորա խօսքը, հրամայեց ծառաներին բերել ամենաալաւ շորերն և հագցրեց նրան, հրամայեց հագցնել մատին մատանի և նոր կօշիկներ ոտներին. յետոյ հրամայեց մորթել մի պարարակ եզ և կազմել ուրախութեան խնջոյք. «որովհետև, ասում էր նա, որդիս, որին ես կորած էի համարում, կենդանի է դեռ և այժմ ինձ հետ է»: Այս ուրախ խնջոյքի ժամանակ դաշտի աշխատանքից յետ դարձաւ երէց որդին. նա լսեց երգի և երաժշտութեան ձայն և հարցրեց ծառաներից մէկին. «այս ի՞նչ է»։ Ծառան ասաց, որ դարձել է նորա եղբայրն և հայրը հրամայել է մորթել պարարակ եզ ու պատրաստել խնջոյք, կամենալով արտով յոյժ նել իր ուրախութիւնը, որ տեսնում է իր որդուն էլի կենդանի և առողջ: Այս այնպէս տխրացրեց երէց որդուն, որ նա չէր ուզում ներս մտնել: Բայց հայրը դուրս եկաւ նորա առաջ և համոզեց, որ ներս մտնէ նոցա մօտ:

Բայց երէց որդին պատասխանեց նրան. «ես ծառայում եմ քեզ այսքան տարի, հաւատարմութեամբ կատարում եմ ամենքո հրամաններդ և սրան չնայելով՝ դու ոչ մէկ անգամ չտուիր ինձ մէկ այծ էլ, որով ես յարգէի իմ բարեկամներուս. իսկ իմ եղբօրս համար, որնոր ծախեց քո տաղաւածքիդ կէսը, հրամայեցիր մորթել պարարակ եզ»։ — «Որդեակ իմ», ասեցաւ քեզ է պատկանում: Բայց այժմ դու ինքդ էլ ուրախ պէտք է լինիս, որովհետև այս քո եղբայրդ կորած էր, գտնվեցաւ, մեռած էր և կենդանացաւ»։

Այս առակը ցոյց է տալիս մեզ, թէ Աստուած որքիսի սիրով ընդունում է զղջացած մեղաւորին:—

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑԻ

Գլուխ ժ. 25.

Մէկ Իսրայէլացի, որնոր պարապում էր սուրբ գիրքը և օրէնքները սովորելով, եկաւ Յիսուս Քրիստոսի մօտ և ասաց Նրան. «Վարդապետ, ի՞նչ պէտք է անել յաւիտենական կեանք առնալու համար»: Նա այս հարցմունքը Փրկչից ճշմարտութիւնը սովորելու համար չարաւ, այլ Նրան փորձելու:

Տէրը պատասխանեց. «Ի՞նչ է գրած օրէնքումը, ի՞նչպէս ես կարդում այն»:

Օրինականը ասաց. «Սիրիր քո Տիրոջդ Աստուդ բոլոր սրտովդ, բոլոր զօրութիւնովդ, մտքովդ և ընկերիդ ինչպէս քեզ»:

Յիսուս Քրիստոս ասաց. «Դու ճշմարիտը պատասխանեցիր: Կատարիր այն և կ՚ստանաս յաւիտենական կեանք»:

Օրինականը ամաչեցաւ այս հասարակ և պարզ պատասխանից. նա կամենում էր մէկ նոր խորամանկ հարցմունքով դժուարութեան մէջ դցել (կապել) Յիսուս Քրիստոսին և այնպէս ծածկել իր ամօթը:

Բայց ո՞վ է իմ ընկերս». հարցրեց օրինակը, որնոր դուցէ էր օրինաց այն մեկնիչներից, որոնք այս պատուիրանում ընկեր անուանով հասկանում էին միայն Հրէաներին և ոչ թէ ամենամարդոց:

Այս բանին պատասխան տալու տեղ Յիսուս Քրիստոս պատմեց յետագայ առակը. «Մէկ մարդ Երուսաղէմից գնում էր Երիքով, ճանապարհին ընկան նորա վերայ աւազակներ, նրան վիրաւորեցին և թողին ճանապարհին կիսակենդան: Նոյն ճա-

նապարհով անցկացաւ մի քահանայ. նա տեսաւ վիրաւորածին և անցաւ գնաց։

Յետոյ մի Ղևտացի, որնոր նոյնպէս տեսաւ վիրաւորածին ու անցաւ նորա մօտով։ Վերջապէս նոյն ճանապարհով գնում էր մի Սամարացի. սա տեսաւ վիրաւորածին ցաւեցաւ նորա վրայ, մօտեցաւ նրան, լուացվէրքը եղով և գինով, փաթաթեց այն և շալկելով իր վերայ բերաւ պանդոկ ու ինքը հոգս էր քաշում նորա վերայ, իսկ միւս օրը, երբ պէտք է իր ճանապարհը շարունակէր, կանչեց պանդոկապետին, յանձնեց հիւանդին նրան ու փող տալով ասաց. «հոգա դորա վերայ. եթէ աւելի ծախս կանես նորա համար քան թէ ինչքան քեզ տալիս եմ, յետոյ կ՚հատուցանեմ քեզ մնացածն էլ։

Այս երեքից ո՞ւն էր այն աւազակների ձեռք ընկած մարդուն մերձաւորը, շարունակեց Յիսուս Քրիստոս։

«Այս, որնոր նրան ողորմութիւն արաւ». պատասխանեց օրինակիանը։ Այն ժամանակ Տէրը ասաց. «գնա դու էլ մի և նոյնն արա»։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԵՐԿՈՒ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ԱՐԱԿԸ

Մատ. ժբ. 23.

Տէրը ասաց. «մէկ թագաւոր, երբ հաշիւ էր պահանջում իր ծառաներից և կալուածքի վերակացուներից, կանչեց իր մօտ ծառաներից մէկին, որնոր պէտք է նրան մի բիւր (10,000) քանքար շահ ցոյց տար։ Եւ որովհետև նա չկարողացաւ նորա վրայ, ազատութիւն տուաւ նրան և ներեց պարտքը։

Թագաւորից դուրս գալից հանդիպեցաւ նա իր ընկերակիցներից մէկին, որնոր նրան պարտ էր հարիւր դահեկան։ Նա նոյն րոպէին բռնեց իր պարտապանի վզից և ասաց. «այս ու-

պէին տուր պարտքդ»։ Ընկերը ոտներն ընկաւ և աղաչում էր ասելով. «Տոքր ինչ համբերիր, ես քեզ բոլորը կ՝հատուցանեմ»։ Բայց պարտատէրը չնայելով նորա աղաչանքին հրամայեց իր պարտապանին բանտը գնել և չթողնել մինչև որ իր պարտքը տալ։

Թագաւորների ծառաներից մի քանիսը, որոնք այս պատահածը տեսել էին, պատմեցին այս ոնց-քը թագաւորին։ Թագաւորը հրամայեց կանչել այն չար ծառային և ասաց. «Դու խաստաիրտ և չար հոգի, ես բաշխեցի քեզ բոլոր պարտքդ նորա համար, որ դու աղաչեցիր ինձ. իսկ դու չներեցիր քո ընկերոջդ ինչպէս ես քեզ ներեցի»։ Թագաւորը բարկացաւ և մատնեց նրանց դահիճների ձեռքը, մինչև որ հատուցանէ իր պարտքը։

Եթէ մենք յանկանում ենք մեր մեղքերի թողութիւնը ստանալ երկնաւոր թագաւորից, մենք էլ պարտական ենք ներել մեր ընկերների մեղքերն և յանցանքը, որոնք նոքա մեր դէմ գործում են»։

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՄԱՔՍԱԻՈՐՆ ԵՒ ՓԱՐԻՍԵՑԻՆ

Ղուկ. ժբ. 10.

Յիսուս Քրիստոս այն մարդոց համար, որոնք լի են ինքնահաւանութեամբ, պարծենում են իրենց առաքինութեամբ, սրբութեամբ և ատում են ընկած մեղաւորներին, ասաց յետոյագայ առակը։ «Մէկ անգամ տաճար մտան աղօթք անելու երկու մարդիկ, նրանցից մէկն էր Փարիսեցի և միւսը Մաքսաւոր։ Փարիսեցին առջևումը կանգնեցաւ և աղօթք էր անում իր համար այսպէս. «Աստուած, շնորհակալ եմ Քեզնից, որ ես

ուրիշ մարդոց պէս յափշտակող, անիրաւ, շնացող չեմ և կամ ոչ այս մաքսաւորի նման։ Ես պահում եմ շաբաթուան մէջ երկու անգամ և տալիս եմ ամեն ստացուածիս տասանորդը»։— Իսկ մաքսաւորը մէկ կողմը կանգնած աչքերը երկինքը գցել էր, չէր համարձակվում նայել ու կրծքին խփելով աղաղակում էր. «Աստուած, քաւիր ինձ՝ մեղաւորիս»։

«Ասում եմ ձեզ, աւելցրեց Տէրը, որ մաքսաւորը իր աղօթքով աւելի արդարացած դարձաւ տուն քան թէ Փարիսեցին։ Ով որ կ՝բարձրացնէ իր անձը՝ կ՝խոնարհի և ով կ՝խոնարհացնէ իրեն, կ՝բարձրանայ»։

ԳԼՈՒԽ ԾԳ.

ԷԼԻ ՓԱՆԻ ՄԻ ԱՌԱԿՆԵՐ

Մէկ հարուստ մարդ հաւաքեց շատ ցորեն իր արտերից և ինքը իրեն մտածում էր. այժմ ի՞նչ անեմ, ես չունիմ տեղ, ուր դնեմ հաւաքած ցորենս։ Ահա ես ինչ կանեմ. կ՝քանդեմ շտեմարանս և կ՝շինեմ ուրիշ աւելի մեծերը, կ՝ժողովեմ նոցա մէջ բոլոր հարստութիւնս և կասեմ իմ անձնիս. «դու ունիս հարստութիւն, որնոր բաւական է քեզ շատ տարիներ, հանգըստացիր, կեր, խմիր և ուրախացիր»։ Բայց Աստուած ասաց նրան. «անմի՛տ, այս գիշեր հոգիդ կառնեմ քեզնից. ում կ՝թողնես քո հարստութիւնդ»։ Այս առակին վրայ աւելացրեց Յիսուս Քրիստոս յետագայ խօսքերն էլ։ «Մի և նոյնը կ՝պատահի նրան, ով որ հոգս է քաշում հարստութիւն ժողովելու և ոչ թէ Աստուծոյ հաճոյքը կատարելու։

«Մէկ մարդ ունէր երկու որդի», ասաց Քրիստոսը, «նա ասաց առաջինին նրանցից. «որդեակ, գնա՛ աշխատիր այգումս»։ Բայց որդին պատասխանեց, «չեմ ուզում». իսկ յետոյ զղջացաւ և գնաց այգին աշխատելու։ Հայրը եկաւ միւս որդուն մօտ ու

նոյնպէս ասաց. «գնա՛ աշխատիր իմ այգիումս։ Նա պատասխանեց. «ահա գնում եմ, բայց չգնաց։—Երկուսից ո՞րը կատարեց իր հօր կամքը։—Առաջինը, պատասխանեցին ունկնդիրները։ Այն ժամանակ Տէրը ասաց Փարիսեցիներին. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, որ մաքսաւորները և մեղաւորները ձեզնից առաջ կ՚մտանեն երկնային Արքայութիւն։ Եկաւ Յովհաննէս Մկրտիչը ձեզ ճշմարտութիւն սովորցնելու. դուք չհաւատացիք նրան. իսկ մաքսաւորներն և մեղաւորները հաւատացին նրան. և դուք տեսնում էք և չէք ապաշխարում։

«Մէկ մարդ ունէր իր այգիումը թզենի», ասաց Յիսուս Քրիստոս, «երեք տարի սպասում էր պտուղ այս թզենից. բայց ոչինչ չստացաւ։ Այն ժամանակ ասաց նա պարտիզպանին. «ահա երեք տարի է կամենում եմ այս ծառից պտուղ ստանալ և չեմ ստանում. կտրիր այդ թզենին, որ 'ի զուր տեղ չբռնէ այստեղ»։ Պարտիզպանը պատասխանեց. «Տէր, թո՛ղ էլ մի տարի։ Ես նորա շուրջը կ՚փորեմ և կ՚պատեմ աղբով. կարելի է, որ այն ժամանակ բերէ պտուղ, բայց եթէ այն ժամանակն էլ չի բերիլ, հրամայիր նրան կտրել։

Այգին Տերն է երկնային Հայրը, պարտիզպանն՝ Աստուծոյ Որդին, թզենին՝ մարդս։ Աստուած ղրկեց մեզ աշխարհ նորա համար, որ բերենք պտուղ, բարի գործեր գործենք և օգտով գործածենք մեզ տուած ժամանակը։ Նա երկար է սպասում մեր ապաշխարելուն, և եթէ մենք դէպի չարը կ՚գործածենք նորա համբերութիւնը, նա մեզ յաւիտենական տանջանքը կ՚մատնէ։

ԳԼՈՒԽ ԾԴ.

ՔԱՆՔԱՐՆԵՐԻ ԱՌԱԿԸ.

Մատ. ի. 14.

Յիսուս Քրիստոս ասաց յետոյ առակն էլ։ «Մէկ հարուստ մարդ իր հայրենիքից գնալիս կանչեց իր ծառաներին և բաժանեց նրանց իրեն ունեցածը»։ Նրանցից մէկին հինգ քանքար տուեց, միւսին երկու և երրորդին մի, զանազանելով նրանց իրենց ընդունակութեանց համեմատ հրամայելով, որ ինչքան կարող են շահեցնեն այն իրենց տիրոջ օգտին համար։

Ով, ով որ հինգ քանքար առացաւ, աշխատեց նրանցմով էլի մի հինգ քանքար։ Ով որ երկու քանքար առացաւ, աշխատեց էլի երկուսը։ Իսկ նա, որ մի քանքար առացաւ, փորեց գետինը ու թաղեց այն, ինչպէս ինքը կարծում էր, իր տիրոջ փողը աւելի լաւ պահպանելու համար։

«Մի քանի ժամանակից յետոյ տէրը գարձաւ իր հայրենիք և իր ծառաներուն կանչելով պահանջեց հաշիւ իր կայանքի մասին, որպէս նրանց հաւատացել էր։ Հինգ քանքար առացողը ասաց. «Տէր, դու ինձ տուիր հինգ քանքար, ահա՛ էլի հինգ քանքար, որոնք ես աշխատեցի նրանցմով»։—«Լաւ է». ասաց Տէրը «դու հաւատարիմ և բարի ծառայ ես. որովհետև փոքրի մէջ հաւատարիմ գտնվեցար ինձ, շատի վրայ կ՚նշանակեմ քեզ կառավարիչ։ Եղի՛ր քո տիրոջդ ուրախութեան մասնակից։

Երկու քանքար առացողը ասաց. «Տէր, դու ինձ երկու քանքար տուիր, ահա՛ էլի երկու, որոնք ես վաստակեցի նրանցմով»։—«Լաւ է». ասաց Տէրը, «դու հաւատարիմ և բարի ծառայ. որովհետև դու ինձ հաւատարիմ եղար փոքրումը, ես քեզ շատ էլ կ՚հաւատամ. ուրախացիր քո տիրոջդ հետ միասին»։—

Վերջապէս եկաւ նա էլ, որոնք առացաւ մի քանքար և

ասաց. «Տէր ես ճանաչում եմ քեզ, գիտեմ, որ խիստ մարդ ես՝ հնձում ես այն տեղից, ուր չես ցանել և ժողովում ես այն տեղից, ուր չես փռել։ Ես վախենում էի քեզնից. ուստի և թաղեցի քանքարդ գետնի մէջ։ Ահա դարձնում եմ քեզ այն։

Այն ժամանակ ասաց նրան Տէրը. «վատ և ծոյլ ծառայ. թէ էիտէիր, որ ես հնձում եմ այն տեղից, ուր չեմ ցանել, հաւաքում եմ այն տեղից, ուր չեմ փռել, պէտք է տայիր իմ քանքարս սեղանաւորներին, որ ես նրանցից տոկոսաւոր ստանայի։ Վեր առէք դրանից քանքարը և տուէք նրան, ով որ ունի տասն քանքար։ Ով որ ունի, նրան էլի կ՚տրվի և կ՚աւելանայ. իսկ ով որ չունի և չի ուզել ունենալ, նրանցից կ՚առնվի այն էլ, ինչ որ ունի։ Այս անպիտան ծառային հանեցէք արտաքին խաւարը. այն տեղ կ՚լինի լացն և ատամանց կրճտելը»։

Այս առակով Տէրը ուսուցանում է մեզ, որ մենք Աստուծոյ տուած մեր ընդունակութիւնները աշխատանքով և ժրաջանութեամբ ծաղկեցնենք և ամեն նորա շնորհաց պարգևներն օգտակարութեամբ գործածենք։

ԳԼՈՒԽ ԾԵ.

ԱՑԳԻԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱԾ ՄՇԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Մատ. ի. 1.

Իսրայելացիք պարծենում էին, որ վաղուց իրենք Աստուծոյ ընտրեալ ազգն են և կարծում էին, թէ միայն նոցա համար պէտք է ծնի խոստացեալ Փրկիչը։ Նոքա ոչ միայն պով էին ուզում հաւատալ, որ կռապաշտներն էլ, որոնք չէին ճանաչում ճշմարիտ Աստուծուն, կարող են մտնել Քրիստոսի արքայութիւնը։ Տէրը յեռագոյ առակով կամենում էր ցոյց տալ, թէ որչափ նոքա անարդար են և խիստ և որչափ ողորմած է

Աստուած ամեն մարդոց, որոնք վաղ թէ ուշ զգջմամբ դառնում են դէպի նա։

«Երկնային արքայութիւնը, ասում էր Յիսուս Քրիստոս, նման է լաւ տանտիրոջ, որնոր առաւօտը վաղ գնաց վարձեց մշակներ իր այգիի համար։ Մի դահեկանով ամեն մէկին վարձելից յետոյ, ղրկեց նրանց այգին։ Երեք ժամից ու մէկ էլ կէսօրին կրկին դուրս գալով ու ամեն անգամ նոր մշակներ գտնելով ղրկեց իր այգին աշխատելու։ Վերջապէս արևի մայրը մտնելից մի ժամ առաջ էլի գնաց հրապարակ և տեսնելով մարդոց, որոնք առանց գործի կանգնած էին, հարցրեց նրանց. «ինչու այս տեղ բոլոր օրը անգործ կանգնած էք»։—«Որովհետև ոչոք չվարձեց մեզ», պատասխանեցին մշակները։ «Գնացէք դուք էլ իմ այգիս», ասաց տանուտէրը, «վարձը բաժանելիս, դուք էլ կ՝ստանաք ինչ որ հարկն է»։

Երեկոյեան տանուտէրը հրամայեց իր կառավարչին կանչել բոլոր մշակներուն և սկսաւ նրանց վարձ բաժանել, սկսելով վերջիններից, որոնց ամենից յետոյ եկան։ Ամեն մէկը ստացաւ մի մի դահեկան. մինչև նոքա էլ, որոնք օրուան վերջին ժամին եկան։ Նոքա, որոնք առաջ էին եկել, սպասում էին, թէ աւելի կ՝ստանան. իսկ երբ տեսան, որ իրենց էլ այնքան տալիս են, սկսան տրտնջալ տանտիրոջ վրայ առելով. «Նոքա արևի մայրը մտնելից մի ժամ առաջ եկան և դու հաւասարում ես նրանց մեզ հետ, որոնք բոլոր օրուան աշխատանքը քաշեցինք և արևի տօթը»։ Տանուտէրը պատասխանեց մէկին. «ընկեր, ես քեզ չեմ զրկում։ Մէկ դահեկանով չ՝կապվեցար ինձ հետ։ Ա՛ռ, ինչոր քեզ պատկանում է և գնա։ Ես կամենում եմ տալ այս վերջինին էլ այնքան, ինչքան քեզ տուի, մի՞թէ իշխանութիւն չունիմ իմ սեփականութեանս վրայ։ Մի՞թէ դու նախանձում ես, որ ես առատ եմ»։

Այսպէս էլ կ՝լինի երկնային Արքայութիւնումը, առա-

ջիններըը կ'լինին վերջիններ և վերջիններըը առաջիններ։ Շատերը կանչված են. բայց քիչերն են ընտրած։

Յիսուս Քրիստոս այս առակով ուսուցանում է նմանապէս, թէ մեր կեանքի ո՛ր ժամանակն էլ որ զղջանք, Աստուած միշտ կ'ընդունէ մեր զղջումն և կ'վարձատրէ ապաշխարած մեղաւորներուն այն երանութեամբը, որոնք ազատաբաստել է արդարների համար։ Բայց որովհետև մենք մեր կեանքի ոչ մէկ բոպէի մասին հաւատի չենք կարող լինել, թէ մեր ձեռին է, չպէտք է մեր զղջումն և ուղղվելը յետ գցենք, այլ միշտ պարտենք պատրաստ լինել Աստուծոյ դատաստանին ներկայանալու։

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԱՑԳԻԻ ԱՌԱԿԸ

Մարկ. իա. 33. Մարկ. ժբ. 1. Ղուկ. ի. 9.

Փրկիչը մէկ անգամ Հրէաներին քարոզելիս Երուսաղէմի տաճարումը ասաց յետագայ առակը.

Մի մարդ տնկեց այգի, պատեց այն ցանկով, փորեց հնձան, կանգնեց աշտարակ նորա մէջ ու յանձնելով այն մշակներին ինքը գնաց շատ տարիներով օտար երկիր։ Երբ միրգ հաւաքելու ժամանակը հասաւ, ուղարկեց իր ծառաներուն, որ մշակներից խաղողի գինը պահանջեն. բայց մշակներն այն ղրկած ծառաներից մի քանիսին սպանեցին, միւսներին տանջեցին և բաց թողին դատարկ։

Տէրը ղրկեց ուրիշ ծառաներու աւելի շատ քան թէ առաջ. միայն սոցա էլ մշակները միևնոյնը արին։ Վերջապէս այգիի տէրը ասաց. «Ի՞նչ անեմ նրանց, կ'ղրկեմ իմ որդուս, կարելի է որ նրանից ամաչեն. բայց մշակները իրենց տիրոջ որդուն տեսնելով ասացին. «Ահա գալիս է ժառանգն, եկէք սպա-

ենք նրան և ժառանգութիւնը մեզ կ՝մնայ»։ Նոքա բռնեցին նրան, այգիից դուրս տարան և սպանեցին»։

Այս ասելից յետոյ Յիսուս Քրիստոս հարցրեց քահանաներից և դպիրներից. «երբ կ՝գայ Տէրը, ի՞նչ կ՝անէ այս մշակներուն։ Նա կ՝դատապարտէ նրանց, պատասխանեցին նոքա և կ՝տայ իր այգին ուրիշներին, որոնք կարգով կ՝հատուցանեն նրան հատաքած մրգի փոխը»։ Յիսուս Քրիստոս ասաց նրանց. «այսպէս էլ ձեզնից կ՝խլվի Արքայութիւնն և կ՝յանձնվի ուրիշ ազգի, որնոր պտուղ կ՝բերէ։

Քահանայապետներն և դպիրները զգալով, որ այս առակը վերաբերում է իրենց, կամենում էին բռնել Յիսուս Քրիստոսին նոյն ժամին. բայց վախենում էին ժողովրդից և այս պատճառաւ զրկեցին խորամանկ մարդոց, որոնք լսելով Նրանից մի անզգոյշ խօսք պատճառ գտնէին Նրան կառավարութեան ձեռքը մատնելու։

Փարիսեցիների աշակերտները և Հերոդիանոսները մօտեցան Փրկչին և ասացին. «Վարդապետ, մենք գիտենք, ինչպէս դու ճշմարիտ ես և որ Դու ոչոքին երեսին չես նայում. այլ սովորցնում ես ճշմարտութեամբ Աստուծոյ ճանապարհը։ Սա՞ մեզ. Հրէաներս պարտական ենք Հռովմայեցւոց կայսրին հարկ տալ»։ Յիսուս Քրիստոս, հասկանալով նոցա խորամանկութիւնն, ասաց. «ինչու էք փորձում ինձ։ Ցոյց տուէք Ինձ մի դահեկան. ում պատկերն և ո՞ւմ անունն է գրած տրա վրայ», հարցրեց նա։

«Կայսրինը», պատասխանեցին նոքա։ — «Ուրեմն տուէք կայսրինը կայսրին. իսկ Աստծունը Աստծուն։ Երբ այս լսեցին, զարմացան նորա խմաստուն պատասխանի վրայ և դնացին։

Իսկ քահանայապետներն և դպիրները չէին համարձակվում Նրան բռնելու առանց պատճառի. նոքա վախենում էին ժողովրդից, որնոր համարում էր Նրան մարգարէ։

ԳԼՈՒԽ ԺԷ.

ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՐԱՆԻՔԸ ՀՐԱՒԻՐԵԱԼՆԵՐԻ ՎՐԱՅ

Մատ. իր. 1. Ղուկ. ժգ. 16.

Յիսուս Քրիստոս ասաց. «Նման է երկնից Արքայութիւնը հարսանիքին, որոնք մի թագաւոր կազմեց իր որդու համար։ Նա շատերուն կանչից հարսանիք, միայն քիչերը եկան։ Երբ թագաւորը ղրկեց իր ծառաներուն յայտնելու, որ ճաշը արդէն պատրաստ է և սպասում են հրաւիրեալներուն, մէկը հրաժարվում էր ասելով, թէ պէտք է գնայ իր ագարակը տեսնելու, միւսը թէ գործ ունի, իսկ ոմանք մինչև անգամ անարգեցին և ապանեցին թագաւորի ծառաներուն։ Երբ թագաւորը լսեց այս, բարկացաւ սաստիկ և ղրկեց զինուորներ, որ սպանեն սպանողներուն և այրեն նոցա քաղաքները։ Յետոյ թագաւորը ասաց իր ծառաներին. «Ճաշը պատրաստ է, բայց հրաւիրեալները անարժան գտնվեցան. գնացէք, ճանապարհին ումն որ հանդիպէք, ամենուն հրաւիրեցէք հարսանիք»։ Ծառաները կատարեցին թագաւորի հրամանն և հաւաքեցին ճաշի վրայ մեծ բազմութիւն բարի և չար մարդոց. բոլոր պալատը լիքն էր հիւրերով։

Թագաւորը դուրս եկաւ, որ տեսնէ իր հիւրերուն և նոցա մէջ մէկին նկատելով, որ հարսանիքի շորով չէր, ասաց. դու ինչպէս մտար այս տեղ առանց հարսանիքի շորի, բայց նա լուռ կեցաւ։ Այն ժամանակ թագաւորը ասաց իր ծառաներին. «կապեցէք սորա ձեռներն և ոտները և գցեցէք արտաքին խաւարը. այն տեղ կ՚լինի լացն և առամանց կրճտումն»։—Շատերն են կոչված, միայն քիչերն են ընտրեալ։ Թագաւորի հարսանիքը հրաւիրուածները՝ Հրէաներն են, որոնց ուրիշ ազգերից առաջ քարոզվեցաւ Քրիստոսի վարդապետութիւնը։ Հիւրը,

որնոր թագաւորի հարսանիքը անվայելուչ շորերով եկել էր, օրինակ է այն մարդոց, որոնք պատկանելով Քրիստոնէական եկեղեցին, վարում են քրիստոնէի անվայել կեանք։

ԳԼՈՒԽ ԾԸ.

ՏԱՍՆ ԿՈՅՍԵՐԻ ՎՐԱՑ

Մատ. ԺԵ. 1.

Յիսուս Քրիստոս Իր ունկնդիրների համար խրատական օրինակներն առնում էր կեանքի ամեն սովորական պատահմունքներից։ Խրայելացիք սովորութիւն ունէին հարսանիքի ժամանակ, որ հարսի ընկերները սպասում էին նորապսակին, որնոր սովորաբար գալիս էր գիշերով և կոյսերն այն ժամանակ վառած լապտերներով առաջ էին գնում նրան և ուղեկից լինում մինչև այն տունը, ուր պէտք է լինէր հարսանիքը։ Այս սովորութիւնը միջոց տուեց Քրիստոսին յետագայ առակը ասելու։

«Երկնից Արքայութիւնը, ասաց նա, նման է տասն կոյսերին, որոնք առան լապտերներ, որ գնան փեսայի առաջ։ Նրանցից հինգը խմաստուն էին, իսկ հինգը յիմար. այս յիմարները առան լապտերներ. իսկ ձէթ չպատրաստեցին։ Խմաստուններն իրենց հետ առան ամանով ձէթ էլ։ Բայց որովհետև փեսան ուշացաւ, ամենքը քնեցան։ Կէս գիշերի մօտ ձայն բարձրացաւ, թէ «ահա փեսայն գալիս է, շտապեցէք շուտով նորա առաջ դուրս գալու»։ Կոյսերը վեր կացան և վառեցին իրենց լապտերները։ Այն ժամանակ յիմարները ասացին խմաստուններին. տուէք մեզ ձէթ. որովհետև ահա լապտերներս հանգչում են։

Խմաստունները պատասխանեցին. «եթէ մենք մեր ձէթից ձեզ էլ տան տանք, բաւական չի լինիլ ոչ մեզ և ոչ էլ ձեզ, աւելի լաւ է գնացէք և գնեցէք որքան հարկաւորն է»։ Մինչև

նոքա գնացին ձէթ գնելու, փեսայն եկաւ։ Նոքա որոնք պատրաստ էին, նորա հետ միասին մտան ներս հարսանիքի ուրախութիւնը կատարելու և փակեցին դռները՝ յետոյ եկան միւս կոյսերն էլ. նոքա ասում էին. «Տէր, բաց արա մեզ դուռը։ Բայց փեսայն պատասխանեց. «ես ձեզ չեմ ճանաչում։

Այսպէս եղէք պատրաստ, աւելացրեց Յիսուս Քրիստոս, որովհետև դուք չգիտէք ոչ օրը և ոչ ժամը, երբ մարդու Որդին կ՝գայ (այսինքն՝ դատելու կենդանիներուն և մեռածներուն)։

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՀԱՐՍՏԻ ԵՒ ՂԱԶԱՐԻ ԱՌԱԿԸ

Ղուկ. ժզ. 19.

Յիսուս Քրիստոս շարունակեց ուսուցանել ժողովրդին, ասաց յետագայ առակն էլ։

«Մի քաղաքում բնակում էր մի հարուստ մարդ, որն որ միշտ հագնում էր ծիրանի ու բեհեզ, նա ամեն օր ուրախանում էր և զուարճանում։ Կար նմանապէս մի աղքատ էլ, անունով Ղազարոս. սա բոլորովին ծածկած էր վէրքերով և պառկած էր հարստի դրան մօտ։ Խնդրը կերակրվում էր այն փշրանքներով, որոնք թափում էին նորա սեղանից, միայն շները գալիս էին ու լիզում նորա վէրքերը։ Աղքատը մեռաւ և հրեշտակները տարան նորա հոգին Աբրահամի գոգը։ մեռաւ նոյնպէս հարուստն էլ. նրան թաղեցին փառքով։ Դժոխքի տանջանքի մէջ գտնուող հարուստը բարձրացրեց աչքերն ու հեռուից տեսաւ Աբրահամին և Ղազարին նորա գոգումը։—Հայր Աբրահամ, աղաղակեց նա, խղճացիր իմ վրա. ղրկիր Ղազարին, որ իր մատի ծայրը թաց անէ ու զովացնէ լեզուս. ես պապակում եմ տապից։—Որդեակ, պատասխանեց Աբրահամը,

միտդ բերը, որ դու քո կենդանութեանդ ժամանակ վայելեցիր բոլոր երկնային բարութիւններն. իսկ Ղազարոս չարչարվում էր։ Այժմ նա այստեղ մխիթարվում է և դու տանջվում։ Եւ բացի սրանից մեր մէջը մեծ փոս կայ, այնպէս որ անկարելի է ոչ ձեր մօտից մեր մօտ և ոչ էլ մեր մօտից դէպի ձեզ անցնել։ Այն ժամանակ դժբաղդը ասաց. «աղաչում եմ քեզ, Հայր, ղրկիր Ղազարոսին մեր տուն. ես էլի հինգ եղբայր ունիմ. թող նա նրանց զգուշացնէ, որ նոքա էլ չգան այս չարչարանաց տեղը»։ Աբրահամը պատասխանեց. «նոքա ունին Մովսէսին և մարգարէներուն. թող նրանց լսեն»։—Չէ՛ Հայր իմ, ասաց տանջվողը, եթէ մեռելներից մէկը երթայ նոցա մօտ, նոքա անպատճառ կ՚ապաշխարեն։—«Եթէ չեն լսել Մովսէսին և մարգարէներուն», ասաց Աբրահամը, նոքա չեն հաւատալ նրան էլ, ով որ մեռելներից յարութիւն կ՚առնէ»։

ԳԼՈՒԽ Կ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ ԵՒ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մատ. ի. 26. Մարկ. ժ. 46. Ղուկ. ժը. 35. Մարկ. է. 31. Ղուկ. ժէ. 12.

Յիսուս Քրիստոս մի անգամ եկաւ Երիքով քաղաքը։ Ճանապարհին նստած էր մի կոյր աղքատ և խնդրում էր ողորմութիւն։ Լսելով որ իր մօտովը անց է կենում շատ ժողովուրդ, կոյրը հարցրեց. «այս ի՞նչ է»։—Նրան պատասխանեցին. «այստեղ անցնում է Նազովրեցի Յիսուսը»։ Կոյրը սկսաւ աղաղակել. «Դաւթի որդի, ողորմի՛ր ինձ»։—Առջևից գնացողները սաստում էին նրան և հրամայում էին լուռ կենալ. իսկ նա աւելի ևս աղաղակում էր. «Յիսուս, Դաւթի որդի, ողորմի՛ր ինձ»։ Յիսուս կանգնեցաւ և հրամայեց կոյրին Իր մօտ բերել։ «Ինչ ես կամենում». հարցրեց Փրկիչը։ «Արա՛ այնպէս, որ աչքերս տեսնեն». պատասխանեց կոյրը։—«Տե՛ս, ասաց Փրկիչը. քո հաւատդ քեզ

փրկեց»։ Նոյն րոպէին կոյրը սկսաւ տեսնել և գնաց Տիրոջ ետևից Աստուծուն փառաւորելով։ Նոյնպէս էլ ամեն այն հրաշքը տեսնողներն Աստծուն սկսան փառաւորել։

Մի անգամ էլ բերին նորա մօտ մի խուլ և համր մարդու և խնդրում էին, որ Իր ձեռքը դնէ նորա վերայ։ Յիսուս Քրիստոս կպցրեց Իր մատները նորա ականջներին և բռնեց ձեռից։ Յետոյ աչքերը դէպի երկինքը բարձրացնելով ասաց. «բացվիր։ Նոյն րոպէին խուլ և մունջը սկսաւ խօսել ու լսել։ Տէրը արգելեց այս ուրիշներին յայտնել. բայց որչափ Յիսուս արգելում էր. նա աւելի ևս փառաբանում էր Նրան։ Նրան տուած է բոլոր իշխանութիւնն երկրիս վրայ, աղաղակում էր շատ զարմացած ժողովուրդը. խուլերը լսում են և մունջերը խօսում։—

Մի անգամ Յիսուս Քրիստոս տեսաւ տասն բորոտ մարդիկ, և որովհետև այս ցաւը տարափոխիկ է, նոքա չէին համարձակվում ոչ ոքին մօտենալ շատ ու հեռուից աղաղակում էին. «Տէր, օգնիր մեզ»։ Յիսուս Քրիստոս տեսնելով նրանց ասաց. «գնացէք, ցոյց տուէք ձեր անձը քահանային»։ Բորոտները հաւատացին Յիսուսի Քրիստոսի խօսքին և հնազանդեցան Նրան։ Մովսէսի օրէնքը հրամայում էր, որ բորոտութիւնից սրբվածները յայտնվէին քահանային, որ պէտք է նրանց քննէր և յայտնէր, թէ նոքա կարող են կրկին դառնալ մտնել մարդոց հասարակութիւնների մէջ։ Քահանաների մօտ գնալիս բորոտները զգացին, որ իրենք սրբուած են բորից։ Բժշկվածներից մէկը յետ դարձաւ և փրկչի ոտներն ընկնելով բարձր ձայնով շնորհակալ էր լինում Նրանից և օրհնում էր Աստծուն, և այս անձն էր Սամարացի, Հրէաներին ատելի մարդ։ Յիսուս Քրիստոս ասաց նրան. «Ես տասնիդ չբժըշկեցի՞ արդեօք։ Ո՞ւր են մնացած իններ։ Ի՞նչու չեկան նոքա Աստուծուն փառք տալու, այլ եկաւ միայն այս այլազգին»։

Յետոյ ասաց բժշկվածին. «վեր կաց դնա խաղաղութեամբ, քո հաւատդ փրկեց քեզ»։

ԳԼՈՒԽ ԿԱ.

ԶԱՔԷՈՍ

Ղուկ. ԺԹ. 1.

Յիսուս Քրիստոս մօտենում էր Երիքովին։ Այս քաղաքումը բնակում էր մի մարդ, որի անունը Զաքէոս էր և ինքը մաքսաւոր ու շատ հարուստ մարդ էր. նա շատ ցանկանում էր Յիսուս Քրիստոսին տեսնել. բայց կարճահասակ լինելով ժողովրդի բազմութեան եւեւից, որնոր Յիսուսին շրջապատում էր, չէր կարողանում նրան տեսնել։

Ճանապարհին կար մի թզենի. Զաքէոսը շտապով վազեց դնաց ծառի վրայ, որ գոնեայ այն տեղից տեսնէ Աստուածային Վարդապետին։

Երբ ծառին մօտեցաւ Յիսուս, կանչեց Զաքէոսին, որ նստած էր թզենիի վրան և ասաց. «Զաքէոս, ներքև իկ շուտով այդ տեղից։ Ես քո տունն եմ գալիս»։

Այսպէս առատաձեռնութեամբ վարձատրեց Տէրը Զաքէոսին նորա այն ցանկութեան համար, որով նա կամենում էր Յիսուսին տեսնել։

Զաքէոս շուտով ներքև եկաւ ծառից մեծ ուրախութեամբ ընդունեց Տիրոջ իր տունը։ Ամեն այս տեսնողները ասում էին. «Ի՞նչպէս կարող է նա իջնել այն մարդու տունը, որին ամենքը համարում են մեղաւոր»։

Իսկ Զաքէոս ուրախացած մօտեցաւ Յիսուս Քրիստոսին և ասաց. «Տէ՛ր, ես կ՚տամ բոլոր ստացուածիս կէսը աղքատներին և թէ զրկել եմ մէկին, չորս անգամ կ՚հատուցանեմ»։

Տէրը պատասխանեց. «այսօր եղաւ այս տունս փրկութիւն, որովհետև սա էլ Աբրահամի որդին է։ Մարդու որդին եկաւ կորածներուն փրկելու»։

ԳԼՈՒԽ ԿԲ.

ԿՈՅՐԻ ԾՆԱԾԻ ԲԺՇԿՈՒԻԼԸ

Յովհ. Բ. 1.

Մի անգամ Փրկիչը պատահեցաւ մի մարդու, որնոր կոյր ծնած էր. նա նստած էր ճանապարհի մօտ և անցնողներից խնդրում էր ողորմութիւն: Յիսուսի աշակերտները կարծում էին, որ ամեն մեծ տարաբաղդութիւն պատիժ է, որնոր Աստուած ղրկում է մարդուս մեղաց համար: Բայց որովհետև այս ողորմելին չէր կարող արժանի լինել այդպիսի պատժին, ըստ որում՝ ի ծնէ կոյր էր, նոքա չէին իմանում ինչին վերաբերել այս դրժբաղդութիւնը, ուստի և հարցրին Փրկչին. «Վարդապետ, ո՞վ է մեղանչել, աա թէ սորա ծնողները, որ այս խեղճը կոյր է ծնեալ»: Յիսուս Քրիստոս պատասխանեց. «ոչոք չէ մեղանչել, ոչ սա ինքն և ոչ էլ սորա ծնողները, այլ այս պատահել է, որ Աստուծու գործքերը յայտնվին»:

Ամեն նեղութիւններն, որոնք Աստուած ղրկում է պէտք է լինեն կամ չարերին ուղղվելու կամ բարիներին կատարելագործվելու համար օրինակներ:

Չարագործների չարչարանքը կոչվում է պատիժ. իսկ բարեգործներինը՝ փորձութիւն: Բայց թէ ո՞րն է ղրկվում մարդուս, պատիժ արդեօք թէ փորձութիւն, այն Աստուած գիտէ և չարչարվողի խղճմտանքը: Ի՞նչպիսի բարերարութիւն է մեղաւորի համար, երբ նա իր նեղութեանցը տանելիս, կարողանում է ասել, որ այն ղրկված է իրեն Աստուծմէ իր մեղքերը քաւելու համար և ո՞րպիսի մխիթարութիւն է բարեգործի համար կարծելը, որ Աստուծոյ փառքի համար ինքը պէտք է համբերութեամբ տանէ իր չարչարանաց և որ ճշմարիտ և ողորմած Աստուածն իրեն կ՚վարձատրէ այս ամենի համար:

Տէրը յաճախակի միտքն էր բերում աշակերտներին իր մերձակայ մահը և համեմատելով խաւարը, որի մէջ ընկղմած էր այն 'ի ծնէ կոյրը, այն խաւարի հետ, որնոր Իր մահից յետոյ պէտք է լինէր, նա ասաց. «ես պէտք է կատարեմ ինձ Ղրկողին գործքերը քանի որ ցերեկ է դեռ. շուտ վրայ կ'հասնի գիշերը, երբ ոչոք չի կարող աշխատել։ Մինչև նա աշխարհիս վրայ եմ, նա աշխարհիս լոյսն եմ։ Յետոյ չոքեց գետնին, շինեց կաւ և ծեփեց նրանով կոյրի աչքերն ու ասաց նրան։ «Գնա, լուա՛ Սելոամի աւազանումն»։

Կոյրը գնաց, լուացվեցաւ և աչքերը բացուեցան։ Այն ժամանակ դրացիներն և ամենքն, որոնք առաջ ճանաչում էին նրան ասում էին միմեանց. «սա այն կոյրն չէ՞, որնոր ողորմութիւն էր խնդրում»։ Ոմանք ասում էին թէ նա է. իսկ միւսները հաստատում էին, թէ նրա նման է միայն։ Բայց նա ինքը ասաց. ես ճշմարտիւ այն կոյրն եմ։ Հետաքրքրութիւնը ամենուն տիրեց իմանալու. թէ ի՞նչպէս են նորա աչքերը բացվել։ Երիտասարդը պատասխանեց. «մի մարդ, որին անուանում են Յիսուս, ծեփեց աչքերս կաւով և հրամայեց լուացվել Սելոամի աւազանումն և ես սկսայ տեսնել»։ Բայց ո՞վ է այն մարդը. հարցնում էին նրան։ «Չգիտեմ, պատասխանեց նա. Այն ժամանակ տարան նրան Փարիսեցիներիների մօտ, որոնք նմանապէս հարցրին նրան. թէ նորա աչքերը ի՞նչպէս բացվեցան։ Բժշկված կոյրը նրանց էլ նոյն պատասխանը տուեց. եթէ մէկը ծեփեց աչքերս կաւով, ու հրամայեց լուացվել. լուացվեցայ և ահա տեսնում եմ այժմ։

Յիսուս Քրիստոս կոյրին բժշկեց շաբաթ օրը. ուստի և ծագեցաւ վէճ Փարիսեցիների մէջ։ Ոմանք ասում էին. այս մարդը Աստծմէ ղրկած չէ, որովհետև շաբաթը չէ պահում, միւսներն ասում էին. միթէ կարո՞ղ է մեղաւոր մարդը այսպիսի հրաշքներ գործել։ Վերջապէս հարցրին նորա բժշկվածին

«դու ի՞նչ կասես այն մարդու վրայ, որնոր քո աչքերիդ լոյս տուեց»։—«Նա կարծում եմ, որ Նա մարգարէ է, պատասխանեց բժշկվածը։ Բայց Փարիսեցիները չէին ուզում հաւատալ, որ նա կոյր ծնած լինէր և կանչեցին նորա ծնողներուն։ «Սա ձեր որդի՞ն է. հարցրին նոքա. դուք ասում էք, որ նա ծնաւ կոյր, այժմ ի՞նչպէս է տեսնում»։ Կոյր ծնածի ծնողները պատասխանեցին. «նա ճշմարտիւ մեր որդին է և ծնաւ կոյր. բայց ինչպէս աչքերը լոյս ստացան, այդ չգիտենք։ Նա այն հասակուն է, որ ինքը կարող է իր մասին խօսիլ» Ծնողները այսպէս պատասխանեցին երկիւղից. նոքա վախենում էին, որ եթէ Յիսուսին բոլոր ժողովրդի առաջին խոստովանեն Մեսիա, Փարիսեցիներն և քահանաներն իրենց կ՚հեռացնեն ժողովրդից. ուստի և ասացին, մեր որդին հասակը առած է, հարցրէ՛ք իրեն։

Այն ժամանակ Փարիսեցիները կրկին կանչելով առողջացած կոյրին ասացին նրան. «փառք տո՛ւր Աստծուն։ Մենք գիտենք, որ նա, ով որ քեզ բժշկեց, մեղաւոր է. որովհետև շաբաթ օրը բժշկեց քեզ. համաձայնիր մեզ հետ դու. էլ»։ Նա պատասխանեց. «ես չգիտեմ նա մեղաւո՞ր է արդեօք, միայն գիտեմ, որ ես կոյր էի և այժմ տեսնում եմ»։—«Սա՛ մեզ», ասացին վերստին Փարիսեցիներն. «ի՞նչպէս բժշկեց Նա քեզ»։— «Ես արդէն պատմեցի այն ձեզ», պատասխանեց նա. «բայց դուք չէիք կամենում լսել։ Ինչո՞ւ մէկ էլ կրկնեմ։ Կա՞մ թէ կամենում էք դուցէ Նորա աշակերտը լինել։ Փարիսեցիքը բարկացան այսպիսի պատասխանի համար, պարսաւում էին նրան և ասում. «դու ինքդ ես Նորա աշակերտն, իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք։ Մենք գիտենք, որ Աստուած խօսեցաւ Մովսէսի հետ. իսկ այն մարդուն մենք չենք ճանաչում, թէ ուստի՞ է Նա»։

Այդ է իսկ զարմանալին, պատասխանեց բժշկվածը, որ դուք չգիտէ՛ք, որտեղից է Նա. բայց էլի շնորհեց Նա իմ աչքերիս լոյս։ Ես գիտեմ, որ Աստուած մեղաւորի աղօթքին չէ

լսում։ այլ լսում է նորա աղօթքը, ով որ Նրան պատվում է և Նորա կամքը կատարում։ Երբէք չէ լսած, որ մէկը կոյր ծնածի աչքը բանայ։ Եթէ Նա Աստուծմէ ղրկած չլինէր, չէր կարող հրաշքներ գործել»։

Մեզքերի մէջ ծնար և դու էլի համարձակվում ես մեզ սովորցնել». ազաղակեցին Փարիսեցիներն և դուրս գցեցին Նրան ժողովրդից։ Յիսուս Քրիստոս, երբ այս բանը իմացաւ, բժշկվածին տաճարումը պատահելիս ասաց. «Հաւատո՞ւմ ես դու Աստուծոյ որդուն»։ Երիտասարդը պատասխանեց. «ո՞վ է Նա, Տէ՛ր։ Ես կամենում եմ հաւատալ Նրանց»։—Դու տեսնում ես Նրան և խօսում ես Նորա հետ». պատասխանեց Փրկիչը։ Հաւատում եմ, Տէր, ազաղակեց երիտասարդն ուրախութեամբ և երկրպագութիւն տուեց Նրան։

Դատաստանի եմ եկել Ես այս աշխարհս, ասաց Տէրը, որ կոյրերը տեսնեն. իսկ տեսնողները կուրանան»։ Այս որ լսեցին այն տեղ գտնվող Փարիսեցիներն, ասացին. «մի՞թէ մենք կոյր ենք»։—«Եթէ դուք կոյր լինէիք» պատասխանեց Յիսուս Քրիստոս, մեղք չէիք ունենալ. բայց դուք հաւատում էք, որ ամեն բան տեսնում էք ու այդ պատճառաւ դուք ուրիշներից աւելի մեղաւոր էք։

ԳԼՈՒԽ ԿԴ.

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԳՏՆՈՂ ՄԵԳԱՒՈՐ ԿԻՆԸ

Յովհաննու աւետարանի վերջումն։

Փարիսեցիներն և օրէնսուսոյցները նախանձելով Յիսուսի Քրիստոսի վարքին ամեն կերպիւ աշխատում էին Նրան դատապարտելու մէկ պատճառ գտնելու Գիտենալով նորա բարեպաշտութիւնը, նոքա կարծում էին, որ Նա կ'պաշտպանէ մեղա-

ւոր կնոջ, որնոր Մովսէսի օրէնքով պէտք է դատապարտվէր 'ի մահ և այնպէս օրինաց հակառակելով պատճառ կ'տայ Ինքն Իրեն զրպարտելու։

Տէրը մի անգամ տաճարումը գտնուելիս քարոզում էր ժողովրդին։ Այս ժամանակ դպիրներն և փարիսեցիները բերին մի կնոջ և կանգնեցրին մի բաց տեղում «Վարդապետ», ասացին նոքա. «Ահա կին մի, որնոր այնպիսի մեղք է գործել, որի համար Մովսէսի օրէնքով պէտք է քարկոծվի. Դու ի՞նչ կ'ասես այս մասին»։ Յիսուս Քրիստոս գլուխը կորացրեց դէպ 'ի գետին ու սկսաւ մատով գրել աւազի վրան առանց նրանց մի պատասխան տալու։ Բայց որովհետև նոքա չէին դադարում հարցնելից, գլուխը բարձրացրեց և ասեն Իր առջևը կանգնողներին վրայ գցելով հայեացուածքը պատասխանեց. «Թող առաջինը նա գցէ դորա վրայ քար, ով որ ձեզնից զգում է իրեն անմեղ իր խղճմտանքի առաջը»։ Ցետոյ էլի գլուխը կորացնելով շարունակեց գրել մատով աւազի վերայ։

Այս պատասխանը լսելով և յանդիմանվելով իրենց խղճմտանքից ամենքը մէկ մէկ սկսան հեռանալ տաճարից, սկսած ծերերից մինչև վերջին մարդը։ Վերջապէս Տէրը մնաց միայնակ կնոջ հետ, որնոր կանգնած էր տաճարի բակի մէջտեղումը։ Տէրը բացի դատապարտված մեղաւոր կնոջից ոչոքին չ'տեսնելով ասաց նրան. «Ո՞ւր են նոքա, որոնք քեզ դատապարտում էին կամ թէ ոչոք նրանցից չդատապարտեց քեզ»։ «Ոչոք», պատասխանեց կինը։—«Ես էլ չեմ դատապարտում քեզ», ասաց Փրկիչը. «գնա՛ և այսուհետև էլ մի՛ մեղանչիր»։

ԳԼՈՒԽ ԿԴ.

ՄԱՐԹԱ ԵՒ ՄԱՐԻԱՄ

Ղուկ. ժ. 38.

Յիսուս Քրիստոս երբ Զատկի տօնին գնում էր Երուսաղէմ, ինքաւ մի գեղումը։ Այս տեղ մի բարեպաշտ կին, Մարթա անունով, ընդունեց Նրան իր տուն. սա ունէր մի քոյր՝ անունով Մարիամ և մի եղբայր—Ղազարոս։ Մարիամը, երբ Փրկիչը նոցա տուն եկաւ, նստաւ Նորա ոտի մօտ և լսում էր Նորա քարոզները. իսկ Մարթան ընդ հակառակն հոգս էր քաշում և աշխատում էր ամեն կերպի պատիւ տալու Յիսուս Քրիստոսին։ Վերջապէս մօտենալով Նրան Մարթան ասաց անբաւականութեամբ. «Տէր, մի՞թէ չես տեսնում Դու, որ քոյրս ինձ մենակ է թողել որ քեզ ծառայեմ։ Հրամայի՛ր Նրան, որ ինձ օգնէ»։—«Մարթա՛ Մարթա՛». պատասխանեց Տէրը. «դու հոգս ես քաշում շատ բանի վրայ, միայն մէկն է հարկաւոր։ Մարիամը իրեն համար լաւ մասն է ընտրել, այն, որ Նրանից երբէք չեն խլիլ»։

ԳԼՈՒԽ ԿԵ.

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յովհ. ժա. 1.

Գեղը, ուր բնակում էին Ղազարոս և նորա քոյրերը, Մարթան և Մարիամ, անուանվում էր Բեթանիա։ Ղազարոս, որին Յիսուս Քրիստոս շատ սիրում էր, սաստիկ հիւանդացաւ։ Երկու քոյրերն էլ գնացին Փրկչի մօտ իրենց եղբօր հիւանդութեան համբաւը տանելու։ Նոքա հրամայեցին ասել Տիրոջը, նա, որին Դու սիրում ես, հիւանդ է»։

Յիսուս Քրիստոս, երբ այս լսեց, ասաց. «այն հիւանդութիւնն մահաբեր չէ, այլ Աստուծոյ փառաց և նորա Որդու փառաւորութեան համար է»։ Եւ ինքը մնաց նոյն տեղումը էլի երկու օր, Ղազարոսի հիւանդութիւնը իմանալից յետոյ։ Այս տեղը Գալիլեացումն էր հեռու Բեթանիայից։ Յետոյ Տէրը ասաց իր աշակերտներին. «գնանք կրկին Հրէաստան»։ «Վարդապետ», ասացին աշակերտները, Հրէաները կամենում էին քարկոծել և Դու էլի գնում ես այն տեղ»։

Յիսուս Քրիստոս պատասխանեց նրանց. «օրը տասներկու ժամ չունի։ Ով մեր է գալիս ցերեկով, նա չի գայթակղվիլ. որովհետև տեսնում է աշխարհիս լոյսը, այլ նա կ՚գայթակղվի, ով գիշերով է մեր գալիս, որովհետև լոյս չէ տեսնում»։ Յետոյ մի քանի ժամանակ լուռ կենալից յետոյ ասեցին. «Մեր բարեկամ Ղազարոսը ննջեց, կերթամ, կ՚զարթեցնեմ նրան»։ «Տէր», ասացին աշակերտները, «եթէ նա քնեցաւ, կ՚թեթևանայ նորա հիւանդութիւնը»։

Բայց Յիսուս Քրիստոս քնելու վրայ չէր ասում. այլ նորա մահուան վրայ, միայն աշակերտները չհասկացան նրան։ Այն ժամանակ Տէրը յայտնի ասաց նրանց. «Ղազարոսը մեռաւ. Եւ ուրախ եմ ձեր մասին. զուք կ՚հաստատվիք ձեր հաւատի մէջ որովհետև զուք գիտէիք որ Ես այն տեղ չէի։ Բայց գնանք նորա մօտ»։ Թոմաս Առաքեալը վախենալով իր Վարժապետի կենաց համար. որովհետև հրէաները շատ չարացած էին Նորա վերայ, ասաց. «գնանք մենք էլ, մեռնենք Նորա հետ միասին»։

Ղազարոսը արդէն չորս օրվուան թաղած էր, երբ Յիսուս Քրիստոս Բեթանիա եկաւ։ Այս գեղը Երուսաղէմից հեռու չէր և Հրէաներից շատերն եկել էին Մարթային և Մարիամին մխիթարելու։ Յիսուս Քրիստոսի մօտենալը լսելով Մարթան շտապեց Նորա առաջ դուրս գալու. իսկ Մարիամ մնաց տունը։ «Տէր», աղաղակեց Մարթան. «եթէ Դու մեզ մօտ լինէիր, մեր

եղբայրը չէր մեռնիլ։ Բայց ես այժմ էլ հաւատում եմ, որ Աստուած կ՚տայ Քեզ ամէն բան, ինչ որ խնդրես Նրանից»։ — Յարութիւն կ՚առնէ եղբայրդ». ասաց Փրկիչը։ «Գիտեմ, որ յարութիւն կ՚առնէ», պատասխանեց Մարթան, «վերջին յարութեան օրը»։ Յիսուս Քրիստոս ասաց. «Ես եմ կեանքն և յարութիւնը։ Ով ինձ հաւատում է, եթէ մեռնի էլ, կը կենդանանայ և ամէնը, ով կենդանի է և հաւատում է Ինձ, յաւիտեան չի մեռնիլ։ Հաւատում ես սրանս։ — «Հաւատում եմ, Տէր». պատասխանեց Մարթան, որ Դու ես Քրիստոս՝ Աստուծոյ Որդին, որնոր գալու էր աշխարհ։

Որդիի հաւատ է։ Միայն հաստատ հաւատող, բարեպաշտ հոգին կարող էր տալ այնպիսի պատասխան այնպիսի վշտալի փորձութեան ժամանակ։

Այս ասելով Մարթան դարձաւ տուն և կամաց ասաց իր քրոջ. «Վարդապետն եկաւ և քեզ կանչում է»։ Մարիամը վեր կացաւ և շուտով գնաց Նորա մօտ։ Նրան միխիթարող Հրէաներն, երբ տեսան որ նա շատ շտապով դուրս գնաց, գնացին իրենք էլ Նորա ետևից ասելով. «Նա գնում է իր եղբօր գերեզմանի վրան լալու»։

Մարիամը երբ մօտեցաւ Յիսուս Քրիստոսին, ընկաւ Նորա ոտներն և ասաց. «Տէր, եթէ Դու այստեղ լինէիր, եղբայրս չէր մեռնիլ»։ Յիսուս Քրիստոս տեսնելով Նրան արտասուելիս և ամէն Նորա մօտ եկած Հրէաներին, որ լաց էին լինում, ինքն էլ ոգւով խռովեցաւ։ «Ո՞ւր դրիք Նրան». հարցրեց Նա։ «Տէր, եկ և տես». պատասխանեցին Նրան։

Յիսուս Քրիստոս գերեզմանին մօտենալիս լաց եղաւ։ «Ինչպէս սիրել է Նրան». ասում էին Հրէաները։ Մի՞թէ Նա, որնոր կոյրի աչքերը բացեց, չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր» ասում էին ոմանք։ Ղազարոսը դրած էր այրում, որ փորած էր ժայռի մէջ ու դուռը ծածկած էր մեծ վէմով։ Յի-

սուա Քրիստոս մօտեցաւ գերեզմանին և ասաց. «ելէք առէք վէմը»։ Այն ժամանակ Մարթան՝ մեռածի քոյրը կրկնեց ասելով։ «Տէր, մարմինը հոտած կ՚լինի. արդէն չորս օր է, որ թաղած է»։—Ես քեզ չասացի՞ն. պատասխանեց Տէրը. զոր եթէ դու հաւատամ ես, կ՚տեսնես Աստուծոյ փառքը»։

Քարը, որով ծածկած էր գերեզմանը, դէն գցեցին։ Փրկիչը բարձրացրեց Իր աչքերը դէպի երկինք և ասաց. «Հայր, շնորհակալ եմ Քեզանից, որ Ինձ լսեցիր. Ես գիտեմ, որ Դու միշտ լսում ես Իմ աղօթքս. բայց Ես այս անում եմ Ինձ շրջապատող մարդոց համար, որ նոքա ամենքն էլ հաւատան, որ Դու ես Ինձ ղրկել»։

Այս ասելից յետո Յիսուս Քրիստոս բարձր ձայնով աղաղակեց. «Ղազարոս, վեր կաց, դուրս եկ». և մեռածը դուրս եկաւ գերեզմանից։ Ոտներն և ձեռները փաթաթած էին երիզով և երեսը ծածկած էր վարշամակով։

«Բաց արէք դրան». ասաց Տէրը. «և թողէք, որ գնայ»։

Շատերը Հրէաներից, որոնք եկել էին Մարթայի և Մարիամի մօտ և վկայ էին այս հրաշքին, հաւատացին Յիսուս Քրիստոսին. իսկ մի քանիսը գնացին Փարիսեցիների մօտ և պատմեցին նրանց այս անցքը։ Այն ժամանակ քահանայապետներն և փարիսեցիները խորհուրդ հաւաքեցին մտածելու, թէ ի՞նչ գէտք է անեն։ «Այս մարդը մեծ հրաշքներ է գործում, ասում էին նոքա, «եթէ մենք թողնենք Նրան, ամենքը կ՚հաւատան, որ Նա է Քրիստոսն և այն ժամանակ Հռովմայեցիք կ՚բռնեն թէ մեր քաղաքն և թէ մեր ազգը»։

Կայիափա, որնոր այն տարուան քահանայապետն էր, ասաց. «Ի՞նչ թէ դուք աւելի գերազանց չէք համարիլ, որ մէկը մեռնի շատերի տեղ, քան թէ ամբողջ ազգը կորչի մէկի համար»։

Քահանայապետը այս իրանից չասաց. այլ իբրև քահանայապետ յայտնեց Աստուծոյ կամքը, որով Յիսուս Քրիստոս

պէտք է մեռնէր բոլոր մարդոց համար և հաւաքէր միասին Աստուծոյ ցրուած որդւոցը։

Քահանայապետների և ծերերի խորհրդումը վճռեցին, որ Յիսուսին ապանեն. բայց Փրկիչը թաղնվեցաւ Հրէաներից և հեռացաւ այն քաղաքից, որտեղ Եփրայիմ էր անուանվում և որտեղ անապատի մօտ էր։

Բայց զատկի տօնը մօտենում էր և շատ մարդիկ զանազան կողմերից գալիս էին Երուսաղէմ. սպասում էին, որ տօնին կ'գայ նմանապէս Յիսուս էլ. ուստի և քահանայապետներն և փարիսեցիները հրաման տուին ամենին, ով որ տեսնէ Նրան իրենց իմաց տայ, որ բռնեն Նրան։

ԳԼՈՒԽ ԿԶ.

ՄԱՐԻԱՄԸ ՕԾՈՒՄ Է ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ ԻՒՂՈՎ.

Մատ. իզ. 6. Մարկ. ժգ. 3. Ղուկ. է. 36. Յովհ. ժբ. 1.

Զատկի օրից վեց օր առաջ Փրկիչն եկաւ Բեթանիա, ուր էր Նրանից յարութիւն ստացած Ղազարոսը, այս տեղ նորա համար պատրաստեցին ընթրիք։ Մարթան սեղանի մօտ ծառայում էր և Ղազարոսն էլ մէկն էր նրանցից, որոնք Յիսուսի հետ միասին նստած էին սեղանի շուրջը։ Իսկ Մարիամ առաւի մի մեծ շիշ թանգագին իւղով, օծում էր նրանով Յիսուսի ոտները և սրբում էր իր մազերով։ Բոլոր սենեակը լցուեցաւ անոյշ հոտով։

Յիսուսի Քրիստոսի աշակերտներից մէկը՝ Յուդա Իսկարիովտացին՝ նա, որոնք յետոյ մատնեց էլ Նրան, ասաց. «Ի՞նչպիսի շռայլութիւն է։ Աւելի լաւ չէր, որ այդ իւղը ծախվէր և փողը բաժանվէր աղքատներին»։

Յուդան այս ասաց ոչ թէ այն պատճառաւ, որ հոգս էր

քաշում աղքատների համար. այլ նորա համար որ ինքը աղ-ծաթաւէր և ագահ մարդ էր։ Նա էր պահում իր մօտ արկղը, ուր հաւաքում էր տուած ողորմութիւնները։

«Թոյլ տուէք դրան». ասաց Յիսուս Քրիստոս, դա այդ պահ-հել է Իմ թաղմանս օրուան համար։ Աղքատներդուք միշտ ունէք ձեզ մօտ. իսկ Ինձ միշտ չէք ունենալ»։

Երբ որ Հրէաստանում տարածվեցաւ համբաւը, թէ Յի-սուս Բեթանիումն է, շատ բազմութիւն հաւաքվեցաւ, թէ իրեն Յիսուսին և թէ Նրանից յարութիւն ստացած Ղազարոսին տեսնելու համար։

Քահանայապետները տեսնելով, որ շատ ժողովուրդ է հա-ւատում Նրան, վճռեցին Ղազարոսին էլ սպանել Նորա հետ միասին։

ԳԼՈՒԽ ԿԷ.

ԵՐՈՒՍԱՂԷՄ ՄՏՆԵԼԸ

Մատ. իա. 1. Մարկ. ժա. 1. Ղուկ. ԺԹ 23. Յովհ. ժբ. 12.

Մեկ օր առաւօտը Յիսուս Քրիստոս Իր բոլոր աշակերտ-ներովը Բեթանիայից գնաց Երուսաղէմ։

Ճանապարհին մօտիկ, Զիթենեաց սարի տակը, կար մի գիւղ, որ անուանվում էր Բեթանիա. այս տեղ ղրկեց Տէրը իր աշակերտներից երկուսին հրամայելով Նրանց, գնացէք ուղիղ այն գիւղը, որ ձեր առջևը տեսնում էք. Նորա մէջ որ կ՚մտնէք, կ՚գտնէք այնտեղ կապած էշ և յաւանակ Նորա հետ, որի վրայ դեռ ոչ ոք չէ նստել, քակեցէք և բերէք Ինձ մօտ։ Եթէ մէկը հարցնէ ձեզ, թէ ի՞նչ էք անում, պատասխանեցէք միայն. «Տէրն է պահանջում». և ոչ ոք ձեզ չի արգելիլ։

Աշակերտները գնացին և ուրախալի զարմանքով գտան

ամեն բան այնպէս, ինչպէս ասաց Տէրը։ Գիւղ մանելիս գտան էշին և յաւանակին կապած դրան մօտ և երբ կամենում էին քակել էշին, տէրը հարցրեց. «ինչո՞ւ է.ք քակում դրանց»։—«Նա Տիրոջը հարկաւոր է». պատասխանեցին աշակերտներն և տէրն չարգելեց նրանց։

Սրանելեան երկրներում էշի վրայ նստում էին թագաւորներն էլ, մանաւանդ հանդիսաւոր ժամանակները. ձիերը գործածվում էին աւելի պատերազմներում։ Աշակերտները փռեցին իրենց շորերը յաւանակի վերայ և Տէրը հեծաւ նրան։ Ճանապարհը Զիթենեաց սարի վրայով էր։ Երբ հասան սարի գլուխը և նոցա հայեցուածքին երևեցաւ Երուսաղէմ, աշակերտներն և ժողովուրդը, որոնք Յիսուս Քրիստոսին ուղեկից էր և առաջ էր գուրս գալիս, մոքերը բերելով ամեն գործքերն, որ նա գործել էր և մատնելով օրհնութեան վրայ, որ Աստուած ղրկել էր նրանով մարդացը, շարժած ուրախութիւնից և շնորհակալութիւնից բարձր ձայնով աղաղակում էին. «օրհնեալ է Աստուծոյ անունով եկողն՝ Իսրայէլի թագաւորը։ Խաղաղութիւն երկնքումը և փառք ՝ի բարձունս։ Ովսաննա Դաւթի որդուն։

Փարիսեցիներից մի քանիսը ասում էին Յիսուս Քրիստոսին. «հրամայիր աշակերտներիդ. որ լռեն»։—«Եթէ նոքա լռեն», պատասխանեց Նա, «քարերը կաղաղակեն»։—Ոչ ուրախութիւնն և ոչ գովասանքներն ուրախացնում էին Նրան. այլ թշուառութիւնները, որոնք սպառնում էին Հրէից աղգին, լցնում էին տրտմութեամբ Տիրոջ մարդասէր սիրտը։ Երուսաղէմին նայելով Նա սկսաւ լալ։ «Ո՛հ. երանի՜, թէ այժմ գոնէ կարողանայիր հասկանալ ի՞նչ է քեզ օգտակար», ասաց Նա, «բայց ամեն բան ծածկած է քո աչքերից։ Կ՝գան օրեր, երբ թշնամեաց զօրքը կ՝պատէ քեզ ամեն կողմից և իսկ քո մէջ կ՝կոտորէ որդոցդ. չի մնալ քո մէջ քար քարի վրայ. որովհետև չհասկացար քո այցելութեանդ ժամանակը։

Յիշենք այս տեղ նոյնպէս Յիսուսի Քրիստոսի խօսքերը, որոնք նա ասաց ուրիշ անգամ և որոնք յայտնում են Նորա տրամութիւնն Երուսաղէմի ապագայ վիճակի վերայ։ Մի անգամ ասաց Նա. «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորեցիր Մարգարէներուն և քարկոծեցիր նրանց, որոնց Աստուած ղրկեց. քանիցս անգամ Ես կամեցայ ժողովել քո որդւոցդ, ինչպէս թռչունը ժողովում է իր ձագերուն իր թեւերի տակ. բայց դու չկամեցար այն. իսկ այժմ քարքդ կ'ամայանայ»։

Զատկի տօնի համար Երուսաղէմումը հաւաքվեցաւ մեծ բազմութիւն։ Նոքա, որոնք վկայ էին Ղազարոսի յարութեան, պատմում էին անցքը շատերին և այս պատճառաւ ժողովուրդը լսելով Յիսուս Քրիստոսի մտանելը, շտապեց նորա ցառջ գնալու արմաւենիի ոստերով և բարձր ձայնով աղաղակում էր. «Ովսաննա. օրհնեալ է, որ գալիս է Աստուծոյ անունով՝ Իսրայէլի թագաւորը»։ Ոմանք ճանապարհի վրան նորա ոտի տակ փռում էին իրենց շորերը։ Իսկ փարիսեցիներն ասում էին. «Ի՞նչ անենք. ամենքը հետևում են նրան»։

Ժողովուրդը, որ հաւաքվեցաւ այնպէս յանկարծ Նրան ընդունելու և ուրախութեամբ կոչում էր Նրան թագաւոր. երեխայքը, որոնք իրենց դովասանքներն աւելցնում էին ժողովրդի դովասանքի վրայ, աշակերտները, որոնք բերին Նրան Երուսաղէմ մտնելու համար յաւանակին, որին դրեթէ պատահմամբ գտան. — այս ամենն էր, որ կատարվեց Մարգարէներից մէկի խօսքը, որն որ երկար ժամանակ Քրիստոսի ծննդից առաջ գրեց յետագայ խօսքերը. «Մի վախենար դուստր Սիոնի, ահա գալիս է քեզ մօտ քո թագաւորդ հեզ Փրկիչ, նստած աւանակի վրայ»։ [1]) Իսկ Սաղմոսի մէջ ասած է. «Սոնդիեաց երեխաների բերանից կ'կատարվի օրհնութիւնդ»։ [2])

---

[1]) Զաքար. Թ. 9.

[2]) Սաղ. Ը. 3.

ԳԼՈՒԽ ԿԸ.

ՉԱՐԱՑԱԾ ԹԶԵՆԻՆ

Մատ. իա. 9. Մարկ. ժա. 12

Քահանայապետներն և Փարիսեցիներն աշխատում էին միջոց գտնել Յիսուս Քրիստոսին գիշերով բռնելու. որովհետև վախենալով ժողովրդից ցերեկով չէին համարձակվում այն անել. բայց նա ցերեկը Երուսաղէմի տաճարում անցկացնելից յետո, երեկոյեան Իր բոլոր աշակերտներով դարձաւ Բեթանիա, որ Զիթենեաց սարի մուտ կողմումն էր. և գիշերն անցկացնում էր քահանապետներին անծանօթ տեղումը։

Իր հանդէսով Երուսաղէմ մտնելու երկրորդ օրը, երբ դառնում էր Բեթանիայից քաղաք, Յիսուս Քրիստոս քաղցեցաւ և մօտենալով թզենիին, որ ճանապարհին մօտ էր, նայեցաւ չ՝կայ արդեօք պտուղ նորա վրայ. բայց բացի տերևներից ոչինչ չգտնելով ասաց. «այսուհետև միշտ անպտուղ կ՝մնաս դու»։ Միւս օրը, նոյն ճանապարհի վրայով անց կենալիս աշակերտները զարմացան, երբ տեսան, որ թզենին չորացել էր։

Այս ծառը պէտք է լինի ամենի համար զգուշութեան օրինակ։ Այն մարդը, որնոր չէ գործում բարի գործքեր, չէ աշխատում իրեն ուղղելու, կենում է առանց իր ընկերոջ օգուտ տալու, կ՝հասնի թզենիի վիճակին։

Պետրոս Առաքեալը ասաց Փրկչին. «Վարդապետ, տես, թզենին, որնոր Դու անիծեցիր, բոլորովին չորացել էր արդէն»։ Յիսուս Քրիստոս պատասխանեց. «ճշմարիտ եմ ասում ձեզ. եթէ կ՝ունենաք հաստատ հաւատ, ոչ միայն մի խօսքով կ՝չորացնէք թզենի. այլ եթէ կ՝ասէք այս սարին, շարժվի՛ր տեղից դէ և ընկի՛ր ծովը»—ամենը կ՝կատարվի ձեր խօսքով։ Եւ ինչ որ խնդրէք ձեր աղօթքումը հաւատով, բոլորը կ՝ստանաք»։

ԳԼՈՒԽ ԿԹ,

ՓՐԿՉԻ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ՓԱՌԱՑ ԵՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ

Մի անգամ Յիսուս Քրիստոս քարոզում էր ժողովրդին տաճարում։ Նա այն ժամանակ ասաց. «Ես եմ աշխարհիս լոյսը, ով ինձ կ՚հաւատայ և կ՚հետևի, նա չի շրջիլ խաւարի մէջ. այլ կ՚ստանայ կենաց լոյսը»։ [1]) Հաւատացէք լոյսին—և դուք կ՚լինիք լոյսի որդիք։ [2]) Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք, ոչ ոք չի գալ Հօրս մօտ, բայց եթէ Ինձմով»։ [3])

Շատերը նրանցից, որոնց Յիսուս Քրիստոս անապատումը հրաշալի կերպով կերակրեց, միւս օր եկան կրկին նորա մօտ ու երկար ժամանակ փնտռում էին նրան։ Յիսուս Քրիստոս ասաց նրանց, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք այն պատճառով չեկաք Ինձ մօտ, որ հրաշք տեսաք, այլ որ հաց կերաք և կըշտացաք։ Այդքան հոգս մի՛ քաշէք մարմնաւոր կերակուրի վրայ, այլ հոգացէք հոգւոյ կերակուրի վրայ, որնոր ձեզ կ՚տայ մարդու Որդին»։

«Ես եմ կենաց հացն, ով Ինձ կ՚հետևի նա երբէք չի քաղցիլ. ով Ինձ կ՚հաւատայ, նա չի ծարաւիլ երբէք։ Ինձ Առաքողի կամքն այն է, որ ամենքը, որոնք Որդուն կ՚տեսանեն և կ՚հաւատան Նրան, ստանան յաւիտենական կեանք։ Կենաց հացը, որնոր Ես կ՚տամ, է Իմ մարմինս, որնոր Ես կ՚տամ աշխարհիս կենդանութեան համար։ Ով Իմ մարմինս կ՚ուտէ և Իմ արիւնս կ՚խմէ, կ՚ունենայ յաւիտենական կեանք և Ես նրան կ՚յարուցանեմ վերջին օրումն»։

---

[1]) Յովհ. գ. 12.
[2]) Յովհ. ժգ. 26 եւ 46.
[3]) ժդ. 6.

Փրկչի այս խօսքերից երևում է, թէ ո՛րչափ հարկաւոր է մեզ Յիսուսի Քրիստոսի սուրբ խորհուրդների հաղորդութիւնը։

Միանգամ Յիսուս Քրիստոս եկաւ Երուսաղէմ տաղաւարաց տօնին, որն որ կարգվեցաւ Իսրայէլացւոց անապատումը. արած ճանապարհորդութեան յիշատակի համար և այսպէս անուանվեցաւ, որովհետև այն ժամանակ նոքա բնակում էին տաղաւարների կամ վրանների մէջ։ Այս տօնը մեծ հանդէսով էր կատարվում։ Տաճարի ամէն դռները և սիւները զարդվում էին դալարի կանաչով և ժողովուրդը հանում էր ջուր Սիլոամի աւազանից. ջրի մի մասը թափում էին զոհարանի առաջին, իբրև շնորհակալութեան պատարագ, իսկ մնացածը խմում էին, ասելով Մարգարէի այս խօսքերը. «առէք ուրախութեան ջուր փրկութեան աղբիւրներից»։ *)

Այս տօնի վերջին օրը Յիսուս Քրիստոս կանգնած էր տաճարումն և ասում էր. «ով ծարաւ է, թող գայ Ինձ մօտ և խմէ։ Ով Ինձ կ՚հաւատայ. նորա վերայ կ՚կատարվի Գրոց խօսքերը. «կենդանի ջրի գետեր դուրս կ՚գան նրանից» Այս խօսքերը նա ասում էր Սուրբ Հոգւոյ վերայ, որնոր պէտք է ստանային նրան հաւատացողները։

Քահանայապետներն և Հրէաների ծերերը իրենց խորհրդումը վճռեցին աքսորել ժողովրդարանից ամենուն, ով որ Յիսուս Քրիստոսին Մեսիա կ՚ընդունէ։ Բայց Յիսուս Քրիստոս ասաց նրանց յետագայ խօսքերն. «Ես եմ քաջ հովիւը. քաջ հովիւը իր անձը դնում է իր ոչխարների համար։ Վարձկանն, որնոր իսկ հովիւ չէ և որին ոչխարները չեն պատկանում, երբ տեսնում է գայլի գալը, թողնում է ոչխարներուն և փախչում է. այն ինչ գայլը յափշտակում է ցրվում ոչխարներուն։ Վարձկանը հոգս չէ քաշում ոչխարների վրայ։ Ես եմ բարի հովիւ. ճանաչում եմ Իմ ոչխարներուս և նոքա էլ Ինձ են ճանաչում. ինչ-

*) Եսայ. ժբ. 3.

պէս Հայրը Ինձ գիտէ, այնպէս էլ Ես գիտեմ Հօրն։ Եւ դնում եմ Իմ անձս իմ ոչխարներիս համար։ Ունիմ ուրիշ ոչխարներ էլ, որոնք այս գաւթից չեն, նրանց էլ պէտք է բերեմ Ես այս տեղ, նոքա կ'լսեն իմ ձայնիս, և կ'լինի մի հօտ և մի հովիւ։

Յիսուսի Քրիստոսի հօտը ընդհանրական Սուրբ Եկեղեցին է, որոնք Նա հիմնեց և արբեց Իր սուրբ արիւնով։ Ոչխարներն են Յիսուսին Քրիստոսին հաւատացողները, Սուրբ Եկեղեցւոյ անդամները, որ առաջ Հրէաներից ընտրվեցան, իսկ յետոյ հեթանոսներից էլ՝ ոչխարներից, որոնք չէին պատկանում հին կտակարանի Եկեղեցւոյ գաւթին։ Միակ հովիւը, գլուխն և կառավարիչն ընդհանրական Եկեղեցւոյ է մեր Տէրը Յիսուս Քրիստոս։

Հրէաներից մի քանիսը ասացին Նրան, «մինչև երբ պահելու ես Դու մեզ երկբայութեան մէջ։ Եթէ Դու ես յիրաւի Քրիստոսը, ասա մեզ յայտնապէս»։ — Ես ձեզ ասացի, պատասխանեց Փրկիչը, բայց դուք չէք հաւատում։ Գործքերի, որ ես գործում եմ Հօրս անունով, վկայում են Ինձ. բայց դուք ոչինչ բանի չէք հաւատում, որովհետև իմ ոչխարներից չէք։ Իմ ոչխարներս լսում են Իմ ձայնիս. Ես գիտեմ նրանց և նոքա գալիս են Իմ ետևից։ Ես կ'տամ նրանց յաւիտենական կեանք, նոքա յաւիտեան չեն կորչիլ և ոչ ոք նրանց չի յափշտակիլ Իմ ձեռից։ Հայրս որոնք Ինձ տուեց նրանց, ամենից մեծ է և ոչ ոք չէ կարող յափշտակել նրանց Իմ հօրս ձեռքից։ Ես և Հայրս — մի ենք, այսինքն ըստ էութեան։

ԳԼՈՒԽ Հ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԳՈՒՇԱԿՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ՏԱՃԱՐԻ ՔԱՆԴՈՒՄՆ

Մատ. իզ. 1. Մարկ. ժզ. 1. Ղուկ. իա. 5.

Երուսաղէմի տաճարը հիանալի գեղեցիկ շինուածք էր հո-

Յակապ գռներով և պերճ սիւններով, ամեն տեղ փայլում էր ակ-նախոյզ ոսկեստակ մարմարիոնն և ոսկին։ Միանգամ երևկոյեան Փրկիչը Իր աշակերտներով գնում էր տաճարից. աշակերտները կանգնացրին Նրան, որ սքանչանան շինուածի գեղեցկութեան վրայ։ Վարդապետ, ասում էին նոքա, նայիր ինչպիսի քարեր են. ինչպիսի շինուածք է։— Ճշմարիտն եմ ասում ձեզ, պա-տասխանեց Տէրը, որ այդ ամենը այնպէս կ՝քանդվի, որ չի մնալ քար քարի վերայ։

Երբ եկան Զիթենեաց սարի գլուխը կրկին կանգնացրին Յիսուս Քրիստոսին և հարցրին Նրան. «Երբ այս ամենը կ՝լինի. այս զարհուրելի անցքերի նշաններն որո՞նք են։

Յիսուս Քրիստոս պատասխանեց. «Երբ կ՝լսէք պատերազ-մեր և ազգերի խռովութիւններ մի՝ վախենաք, այս ամենը պէտք է լինի, բայց այն դեռ վերջը չէ»։

Վեր կ՝կենայ ազգ ազգի վերայ և թագաւորութիւն թա-գաւորութեան վերայ. զանազան տեղեր երկրաշարժ կ՝լինի, սով և սրածութիւն. բայց այս ամենը դեռ նեղութեանց սկիզբն է»։

Ամենից առաջ ձեզ ձեռք կտան, կ՝հալածեն ձեզ, կ՝առ-նեն ատեան և բանտ, կ՝հանեն թագաւորների և իշխանների առաջ Ինձ համար. միայն այս ամենը կ՝լինի, որ դուք կարող-զանաք վկայութիւն տալ Իմ մասին։ Առաջվանից մի՝ մտածէք, թէ ի՞նչ պատասխանէք։ Ես կ՝տամ ձեզ իմաստութիւն և շնոր-հութիւնքներիդ զօրութիւն, որին ոչ ոք չէ կարող ընդդէմ կենալ։

Ձեզ կ՝մատնեն ձեր ծնողներդ, եղբայրներդ, ազգական-ներդ և բարեկամներդ, շատերին ձեզնից կ՝սպանեն, և ատելի կ՝լինիք ամենին Իմ անունիս համար. բայց առանց ձեր երկնա-յին հօր չի կորչիլ ձեր գլխի մազն էլ։ Համբերութեամբ կը փրկէք ձեր հոգին։ Իսկ երբ կ՝տեսնէք Երուսաղէմը պատած զօրքով, իմացէք, որ հասել է նորա օրը։ Երբ կ՝տեսնէք սուրբ տեղում պղծութիւն, որոնք Դանիէլ մարգարէն գուշակեց, այն

ժամանակ Հրէաստանում գանուողները թող փախչեն սարերը. նոքա, որոնք քաղաքումն են, աշխատեն հեռանալ այն տեղից. նոքա, որոնք քաղաքից դուրս են, չպէտք է մտնեն ներս իրենց առացուածքի համար։ Այն ժամանակ կ՚գան վրէժխնդրութեան օրերը, որոնց վերայ գրած է. «Վա՛յ յղի և սնունդ կանանց այն ժամանակ, մեծ թշուառութիւն կ՚լինի երկրիս վերայ և Աստուծոյ բարկութիւնն այս մարդոց վերայ. նոքա կ՚երթայեր կ՚լինեն սրի և կ՚ընկնեն գերի ուրիշ ազգերի ձեռք։ Երուսաղէմը ոտնակոխ անեն կռապաշտները, մինչև որ կատարվին հեթանոսների ժամանակը։ Ճշմարիտ եմ ասում ձեզ, չի անցնիլ այս ազգը, մինչև այս ամենը կ՚կատարվի։

Յիսուսի Քրիստոսի գուշակածը բոլորը կատարվեցաւ ճշգրութեամբ։ Այս ճշգրութեամբ կատարված գուշակութիւնը Երուսաղէմի աւերման մասին պէտք է համոզէ մեզ հաւատալու անսուտ ճշմարտութեան և մարգարէութեան էլ աշխարհիս վերջին վրայ, որնոր միակ Աստուածային Վարդապետը՝ մեր Փրկիչը Յիսուս Քրիստոս Իր բերանով յայտնեց։

ԳԼՈՒԽ ՀԱ.

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՆ ԱՇԽԱՐՀԻՍ ՎԵՐՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՍՏԵԱՆ ՎԵՐԱՑ

Մարկ. իգ. 29. Մարկ. ժգ. 24. Ղուկ. իա. 25.

Այս նեղութեանց օրերից յետոյ Աստուծոյ Արքայութեան Աւետարանը կ՚քարոզվի բոլոր երկրիս վրայ. կ՚գայ ժամանակի վերջը, շարունակեց Փրկիչ։ Այն ժամանակ կ՚լինին զարհուրելի նշաններ արեգակի, լուսնի և աստղերի վրայ. արեգակը կ՚խաւարի, լուսինը չի տալ իր լոյսը, աստղերը կ՚թօթափին երկնքից և երկնային զօրութիւնները կ՚շարժին։

«Իսկ երկրիս վերայ կ՚լինի վիշտ և տարտամի ամեն մարդոց մէջ, ծովը ահաւիկ կ՚ալեկոծուի և մարդիկ գրեթէ հոգեվարք կ՚լինին ահից և տպասելից նրան, ինչ պէտք է պատահի տիեզերքին։ Այն ժամանակ կերևի մարդու Որդւոյ նշանն և կ՚կոծեն երկրիս ամեն ազգերն, երբ կ՚տեսանեն մարդու Որդուն նստած ամպերի վերայ մեծ փառքով և զօրութեամբ։ Նա կը ղրկէ Իւր հրեշտակներուն փողով և նոքա կ՚հաւաքեն ընտրեալներուն երկրիս ամեն ծայրերից»։

«Երբ այս ամենը կ՚սկսի, բարձրացէք գլուխներդ և գիտացէք, որ մօտ է ձեր փրկութեան ժամը։ Թզենիից սովորեցէք ժամանակը գիտենալ. երբ նորա ոստերը փափկում են և տերևները ցցվում, իմանում էք, որ ամառն մօտ է։ Նոյնպէս էլ դուք. երբ այս ամենը կ՚տեսնէք, գիտացէք, որ Ես մօտիկ եմ։

Իսկ մարդու Որդւոյ գալստեան օրն և ժամն ոչ ոք չ՚գիտէ, ոչ հրեշտակներն էլ երկնքում. թայց միայն Աստուած։ Արթուն կացէք և աղօթք արէք, որովհետև չէք իմանում ժամանակն, երբ այս կ՚պատահի»։

Զգոյշ կացէք, մի՛ ծանրացնէք ձեր սրտերը շուայտութեամբ, արբեցութեամբ և աշխարհական հոգսերով, որ չլինի թէ այն օրը յանկարծ գայ ձեր գլխին. որովհետև նա իբրև ցանց կ՚ընկնի երկրիս բնակիչների վերայ։

Ինչպէս Նոյի ժամանակն էր, այնպէս կ՚լինի մարդու Որդւոյ գալստից առաջ. այն ժամանակ ուտում էին, խմում էին, ամուսնանում էին մինչև այն օրը. երբ Նոյն մտաւ տապան և ջրհեղեղը ջնջեց բոլոր մարդկային ազգը։ Նոյնպէս էլ կ՚լինի մարդու Որդւոյ օրը։

Եթէ տան տէրը գիտենար, երբ կգայ գողը, նա կ՚հսկէր և չէր թողնիլ իր տանը ակառն հատանել։ Այսպէս դուք էլ եղէք միշտ պատրաստ, որովհետև չգիտէք մարդու Որդւոյ գալստեան օրը։

Սովորեցէք այս առակիցը. «Տան տէրը ուրիշ տեղ գնալիս նշանակեց իր ծառաներից մէկին մեծ միւս ծառաների վերայ, որ նա նրանց տայ կերակուր իր ժամանակին։ Բաղդաւոր է այն ծառային, որին տէրը յետ դառնալիս կ՝գտնէ, որ նա լաւ կատարել է իր պարտաւորութիւնը։ Տէրը նրան կ՝նշանակէ կառավարիչ բոլոր իր ստացուածքի վերայ։ Բայց եթէ ծառային կասէ իր սրտում. «պարոնս ուշացնում է իր գալուստը». և կը սկսէ ծեծել միւս ծառաներին և աղախիններին ու շուայտութեամբ, արբեցութեամբ և անկարգութեամբ կ՝պարապի, պարոնը կ՝գայ յանկարծ և սաստիկ կ՝պատժէ նրան. անպիտան ծառային կ՝գցեն այնտեղ, ուր է լաց և ատամանց կրճտումն»։

Ուրեմն պատրաստ եղէք, որովհետև չգիտէք ոչ օրն և ոչ ժամը, երբ կ՝գայ տան տէրը, երեկոյեան արդեօք, առաւօտը, կէս գիշերին, թէ լուսադէմին, եղէք պատրաստ, որ երբ էլ գայ, նա ձեզ քնած չգտնէ։ Ինչ որ ձեզ եմ ասում ամենին եմ ասում, պատրաստ եղէք»։

Ինչ որ է հասարակաց համար աշխարհիս վերջը, նոյն է մահն ամեն մէկի համար առանձնապէս. ոչ ոք հաւատի չէ իր կենաց ժամին էլ։ Մահը գալիս է յանկարծ ինչպէս տան տէրը կամ գողը։ Փրկչի պատուիրանին հնազանդելով լինենք ամենքս էլ պատրաստ Նրան ընդունելու։

ԳԼՈՒԽ ՀԲ.

ՎԵՐՋԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՎՐԱՑ

Մատ. իե. 31.

Երբ մարդու Որդին կ՝գայ, պատուած Սուրբ Հրեշտակներով և կ՝նստի Իր փառաց աթոռի վերայ, կ՝հաւաքվեն Նորա առաջին երկրիս բոլոր ազգերն և նա կ՝բաժանէ բարիներուն շա-

ներից ինչպէս հովիւը զատում է ոչխարներն այծերից։ Ոչխարները կ՝կանգնեն աջ կողմումը. իսկ այծերը ձախում։

Այն ժամանակ թագաւորը կ՝ասէ աջ կողմում կանգնածներին. «եկէ՛ք Իմ Հօրս օհնածներդ, ժառանգեցէ՛ք արքայութիւնն, որոնք պատրաստած է ձեզ համար աշխարհիս ստեղծագործութիւնից։ Ես քաղցած էի, կերակրեցիք Ինձ, օտարական էի և ընդունեցիք Ինձ ձեր տուն. Ես մերկ էի և դուք հագցրիք Ինձ, Ես հիւանդ էի, այցելութիւն արիք ինձ, Ես բանտումն էի և եկաք Ինձ տեսութիւն։

Այն ժամանակ կ՝ասեն արդարները. «Տէր երբ տեսանք մենք Քեզ քաղցած և կերակրեցինք, ծարաւի և խմեցրինք, օտարական և ընդունեցինք մեր տուն, մերկ և հագուցինք, հիւանդ և այցելութիւն արինք Քեզ։—Երկնաւոր թագաւորը կ՝ասէ. ինչ որ դուք արիք Իմ փոքրիկ եղբայրներից մէկին, Ինձ արիք։

Յետոյ թագաւորը կ՝ասէ իր ձախ կողմումը կանգնածներին. «գնացէ՛ք, անիծեալներ, կրակը, որ պատրաստած է սատանայի և նրա ծառաների համար։ Ես քաղցած էի, դուք չկերակրեցիք Ինձ. Ես օտարական էի, չ՝տուիք Ինձ իջևան. Ես մերկ էի, Ինձ չ՝հագցրիք. հիւանդ էի. այցելութիւն չարիք Ինձ. բանդումն էի, տեսութիւն չեկաք Ինձ»։—Մեղաւորները կասեն. «Տէր, երբ մենք Քեզ տեսանք քաղցած և չ՝կերակրեցինք, ծարաւի և ջուր չ՝տուինք, պանդուխտ, մերկ, հիւանդ, բանդումը և չծառայեցինք Քեզ»։—Ով չէ օգնել Իմ փոքր եղբայրներիս». կ՝պատասխանէ թագաւորը. «նա չէ օգնել Ինձ էլ»։

Այն ժամանակ մեղաւորները կ՝սատանան յաւիտենական տանջանք. իսկ արդարները յաւիտենական և երջանիկ կեանք»։

Եթէ նոքա, որոնք բարի չեն գործում իրենց մերձաւորներին, որպէս սատրիկ կ՝պատժվին. ի՞նչ պէտք է սպասեն նոքա, որոնք աշխատում են վնասել իրենց մերձաւորին և նրանց

վատութիւն անել. նոքա, որոնք թունաւորում են նոցա կեանքը զանազան հալածանքներով. նոքա, որոնք խարում են նրանց, զրկում են ստացուածքից, զրպարտում են նրանց, ծեծում են բարկութեան ժամանակ կամ սպանում. աշխատում են զեղխացնել նրանց շար խորհրդներով և օրինակներով, ցանկանում են անպատուել իր վերձաւորին ատելութեամբ և զրկող խօսքերով:

ԳԼՈՒԽ ԷԳ.

ՉԱՏԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ.

Մատ. իզ. 3, 17. Մարկ. ժբ. 12. Ղուկ. իբ. 1.

Զատկիցը երկու օր առաջ երբ ամէն Իսրայէլացի արժանապէս պատրաստվում էր այս մեծ ծօնը ծօնելու, քահանայապետները, դպիրները և ժողովրդեան ծերերը ժողովեցան Կայիափա քահանայապետի տունն, որ խորհուրդ անեն, թէ ինչպէս Յիսուս Քրիստոսին ծածուկ բռնեն և սպանեն Նրան: «Այս չ'պէտք է անել ծօնի ժամանակ, որ ժողովրդի մէջ խռովութիւն չ'բնկնի», ասում էին նոքա: Նոքա վախենում էին ժողովրդից և ոչ թէ Աստուծոյ բարկութիւնից էին սարսում:

Ամենագեղը Յիսուս Քրիստոս առաջուց գուշակեց, ինչ որ կատարվելու էր: Դեռ ճանապարհին, երբ Երուսաղէմ էր գալիս, ասաց իր աշակերտներին. «Մենք մտնում ենք Երուսաղէմ, ուր պէտք է կատարվի ամենը, ինչ որ Մարգարէները ասել են մարդու Որդւոյ վերայ: Նա կ'մատնվի քահանայապետների, դպիրների և ժողովրդեան ծերերի ձեռքը: Նոքա կ'դատապարտեն Նրան 'ի մահ և կ'մատնեն հեթանոսների ձեռքը, որոնք կ'հայհոյեն Նրան, կ'թքեն վրան, կ'ծեծեն Նրան և վերջապէս կ'սպանեն: Բայց Նա երրորդ օրը յարութիւն կ'առնէ:

Եւ այժմ Յիսուս Քրիստոս կրկնեց մի և նոյնը. երկու օրից

յետոյ կ՝լինի զատիկ. ասաց նա իւր աշակերտներին, եւ մարդու Որդին կ՝մատնվի խաչվելու։

Տաներկու առաքեալներից մէկը Յուդա Իսկարիովտացին գնաց քահանայապետների մօտ և ասաց նրանց. «ի՞նչ կ՝տաք ինձ, եթէ ես նրան մատնեմ ձեր ձեռքը»։ Նոքա ուրախացած այս խոստումնով խոստացան նրան երեսուն արծաթ։ Այս ժամանակից Յուդան միշտ փնտռում էր յարմար միջոց իր Վարդապետին անօրէն Հրէաների ձեռքը մատնելու։

Բաղարջակերաց առաջին օրը, երբ արդէն ամենքը պէտք է պատրաստվէին Պասէքը ուտելու, աշակերտները եկան Փրկչի մօտ և հարցրին Նրան. «ո՞ւր ես Դու կամենում, որ Քեզ համար Պասէք պատրաստենք»։ Այս հինգշաբթի օրն էր։ Յիսուս Քրիստոս բնակութիւն չունէր Երուսաղէմում և այս պատճառաւ ասաց Պետրոսին և Յովհաննէսին. «գնացէ՛ք քաղաք, այն տեղ կ՝հանդիպէք մի մարդու, որնոր տանում է ջուր սափորով. հետևեցէ՛ք նրան և մտէ՛ք այն տունը, ուր նա ներս կ՝մտնէ, և ասէ՛ք տան տիրոջը. «վարդապետը պատուիրեց ասել քեզ. «Իմ ժամանակս մօտիկ է, ես քեզ մօտ կամենում եմ Իմ աշակերտներովս ուտել Զատիկը։ Նա ցոյց կ՝տայ ձեզ մի մեծ վերնատուն զարդարած. այն տեղ պատրաստեցէ՛ք պասէքի գառը»։

Աշակերտներն ամեն բան գտան իսկ այնպէս, ինչպէս Տէրը նրանց ասել էր և պատրաստեցին պասէքը։

ԳԼՈՒԽ ԷԴ.

ՈՏՆԱԼՈՒՍՑ

Յով. ժգ. 1.

Երկնային Տէրը մեծ խոնարհութեամբ սովորեցրեց մեզ, որ պատրաստած էր պասէքի գառն և Իր աշակերտներովը նստաւ սե-

ղանդ։ Նա գիտէր, որ մօտացել է ժամը, երբ ինքը պէտք է բաժանվի Իւր աշակերտներից առ ժամանակ, նա կամենում էր այս վերջին ժամում ցոյց տալ նրանց Իւր սէրն և թողնել փրկարար յիշատակ Իր վերայ։

«Եա շատ էի ցանկանում, ասաց Նա, ուտել պասէքը ձեզ հետ իմ չարչարանքիցս առաջ. որովհետև ես ասում եմ ձեզ որ այսուհետև չեմ ուտիլ նրանից, մինչև որ չմօտնեմ այն ձեզ հետ միասին Աստուծոյ արքայութիւնում»։

Երբայեցւոց այն ժամանակվան սովորութեամբը հիւրերին, երբ սոքա տուն էին մտնում, ոտները լուանում էին. այս պարտաւորութիւնը կատարում էր սովորաբար ծառաներից մէկը։ Բայց Յիսուս Քրիստոս՝ սիրեղերաց իշխողը, ինքը կատարեց այն սովորութիւնը ընթրիքի ժամանակ։ Նա վեր կացաւ սեղանից, առաւ ղենջակ, ածեց ջուր կոնքի մէջ, լուաց Իւր աշակերտների ոտները և սրբեց նրանց ղենջակով, որնոր կապել էր առջևը։

Երբ կարգը հասաւ Պետրոս Առաքեալին, սա լիքը յարգութեամբ դէպի Աստուածային իւր Վարդապետը ասաց. Տէր, Դու պէտք է լուանաս ոտներս։ Յիսուս Քրիստոս պատասխանեց. «այժմ դու չես հասկանալ, ինչ որ Ես անում եմ. բայց յետոյ կ՚հասկանաս»։ Պետրոս ասաց. «երբէք չեմ թողնիլ, որ Դու իմ ոտներս լուանաս»։ Յիսուս Քրիստոս պատասխանեց. «Եթէ ես չ՚լուանամ ոտներդ, դու մասն չես ունենալ Ինձ հետ»։ Այն ժամանակ Պետրոսը ասաց. «Տէր, ոչ թէ ոտներս այլ և ձեռներս ու գլուխս էլ լուա»։ Մաքուր բանը չպէտք է լուանալ, պատասխանեց Տէրը, «դուք սուրբ էք, միայն ոչ ամենքդ»։ Նա այս ասաց այն պատճառաւ, որ Նրան այտնի էր անձն, որնոր մատնում էր Նրան մատնել։

Յիսուս Քրիստոս, ամեն աշակերտների ոտները լուանալից յետո, հագաւ Իր շորը, նստաւ սեղանի մօտ և ասաց. գիտէք

դուք, նա ի՞նչ արի։ Դուք ինձ անուանում էք ձեր Տէրն և Վարդապետը ճշմարիտ է, որովհետև նա ձեր Տէրն եմ և Վարդապետը։ Բայց եթէ նա լուացի ձեր ոտներդ, մի և նոյնն էլ դուք միմեանց պէտք է անէք, նա ցոյց տուի ձեզ օրինակ ինչպէս պէտք է վարվել։ Ծառան չէ կարող իր պարոնից մեծ լինել, ոչ էլ առաքեալը իրեն առաքողից։ Եթէ դուք այս գիտէք, երջանիկ կ՝լինիք, թէ կ՝կատարէք։

Այսպէս Յիսուս Քրիստոս ցոյց տուեց մեզ խոնարհութեան օրինակ։ Նա՝ երկնքի և երկրի թագաւորը, անպատվութիւն չհամարեց Իրեն կատարելու ծառաներից վերջինի պարտաւորութիւնն էլ, նա անյիշաչարութեամբ և խոնարհութեամբ լուաց մինչև Յուդայի Իր մատնչի ոտն էլ։

ԳԼՈՒԽ ՀԷ.

ՅՈՒԴԱ ՄԱՏՆԻՉ

Մատ. իզ. 21. Մարկ. ժդ. 1. Յովհ. ժդ. 18.

Ոտները լուանալից յետո Յիսուս Քրիստոս ասաց. պէտք է կատարուի մարգարէութիւնը, որի մէջ ասած է. «Նա, ով ինձ հետ միասին ուտում էր, Ինձ *) դաւաճանեց. նա այս կատարուելից առաջ ասում եմ ձեզ, որ հաւատաք, թէ այն նա եմ, Մարգարէն ինձ համար է ասել այս խօսքերը **)։

Այսպէս խօսելով Յիսուս Քրիստոս շարժեցաւ սրտանց։ Մատնչի վերայ նա ոչ թէ բարկանում էր, այլ ցաւում Փրկիչը կամենում էր նրան զգուշացնել։ Իւր ամեն աշակերտների վերայ նայելով ասաց. «Ձեզնից մէկը կ՝մատնէ ինձ»։

Աշակերտներն այս լսելիս սարսափեցան և մէկ մէկու վրայ

*) Սաղմ. խ. 10.

**) Յովհ. ժդ. 19.

նայելով չէին հասկանում, թէ այն ո՞րի համար էր ասած. նոքա կարգով հարցնում էին. արդեօք ես չե՞մ, Տէ՛ր։ Բայց Յիսուս լուռ էր կենում. նա չէր կամենում մատնչին յանդիմանել. այլ կամենում էր նրան զգուշացնել և զղջալ։ «Այո՛», կրկնեց նա, ձեզնից մէկը կ՚մատնէ ինձ։ Մարդու Որդուդ վրայ կ՚կատարվի, ինչ որ գրոց մէջ ասած է. բայց վա՛յ նորա մատնչին, լաւ էր թէ չէր ծնել նա»։

Յիսուսի սիրելի աշակերտը՝ հեզ Յովհաննէսը նստած էր նորա մօտ։ Սրան նշան արաւ Պետրոսը, որ հարցնէ մատնչի համար։ Յովհաննէսը հարցրեց կամաց. «Տէ՛ր, ո՞վ է այն»։—«Նա է, որին ես հացի պատառը թրջած կ՚տամ», պատասխանեց Յիսուս Քրիստոսը։

Փրկիչը սիրով բաժանեց իր հացը մատնչի հետ. նա այս սիրոյ յայտնութեամբը կամենում էր նրան դարձնել. բայց Յուդան հացը Փրկչի ձեռքից առնելից յետ շարունակում էր էլի կեղծաւորելու և աշխատում էր ուրիշների նման անմեղ երևիլ. նա էլ այնպէս, ինչպէս ուրիշները, միայն կեղծաւոր անհոգութեամբ հարցնում էր արդեօք ես չե՞մ, Տէ՛ր։—«Դու ինքդ ասացիր այդ, պատասխանեց Յիսուս Քրիստոս։—Յուդան տեսաւ, որ կեղծաւորութիւնը չէ օգնում և իր չար խորհուրդը յայտնի է Փրկչին, բայց դեռ էլի չէր զղջում։ Յիսուս Քրիստոս ասաց. «կատարի՛ր շուտով, ինչ որ մտքումդ ունիս»։ Ոչ ոք բացի Յովհաննէսից չ՚հասկացաւ այս խօսքերի միտքը. ամենքը կարծում էին, թէ որովհետև հասարակաց արկղը Յուդայի մօտ էր, Տէրը հրամայում է նրան կամ գնել ինչ որ հարկաւոր է տօնի համար, կամ ողորմութիւն տալ աղքատներին։ Յուդան վեր կացաւ սեղանից և դուրս գնաց։ Այն ժամանակ արդէն գիշեր էր։

ԳԼՈՒԽ ԼԶ.

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՆԸ

Մատ. իզ. 31. Ղուկ. իբ. 31. Յովհ. ժգ. 31.

Յուդան դուրս եկաւ իր սարսափելի և աննկարելի խորհուրդը կատարելու համար։ Յիսուս Քրիստոս գիտենալով, որ իր չարչարանաց ժամանակը մօտենում է, ասաց. «Հասաւ արդէն ժամը, երբ մարդու Որդին կ՝փառաւորվի և Աստուած էլ կ՝փառաւորվի նրանով։ Եթէ Նա փառաւորեց Աստծուն, Աստուած էլ նրան կ՝փառաւորէ։ Որդեակք իմ, Ես էլ երկար չեմ լինիլ ձեզ հետ։

«Եթէ տալիս եմ ձեզ նորա պատուիրանն սիրեցէք միմեանց միմեանց այնպէս. ինչպէս Ես ձեզ սիրեցի։ Սէրը, որնոր դուք միմեանց վերայ կունենաք, ցոյց կ՝տայ ուրիշներին, որ դուք Իմ աշակերտներս էք»։

Պետրոս Առաքեալը հարցրեց նրան. «Տէր, իսկ Դու ո՞ւր ես գնում»։

«Ուր ես գնում եմ, դու չես կարող ինձ այժմ հետևել, բայց յետոյ կ՝գաս իմ ետևից, պատասխանեց Փրկիչը։

Ի՞նչու այժմ չեմ գալ Քո ետևից», հարցրեց Պետրոս, «Ես պատրաստ եմ անձս էլ դնել Քո համար»։

Դո՞ւ կ՝դնես ինձ համար քո անձդ». ասաց Յիսուս Քրիստոս. «Ճշմարիտ եմ ասում քեզ, որ մինչև հաւի խօսելը երեք անգամ կ՝ուրանաս Ինձ»։

*Յետոյ դառնալով աշակերտներին շարունակեց Յիսուս Քրիստոս. «դուք էլ ամենքդ կ՝գայթակղվեք Իմ մասին այս գիշեր»։ Պէտք է մարգարէական խօսքերը կատարվին. «Թէ կ՝հարկանեմ հովիւին, նրա խաշինքն էլ կ՝ցրուին։ *) Բայց յարութիւնից յետոյ ձեզ կ՝հանդիպիմ Գալիլեայում»։*

---

*) Զաքար ԺԳ. 7.

Պետրոս Առաքեալը, ասաց. «եթէ ամենքն էլ, որ գայթակղվին, ես հաւատարիմ կ՝մնամ քեզ, ես պատրաստ եմ քեզ հետ բանտումն էլ նստել, մեռնել էլ»։

Բայց Յիսուս Քրիստոս կրկնեց նրան. «ճշմարիտ եմ ասում քեզ, որ այս գիշեր ի՛սկ մինչև աքաղաղի խօսելը երեք անգամ կուրանաս Ինձ։ Ո՛վ Սիմոն, սատանան աշխատում է խարբալել քեզ ցորենի պէս. բայց Ես աղօթեցի քեզ համար, որ հաւատդ չպակսի և դու երբեմն կ՝դառնաս և կ՝հաստատես քո եղբայրներդ»։

ԳԼՈՒԽ ՀԷ.

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԸՆԹՐԻՔ

Մատ. իզ. 26.

Այս խօսակցութեան ժամանակ Զատկի գառն կերան և այսպէս աւարտեցին ուրեն, որ հին կտակարանի կարգադրութեամբ Եգիպտացւոց գերութիւնից ազատվելու յիշատակն էր։

Յիսուս Քրիստոս իւր մահվան պատրաստում էր աշխարհիս աւելի լաւ փրկութիւն—փրկութիւն մեղաց գերութիւնից։ Այն ժամանակից, երբ Յիսուս Քրիստոս մարդոց մեղաց համար գառնի տեղ Իրեն բերաւ զոհ, սկսվում է նոր ուխտը։ Այս մեծ անցքի յիշատակի համար և մեղաց թողութեան համար կարգեց Նա խորհրդաւոր ընթրիքը, որով մենք հաղորդվում ենք Նորա մարմնին և արիւնին։

Փրկիչը առաւ հասարակ բաղարջ հաց, օրհնեց այն, կոտրեց և տուեց Իւր աշակերտներին ասելով. «առէք այս է Իմ մարմինս, որ զոհվում եմ ձեզ համար»։—Նոյնպէս էլ առնելով բաժակը դոհացաւ Աստուծմէ և տուեց այն աշակերտներին ասելով. «խմեցէք ամենքդ էլ Սրանից—այս է Իմ արիւնս

Նոր ուխտ, որ թափվում է շատերի համար ի թողութիւն մեղաց։ Այս կատարեցէք Իմ յիշատակիս համար»,

ԳԼՈՒԽ ՀԸ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Յովհ. ժգ. ժե. ժզ. ժէ.

Վերջաց ժամանակն արդէն հասել է. Յիսուս Քրիստոս պատրաստվում էր չարչարվելու և մեռնելու։ Նա գիտէր, որ միւս օր այս ժամանակը Նորա մարմինը գերեզմանումը կ՚լինի։ Աշակերտները նստած էին Նորա շուրջը տխուր լռութեան մէջ. բաժանման մօտկութիւնը ցաւով լցրեց նոցա սիրտը։ Յիսուս Քրիստոս նրանց միխիթարելով ասաց։

«Թող չխռովվի ձեր սիրտը։ Հաւատացէք Աստուն և Ինձ։ Իմ հօրս տանը օթեվաններ շատ կան. եթէ այս այսպէս չլինէր Ես ձեզ կ՚ասէի։ Ես եթէ գնում ձեզ համար տեղ պատրաստելու, կրկին կ՚գառնամ կ՚առնեմ ձեզ էլ Ինձ հետ, որ դուք էլ այն տեղ լինիք, ուր Ես եմ։ Ձեզ արդէն յայտնի է ճանապարհն էլ, ուր Ես գնում եմ։

Թոմաս Առաքեալը, որնոր չհասկացաւ Յիսուսի խօսքերի միտքը, հարցրեց. «Տէր, ո՞ւր Ես դու գնում և ի՞նչպէս կարող ենք մենք գիտենալ այն ճանապարհը»։

Յիսուս Քրիստոս պատասխանեց. «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք։ Ոչ ոք չէ գալիս Հօրս մօտ. բայց եթէ ինձմով։ Ով Ինձ ճանաչեց, ճանաչում է Իմ Հօրս էլ։ Եւ դուք այսուհետև գիտէք Նրան և տեսաք Նրան։

«Տէր, ցոյց տուր մեզ Հօրն և բաւական է մեզ». ասաց Փիլիպպոսը։

«Փիլիպպոս, այսքան ժամանակ է ձեզ հետ եմ և դու դեռ Ինձ չես ճանաչում. պատասխանեց Տէրը։ «Ով Ինձ տեսել է, տեսել է և Իմ Հօրս էլ. ի՞նչպէս դու ասում ես ցոյց տուր մեզ Հօրը։ Մի՞թէ դու չես հաւատում, որ Ես Հօրս մէջն եմ և Հայրս Իմ մէջս։ Խօսքերն, որոնք Ես ասում եմ, Ինձանից չեմ ասում և գործերն, որոնք Ես գործում եմ, Ինձանից չեն. այլ Հայրս, որնոր Իմ մէջս բնակած է, գործում է Նրանց։ Հաւատում էք Ինձ, որ Ես Հօրս մէջն եմ և Հայրս Իմ մէջս։ Հաւատացէք գոնեա այս Իմ գործերիս համար։ Ճշմարիտ եմ ասում, ով Ինձ կ՝հաւատայ, կարող է գործել այն գործերն, որոնք Ես գործում եմ, մինչև աւելի ևս մեծերն. որովհետև Ես գնում եմ Հօրս մօտ։ Ինչ որ խնդրէք Հօրից Իմ անունովս, կ՝տայ Նա ձեզ, որ փառաւորվի Հայրը Որդուով։

«Եթէ դուք սիրում էք Ինձ, կ՝կատարէք Իմ պատուիրաններս և Ես կ՝ աղաչեմ Հօրս, որ տայ ձեզ ուրիշ Մխիթարիչ, որնոր յաւիտեան ձեզ հետ կ՝լինի ճշմարտութեան հոգին, որին աշխարհս չէ կարող ընդունել. որովհետև նա չէ տեսնում Նրան և չէ ճանաչում. բայց դուք գիտէք Նրան, ըստ որում Նա ձեզ հետ է և ձեր մէջ կ՝լինի».

Ես ձեզ որբ չեմ թողնիլ. Ես էլի կ՝գամ ձեզ մօտ։ Էլի փոքր ժամանակ — և աշխարհս էլ չի տեսնիլ Ինձ. բայց դուք կ՝տեսնէք Ինձ. որովհետև Ես կենդանի եմ, դուք էլ կենդանի կլինէք։ Այն ժամանակ դուք կ՝գիտենաք, որ Ես Հօրս մէջն եմ, դուք Իմ մէջ, և Ես ձեր մէջը։

Ով ունի Իմ պատուիրաններս և կատարում է Նրանց, նա սիրում է Ինձ. ով Ինձ սիրում է, Նրան կ՝սիրէ Իմ Հայրս, Ես էլ կ՝սիրեմ Նրան և կ՝յայտնվիմ Նրան ինքս և մենք կ՝գանք նորա մօտ և նորա մօտ կ՝օթեվանենք»։

Աշակերտները չէին կարողանում դեռ բոլորովին հասկանալ Ցիսուսի խօսքերը. նոքա զարմանալով նայում էին նորա վե-

բայց Յիսուս Քրիստոս աւելցրեց էլի. «դեռ էլի շատ բան հարկաւոր էր ձեզ ասել. մինչև ձեզ հետ եմ ես, բայց դուք այժմ չէք կարող հասկանալ նրանց։ Իսկ միխիթարիչը՝ սուրբ Հոգին, որին Հայրս կ'ղրկէ Իմ անուանովս, կսովորեցնէ ձեզ ամենը և միտերդ կբերէ, ինչ ես ձեզ ասացի»։

«Յետոյ իբրև օրհնելով Իր աշակերտներուն ասաց Տէրը. խաղաղութիւն եմ թողնում ձեզ. Իմ խաղաղութիւնս տալիս եմ ձեզ, ոչ այնպէս ինչպէս աշխարհս տալիս է»։

Յիսուս Քրիստոս նկատելով Իր աշակերտների տրտմութիւնն և երկիւղը ասաց նրանց. «թող չխռովին ձեր սրտերն և չը վախենաք։ Դուք լսեցիք, ինչ որ ես ասացի ձեզ։ Ես գնում եմ. բայց կ'գամ էլի ձեզ մօտ։ Եթէ դուք Ինձ սիրում էք, պէտք է ուրախանաք, որ ասացի ես, թէ գնում եմ Հօրս մօտ, որովհետև Հայրս Ինձանից մեծ է (այսինքն ըստ մարդկութեան Յիսուսի Քրիստոսի)։

«Էլ երկար ձեզ հետ չեմ կարող խօսիլ։ Այս աշխարհիս իշխանը մօտենում է, նա ոչինչ չի գտնիլ Իմ մէջ, այլ որ իմանայ աշխարհը, որ ես Հօրս սիրում եմ և կատարում եմ այն, ինչ նա Ինձ հրամայել է. վեր կացէք, գնանք այս տեղից»։

Յիսուսի Քրիստոսի խօսակցութիւնը Իր աշակերտների հետ շարունակվեցաւ մինչև այն ժամանակ, երբ նա նոցա հետ միասին եկաւ Գէթսեմանի պարտէզը։ Այս խօսակցութիւնը պարունակում է Իր մէջ այնքան արտաշարժ և խրատական բաներ, որ քանի անգամ էլ որ կարդանք նրան, մենք միշտ էլի կը գտնենք նորա մէջ նոր կերակուր մեր մտքի և սրտի համար։ Այս մեզ աւանդեց Սուրբ Հոգւոյ ազդեցութեամբը Յիսուսի Քրիստոսի սիրելի աշակերտը՝ Սուրբ Յովհաննէս Աստուածաբանը։ Կարդացէք նորա Աւետարանի ԺԳ, ԺԵ. ԺԶ. և ԺԷ, գլուխները։

ԳԼՈՒԽ ՀԹ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԳԵԹՍԱՄԱՆԻ ՊԱՐՏԻԶՈՒՄԸ

Մատ. իգ. 35. Մարկ. ժգ. 32. Ղուկ. իր. 39.

Յիսուս Քրիստոս անցնելով Կեդրոնի ձորը եկաւ մի գիւղ, որ Զիթենեաց սարի տակն էր և կոչվում էր Գէթսամանի։ Այս տեղ Իր աշակերտներովը մտաւ Նա պարտէզը և ասաց նրանց. «Մնացէ՛ք այս տեղ, Ես կերթամ աղօթք անելու»։ Նրանցից առաւ Իր հետ Պետրոսին և Զեբեդեայ երկու որդուոցը՝ Յակոբին և Յովհաննէսին։ Երբ առանձնացեալ տեղ եկան, Փրկիչը ասաց նրանց. «Հոգիս մինչև 'ի մահ տրտում է. կացէ՛ք այս տեղ և հսկեցէ՛ք Ինձ հետ»։—Եւ փոքր ինչ հեռանալով ընկաւ գետինը երեսի վրայ և աղօթք էր անում ասելով. «Հայր Իմ, եթէ կարելի է, թո՛ղ անցնէ այս բաժակը Ինձանից. միայն ոչ թէ ինչպէս Ես եմ կամենում. այլ ինչպէս Դու ես ուզում. թո՛ղ կատարվի կամքդ»։

Յետոյ դառնալով աշակերտների մօտ, Նա գտաւ նրանց քնած և ասաց Պետրոսին. «Սիմովն, դու քնո՞ւմ ես։ Այսպէս չկարողացա՛ք մի ժամ էլ արթուն անցկացնել Ինձ հետ։ Մի՛ քնէք, աղօթեցէ՛ք, որ փորձութեան մէջ չընկնէք։ Հոգին յօժար է. բայց մարմինս տկար»։ Այս ասելով Նա էլի հեռացաւ նրանցից և ծունր իջաւ ակսաւ կրկին աղօթք անել. «Հայր Իմ, ասում էր Նա, «եթէ անհնարին է այս բաժակին անցնել Ինձանից, Ես կ'խմեմ նրան. թո՛ղ լինի Քո կամքդ»։

Այս ժամանակ երևեցաւ նրան հրեշտակն և զօրացնում էր նրան։ Նա այնպիսի մտադրութեամբ աղօթք էր անում, որ արեան քրտնքի կայլակները կաթում էին նորա երեսից գետնի վրայ։ Մխիթարված հրեշտակից և զօրացած աղօթքովը առ. Հայր, Յիսուս Քրիստոս դարձաւ քնած աշակերտների մօտ

և ասաց նրանց հեզութեամբ. «դուք դեռ էլի քնում է՛ք, հանգըստանում։ Հասաւ ժամը. մարդու Որդին մատնվում է մեղաւորների ձեռքը։ Վեր կացէ՛ք, գնա՛նք։ Մատնիչը մօտենում է»։

ԳԼՈՒԽ 2.

ՅՈՒԴԱՆ ՄԱՏՆՈՒՄ Է ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Մատ. իզ. 47. Մարկ. ժգ. 43. Ղուկ. իբ. 47. Յովհ. ժը. 3.

Հազիւ ասաց Տէրը այս խօսքերն և ահա Յուդան մտաւ պարտէզ։ Մեծ բազմութիւն քահանայապետների ծառաների և զինուորների ուղեկից էին նրան վառած լապտերներով, սրերով և տէգերով։ Զինուորներն և քահանայապետների ծառաները էին ճանաչում Յիսուս Քրիստոսին և այս պատճառաւ Յուդան ասաց նրանց. «ահա նշանը, որով դուք կարող է՛ք ճանաչել նրան. որին ես կ՚համբուրեմ, նրան բռնեցէ՛ք»։

Յուդան բոլոր իր ուղեկիցներով մտաւ պարտէզը, ուր Փրկիչը յաճախ անցկացնում էր գիշերները աղօթքով և գնաց ուղիղ Յիսուս Քրիստոսի մօտ և ասաց Նրան. «ողջոյն քեզ, Վարդապե՛տ և համբուրեց Նրան։ — «Յուդա՛». ասաց Յիսուս Քրիստոս, «համբուրելով ե՞ս մատնում մարդու Որդուն»։

Յետոյ մօտենալով ուղիղ զինուորված մարդոցը հարցրեց նրանց. «ումի՞ն է՛ք որոնում»։ Յիսուս Նազովրեցիին, պատասխանեցին նոքա։ «Ես եմ այն». ասաց Յիսուս Քրիստոս։ Այս որ լսեցին զինուորներն և միւս ՀրէՏները յետ քաշուեցան և ընկան գետնի վրայ։

Յիսուս Քրիստոս էլի միւսանգամ հարցրեց զինուորներին. «ումի՞ն է՛ք փնտռում»։ Նոքա պատասխանեցին էլի. Նազովրեցի Յիսուսին»։ Ես արդէն ասացի, որ Ես եմ, կրկնեց Նա։ Եթէ եկել է՛ք ինձ բռնելու, թողէ՛ք սրանց երթալ, ուր կ՚կա-

մեռան, աւելցրեց Նա, ցոյց տալով հայրական գթով Իր աշակերտների վրայ։

Զինուորները և քահանայապետների ծառաները մօտեցան Յիսուս Քրիստոսին այն նպատակով, որ բռնեն Նրան։ Այս տեսնելով աշակերտներն ասացին. «Տէ՛ր, հպարտանվի՞նք արդեօք սրով և առանց պատասխանի սպասելու Պետրոս առաքեալը հանեց սուրն և քահանայապետների ծառաներից մէկին, որի անունը Մաղքոս էր, կտրեց աջ ականջը։

Վարդապետի սէրը սովորեց Պետրոսին այս բանը անելու. բայց Տէրը չէր կամենում, որ իր սիրոյ համար գործածվէր որ և ինչ բռնութիւն։ Նորա ամեն խօսքերից մենք կարող ենք տեսնել թէ որքան Նա ցանկանում է, որ մենք Նորա սիրոյ համար լինենք հեզ, ներողամիտ մինչև մեր թշնամիներին անգամ։ «Թողէք նրանց», ասաց Յիսուս Քրիստոս Իր աշակերտներին և Պետրոսին դառնալով շարունակեց. «դիր սուրդ պատեանի մէջ. Ամենքը որոնք սուր կ՝բարձրացնեն, սրով կ՝մեռնեն։ Միթէ դու կարծում ես, որ Ես չեմ կարող խնդրել Հօրս, որ թողէ Ինձ տասներկու դունդ հրեշտակներ։ Բայց ի՞նչպէս կ՝կատարվէին այն ժամանակ մարգարէութիւնները։ Միթէ չխմեմ բաժակը, որոնը Իմ Հայրս դրկել է։ Յիսուս Քրիստոս մօտեցաւ քահանայապետի ծառայի ականջին և բժշկեց Նրան. յետոյ ինքնակամ անձնատուր եղաւ Նրանց, որոնք Նորա եռևից եկել էին։

Այն ամբոխի մէջ, որ եկել էր Յիսուս Քրիստոսի եռևից, կային տաճարի իշխաններն և ժողովրդեան ծերերն էլ։ Նա տեսնելով Նրանց ասաց բոլոր ժողովրդին և Նրանց. «դուք եկել էք Իմ վրաս զէնքով և բիրերով, ինչպէս մի աւազակի վրայ։ Միշտ ձեզ հետ տաճարումն էի և յայտնապէս ուսուցանում էի ժողովրդեան. ինչո՞ւ այն ժամանակ չբռնեցիք Ինձ։ Բայց այժմ է ձեր ժամանակն և խաւարի իշխանութիւնը»։

Զինուորները կապեցին Յիսուս Քրիստոսին և հանեցին

զարտուղից. այն ժամանակ աշակերտներն, ինչպէս գուշակեց Նրանց Փրկիչը, ահից ցրուեցան։

ԳԼՈՒԽ ՁԱ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՏԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ

Մատ. իգ. 57. Մարկ. ժգ. 53. Ղուկ. իբ. 54. Յովհ. ժը. 13.

Քիւռոյներն և քահանայապետների ծառաները տարան Յիսուս Քրիստոսին Աննայի մօտ, որնոր առաջվան քահանայապետն էր և այն տարուան քահանայապետի՝ Կայափայի անէրն էր։ Նա հարցրեց Յիսուս Քրիստոսին Նորա աշակերտների և Նորա Վարդապետութեան վրայ։ Տէրը Յիսուս պատասխանեց. «Ես յայտնապէս ուսուցանում էի ժողովրդեան առաջին, քարոզում էի ժողովրդարաններում և տաճարում. ինչու՞ դու հարցնում ես Ինձ։ Հարցրու Իմ ունկնդիրներուս Իմ վարդապետութեանս մասին»։

Այն տեղ կանգնած ծառաներից մէկը, այս պատասխանն որ լսեց, խփեց Յիսուսի Քրիստոսի երեսին և ասաց. «Այդպէս ես պատասխանում քահանայապետին։ Փրկիչը հեզութեամբ և հանդարտութեամբ ասաց. «Եթէ չար ինչ խօսեցայ, ապացուցիր այն. իսկ եթէ բարի, ինչո՞ւ ես խփում Ինձ»։—Ծառայն ոչինչ պատասխան չունէր տալու. Նա կամենում էր այս կո

տիչները. սրանց մէկ մէկ հարցրեցին, միայն նոցա վկայութիւնները բաւական չէին դատապարտութեան համար։ Վերջապէս երկուսը դուրս եկան և յետագայ սուտ վկայութիւնը տուին. նոքա ասում էին, թէ Յիսուս ասել է. «կարող եմ Աստուծոյ տաճարը քանդել և երեք օրումը էլի կանգնել նրան»։ Ամէն զրպարտութիւններն անպատասխան թողնելով Յիսուս Քրիստոս լուռ էր կենում։

Այն ժամանակ քահանայապետը վեր կացաւ տեղից, դուրս եկաւ մէջտեղ ու ասաց Քրիստին. «ինչո՞ւ դու ոչինչ չես ասում քեզ արդարացնելու համար։ Բայց Յիսուս Քրիստոս շարունակեց լռել, որովհետև զրպարտութեան ամենից լաւ պատասխանն է լռութիւնը։

Բայց երբ քահանայապետը երդումով հարցրեց Նրան ասելով. «երդում եմ տալիս կենդանի Աստուծով, ասա մեզ ճշմարիտը. Դո՞ւ ես իսկ Քրիստոսը Աստուծոյ Որդին». Յիսուս Քրիստոս պատասխանեց. «դու ինքդ ասացիր այդ». բայց Ես ասելանում եմ էլի, որ դուք կ'տեսնէք մարդու Որդուն նստած Աստուծոյ զօրութեան աջ կողմումը և գալիս երկնքի վրայով»։

Քահանայապետը պատառեց շորերն ասելով. «Սա Աստծուն հայհոյում է. էլ ի՞նչ հարկաւոր է վկայ։ Դուք իրենքդ լսեցիք Սորա հայհոյելը. ի՞նչ է կամենում անել Սրանց»։—Այն ժամանակ ամենքը ասացին. «Նա մահապարտ է»։

Զինուորները հանեցին Նրան բակը, ուր Նա պատած պահապաններով պէտք է անցկացնէր գիշերուան մնացած մասը։ Այս տեղ ամեն կերպիւ հայհոյում էին Նրան. ոմանք թքում էին վրան, մի քանիսը ծեծում էին, միւսները խփում էին Նորա երեսին ասելով. «Քրիստոս, մարգարէացիր, ո՞վ քեզ խփեց»։— Ամենքը աշխատում էին որքան կարելի է աւելի հայհոյել Նրան։

ԳԼՈՒԽ ԶԲ.

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ

Մատ. իզ. 69. Մարկ. ժգ. 66. Ղուկ. իբ. 54. Յովհ. ժբ. 15. 25.

Մինչև Յիսուս Քրիստոս էր Կայաֆայի տան մէջ, սորա բակումը յետագայ անցքը պատահեցաւ։

Պետրոս և Յովհաննէս Առաքեալները հետից հետևում էին Յիսուս Քրիստոսին մինչև քահանայապետի բակը։ Յովհաննէսը ծանօթ էր քահանայապետի տանեցիներից մի քանիսի հետ. ուստի և մտաւ ներս, իսկ Պետրոսը կանգնած էր դրան առաջ։ Յովհաննէսն այս տեսնելով խնդրեց դռնապանին, որ ներս թողնէ նրան էլ, նա էլ կատարեց այն։

Գիշերը ցուրտ էր. քահանայապետի ծառաներն և դինուորները տաքանում էին խարոյկի շուրջ կողմումը, որտեղ վառած էր գաւթի մէջ տեղում։ Պետրոսը նմանապէս մօտեցաւ կրակին և կամենում էր տաքանալ, թէ ինչպէս կ՚վերջանայ գործը Յիսուսի Քրիստոսի մասին։ Դռնապահ աղջիկը նայելով նորա երեսին ասաց. «սա էլ Գալիլեացի Յիսուսի հետն էր»։ Պետրոսը վախեցաւ այս ամբաստանութիւնից և ուրացաւ ասելով. «չէ, ես չեմ իմանում, դու ի՞նչ ես ասում»։ Այս ասելով գնաց նա դրան մօտ։

Այն ժամանակ տեսաւ նրան ուրիշ աղախին և ասաց նրան պատով մարդոցը. «սա էլ էր Նազովրեցի Յիսուսի հետ. սա Նորա աշակերտներից էր». Բայց Պետրոսը երդուելով ուրացաւ և ասաց. «ես չեմ ճանաչում այն մարդուն»։

Շուտ յայտնի եղաւ բակումը եղողներին էլ, որ առեանը դատապարտեց Յիսուս Քրիստոսին ի մահ։ Ծառաներից մէկը ցոյց տալով Պետրոսի վրա աղաղակեց. «ահա սա էլ Նորա աշակերտներից է. լեզուն իսկ ապացուցանում է, որ Գալիլեացի է»։ Այս

լսելով մէկը ապգականներից այն Մաղքոսի, որի ականջը Պետրոս կտրել էր, մօտեցաւ նրան և ասաց. այո՛, ես ինքս տեսայ դրան պարտիզի մէջ Յիսուսի հետ միասին։ Այս խօսքերը զարհուրեցրին Պետրոսին. որնոր սկսաւ երդումն տալ և հաւատացնել, որ Նրան չէ ճանաչում։ Նոյն րոպէին Յիսուս Քրիստոսին քահանայապետի անիցը դուրս բերին։ Նա դառնալով նայեցաւ Պետրոսի վերայ և այն ժամանակ աքաղաղը խօսեցաւ։ Այս տեղ յիշեց Պետրոս Յիսուսի խօսքերը. «այս գիշեր մինչև հաւի երկու անգամ խօսելը, երեք անգամ կ՝ուրանաս Ինձ»։ Նա դուրս եկաւ և սաստիկ լաց եղաւ։

Այս էին զղջման արտասունքները, որ ստիպեցին Պետրոսին հեզանալ և յոյսը աւելի Աստուծոյ օգնութեան վերայ դնել քան թէ իր վերայ։

Վերջապէս զղջաց Յուդան էլ, բայց ի՞նչ հետևանք ունեցաւ այն։

Լսելով, որ Յիսուս Քրիստոս դատապարտվեցաւ ի մահ, նա խորին տրտմութեան մէջ եկաւ քահանայապետների մօտ ու դարձնելով նրանց այն երեսուն արծաթը, որոնց համար դաւաճանել էր իր Աստուածային Վարդապետին, ասաց. «ես մեղանչեցի, որովհետև մատնեցի անմեղ արիւն»։ Յուդայի խոստովանութեան քահանայապետները սառնութեամբ պատասխանեցին ասելով. «մեզ փոյթ չէ, այդ դու գիտես»։ Յուդան լսելով այս պատասխանը գցեց երեսուն արծաթները տաճարում և յուսահատութեան մէջ հեռանալով տաճարից խեղդվեցաւ։

Քահանայապետները ընդունելով այն երեսուն արծաթներն ասացին, որ նոքա արժանի չեն եկեղեցական գանձի մէջ լինելու, որովհետև արիւնի գին են. ուստի և վճռեցին նոքա նրանցմով գնել մի ագարակ օտարներուն թաղելու համար։ Այս ժամանակից այն տեղը կոչվեցաւ արիւնի ագարակ։

ԳԼՈՒԽ ԶԳ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋԻՆ

Մարկ. իէ. 2. Մարկ. ժե. 1. Ղուկ. իգ. 1. Յովհ. ժը. 28.

Հրէաները արդէն իրենց թագաւոր չունէին այն ժամանակ և այս պատճառաւ ամէն մահու վճիռ պէտք է հաստատէր Հռովմայեցի կառավարիչը. ուստի և միւս առաւօտը վաղ բարձրագոյն տեսանի բոլոր անդամները ժողովեցան և հրամայեցին տանել Յիսուս Քրիստոսին Պիղատոսի մօտ, որնոր Հռովմայեցի կառավարիչն էր Հրէաստանի և իրենք էլ գնացին Նորա ետևից։ Բայց կառավարչի՝ իբրև հեթանոսի տուն ներս չմտան, որ չպղծվեն ու անարժան չլինին Զատիկը ուտելու։

Այն տան առաջին, ուր բնակում էին Պիղատոս և իր պահապանները, կար մի փոքրիկ հրապարակ, քանի մի աստիճան բարձր փողոցից և կոչվում էր Կաղափա, այսինքն քարտակ։ Այս տեղ բերին Յիսուս Քրիստոսին և ապատում էին, որ Պիղատոսը դուրս գայ։

Պիղատոսը երբ դուրս եկաւ ներից, տեսնելով բարձրագոյն տեսանի բոլոր անդամներուն հաւաքուած իր դրան առաջին զարմացաւ։ «Ի՞նչ ամբաստանութիւն էք անում այդ մարդու վերայ», հրամայեց նա։

«Եթէ նա չարագործ չլինէր, մենք Նրան քեզ մօտ չէինք բերիլ». պատասխանեցին նոքա։

«Եթէ այդպէս է, ուրեմն առէք Դրան, և դատեցէք ձեր օրէնքներով». պատասխանեց Պիղատոս։

«Մենք չունինք իրաւունք մահու վճիռ տալու»։ պատասխանեցին նոքա և տեսնելով, որ բանը այնպէս շուտով չի վճռվիլ, ինչպէս իրենք ցանկանում էին, սկսան զրպարտել Յիսուս Քրիստոսին ասելով. «այս մարդը ազգին խռովում է. Նա արգելում

է կայսեր հարկ տալ, անուանում է Իրեն Քրիստոս՝ Իսրայէլացւոց թագաւոր»։

«Դու Իսրայէլացւոց թագաւորն ես. հարցրեց Պիղատոս դառնալով Յիսուս Քրիստոսին։

«Դու ինքդ ես ասում». կրկնեց Յիսուս Քրիստոս, որնոր առաջ ոչ մի պատասխան չէր տալիս քահանայապետների և ծերերի չարախօսութեանցը։

«Լսում ես, որքան չարախօսութիւններ են լինում Քո վերայ, ասաց Պիղատոս, «մի՞թէ չես ասիլ ոչինչ Քեզ արդարացնելու համար»։ Բայց Յիսուս Քրիստոս լուռ էր կենում, որ և շատ զարմացրեց Պիղատոսին։ Նա տեսնում էր, որ քահանայապետները միայն նախանձից ցանկանում էին Յիսուսի մահն և այս պատճառաւ կամենում էր Նրան տալ միջոց խօսելու առանց թշնամիների ներկայութեանը։

Պիղատոսը Նրան իր տուն մոցնելով հարցրեց. «Ճշմարտիւ Դու Հրէից թագաւորն ես»։

«Դու քեզանից ես ասում այդ, թէ լսել ես այդ մասին ուրիշից». ասաց Յիսուս Քրիստոս։

Պիղատոսը պատասխանեց. «ես Հրէայ չեմ։ այլ Քո ազգդ և քահանայապետները դատապարտել են Քեզ 'ի մահ և մատնել իմ ձեռքս։ Դու ի՞նչ ես արել»։

«Իմ արքայութիւնս այս աշխարհից չէ». ասաց Փրկիչը։ «Եթէ Իմ Արքայութիւնս այս աշխարհից լինէր, Ես կուներայի սպասաւորներ, որ կ'պաշտպանէին Ինձ, որ Հրէաների ձեռքը չընկնէի։ Բայց Իմ Արքայութիւնս այս աշխարհից չէ»։

Պիղատոս հարցրեց. «ուրեմն Դու թագաւո՞ր ես»։—«Դու ես ասում, որ Ես թագաւոր եմ», պատասխանեց Տէրը։ «Ես ծնայ և եկայ աշխարհ, որ վկայեմ ճշմարտութեան, նա կ'լսէ Իմ ձայնիս»։

Ի՞նչ է ճշմարտութիւնը. հարցրեց Պիղատոս և այս խոս-

քերն արտաբերելիս դուրս գնաց Հրէաների մօտ և ասաց. «Ես Նորա մէջ ոչ մի յանցանք չեմ գտնում»։

ԳԼՈՒԽ ԶԴ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՀԵՐՈՎԴԷՍԻ ԱՌԱՋԻՆ

Ղուկ. իգ. 6.

Քահանայապետները տեսնելով որ Պիղատոսը չէ կամենում Յիսուս Քրիստոսին դատապարտել, ուզի և չարախօսում էին Նորա վերայ և ասում. Նա խռովում է ժողովրդին իր վարդապետութեամբը, քարոզելով բոլոր Հրէաստանում, սկսած Գալիլեայից մինչև Երուսաղէմն անգամ։

Պիղատոսը, երբ լսեց Գալիլեայի անունը, հարցրեց. «Մի՞թէ Նա Գալիլեացի՞ է»։ Երբ նոքա ասացին, որ Նա Հերովդէսի իշխանութիւնից է, Պիղատոս ղրկեց Յիսուս Քրիստոսին Հերովդէսի մօտ, որնոր նմանապէս եկել էր Զատկի տօնի համար Երուսաղէմ։

Պիղատոսը զգուշացող մարդ էր։ Նա չէր կամենում 'ի մահ դատապարտել անմեղին. բայց չունէր այնքան հաստատութիւն, որ պաշտպանէ Նրան և այնպէս գրգռէ իր դէմ քահանայապետներուն և Իսրայէլացւոց ծերերուն։ Նա ուրացաւ, որ գատաւ միջոց հեռանալու գործքիցը, որնոր Նա յանձնեց Հերովդէսին, որին սիրան էլ մի և նոյն ժամանակը Նրանով շահեցաւ։ Պիղատոսի գործը կանոնաւոր էր և հաշուով, բայց ոչ առաքինի։ Մարդը բարի է գործում առանց նայելու, թէ ի՞նչ կասեն չար մարդիկ։

Հերովդէսը շատ բաւական էր, որ Յիսուս Քրիստոսին բերին իր մօտ։ Նա շատ բաներ էր լսել Յիսուսի վերայ, հետաքրքիր էր Նրան տեսնելու և սպասում էր, որ Նա իր աչքի

առաջին կ՚գործէ մի հրաշք։ Նա շատ հարցումներ արաւ, որոնց ամենեին Յիսուս Քրիստոս չպատասխանեց։ Իսկ քահանայապետները չէին դադարում Նորա վրայ չարախօսել. նոյնպէս էլ նոցա չարախօսութեանց ոչ մի պատասխան չէր տալիս Փրկիչը։ Հերովդէսը զայրացած Նորա լռութեան վերայ թոյլ տուեց իր զինուորներին Նրան հայհոյել և հագցնելով Նրան ապիտակ շոր ղրկեց վերստին Պիղատոսի մօտ։

Հերովդէսն և Պիղատոսը խռով էին մէկ մէկու հետ. բայց այս ժամանակից հաշտեցան և դարձան բարեկամներ. որովհետև թէպէտ Պիղատոս ղրկեց Յիսուսին Նորա մօտ այն նպատակաւ, որ ինքը ազատ մնայ անհաճոյ գործքից. բայց Հերովդէսը համարեց այն վարմունքը իրրև մի պատիւ, որնոր անում է Հռովմայեցի կառավարիչը իր թագաւորական արժանաւորութեան և շատ բաւական մնաց Նրանով։

ԳԼՈՒԽ ՁԵ.

ՊԻՂԱՏՈՍԸ ԱՇԽԱՏՈՒՄ Է ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ ԱԶԱՏԵԼ.

Մատ. է. 15. Մարկ. ժե. 1. Ղուկ. իզ. 11.

Իսրայէլացիները սովորութիւն ունէին, իրենց Եգիպտացւոց գերութիւնից ազատվելու յիշատակի համար, Զատկի տօնին արձակել մի յանցաւոր մարդու, որնոր դատապարտած էր ՝ի մահ և ազատել Նրան բանտից։ Այս սովորութեան պատճառաւ Հռովմայեցի կառավարչի տան առաջին ժողովեցաւ մեծ բազմութիւն, որնոր պահանջում էր, որ արձակէ յանցաւորներից մէկին։

Պիղատոսը կամենում էր բարեաց գործածել այս միջոցն և ազատել Յիսուս Քրիստոսին։ Այն ժամանակ բռնած էր մի յան-

ցաւոր Բարաբբա անունով, որնոր արգելած էր բանդումը մարդասպանութեան և խռովութեան համար, որնոր նա ժողովրդեան մէջ գցել էր։

Պիղատոսը դուրս եկաւ քահանայապետներին և հաւաքված ժողովրդի մօտ և ցոյց տալով Յիսուս Քրիստոսի վրայ ասաց. «դուք բերիք այս մարդուն ինձ մօտ ասելով, որ նա խռովում է ժողովրդին. ես ձեր առաջին հարցրի Նրան և չեմ գտնում Նրան յանցաւոր ոչ մի չարագործութեան մէջ, որոնք դուք նորա վրայ ասացիք։ Հերովդէսը, որի մօտ ես Նրան ղրկեցի, նմանապէս անմեղ գտաւ Նրան. նա ոչ մի այնպիսի գործ չէ արել, որ մահուան արժանի լինի։ Դուք սովորութիւն ունիք Զատկի ժամանակ յանցաւորներից մէկին ազատելու. երկուսից որին էք կամենում, որ արձակեմ ես. Բարաբբայի՞ն, թէ Յիսուսի՞ն, որ անուանվում է Քրիստոս»։

Այս ժամանակ Պիղատոսի կինը ղրկեց Նորա մօտ ծառային հրամայելով ասել. «բան մի՛ ունենար այդ արդարի հետ, այսինքն վնաս մի՛ տար Նրան, որովհետև այս գիշեր երազումս շատ անցքեր պատահեցան ինձ Դորա համար»։

Քահանայապետներն և ծերերը ձեռնահաս եղան խռովել ժողովրդին Յիսուս Քրիստոսի դէմ և համոզեցին Նրան, որ պահանջէ Բարաբբային ազատել և Յիսուս Քրիստոսին դատապարտել։ Ուստի և բոլոր ամբոխը Պիղատոսի հարցնելիս աղաղակեց. «արձակիր մեզ Բարաբբային»։

Պիղատոսը, որնոր կամենում էր Յիսուս Քրիստոսին ազատել, հարցրեց. «բայց ի՞նչ անենք Յիսուսին, որնոր Քրիստոս է անուանվում»։ Բոլոր ժողովուրդը մի ձայնով աղաղակեց. «խաչի՛ր, խաչի՛ր Նրան»։

Պիղատոսը էլի կրկնեց. «բայց ի՞նչ չարութիւն է գործել Նա. ես Նրան մահուան արժանի չեմ գտնում։ Ես կ՚պատժեմ

Նրան և կ՝արձակեմ։ Բայց ամբոխը աւելի բարձր ձայնով աղաղակեց. «խաչի՛ր Նրան, խաչի՛ր»։

Այն ժամանակ Պիղատոս հրամայեց արձակել Բարաբբային և Յիսուս Քրիստոսին տուեց Հրէաների ձեռքը։

ԳԼՈՒԽ 22.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՀԱՅԲԵՐՈՒՄ Է ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻՆ

Մատ. իէ. 27. Մարկ. ժե. Յովհ. ժԹ. 1.

Պիղատոսի զինուորները տարան Յիսուս Քրիստոսին բակի մէջտեղը և կանչեցին բոլոր պահապաններին։ Զինուորները ծաղր անելով Նրան, որ իրեն թագաւոր է կոչում, դրին Նորա ուրբ գլխին փշեայ պսակ, հագցրին Նրան ծիրանի և ձեռին տուին մի հասարակ գաւազան արքայական գաւազանի տեղ. յետոյ մօտենում էին Նրան մէկ մէկ և կատակելով ծունր էին գնում առաջին ու. ասում. «ողջոյն քեզ թագաւոր Հրէից»։ Նրանից յետ թքում էին Նորա վերայ, ապտակ էին տալիս երեսին և գաւազանը ձեռքից խլելով խփում էին Նորա գլխին։

Յիսուս Քրիստոս երկնային հեզութեամբ և համբերութեամբ տանում էր այս հայհոյանքներն չարչարանքները լռութեամբ առանց գանգատելու։ Վերջապէս Պիղատոսը դուրս եկաւ զինուորների մօտ։ Անմեղ չարչարվողի տեսիլը շարժեց Նորա կարեկցութիւնն. ուստի կարծում էր, որ մի և նոյն զգացմունքը կ՝զգայ ժողովուրդն էլ։ Նա հրամայեց զինուորներին հանել Յիսուս Քրիստոսին հրապարակը, որտեղ Նորա առաջին էր և ասաց քահանայապետներին. «ես ահա էլի մի անգամ բերում եմ ձեր առաջին և էլի յայտնում եմ, որ ես չեմ գտնում ոչ մի յանցանք Նորա մէջ։ *)

*) Յովհ. ժԹ. 4.

Յիսուս Քրիստոսին բերին արիւնաթաթախ, դեղնած, վատակած չարչարանքներից. արիւնը վազում էր փշեայ պսակի տակից և կաթում էր ծիրանի վերայ։ Պիղատոսը կարծում էր, որ անկարելի էր տեսնել այս չարչարանքներն առանց կարեկցութեան. ուստի և ցոյց տալով Փրկչին վերայ ասաց. «ահա մարդ»։ Բայց քահանայապետներն և նոցա ծառաները տեսնելով Յիսուս Քրիստոսին կատաղութեամբ աղաղակում էին. «խաչի՛ր, խաչի՛ր Դրան»։ Պիղատոսը զայրանալով ասաց. «առէ՛ք և խաչէ՛ք Նրան դուք. իսկ ես Նորա մէջ ոչինչ յանցանք չեմ գտնում»։

—«Ո՞եր օրէնքով Նա արժանի է մահուան. որովհետև Իրեն Աստուծոյ Որդի է անուանում», պատասխանեցին նոքա։ Երբ այս խօսքերը լսեց Պիղատոս, խռովեցաւ իր մէջ և Յիսուսի Քրիստոսի հետ մտնելով ապարանը հարցրեց Նրան. «Ո՞րտեղից ես Դու»։ Բայց Յիսուս Քրիստոս լուռ էր կենում։ Ի՞նձ էլ չես պատասխանում», ասաց Պիղատոս։ «Մի՞թէ չգի՞ս իմանում, որ ես իշխանութիւն ունիմ քեզ թէ խաչելու և թէ արձակելու»։

Յիսուս Քրիստոս պատասխանեց. «դու ոչինչ իշխանութիւն չէիր ունենալ Ինձ վերայ, եթէ այն քեզ վերևից տուած չլինէր. ուստի և նոցա մեղքը, որոնք Ինձ մատնեցին քո ձեռքդ, աւելի մեծ է»։

Այս խօսքերը յարուցին Պիղատոսի մէջ մեծ ցանկութիւն Յիսուս Քրիստոսին ազատելու։ Նա կրկին յայտնվեցաւ ժողովրդին, Բայց Հրէաները Նրան որ տեսան, ասացին. «եթէ դու Նրան կ՝արձակես, այդ ապացուցութիւն կ՝լինի, որ դու բարեկամ չես կայսեր. որովհետև. ամենը, ով Իրեն թագաւոր կ՝անուանէ, կայսեր հակառակ է»։ Խորամանկ չարագործները գիտէին, որ Պիղատոսը կայսեր պատիւը շատ յարգում էր և յիրաւի այս խօսքերը ջնջեցին Պիղատոսի սրտում ոչ միայն կարեկցութեան զգացմունքը, այլ և արդարութիւնն անգամ։

Բայց և այնպէս էլի Պիղատոսը դեռ յոյս ունէր զսպելու

հրէաների զայրոյթը։ Երբ նորա հրամանով դուրս բերին Յիսուս Քրիստոսին, ասաց նա. «ահա՛, ձեր թագաւորը»։ Ատուա-ծային Զարշաւրոզի մի տեսիլը միայն բաւական էր համո-զելու ամենուն, թէ նա չէ փնտռում երկրաւոր իշխանութիւն և չէ աշխատում հզօր Հռովմայեցի կայսրից նորա թագաւորու-թիւնը խլելու։ Բայց քահանայապետներն, որոնց հետ նմանա-պէս բոլոր ժողովուրդը, տեսնելով, Յիսուս Քրիստոսին աղաղա-կում էին. «խաչի՛ր Դրան, խաչի՛ր»։ «Ձեր թագաւորի՞ն ես խա-չեմ», ասաց Պիղատոս։ Մենք ուրիշ թագաւոր չունենք բացի կայսրից», գոռում էին նոքա կատաղութեամբ։

Պիղատոսը տեսնելով, որ ոչ մի կերպու չէ կարող զսպել նրանց և վախենալով խռովութիւնից, նստաւ իր դատաւորա-կան աթոռի վերայ, ուզեց ջուր և բոլոր ժողովրդի առաջին սկսաւ ձեռները լուանալ։ Ամբոխը փոքր ինչ հանդարտուեցաւ և ապասում էր, թէ ի՞նչ կ՚լինի։ Այն ժամանակ Պիղատոսն ասաց. «ես քաւում եմ այս անմեղի արիւնից. դուք գիտէք, պատաս-խանը դուք տուէք»։ Բոլոր ժողովուրդը աղաղակեց. «Նորա արիւնը թո՛ղ լինի մեր և մեր որդւոց վերայ»։

Եւ Պիղատոսը մատնեց նոցա ձեռքը Յիսուս Քրիստոսին, որին բոլոր ժողովրդի առաջին անմեղ խոստովանեց։ Ա՛հա ողոր-մելի օրինակ թուլութեան։ Այս ցոյց է տալիս, թէ մինչև որ տատիճան կարող է հասցնել մարդուս ցանկութիւնն աշխարհիս հաճոյ գտնվելու։ Պիղատոս, զանազան խորամանկ միջոցներ գոր-ծածելու տեղ Յիսուսին ազատելու համար, պէտք է ուղղակի յայտնէր նրան անմեղ և ազատէր նրան։ Այլ նա չունէր այն-քան հաստատութիւն, որ վճռաբար ներգործէր. իսկ նորա թուլութիւնը աւելի համարձակութիւն տուեց քահանայապետ-ներին և ծերերին, որոնք տեսնելով, որ նորա արդարասիրու-թիւնը անշարժելի չէր, աւելի և աւելի յանդուգն էին դառ-նում։ Այսպէս ուրեմն չպէտք է մարդ տեղի տայ անարդար

պահանջմունքներին. այլ ուղիղ պէտք է ընդդիմանայ նրանց և վարվի արդարութեամբ համեմատ իր պարտաւորութեան և խղճմտանքին։

ԳԼՈՒԽ ԶԷ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Մատ. իէ. 31. Ղուկ. իգ. 26. Մարկ. ժե. 20. Յովհ. ԺԹ. 17.

Զինուորները հանեցին Յիսուսի Քրիստոսի ծիրանին, հագցրին Նրան Իր շորերին և տարան խաչելու։ Նա ինքը պէտք է տանէր այն խաչը, որի վրայ մեռնելու էր։ Նա գնում էր դէպի գառապարտութեան տեղը պատած բազմաթիւ ամբոխով։ Նրա հետ միասին տանում էին պատժելու երկու աւազակներու էլ։

Յիսուս Քրիստոս Երուսաղէմի փողոցներում գնալիս թուլացաւ խաչի ծանրութիւնից։ Այս ժամանակ պատահեցաւ մի Կիւրենացի, անունով Սիմէոն, որոնք դառնում էր արտի աշխատանքից. նա կամենում էր մօտով անցանել, բայց զինուորները ստիպեցին նրան կանգնել և տանել Յիսուսի խաչը։

Յիսուսի Քրիստոսի ետևից գնացողների մէջ կային նմանապէս մի քանի կանայք էլ, որոնք հեւում էին Նրան արտասուքով և ողբով։ Յիսուս Քրիստոս յետ դառնալով ասաց նրանց. «ո՛ւք Երուսաղէմի դուստրներ, մի՛ լաք Իմ վերայ, այլ լաց եղէ՛ք ձեր և ձեր որդւոց վերայ։ Մօտենում է այն ժամանակն, երբ կ՚ասեն. «երանի՛ նրանց, որոնք ամուլ են և նրանց, որոնք երբէ՛ք չեն կերակրել երեխայ իրենց ծծով»։ Այն ժամանակ կ՚ասեն սարերին. «ընկէ՛ք մեր վերայ և բլուրներին, թէ ծածկեցէ՛ք մեզ»։ Եթէ այսպէս են վարվում դալար ծառի հետ, չորին ի՞նչ կանեն։»

Յայտնի բան է, կարեկցութիւնը, որ ծագում է մարդուս մէջ անմեղի չարչարանքը տեսնելիս, գովելի զգացմունք է, յատ-

կական բարի սրտին, բայց Յիսուսի Քրիստոսի չարչարանքներն ոչ միայն կարեկցութիւն պէտք է յարուցանեն մեր մէջ, այլ և երկիւղ և զզվանք մեղաց դէմ։ Եթէ Նա, բարի, սուրբ, Աստուծոյ միածին որդին տարաւ այնքան սարսափելի չարչարանքներին մեր մեղքերի համար, որքան պէտք է համբերեն խաւամիտ մեղաւորներն, որոնք չեն զղջում իրենց մեղաց վերայ և ուրանում են փրկութիւնը, որնոր մեր համար պատրաստել է Յիսուս Քրիստոս,

Զինուորները, երբ տարան Յիսուս Քրիստոսին կառափնելոյ տեղը, որնոր այն ժամանակ քաղաքի պատից դուրս էր և անուանվում էր Գողգոթա, տուին Նրան գինի զմռսեալ և լեղիով խառնած։ Այս խմիչքը տալիս էին խաչվողներին, որ նոքա այնքան չզգան իրենց չարչարանքը։ Յիսուս Քրիստոս համը տեսաւ նորա, բայց չկամեցաւ խմել։ Նա կամենում էր կատարեալ յիշողութեամբ տանել չարչարանքներին և մահուան, որ ամբողջապէս Իրեն՝ հոգին և մարմինը զոհէ աշխարհիս փրկութեան համար և որ մինչև վերջը խմէ չարչարանքների բաժակը։

Յարգութեամբ ընկնենք այս անսահման սիրոյ առաջին, որնոր այսպիսի չարչարանքներին համբերեց մեր փրկութեան համար,

Զինուորները խաչեցին Յիսուս Քրիստոսին։ Նոյնպէս խաչեցին երկու աւազակներուն էլ, որոնց բերել էին նորա հետ, մէկին աջ և միւսին ձախ կողմում։ Ահա շնորհակալութիւնը, որնոր ազգը առեց Տիրոջ ամեն նորա արած բարերարութեանց փոխարէն. Յիսուս Քրիստոս Իւր աչքերը դէպի երկինք բարձրացնելով ասաց. «Հայր, ներիր դոցա. որովհետև դոքա չը գիտեն, ի՞նչ են անում»։

Հռովմայեցւոց օրէնքով մահապարտների գլխների վերայ պէտք է գրած լինէր նոցա ինչասի գիրը, որ ամեն մարդ կարո-

զանար տեսնել ի՞նչ յանցանքի համար դատապարտվել են։ Պիղատոս հրամայեց Յիսուսի Քրիստոսի գլխին գրել յետագայ վերագիրը. «Յիսուս Նազովրեցի՝ Հրէաների թագաւորը։ Վերագիրը գրած էր երեք լեզուով՝ Եբրայեցերէն, Յունարէն և Դաղմատերէն (Հռովմայեցւոց լեզուով)։ Քահանայապետները համարեցին այս կամ ծաղրաբանութիւն կամ յանդիմանութիւն. ուստի և գնացին Պիղատոսի մօտ և ասացին նրան. «մի՛ գրիր, Հրէաների թագաւոր. այլ գրիր թէ Նա ինքը ասաց, «Ես Հրէաների թագաւոր եմ»։ *) Բայց Պիղատոս պատասխանեց. «ինչ որ գրեցի, գրեցի»։

Զինուորները, որոնք խաչեցին Յիսուս Քրիստոսին, առան Նորա շորերն և բաժանեցին իրենց մէջ. բայց պատմուճանը, որովհետև առանց կարանայի էր, չկամեցան պատառել. այլ վիճակ գցեցին թէ ում կ'ընկնի։ Յայտնի բան է զինուորները չէին իմանում, որ կատարումն տուին Սուրբ Դաւթի մարգարէութեանը, թէ «բաժանեցին Իմ շորս իրենց մէջ և պատմուճանիս վերայ վիճակ գցեցին։ **)

ԳԼՈՒԽ 2Ը.

ՓՐԿԻՉԸ ԽԱՉԻ ՎԵՐԱՑ

Մարկ. իէ. 35. Մարկ. ժե. 25. Ղուկ. իգ. 33. Յովհ, ժթ. 23.

Յիսուս Քրիստոս, բևեռած խաչի վերայ, քաշում էր, սարսափելի չարչարանքներ։ Մեխերը, քանի գնում էր, աւելի պատառում էին Նորա վէրքերն և արիւնը Նորա սուրբ ձեռներից և ոտներից վազում էր աղբիւրի պէս։

Քահանայապետներն, օրինականներն և ժողովրդեան ծե-

*) Յովհ. ժթ. 21.
**) Սաղմ. իա. 19.

ելերը, ուրախ իրենց չար յաղթութեան վերայ, ասում էին. դու ապատում էիր ուրիշներուն, ապատի՛ր այժմ քեզ էլ եթէ նա յիրաւի Քրիստոսն է՝ Աստուծոյ Որդին, ընտրեալը, թող իջնէ խաչից. այն ժամանակ մենք էլ կ՝հաւատանք Նրան։ Նա միշտ յոյսը Աստուծոյ վերայ էր դնում, թող այժմ փրկէ Նրան Աստուած, եթէ նա հաճոյ է Նրան։

Նոյնպէս էլ ժողովուրդը և անցաւորներն. այս մահուան չարչարանքի բոպէում ծաղր էին անում խաչածին, գլուխները շարժում էին և ազաղակում էին Նրան. «Դու, որնոր երեք օրում կամենում էիր քանդել տաճարն և նորից շինել, ազատվի՛ր Ինքդ և իջի՛ր խաչից, եթէ Դու յիրաւի Աստուծոյ Որդի ես»։

Զինուորներն, որոնք պատում էին Յիսուս Քրիստոսին, ուրիշների հետ հայհոյում էին Նրան, մօտեցնում էին քացախ նորա շրթունքներին և ասում. «եթէ Դու Իսրայէլի թագաւորն ես, փրկի՛ր Քեզ»։

Մինչև աւազակն էլ անգամ, որնոր Նորա մօտ խաչած էր, այն մարդասպանը, այն չարագործ յանցաւորը, այն վերջին չարչարանաց ժամում գտաւ այնքան զօրութիւն, որ նախատէ Յիսուսին և հայհոյէ Նրան. «Եթէ Դու Քրիստոսն ես, ասում էր նա, փրկի՛ր Քեզ էլ ու մեզ էլ»։ Բայց միւս աւազակը յանդիմանեց Նրան ասելով. «չե՞ս վախենում Աստուծմէ։ Դու ինքդ դատապարտված ես մի և նոյն չարչարանքը քաշելու. բայց մենք էլի արժանի հատուցումն ենք ստանում մեր գործքերին, իսկ Սա ոչ մի չարագործութիւն չէ արել»։ Յետոյ դառնալով դէպ՝ի Փրկիչն ասաց Նրան. «յիշի՛ր ինձ, Տէր, Քո արքայութիւնումդ»։ Յիսուս Քրիստոս պատասխանեց. «յիրաւի եմ ասում քեզ, այժմ իսկ կ՝լինիս Ինձ հետ դրախտումս»։ Այսպէս Յիսուս Քրիստոս ոչ միայն ներեց մեղայ եկող յանցաւորին, այլ և մաղթեց Նրան արքայութիւն, որնոր լոյսի և երջանկութեան տեղն է։

Այս բարեպաշտ աղջկի օրինակը ապացուցանում է, որ ճշմարիտ զղջմամբ կարող ենք թողութիւն ստանալ, եթէ միայն Աստուած Իր երկայնամտութեամբ կ՚տայ մեզ դեռ ժամանակ և միջոց ապաշխարելու։

Տիրոջ Յիսուսի խաչի մօտ կանգնած էին Սուրբ Մարիամը— Նորա մայրը, սորա քոյրը Մարիամ Կղէոփայն և Մարիամ Մագդաղենացին. այս տեղ էր նմանապէս Նորա սիրելի աշակերտ Սուրբ Յովհաննէսը, որնոր հեռուից Նրան տեսանն էլ, պատժի տեղն էլ։ Նա Յիսուսի Քրիստոսի սիրոյ պատճառաւ բանի տեղ չէր դցում թէ հայհոյանքն և վտանգներն և թէ մահն իսկ անգամ։ Սոքա ամենքը կանգնած էին խորին տրրտմութեան մէջ և անձառելի հոգւոյ տանջանքով նայում էին Յիսուսի չարչարանքներին, մանաւանդ Նորա տմենասուրբ Մայրը։ Կատարվեցաւ Սուրբ Սիմեոնի մարգարէութիւնը, թէ՝ «զէնքը խոցեց Նորա սիրտը»։ Յիսուս Քրիստոս տեսնելով իւր մօրը ասաց Նրան, ակնարկելով Յովհաննէսի վերայ. «ահա՛ քո որդիդ». յետոյ նայելով իւր սիրելի աշակերտին վրայ ասաց Նրան. «ահա՛ քո մայրդ»։ Այս բոպէից Յովհաննէս Սուրբ Մարիամին առաւ իւր տուն և տալիս էր Նրան իբրև Տիրոջ Յիսուսի Մօր ամենամեծ յարգութիւնը։

ԳԼՈՒԽ ԶԹ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՒԱՆԴՈՒՄ Է ՀՈԳԻՆ

Մատ. իվ. 45. Մարկ. ժե. 33. Ղուկ. իգ. 44. Յովհ. ժթ. 28.

Վերջերորդ ժամն էր կամ մեր հաշուով տասներկուսը, երբ խաչեցին Տիրոջ Յիսուսին։ Այս ժամից յանկարծ խաւարը ծածկեց բոլոր երկիրը մինչև ինն ժամը, արեգակը կէսօրին խաւարեցաւ։ Յիսուսի Քրիստոսի թշնամիները սարսափեցան և ըն-

ցին։ Ժողովուրդը լռութեամբ սպասում էր և տարակուսանաց մէջ էր։ Յիսուս Քրիստոս բոլոր ժամանակը քաշում էր անհասանելի չարչարանքներ, ամէն նեղութիւնները, որոնց միայն կարող է մարդս տանել։ Կէսօրից յետո երեք ժամին, երբ Նորա չարչանքներն հասան մինչև վերջին աստիճանը։ Նա աղաղակեց. «Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողի՛ր Ինձ»։ Այն ժամանակուայ Եբրայեցւոց լեզուով Աստուած իմ Աստուած իմ, ասում էր, Էլի՛, Էլի՛։ Այն տեղ ներկայ գտնվողներից մի քանիսը ասում էին. «Նա կանչում է Եղիային»։ Իսկ ուրիշներն ասում էին ծաղրաբանութեամբ. «տեսնենք, կ՚գայ արդեօք Եղիան Նրան փրկելու»։

Մարգարէների ամէն գուշակութիւնները պէտք է կատարվէին։ Սուրբ Թագաւորն և մարգարէն Դաւիթ հազար տարի Քրիստոսի ծննդից առաջ ասաց Մեսիայի բերանից. «Կերակուր տուին ինձ լեղի, ծարաւ ժամանակս խմցրին Ինձ քացախ»։ Փրկիչը գիտենալով, որ շուտ ամենայն բան պէտք է կատարվի, ասաց. «Ծարաւ եմ։ Խաչի մօտ դրված էր քացախով լեցը աման. զինուորներից մէկը թրջեց քացախի մէջ սպունգ, կապեց այն գաւազանի ծայրին և մօտեցրեց Յիսուսի շրթունքներին։

Յիսուս Քրիստոս քացախը ընդունելից յետոյ ասաց. ամէն բան կատարվեցաւ», և փոքր ինչ ժամանակ լուռ կենալից յետ աւելցրեց. «Հա՛յր, քո ձեռքդ աւանդում եմ Իմ Հոգին»։ Այս խօսքերն որ ասաց, կորացրեց գլուխն և աւանդեց Իւր Հոգին։

Այս րոպէում երկիրը շարժվեցաւ, քարերը ցրուեցան (վէմք պատռեցան), գերեզմանները բացվեցան ու արդարներից շատերի մարմինները յարութիւն առան և Յիսուսի Քրիստոսի յարութիւնից յետոյ Երուսաղէմում երևեցան շատերին. տաճարի վարագոյրը, որնոր բաժանում էր Սրբութիւնը Սրբոց Սրբութիւնից, պատռեցաւ վերևից մինչև ներքև։

Հարիւրապետն այն պահապաններին, որոնք կանգնած էին խաչի մօտ, տեսնելով այս ամէն անցքն ասաց. «արդարև այս մարդը արդար էր. յիրաւի որ Սա Աստուծոյ Որդի էր։ Նմանապէս էլ զինուորներն, որոնք Նորա իշխանութեան տակ էին և զարհուրած էին այն ամէն բաներից, ինչ որ տեսան, մանաւանդ երկրաշարժից և վէմերի պատռուելու ձայնից, ասում էին իրենց մեծի հետ միասին. «յիրաւի Նա Աստուծոյ Որդի է»։ Ժողովուրդը, որոնք կանգնաց էր խաչի մօտ խաչելու ժամանակն և վկայ էր ամէն այս անցքերին, կոտրած սրտով խփում էր իր կրծքին և լռութեամբ տուն դառնում։

ԳԼՈՒԽ Զ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՈՒՄՆ

Մատ. իէ. 57. Մարկ. ժե. 42. Ղուկ. իգ. իդ. 50. Յովհ. ժթ. 31,

Յիսուս Քրիստոս և երկու աւազակները խաչվեցան պասէքը ուտելու օրուան նախընթաց օրը։ Այս մեծ օրումը չէր կարելի մարմիններ թողնել խաչերի վերայ. ուստի և Հրէաները եկան Պիղատոսի մօտ և խնդրեցին, որ հրամայէ ջարդել խաչվածների սրունքները որ կամ շուտով մեռնեն և կամ գոնէ անկարող լինեն փախչելու։ Պիղատոսը հրամայեց կատարել այս պահանջմունքը։

Զինուորները, երբ եկան պատժի տեղը, առաջ ջարդեցին աւազակների սրունքները. իսկ երբ մօտեցան Յիսուս Քրիստոսին, տեսան, որ Նա մեռած էր և այս պատճառաւ Նորա սրունքները չջարդեցին։ Զինուորներից մէկը աւելի հաւատի լինելու համար Նորա մահուանը, ծակեց տէգով Նորա կողքն, որից դուրս եկան արիւն և ջուր։

Սրանով կատարվեցան դրոց խօսքերը, թէ Նորա ոսկրը

թող չփշրվի (ոսկր մի բեկանիցէք 'ի նմանէ)։ *) Իսկ միւս տեղումը ասած է. «կը նայեն Իմ վերայ, որին խոցեցին» (Հայեացին առ իս, յոր խոցեցին)։ **)

Ամեն խաչածներուն սովորաբար թաղում էին պատժի տեղի մօտ։ Այս ժամանակ կենում էր Երուսաղէմում մի Հարուստ մարդ Յովսէփ անունով, ծննդեամբ Արիմաթիայից։ Սա երևելի անձն և բարձրագոյն ատեանի անդամներից էլ մէկն էր, բայց իր բարեպաշտութեան պատճառաւ չհամաձայնեցաւ միւս անդամների խորհուրդներին։ Նա Յիսուս Քրիստոսի ծածուկ աշակերտներից մէկն էր, որովհետև վախենով Հրէաների չարութիւնից երկիւղ էր կրում բաց նորա աշակերտների մէջ յայտնվելու։ Յովսէփը Աստուծմէ վախեցող, առաքինի մարդ էր, որնոր սպասում էր Աստուծոյ արքայութեան գալուն։ Սա համարձակեցաւ գնալ Պիղատոսի մօտ և խնդրել Յիսուսի մարմինը։ Պիղատոսը զարմացաւ, երբ լսեց, որ Յիսուս արդէն մեռել է. հրամայեց կանչել պահապանների հարիւրապետին և հարցրեց. «ճշմարիտ է, որ Յիսուսը արդէն մեռել է»։ Երբ հարիւրապետը հաստատեց այն, Պիղատոսը հրամայեց տալ նորա մարմինը Յովսէփին։

Բաղաջակերաց ուրբաթ օրը երեկոյեան Յովսէփը եկաւ Գողգոթա և բերաւ հետը կտաւ Յիսուսի մարմինը պատելու համար։ Այս տեղ եկաւ նոյնպէս Նիկոդիմոսն էլ, նա, որնոր գալիս էր միշտ գիշերով Տիրոջ մօտ նորա վարդապետութիւնը լսելու. սա բերաւ մօտ հարիւր լիտր զմուռս և հալուէ։ Երկու բարեպաշտները վեր առան Յիսուսի մարմինը, պատեցին այն կտաւով ու խնկով, ինչպէս սովորաբար թաղում էին Հրէաները։

Գողգոթայի մօտ, ուր Յիսուս Քրիստոսին խաչեցին, Յովսէփը ունէր սեփական պարտէզ, ուր կար նոր փորած գերեզ-

*) Եր. ժբ. 10.

**) Զաք. ժբ. 10.

ման, որի մէջ դեռ ոչ ոք չէր դրած։ Յովսէփը պատրաստում էր այս գերեզմանը իր և իւր ընտանիքի համար։ Բայց որովհետև այն մօտիկ էր և շտապում էին թաղել Յիսուսի մարմինը ուրբաթից առաջ, Յովսէփ Նիկոդիմոսի օգնութեամբը, տարաւ Նրան իր սեփական գերեզմանն այրի դրանը դրին մի մեծ վէմ և իրենք տրտմութեամբ մեկնեցան իրենց տուն։

Մարիամ Մագդալինացին և ուրիշ սուրբ կանայք արտասուքով հետևեցին Յիսուսի մարմնին մինչև գերեզմանը։ Նոքա նուաղած վշտից և նեղութիւններից նստան պարտիզում այրի դէմուդէմն և նայում էին, ինչպէս Յիսուսի մարմինը դնում էին գերեզմանի մէջ։ Նոքա մոքերը դրին պատրաստել խունկ և ուրիշ անուշահոտ բաներ, որ շաբաթը անցնելից յետոյ, գան և օծեն Յիսուսի մարմինն ու այնպէս կատարեն Նորա թաղման ծէսը։ Ս. յս մոքով դարձան Նոքա տուն։

Քահանայապետներն և օրինականները շաբաթ առաւօտը վաղ ժողովեցան միասին, գնացին Պիղատոսի մօտ և ասացին Նրան, «մենք յիշեցինք, որ այն խաբեբայն (Նոքա այնպէս ասում էին Յիսուս Քրիստոսին, որ չէին կամենում Նորա անունը տալ) իր կենաց ժամանակ ասում էր, որ Ինքը յարութիւն կ՚առնէ երրորդ օրը։ Հրամայիր պահպանել Նորա գերեզմանը, որ աշակերտները չկարողանան գողանալ մարմինն և ժողովրդի մէջ հրատարակել, թէ Նա յարութիւն է առել մեռելներից։ վերջին խաբէութիւնը առաջինից էլ վատ կ՚լինի։ Պիղատոսը պատասխանեց նրանց. «առէք պահապաններ, գնացէք և պահպանեցէք, ինչպէս գիտէք»։ Նոքա նոյն ժամում գնացին Յիսուսի գերեզմանը, դրին այն տեղ պահապաններ ու բացի սրանից դրին իրենց կնիքը այն վէմի վրայ, որնոր գերեզմանի դրան կափարիչն էր։

ԳԼՈՒԽ ՂԱ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մատ. իէ. 62. Մարկ. ժգ. 1. Յովհ. ի. 1.

Վերջապէս եկաւ շաբաթի երեկոյն, երբ սկսաւ երբորդ օրի սկիզբը կամ միաշաբաթը։ Նոյն ժամանակ երկիրը խիստ շարժեցաւ։ Ասուծոյ հրեշտակը իջաւ Յիսուսի գերեզմանի մօտ, գլորեց վէմը գերեզմանի դռնից և նստաւ Նորա վերայ։ Նորա երեսը փայլում էր ինչպէս փայլակ և շորերը սպիտակ էին ինչպէս ձիւն։ Զարհուրած պահապաններն ընկան գետնի վերայ կիսամեռ, բայց յետոյ, երբ խելքերը գլխները եկաւ, փախան։

Այս միջոցին բարեպաշտ կանայքը՝ Քրիստոսի հաւատարիմ աշակերտուհիներն առաւօտը վաղ արշալուսի ժամանակ դուրս եկան քաղաքից և անուշահոտ իւղով լեր ամանները ձեռներին գնում էին Տիրոջ Յիսուսի գերեզմանը, որ անուշահոտ խնկով և իւղով օծեն Նորա մարմինը։ Նոքա տրտմութեամբ ասում էին մէկ մէկու. ո՞վ դէն կ՚գլորէ գերեզմանի դրան քարը մեզ համար։ Վէմը շատ մեծ էր։ Բայց նոքա զարմացան, երբ տեսան, որ քարը գերեզմանի դռնից դէն էր գցած։ Երբ նոքա մօտեցան գերեզմանին, չգտան Նորա մէջ Յիսուսի մարմինը, բայց տեսան մի երիտասարդին, որնոր կանգնած էր գերեզմանի աջ կողմում։ Այս էր հրեշտակը։ Նրան չճանաչելով, նոքա նայում էին վրան ահով։ Այն ժամանակ երևեցան էլ ուրիշ երկու հրեշտակներ էլ, որոնց շորերը փայլում էին փայլակի պէս և լուսաւորում էին իրենց լոյսով մութ այրը։ Հրեշտակը ասաց խնկաբեր կանանց. գիտեմ, որ խաչեալ Յիսուսին էք փնտռում։ բայց կենդանին մեռելների մէջ ինչո՞ւ էք որոնում։ Նա այս տեղ չէ։ Նա յարութիւն առաւ, ինչպէս զուշակեց ինքն, երբ ձեզ հետ էր դեռ։ Նա Ասում էր ձեզ, որ

մարդու Որդին կ՝մատնվի մեղաւորների ձեռքն, որոնք Նրան կը խաչեն և թէ Նա երրորդ օրը յարութիւն կ՝առնէ։ Շտապեցէ՛ք աւետիք տալու Նորա աշակերտներին և Պետրոսին Նորա յարութեան մասին. Նա յարութիւն առաւ, ինչպէս ինքը գուշակում էր այն և կ՝հանդիպի ձեզ Գալիլէայումս։

Կանայք ահով և դողով շտապեցին հեռանալ գերեզմանից. բայց ճանապարհին հանդարտվեցան, յիշեցին Յիսուսի խօսքերն—և նոցա ուրախութիւնը ահից էլ անցաւ։

Քրիստոսի յարութիւնը մեր սեպհական յարութեան գրաւականն է։ Մահը մեղքի պտուղն է և յաւիտենական կեանքը փրկութեան պտուղը։

Ինչպէս Փրկիչը փառաւորեալ մարմնով յարութիւն առաւ գերեզմանից, այնպէս էլ յարութիւն կ՝առնան արդարները նոր և երջանիկ կեանքի համար։

ԳԼՈՒԽ ԴԲ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՅԱՅՏՆՎՈՒՄ Է ՄԱՐԻԱՄ ՄԱԳԹԱԳԵՆԱՅԻՆ ԵՒ ՈՒՐԻՇ ԿԱՆԱՆՑ

Մատ. իբ. 1. Մարկ. ժզ. 1. Ղուկ. իզ. 1. Յովհ. .ի 1.

Մարիամ Մագդաղենացին Տիրոջ Յիսուսի գերեզմանը եկաւ ուրիշ կանանցմէ առաջ, երբ դեռ մութ էր։ Նա, գերեզմանի դրան քարը դէն գլորած տեսնելով և չգտնելով գերեզմանում Յիսուսի մարմինը, զարհուրած դարձաւ առաքեալների մօտ և ասաց. «գերեզմանից առել են Յիսուսի մարմինն և չգիտեմ, ո՞ւր են դրել Նրան»։ Այս տխրալի հաղորդը աշակերտներին տանելից յետո, Նա կրկին դարձաւ Յիսուսի գերեզմանը։ Նորա բացակայութեան ժամանակ միւս կանայք արդէն եկել

էին Քրիստոսի գերեզմանն և էլի հեռացել նրանից։ Մարիամը կանգնած ամայի գերեզմանի մոտ լաց էր լինում։

Գերեզմանի մէջ կորանալով նա զարհուրանքով տեսաւ երկու հրեշտակներ սպիտակ շորերով. մէկը նոցանից նստած էր գլխի կողմը ու միւսը ոտների, ուր դրած էր Յիսուսի մարմինը։ «Ինչո՞ւ վերայ ես լաց լինում». ասացին հրեշտակները։— «Նոյա վերայ, առել են այս տեղից իմ Տիրոջս և չգիտեմ ուր են դրել Նրան». պատասխանեց Մարիամ արտասուք թափելով և յետ դառնալով տեսաւ Իրեն՝ Տիրոջը, միայն չճանաչեց Նրան։ Յիսուս Քրիստոս ասաց Նրան. «ինչո՞ւ վերայ ես լաց լինում. ո՞ւմին ես փնտռում»։ Մարիամը կարծելով, թէ պարտիզպանն է, պատասխանեց. «եթէ դու ես առել Նրան, ասա՛ ինձ, ո՞ւր դրիր Նրան, որ ես կարողանամ Նրան վեր առնել»։ Յիսուս Քրիստոս ողորմած և Նրան ծանօթ ձայնով ասաց. «Մարիա՛մ»։

Սա իսկոյն ճանաչեց Նրան ու Նորա ոտները ընկնելով ու սրտանց ուրախացած աղաղակեց. «Վարդապե՛տ»։ Նա ուրախութիւնից կամենում էր ծնկներին փաթաթվել. բայց Տէրը ասաց. «մի՛ մոտենար Ինձ, ես դեռ իմ Հօրս մոտ չեմ բարձրացել։ Գնա՛ Իմ եղբայրներիս մոտ (այսպէս անուանում էր Նա Իր աշակերտներին) և ասա՛ նրանց, որ ես գնում եմ Իմ և ձեր Հօր մոտ, Իմ և ձեր Աստուծոյ մոտ»։

Իսկ միւս կանայքը գառնում էին քաղաք քաջալերած հրեշտակի խօսքերով. նոքա գնում էին ծանր, մոռանալով ամեն լաւերի վրայ, յանկարծ Ինքը Տէրը Յիսուս կանգնեցաւ նոցա առաջին. «Ուրախացէ՛ք» ասաց Նա։ Նոքա ուրախացած և զարհուրած ընկան Նորա ոտներին և երկրպագութիւն տուին Նրան։ «Մի՛ վախենաք», ասում էր Փրկիչը կանանց, «գնացէ՛ք, իմաց արէ՛ք Իմ եղբայրներիս թո՛ղ գնան Գալիլիա, այն տեղ նոքա կ՚տեսնեն Ինձ»։

Այս անճառելի և շատ սրտաշարժ անցքն է մահից յե-

ոոյ մեր արտին սիրելիների հետ միաւորվելու նշանը։ Մարիամ և ուրիշ կանայք՝ Քրիստոսի աշակերտուհիներն են վկաները Նորա մահուան։ Նոքա տեսան Նրան խաչի վերայ, տեսան Նորա ծակած կողքը, որից վազեց արիւն և ջուր, տեսան Նրան գերեզմանի մէջ դրած, բայց էլի նոքա տեսան Յիսուս Քրիստոսին յարութիւն առած։ Զնայելով Քրիստոսի փառաւորեալ մարմնի փայլին, նոքա ճանաչեցին Նորա Աստուածային երեսը, Նորա ողորմած ձայնն—և նոցա սրտերը լցվեցան կենդանի և քաղցր ուրախութեամբ։

Այսպէս էլ երբեմն մեզ կ'երևին մեր հանգուցեալ մերձաւորների երեսներն, այլակերպված և նորոգված նոր կեանքով։ Մենք կ'ճանաչենք նոցա անմոռաց գծերը, կ'ճանաչենք նոցա մեր սրտին ծանօթ ձայնը։ Դո՛ւք ո՛վ որբ մնացած երեխայք, որոնք լաց էք լինում ձեր ծնողների գերեզմանների վերայ, մխիթարվեցէ՛ք մտածելով, թէ կ'գայ միաւորութեան երջանիկ ժամը։ Բացակայութիւնը, որնոր պատճառում է մահը, կարճօրեայ է. միաւորութիւնը մահից յետո յաւիտենական է։ Եւ որ ձեր ուրախութիւնը կատարեալ լինի, կեցէ՛ք այնպէս, որ ամենևին ձեր խղճմտանքի յանդիմանութիւնը չխափանէ այն երջանիկ միաւորութիւնը։

ԳԼՈՒԽ Ղ.

ԽՆԿԱԲԵՐ ԿԱՆԱՑՔ ԱՒԵՏՈՒՄ ԵՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մատ. իբ. 11. Ղուկ. իդ 8. Յովհ. ի. 2.

Մարիամ Մագդաղենացին առաջինը իմաց արաւ Պետրոսին և Յովհաննէսին, թէ չգտաւ գերեզմանում Յիսուսի մարմինը։ Երկու աշակերտներն էլ շտապեցին գերեզմանը գնալ

Յովհաննէսը առաջինը հասաւ. նա կորանալով նայեցաւ գերեզմանի մէջ, միայն բացի պատառակալից և կտաւից, որոնք ծածկում էին Յիսուսի մարմինն, ոչինչ չգտաւ: Սարսափը պաշարեց նրան. նա չէր համարձակվում այրի մէջ մտնել: Այս միջոցին եկաւ Պետրոսն էլ. սա իջաւ գերեզմանն և տեսաւ, որ այնտեղ գցած է միայն պատառակալը. իսկ կտաւը, որնոր ծածկում էր Նորա գլուխը, ծալած և դրած էր ուրիշ տեղ: Այն ժամանակ Յովհաննէսն էլ մտաւ գերեզմանի մէջ և հաւատաց Յիսուսի Քրիստոսի յարութեանը:

Պետրոս և Յովհաննէս Առաքեալները դարձան տուն, ուր ժողովեցան միւս աշակերտներն էլ: Նոքա դեռ էլի ամենքը երկրայութեան մէջ էին, երբ ներս մտան սուրբ կանայք, որոնք տեսել էին հրեշտակներուն: Նոքա ասացին աշակերտներին այն խօսքերն, որոնք լսել էին հրեշտակներից, թէ «Նա յարութիւն առաւ մեռելներից, ինչպէս Ինքն այն գուշակեց և դուք կ՚տեսնէք Նրան». բայց աշակերտները, բացի Պետրոսից և Յովհաննէսից, չէին հաւատում Նրանց:

Այս ժամանակ եկաւ Մարիամ Մագդալինացին Սա ուրախութեամբ աղաղակեց. «Տես տեսայ Տիրոջը»: Յետոյ Պատմեց ամենը ինչոր Յիսուս Քրիստոս Նրան ասել էր: Բայց աշակերտները դեռ էլի չէին հաւատում:

Վերջապէս եկան Յիսուսի միւս աշակերտներն ու ամենքը միաբան, սրտանց ուրախացած, հաստատում էին, որ տեսել են Յիսուսի Քրիստոսի մօտ ոչ միայն հրեշտակներուն, այլ որ Նա Ինքն էլ երևել է իրենց ու Նոքա լսել են Նորա ձայնն և ընկել Նորա ոտները. բայց աշակերտները չէին կամենում Նրանց էլ հաւատալ և անմխիթար մնացել էին:

Յիսուսի Քրիստոսի յարութեան վերայ խմացան Հրէաների ծերերն էլ, որոնք մատնեցին Նրան խաչելու: Յիսուսի գերեզմանի մօտ դրած պահապանները զարհուրած վազեցին քաղաք

և պատմեցին քահանայապետներին ամենը, ինչ պատահել էր։ Այն ժամանակ նոքա կանչեցին ժողովրդի ծերերուն և խորհրդումը վճռեցին կաշառել զինուորներուն, որ նոքա ամեն տեղ համբաւ սուտ տարածեն, թէ երբ իրենք քնած էին, աշակերտներն եկել են և գողացել Յիսուսի Քրիստոսի մարմինը։ Քահանայապետներն և ծերերը խոստացան պաշտպանել նրանց, եթէ Պիղատոսը կը կամենայ նրանց պատժել իրենց պարտաւորութիւնը, ինչպէս հարկն է, չկատարելուն համար։ Զինուորներն իրենց առաջարկած փողը ընդունեցին և տարածեցին այս սուտ լուրը Հրէաների մէջ։

ԳԼՈՒԽ ՂԴ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՅԱՅՏՆՎՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԳՆՈՒՄ ԷԻՆ ԵՄՄԱՒՈՒՍ

Ղուկ. իդ. 13.

Նոյն օրը արեգակի մտնելից փոքր ինչ առաջ աշակերտներից երկուսը՝ Ղուկաս և Կղէոփպաս գնում էին Եմմաուս գեղը, որոնք Երուսաղէմից շատ հեռու չէր։ Նոքա շատ տխուր էին և խօսում էին ամեն պատահածների և նորա վերայ, ինչ լսել էին սուրբ կանացմէ՝ Քրիստոսի աշակերտուհիներից։ Այն ժամանակ Ինքը Յիսուս Քրիստոս մօտեցաւ նրանց և գնում էր նոցա հետ. բայց նոքա չճանաչեցին Նրան։ Փրկիչը հարցրեց նրանց. «Ի՞նչ բանի վերայ էք խօսում և ինչո՞ւ այդպէս տխուր էք»։ Աշակերտներից մէկը, որի անունը Կղէոփպաս էր, պատասխանեց. «երևի դու ես միայն Երուսաղէմում, որ չգիտես այն, ինչ որ պատահեցաւ այն տեղ նորերումս»։

«Ի՞նչ է պատահել». հարցրեց Փրկիչը։ «Յիսուս Նազովրեցի, պատասխանեցին աշակերտները, «այն մեծ մարգարէի վերայ

չեմ լսել, որնոր գործքով և խօսքով հզօր եղաւ Աստուծոյ և մարդոց առաջին։ Միթէ չեմ լսել, ինչպէս մեր քահանայապետներն և իշխաններըը դատապարտեցին Նրան ՝ի մահ և խաչեցին։ Իսկ մենք յոյս ունէինք, որ Նա Ինքն է այն, որնոր պէտք է փրկէ Իսրայէլին։ Եւ ահա արդէն երրորդ օրն է, որ այս պատահեցաւ։ Բայց այս օր մի քանի կանայք, որոնք գնացել էին Նորա գերեզմանը, չէին գտել այն տեղ Նորա մարմինը։ Նոքա ասում են, որ տեսել են հրեշտակներուն, որոնք յայտնել են Նրանց, թէ Նա կենդանի է։ Եւ մեզնից էլ մի քանիսը գնացին նմանապէս գերեզմանը. Նոքա ամեն բան այնպէս գտան, ինչպէս կանայք ասում էին, բայց Նրան Իրեն չտեսան»։ Աշակերտները պատմեցին ամենը, ինչպէս պատահել էր Երուսաղէմում, մինչև իրենց դուրս գալու ժամանակը։

«Ո՞վ անմիտներ, պատասխանեց Փրկիչը, և հեղգասիրտներ հաւատալու այն ամենը, ինչ որ ասել են Մարգարէները, Միթէ՞ չգիտէք, որ Քրիստոս առաջ պէտք է չարչարվէր և յետոյ մտնէր Իր փառաց մէջ»։ Յետոյ սկսաւ Նա մեկնել մարգարէութիւնները Մեսիայի վերայ ամեն մարգարէների գրուածքներից, սկսած Մովսէսից։

Այսպէս խօսելով եկան Եմմաուս։ Յիսուս Քրիստոս յայտնեց, որ կամենում է առաջ գնալ. բայց երկու աշակերտներն էլ համոզում էին Նրան մնալ իրենց հետ ասելով, թէ օրը արդէն տարաժամ է։ Նա համաձայնեցաւ մտնել նոցա հետ տուն։

Ընթրիքի ժամանակ Տէրը՝ Յիսուս առաւ հաց, օրհնեց այն և կոտորելով տուեց աշակերտներին։ Այն րոպէում աշակերտները ճանաչեցին Նրան։ Նոցա աչքերը բացվեցան։ Նոքա տեսան Նորա հեզ և ողորմած երեսն, որնոր փայլում էր բարութիւնից. բայց Տէրը յանկարծ անհետացաւ նրանցից։

Նոքա ուրախացած յոյժ աղաղակեցին. «առաջ մենք էլ չճանաչեցինք Նրան։ Մեր սրտերը չէ՞ն ճմրլվում, երբ ճանա-

պարհին նա մեկնում էր մեզ մարգարէութիւններն»։ Առանց մի բոպէ ուշանալու նոքա վեր կացան սեղանից ու չնայելով գիշերի մօտենալուն շտապեցին դառնալ Երուսաղէմ, ցանկանալով շուտով հաղորդել այս աւետիքը միւս աշակերտներին էլ։

Նոքա բոլոր Առաքեալներուն և աշակերտներից շատերուն գտան միասին ժողոված. նոքա էլ նոյն աւետիքը ունէին, որոնք շտապեցին հաղորդելու եկողներին։ Յիսուս Քրիստոս՝ ապաշխարող մեղաւորների ողորմած բարեկամը յայտնվեցաւ Պետրոսին, որոնք լալիս էր իր ուրացութիւնը։ Երբ այս եկողներուն տեսան Առաքեալներն, ընդունեցին նրանց ուրախ աղաղակով. «Տէրը յիրաւի յարութիւն է առել. նա երևեցաւ Սիմոնին»։ Ղուկան և Կղէոպասն էլ իրենց կողմից պատմեցին, ինչպէս իրենք խօսեցան նորա հետ և ճանաչեցին նրան հացը կտրելիս։

ԳԼՈՒԽ Դ.

ՓՐԿԻՉԸ ՅԱՅՏՆՎՈՒՄ Է ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻՆ

Ղուկ. իգ. 36. Յովհ. ի. 19.

Այն օրը, երբ Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ, երեկոյեան ուշ Առաքեալները հաւաքվեցան միասին և փակեցին ան դռները, վախենալով Հրէաների հալածանքից։ Նոքա խօսում էին ամեն բաների վերայ, ինչ որ պատահել էր. նրանցից մի քանիսը դեռ հաստատ չէին հաւատում Տիրոջ Յիսուսի յարութեանը։ Յանկարծ տեսան նոքա Իրեն Յիսուսին իրենց առաջը կանգնած։ «Խաղաղութիւն ձեզ» ասաց նա նրանց։

Այդը պաշարեց Առաքեալներուն։ Նոքա կարծում էին թէ տեսնում են մի անմարմին ոգի. բայց Փրկիչը ասաց նրանց. «Ի՞նչ է խռովում ձեզ և ինչու երկմտում է՛ք։ Տեսէ՛ք Իմ ձեռները և ոտները. նա ինքս եմ։ Շօշափեցէ՛ք Ինձ և հաւատացէ՛ք։

ոգին չունի ոչ մարմին և ոչ ոսկր, որոնք Ես ունիմ»։ Նա ցոյց տուեց աշակերտներին Իր վերարուած ձեռներն, ոտներն և կողքը։ Բայց տեսնելով, որ Աստաքեաններն ուրախութիւնից իրանց էլ մոռացել էին և դեռ էլի չէին հաւատում այսպիսի մեծ բաղդաւորութեան, Յիսուս Քրիստոս ասաց. «ունիք կերակուր»։ Նոքա տուին Նրան խորոված ձուկն և մեղրի խորիսխ։ Փրկիչը աշակերտների առաջին կերաւ այս կերակուրներից։

Յետոյ Յիսուս Քրիստոս կրկին ասաց Նրանց. «խաղաղութիւն ձեզ. ինչպէս Իմ Հայրս ղրկեց Ինձ, այնպէս էլ Ես ձեզ ղրկում եմ»։

Այս ասելով փչեց Նրանց վերայ ու ասեցրեց. «առէք Սուրբ Հոգին. նոքա որոնց դուք կ՝արձակէք մեղքից, թողութիւն կ՝ստանան. իսկ որոնց դուք չէք արձակիլ, չին ստանալ այն»։

Սորա հետ միասին Յիսուս Քրիստոս թաց արաւ Աստաքեանների միտքը, որ հասկանան Գիրքը։ Այսպէս գրել են մարգարէներն, ասաց Նա Նրանց. «այսպէս պէտք է չարչարվէր Քրիստոս (խոստացեալ Մեսիան) և յարութիւն առնէր մեռելներից երրորդ օրը»։

Այս ասելով Փրկիչը աներևոյթ եղաւ Նրանցից, ինչպէս էլ որ յայտնվել էր, չնայելով, որ տան դռները փակած էին։ Մտածէ, թէ ո՞րքան մեծ է և երևելի Քրիստոսի Յարութեան օրը։ Այս օրում Յիսուս Քրիստոս գերեզմանից վեր կացաւ և երևեցաւ Իր աշակերտներին։ Այս օրը, որնոր առաջինն է շաբաթի մէջ պէտք է սուրբ լինի մեզ համար։ Ինչպէս մինչև Քրիստոսի յարութիւնը սրբվում էր շաբաթ օրը աշխարհի և մարդու ստեղծագործութեան յիշատակի համար, այնպէս էլ այժմ մենք պէտք է սրբենք յարութեան օրը, Քրիստոսով եղած մեր նորոգութեան օրը. օրը, երբ Յիսուս Քրիստոս վեր կենալով գերեզմանից հաւատի արաւ մեզ մեր յարութեան մասին։ Յարութեան օրը անմահութեան օրն է, նորածնութեան

օր է մեր յաւիտենական կեանքի համար։ Եկէք նուիրենք այն օրը առանձնապէս բարի գործերի։

ԳԼՈՒԽ ՂԶ.

ԹՈՄԱՅԻ ՀԱՒԱՏԱԼԸ

Յովհ. գ. 24.

Այն ժամանակ, երբ Փրկիչը յայտնվեցաւ Իւր աշակերտներին, տասնմի Առաքեալներից մէկը՝ Թովմասը այն տեղ չէր։ Երբ նա դարձաւ, միւս Առաքեալներն ասացին նրան. «Մենք տեսանք Տիրոջը։ Բայց Թովմաս չհաւատաց նրանց և պատասխանեց. «ես չեմ հաւատալ, մինչև ինքս չտեսնեմ Նորա ձեռների մեխերի վէրքերն և չշօշափեմ նրանց և չդնեմ ձեռս Նորա վիրաւորեալ կողքի վերայ։ Սրանից յետոյ ութերորդ օրում այսինքն նոյնպէս կիրակի, բոլոր աշակերտները կրկին ժողովեցան միասին, նոցա հետ էր Թովմասն էլ։ Դռները նմանապէս փակած էին։ Յանկարծ Յիսուս Քրիստոս կանգնեցաւ նոցա առաջին և ասաց. «Խաղաղութիւն ձեզ»։ Յետոյ դառնալով դէպի Թովմասն ասաց. «մօտեցրու մատդ և տես Իմ ձեռներս, բեր ձեռքդ և դիր Իմ կողքիս վերայ։ Այժմ էլ անհաւատ մի՛ լինիր. այլ հաւատա»։ Թովմասն աղաղակեց. «ո՞վ Տէր իմ և Աստուած իմ»։— Յիսուս Քրիստոս ասաց. «դու հաւատացիր ինձ տեսնելով. բայց երանի նոցա, որոնք չտեսած կ՚հաւատան ինձ»։

ԳԼՈՒԽ ՂԷ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՅԱՅՏՆՎՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՏԻԲԵՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՄՕՏ

Յովհ. իա. 1.

Երբ Զատիկն անցաւ, տասնմի Առաքեալներն Երուսաղէմից

գարձան Գալիլիա։ Այս տեղ մի անգամ Սիմոն Պետրոսը, Թովմասն և Նաթանայէլը, Զեբեդեայ երկու որդիքը՝ Յակոբն և Յովհաննէսն և էլի Յիսուսի միւս երկու աշակերտները հաւաքվեցան միասին։ Սիմոնին Պետրոսն ասաց. «ես գնում եմ ձուկ բռնելու»։—Մենք էլ կ՚գանք քեզ հետ». ասացին միւսները. նոքա նստան նաւակն և գնացին ոտսալու. բայց բոլոր գիշերն ոչինչ չբռնեցին։

Երբ առաւօտ եղաւ, Յիսուս Քրիստոս երևեցաւ ափի մօտ. բայց աշակերտները չ՚ճանաչեցին Նրան։ «Մանուկներ, ունի՞ք ուտելու բան», հարցրեց Նա։ Աշակերտները պատասխանեցին, թէ ոչինչ ունեն. որովհետև բոլոր գիշերն ոչինչ չէին կարողացել բռնել։ Այն ժամանակ Փրկիչն ասաց. «գցեցէ՛ք ուռկանը նաւակի աջ կողմում և կ՚բռնէք»։ Նոքա կատարեցին Տիրոջ հրամանն և ձկան բազմութիւնից չէին կարողանում ուռկանը դուրս քաշել։

Այն ժամանակ Յիսուսի սիրելի աշակերտը՝ Յովհաննէսը ասաց. «այս Տէրն է»։ Պետրոսն այս որ լսեց, հագաւ շորը, որովհետև մերկ քաշում էր ուռկանը։ Նա ընկաւ լճի մէջ և շտապում էր լողալու դէպի ափը։ Միւս աշակերտները նաւեցին և իրենց հետ քաշեցին ուռկանն էլ, որնոր լի՝քն էր ձկներով։

Երբ նոքա ափը դուրս եկան, կրակատեղ, որի վերայ ձուկն էր դրած և հաց։ Յիսուս Քրիստոս ասաց. «բերէ՛ք ձեր բռնած ձկներից»։ Պետրոս նոյն րոպէում մտաւ նաւի մէջ, քաշեց ուռկանն և գտաւ նորա մէջ հարիւր յիսուն երեք մեծ ձկներ։ Չնայելով այսպիսի մեծ բազմութեան, ուռկանը էլի չպատռվեցաւ։ Այս հանգամանքը հաւատացրեց սուրբ Առաքեալներուն, որ Ինքն Տէրը նոցա հետ է։

Յիսուս Քրիստոս ասաց նրանց. «եկէ՛ք, ճաշակեցէ՛ք»։ Ամենքը նստան կրակի չորս կողմում։ Ոչ ոք չէր համարձակվում հարցնել, «ո՞վ ես Դու»։ Որովհետև ամենքը գիտէին, որ Նա

Տէրն է։ Յիսուս Քրիստոս առաւ հաց, կոտրեց այն և տուեց Իր աշակերտներին, նոյնպէս էլ ձուկը։ Ճաշի ժամանակ Փրկիչն ասաց Սիմոն Պետրոսին. «Սիմոն Յովհաննու, սիրո՞ւմ ես Ինձ աւելի քան դրանց»։ Պետրոսը պատասխանեց. «Տէր Դու գիտես, որ սիրում եմ Քեզ»։ «Արածի՛ր Իմ ոչխարներս». ասաց նրան Փրկիչը։

Յետոյ Յիսուս Քրիստոս էլի միւսանգամ հարցրեց. «Սիմոն Յովհաննու, սիրում ե՞ս Ինձ»։ Պետրոսը պատասխանեց. «Տէր, Դու գիտես, որ ես սիրում եմ Քեզ»։—«Արածի՛ր Իմ ոչխարներս». ասաց Փրկիչը։

Վերջապէս Տէրը հարցեց երրորդ անգամ. «Սիմոն Յովհաննու. սիրո՞ւմ ես Ինձ»։ Այս հարցմունքի կրկնութիւնը տրխրեցրեց Պետրոսին և նա պատասխանեց. «Տէր, Դու ամէն բան գիտես, որ ես Քեզ սիրում եմ»։ Յիսուս Քրիստոս էլի ասաց նրան. «արածի՛ր Իմ ոչխարներս։ Ճշմարիտ եմ ասում Քեզ, երբ դու մանուկ էիր, ինքդ էիր գօտիդ կապում և գնում, ուր կամենում էիր, բայց երբ կ՝ծերանաս, ձեռներդ կ՝բարձրացնես, ուրիշը կ՝կապէ գօտիդ ու կ՝տանէ այն տեղ, ուր դու չես կամենում»։—Այս խօսքերը նշանակում էին, թէ ինչպիսի մահով Պետրոս պէտք է փառաւորէր Աստուն։ Յետոյ Տէրը աւելացրեց. «եկ Իմ ետևից»։

Այսպէս ներեց Տէրը Իրեն ուրացող Պետրոսին, որնոր երեք անգամ այժմ հաւատացրեց, որ Նրան սիրում է։ Միայն այս երեք անգամ արած հարցմունքովը սիրոյ վերայ յիշեց Տէրը նրան երեք անգամ ուրանալն ու, տեսնելով նորա մոերիմ սէրը, նորոգեց նորա Առաքեալ անունը։

ԳԼՈՒԽ ՂԸ.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՅԱՅՏՆՎՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԳԱԼԻԼԻԱՅԻ ՍԱՐԵՐԻՑ ՄԷԿԻ ՄՕՏ

Մատ. իբ. 16.

Տաճմի Առաքեալները, Յիսուսի Քրիստոսի հրամանով, ժողովեցան Գալիլեայում մի սարի վերայ։ Նա երևեցաւ նրանց և ամենքը նրան տեսնելիս գետնի վերայ ընկան և երկրպագութիւն տուին նրան։ Այս ժամանակ Յիսուս Քրիստոս իշխանութիւն տուեց Իր աշակերտներին մարդոց ճշմարտութեան ճանապարհն ուսուցանելու և երկնային արքայութիւնը մտցնելու։ Նա խոստացաւ նրանց, որ Ինքը կ՝օգնէ և միշտ նրանց հետ կ՝լինի։

«Ինձ տուած է ամեն իշխանութիւն երկնքում և երկրի երեսին։ Ասաց նա, գնացէք և քարոզեցէք ամեն ազգերին, մկրտելով նրանց Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով։ Սովորեցրէք նրանց պահել այն ամենն, ինչ որ Ես ձեզ պատուիրեցի։ Ով կ՝հաւատայ և կ՝մկրտվի, նա կ՝փրկվի. իսկ ով չի հաւատալ, կ՝դատապարտվի։ Հաւատացողների նշաններն այն կ՝լինի, որ նոքա Իմ անունովս դևերուն կ՝հալածեն, լեզուներ կ՝խօսեն, անվնաս ձեռները կ՝առնեն օձերուն և նոցա մահաբեր թոյներից անվնաս կ՝մնան, հիւանդների վերայ ձեռները դնելով կբժշկեն ամեն ցաւեր»։

Խօսելը վերջացնելիս Տէրը ասաց, որ Ես ձեզ հետ կ՝լինիմ մինչև յաւիտեան։

ԳԼՈՒԽ ՂԹ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Ղուկ. իգ. 49.

Յիսուս Քրիստոս Իւր յարութիւնից յետոյ երկրիս վերայ

մեաց քառասուն օր։ Նա ոչ միայն յայտնվեցաւ աշակերտներին, ինչպէս վերևը ասացինք, այլ խօսեցաւ երկար նոցա հետ, ճաշեց նոցա հետ ու սովորեցրեց նրանց Աստուծոյ արքայութեան գաղտնիքը։ Պէնդէկոստէի օրից տասն օր առաջ ամէն Առաքեալները ժողովեցան Երուսաղէմում, այս տեղ վերջին անգամ Տէրը յայտնվեցաւ նրանց և հրամայեց նրանց չհեռանալ Երուսաղէմից, մինչև իջնի նոցա վերայ խոստացած շնորհքը Սուրբ Հոգուց։ «Ես կ՚ղրկեմ ձեզ Իմ Հօրս խոստացածը», ասաց Փրկիչը. «մնացէ՛ք Երուսաղէմումը մինչև կ՚ստանաք զօրութիւն վերևից։ Սուրբ Հոգուց զօրութիւնը ստանալից յետոյ կ՚քարոզէք Աւետարանը Երուսաղէմում, Հրէաստանում, Սամարիայում և երկրիս ամենահեռու ծայրերում»։

Այս ասելից յետոյ Յիսուս Քրիստոս հանեց Իր աշակերտներուն Երուսաղէմից, տարաւ մինչև Բեթանիա և եկաւ Ձիթենեաց լերան գլուխը։ Այս տեղ բարձրացրեց ձեռները, օրհնեց Իր աշակերտներուն և այս օրհնութեան ժամանակ համբարձաւ երկինք։ Ամպը հովանի եղաւ նրան և պահեց աշակերտների աչքերից։ Փրկիչը փառքով բարձրացաւ երկինքը, ուր նստած է Հօր աջ կողմումը։

Աշակերտներն, որոնք վկայ էին այս փառաւոր համբարձմանը, դեռ նայում էին երկինքին և ահա երկու հրեշտակներ յոյս շորերում երևեցան նրանց և ասացին. «ով Գալիլիացի մարդիկ, ի՞նչ է կանգնած երկնքին նայում։ Այս Յիսուսը, որնոր համբարձաւ, կրկին կ՚գայ աշխարհ»։ Աշակերտներն ընկան երկրպագութիւն տուին համբարձեալ Տիրոջը։ Յետոյ ուրախութեամբ դարձան Երուսաղէմ, ուր անդադար լինում էին տաճարի մէջ, Աստծուն փառաւորելով և օրհնելով։

Այսպէս վերջացաւ Յիսուսի Քրիստոսի երկրիս վերայ բնակութիւնը։ Նորա երկրաւոր կեանքն էր անընդհատ բարերարութիւն և Նա թողեց երկրիս օրհնելով աշակերտներուն և

ամեն հաւատացողներուն։ Նա չհեռացաւ Իրեն հետևողներից, այլ միշտ անբևեռթ կերպով է Սուրբ Եկեղեցւոյ և ամեն հաւատացողների հետ։

ԳԼՈՒԽ Ճ.

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅ ԳԱԼՈՒՍՏԸ

Գործ. Առաք. բ. 1.

Առաքեալները մնացին Երուսաղէմում սպասելով Իրենց խոստացած շնորհքին՝ Սուրբ Հոգւոյ գալստեանը։ Նոքա անց էին կացնում ժամանակն անդադար աղօթքով։ Մի օր Սուրբ Պետրոսը առաջարկեց միւս Առաքեալներին, Յիսուսի եօթանասուն աշակերտներից ընտրել տասն և երկրորդ Առաքեալին Յուդա Իսկարիովտացու տեղ։ Յիսուս Քրիստոսին հաւատացողները բոլոր 120 հոգի էին այս ժամանակ։ Նոքա Իրենցից երկուսին ընտրելով և Տիրոջ աղօթելից յետոյ, վիճակ գցեցին և վիճակը ընկաւ Մատաթիային, որոնք և համարվեցաւ տասներկու Առաքեալների թվումը։

Տիրոջ համբառնալից տասն օր յետոյ եղաւ Պէնտէկոստէ աօնը, որոնք նշանակած էր օրինաց յիշատակի համար, որոնք Աստուած Սինա լեռան վերայ Մովսէսի ձեռքով տուեց։

Այս հանդէսի ժամանակ Երուսաղէմը լցվեցաւ բազմութեամբ բարեպաշտ Հրէաների, որոնք եկել էին այստեղ ամեն կողմերից։ Բոլոր տասներկու Առաքեալները միասին էին, նոցա հետ էր նմանապէս Տիրոջ Յիսուսի Մայրը՝ Սուրբ Մարիամն և հարիւրից աւելի Յիսուսի աշակերտներ և աշակերտուհիներ։ Նոքա ամենքը հաւաքվել էին վերնատան մէջ Սիոնի վերայ։ Յանկարծ լսվեցաւ մեծ ձայն երկրի մի սաստիկ հողմի և բոլոր

վերնատունն, ուր աշակերտներն էին, լցվեցաւ լուսով։ Ամէն ներկայ գտնուողների գլխներին վերայ երևեցաւ բոց, կրակէ լեզուների ձևով։ Այս բոպէում աշակերտներն ընդունեցին Սուրբ Հոգուն, որոնք նրանց Փրկիչը խոստացել էր։ Նոքա զգացին իրենց մէջ յանկարծ հրաշալի փոփոխութիւն։ Նոքա սկսան այլ և այլ լեզուներ խօսել, ինչպէս և Սուրբ Հոգին տալիս էր նրանց։ Նոցա միտքը լուսաւորվեցաւ վերին լուսաւորութեամբ, նոցա սիրտը լցվեցաւ Աստուծոյ շնորհքի անճառելի քաղցրութեամբը և նոքա զգացին արիութիւն յարուցեալ Մեսիայի Աւետարանը բոլոր աշխարհիս առաջին քարոզելու։ Նոցա առաջվան երկչոտութիւնը բոլորովին կորաւ։

Այս ծագած ձայնը լսելի եղաւ ժողովրդի մէջ էլ, շատ հեռաքրքիր մարդիկ հաւաքվեցան այն տան մօտ, ուր գտնվում էին Յիսուսի աշակերտները։ Այս ժողովածների մէջ կային շատ Հրէաներ, որոնք օտար տէրութիւններում բնակում էին. նոքա եկել էին Երուսաղէմ Պենտեկոստէի տօնի համար։ Այս եկողները լսել էին Յիսուսի աշակերտների վերայ և զարմանում էին տեսնել հասարակ և անկիրթ մարդոց, որոնք խօսում էին Գալիլիացւոց կոպիտ լեզուով։ Ինչպէս նկարագրենք նոցա զարմանքն երբ նոքա տեսան Առաքեալներուն, որոնք քարոզում էին Աստուծոյ գործքերն և Քրիստոսի վերդարձութիւնը ամէն յայտնի լեզուներով։ Հրէաները ասում էին մէկ մէկու. զարքա ամենքը Գալիլիացիք չէ՞ն, բայց ի՞նչպէս նոքա խօսում են ամէն մեզ ծանօթ լեզուներն։ Ի՞նչ պէտք է լինի այս հրաշքը։ Ոմանք ծիծաղում էին Քրիստոսի աշակերտների վերայ և հաստատում էին, թէ նոքա հարբած են։ Թեթևամիտ և չարամիտ մարդիկ միշտ կ՚գտնեն պատճառ ծաղր անելու և չարաբանելու։

Այն ժամանակ Պետրոս Առաքեալը բարձրանալով մի բարձր տեղ, որ տեղից երևում էր նա բոլոր հաւաքված ժողովրդին, մեկնեց պատճառը այս հրաշալի երևոյթի։ «Ո՞վ Իսրայելացիք,

ասում էր նա, դուք գիտէք Նազովրեցի Յիսուսին, այն Մարդուն, որին Աստուած էլ վկայեց զանազան հրաշքներով, որոնք գործեց նորա ձեռքով։ Դուք մատնեցիք նրան անօրիններին և բևեռեցիք խաչի վերայ. բայց Աստուած յարութիւն տուեց նրան, քակեց մահուան կապերն, որոնք նորա վերայ չ՝կարողացաւ իշխանութիւն ունենալ։ Նորա վերայ գրեց Դաւիթ ասելով. «Լեռ թողնիլ իմ հոգիս դժոխքումը և քո Սրբիդ չես թողնիլ ապականութիւն տեսանել»։ *) Մենք եղանք վկայ նորա յարութեանն և երկինք համբառնալուն։ Այս իսկ Յիսուսիը, որոնք բարձրացաւ երկինք, զրկեց մեր վերայ Սուրբ Հոգուն, որին դուք իրենքդ էք վկայ։ Ապաշխարեցէք և մկրտվեցէք Յիսուսի Քրիստոսի անունով, մեղքերիդ թողութիւն ստանալու համար, որ դուք էլ կարողանաք ընդունել Սուրբ Հոգւոյ շնորհքը։ Նա խոստացաւ նրան ձեզ էլ և ձեր որդւոցն էլ։ Տէրը հրաւիրում է ամենուն»։ Այս օրում մկրտվեցան մօտ երեք հազար հոգի։ Յետոյ հաւատացեալների թիւը օրից օր աւելանում էր։

Այսպէս ծնվեցաւ առաջին քրիստոնէական Պենտեկոստէն. այս օրը մինչև հիմիկ էլ ծնում է Սուրբ եկեղեցին, Քրիստոսի յարութիւնից յիսուն օր յետոյ։ Այս օրը, երբ բնութիւնը զարդարվում է նոր ծաղիկներով, մեր տաճարներն էլ զարդարվում են հոգևոր ծաղիկներով և կանաչով. մենք ծնում ենք Սուրբ Հոգուն և փառաւորում ենք Սուրբ Երրորդութիւնը՝ Հօրը, Որդուն և Սուրբ Հոգուն։ Երրորդութիւնը, որոնք կենդանարար, միագոյ և անբաժանելի է, մենք աղօթում ենք նրան, որ թողնէ մեր մեղքերը, զօրացնէ մեզ Սուրբ Հոգւոյ զօրութեամբ բարի գործերի համար, որ պահպանէ մեզ ամեն չարից, նոյպէս աղօթում ենք, որ հանգուցանէ մեր ննջեցեալ ծնողների, եղբայրների և բարեկամների հոգիները։

---

*) Սաղմ. ժե. 10.

ԳԼՈՒԽ ՃԱ.

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱԼԱԾԱՆՔԸ

Գործ. դ. եւ դ.

Գարնանային հողմերը աւելի օգուտ են բերում երկրին, քան թէ վնաս. նոքա մաքրում են օդն և իրենց փչելովը ցրվում են պղտոր սերմերն։ Այսպէս էլ առաջին հալածումն Աշակերտների դէմ տարածեց Քրիստոնէական հաւատի սերմերը։

Փոքր ժամանակից Պենտեկոստէի ետնից յետո Պետրոս և Յովհաննէս Առաքեալները միասին գնացին տաճարը աղօթելու։ Դէպ արևելք դրան առաջ, որոնք անվանում էր գեղեցիկ, նստած էր մի կաղ աղքատ։ Այս ողորմելին էր մօտ քառասուն տարեկան և յայտնի էր Երուսաղէմում ամենին. գիտէին, որ նա ծնած էր կաղ։ Նա տեսնելով Առաքեալներուն ներս մտնելիս, ողորմութիւն խնդրեց։ Բայց Սուրբ Պետրոսն ասաց նրան. «Ես չունիմ ոսկի և արծաթ. այլ տալիս եմ, ինչ որ ունիմ. Յիսուս Քրիստոսի անունով վեր կաց և մտն ե՛կ»։ Առաքեալը այնպէս հաւատի էր իր խօսքի զօրութեանն, որ ձեռը դցեց կաղին, որ օգնէ նրան կանգնելու և նոյն րոպէում կաղը բժշկվեցաւ. նա վեր թռաւ տեղից և առաքեալների հետ միասին մտաւ տաճարը գովելով և փառաւորելով Աստուն։ Ամենքը, որոնք տաճարումն էին, շրջապատեցին Առաքեալներուն և զարմանում էին կատարված հրաշքի վերայ։ Բայց Սուրբ Պետրոսը չկամենալով լսել գովասանքներ ասաց, որ ինքն իր զօրութիւնովն ոչ մի հրաշք չէ կարող գործել ճշմարիտ քրիստոնեայն երբէք չի սեփականացնիլ իր իմաստութեան և զօրութեան այն, ինչ որ կատարել է նա Աստուծոյ զօրութեամբ և իմաստութեամբ։ Պետրոսը ասում էր ժողովրդին, որ այն կաղը բժշկվել է ոչ թէ

իրենից, այլ Յիսուսի Քրիստոսի անունով, որին Աստուած յարութիւն տուեց։

Քահանայապետներն, որոնք տաճարում էին և լսել էին, որ Առաքեալները Յիսուսի Քրիստոսի անունով բժշկում են և տարածում են նորա վարդապետութիւնը, հրամայեցին պահապաններին բռնել նրանց և ինչպէս յանցաւորներու բանտը դնել, ուր թողին նրանց մինչև միւս առաւօտը։ Բայց չնայելով խիստ միջոցներին, նոյն իսկ օրը Քրիստոսի հաւատացեալների թիւը բազմացաւ մինչև հինգ հազար։ Սերմերն, որոնք Քրիստոսը ցանեց, տալիս էին պտուղ, հունձի ժամանակը մօտեցաւ։

Միւս օր առաւօտը Առաքեալներուն բերին մի և նոյն դատաւորի առաջ, որոնք 'ի մահ դատապարտեցին Յիսուս Քրիստոսին, բայց նոքա շուտ ազատվեցան, չնայելով որ բոլոր դատաւորների ժողովի առաջին ասում էին, թէ Աստուած յարութիւն տուեց Հրէաների խաչած Նազովրեցի Յիսուսին և թէ ոչ մի կերպիւ հնար չկայ փրկութեան. բայց միայն հաւատալով Նրան։ Քահանայապետներն և ծերերն արգելում էին առաքեալներին շարունակել իրենց վարդապետութիւնն և քարոզելը Յիսուսի վերայ. բայց նոքա պատասխանեցին. «դուք իրենքդ դատեցէք, ում պէտք է աւելի հնազանդ լինենք, Աստուծոյ, թէ ձեզ։ Ծերերն և օրինականները Առաքեալների հաստատութիւնը տեսնելով շատ սպառնալից յետ թողին նրանց. որովհետև վախենում են ժողովրդից, որոնք վկայ լինելով կաղի հրաշալի կերպիւ բժշկվելուն, փառաւորում էր Աստծուն։

Պետրոս և Յովհաննէս Առաքեալներն, երբ դարձան իրենց եղբայրների մօտ, պատմեցին նրանց Հրէաների ծերերի և օրինականների սպառնալիքն։ Այն ժամանակ ամեն Առաքեալներն և աշակերտները Յիսուսի միաձայն աղաղակեցին. «Տէր Աստուած, որ ստեղծեցիր երկինքն և երկիրը և ծովն և ինչ որ նոցա մէջն են, Դու քո ծառայիդ Դաւթի բերանով ասացիր. «ինչու են

խռովում հեթանոսներն և ժողովուրդները ստածում են սնոտիք։ Յանդիման եղան թագաւորներն երկրիս և իշխանները ժողովեցան Տիրոջ և Նորա Օծեալի վերայ։ Ճշմարտիւ այս քաղաքումը Քո Սուրբ Որդւոյ Յիսուսի դէմ, որին Դու օծեցիր, վեր կացան Հերովդէս և Պոնտացի Պիղատոսը հեթանոսների և Հրէաների հետ, որ կատարեն այն, ինչ որ առաջվանից սահմանել էին քո ձեռքդ և կամքդ։ Եւ այժմ նայիր, Տէր, նոցա սպառնալիքներին և տուր Քո ծառաներիդ զօրութիւն համարձակութեամբ քարոզելու Քո խօսքդ։ Զդիր ձեռքդ հրաշքներ գործելու Քո Սուրբ Որդուդ Յիսուսի անունով։—Այս աղօթքից յետոյ այն տեղը, ուր կանգնած էին Առաքեալները, շարժեցաւ և ամենքը լցվեցան Սուրբ Հոգւով. համարձակութեամբ քարոզում էին Աստուծոյ բանը վկայելով Յիսուսի Քրիստոսի յարութեանը։

ԳԼՈՒԽ ՃԲ.

ՅԱՂԹԱՆԱԿՈՂ ԵԿԵՂԵՑԻՆ

Գործ. Ե.

Շատ Հրէաներ Երուսաղէմում հաւատացին Յիսուս Քրիստոսին։ Նոքա բնակում էին միմեանց հետ միաբան և ունէին, կարծես թէ, մի սիրտ և մի հոգի. ուստի և իւրաքանչիւր աշակերտներն էին Յիսուսի Քրիստոսի, որոնք ասաց. սիրոնքն, որոնք դուք միմեանց վերայ կ՚ունենաք, կ՚ճանաչեն ձեզ, որ Իմ աշակերտներս էք։ Նոքա մեծ ուշադրութեամբ լսում էին Առաքեալների խրատներն և հետևում էին նրանց ճշդութեամբ. գնում էին ամեն օր տաճար և աղօթում էին միասին, ժողովում էին տներում հացը կոտրելու և Յիսուսի Քրիստոսի մարմնին և արիւնին հաղորդվելու համար, ինչպէս նա կարգեց այն Իր խորհրդաւոր ընթրիքն աշակերտների հետ, յետոյ

միասին ճաշում էին հասարակաբար և մեծ ուրախութեամբ։ Ոչինչ գանձի չը ցանկանալով երկրիս վերայ. այլ մտածելով միայն Յիսուսի Քրիստոսի Արքայութեան և յաւիտենական կեանքի վերայ, նոքա յետ կեցան ամէն երկրաւոր բարութիւններից։ Երբ հաւատացեալների թիւը բազմացաւ, Առաքեալները կարևոր համարեցին ընտրել Սարկաւագներ կամ իրենց օգնականներ, որոնց վրայ դրին հասարակաց ստացուածքի կառավարութեան և կերակուր բաժանելու հոգը։ Սարկաւագներ նմանապէս ունէին հրաման քարոզելու և մկրտելու։ Առաքեալները տուին նրանց այս կարգն իրենց ձեռնադրութեամբն ու յարմար աղօթքներ ասելով։ Իսկ իրենք Առաքեալները, թողնելով հասարակութեան երկրաւոր կարիքների հոգը, պարապում էին միայն աղօթքով և աստուծոյ պատուիրանքները քարոզելով։

Հաւատացեալների թիւը ժամից ժամ աւելանում էր։ Առաքեալները գործում էին անթիւ հրաշքներ, նոցա մօտ գալիս էր ժողովուրդը բոլոր շրջակայ քաղաքներից և գեղերից։ Հիւանդներուն գնում էին մինչև ճանապարհի վերայ անգամ, ուր պէտք է անցնէր Սուրբ Պետրոսն, որ այս ողորմելիները միայն Սուրբ մարդու ստուերին հանդիպելով կարողանան ստանալ բժշկութիւն։ Այսպէս Յիսուս Քրիստոս Իր հեռանալից յետոյ էլ նոյնպէս բաց յայտնում էր Իր սէրը մարդոց և Իր ամենակարողութիւնն, ինչպէս երբ Ինքն երկրիս վերայ էր։ Առաքեալների գործոց բոլոր պատմութիւնն է մի շղթայ հրաշալի գործքերի, որոնք կատարվում էին Յիսուս Քրիստոսի անունով ամենչվող մարդկութեան օգտի համար։

Քահանայապետներն և միւս մեծերն ազգի լսելով այս հրաշքների վերայ աւելի ևս զայրացան առաքեալների դէմ։ Մի երեկոյ նոքա հրամայեցին նրանց ամենին բռնել և գցել քաղաքի բանտը, ուր բռնած էին յանցաւորները։ Բայց նոյն իսկ գիշերում Աստուծոյ հրեշտակը բաց արաւ բանտի դռներն

և ասաց նրանց. «գնացէք տաճարը, յայտնվեցէք մարդոց և քարոզեցէք կենաց պատգամներն»։ Առաւօտն Առաքեալները եկան տաճար և ուսուցանում էին ժողովրդին։

Իսկ այս միջոցին քահանայապետը հաւաքեց բարձրագոյն ատեանն և մարդ ղրկեց բանտ Առաքեալներուն բերելու. միայն ծառաները նրանց բանտումը չգտնելով դարձան քահանայապետի մօտ և իմաց տրին նրան, որ բանտը գտան փակած և պահապաններուն դրան մօտ կանգնած. բայց մէջում ոչոք չկար։ Երբ այս լուրը լսեցին քահանայապետներն և ամէն միւս անձինք, որոնք նորա հետ էին, տարակուսութեան մէջ ընկան։ Իսկ այս ժամանակ մէկ մարդ եկաւ ժողովի առաջ և ասաց, թէ Առաքեալները տաճարումն են և ուսուցանում են ժողովրդին։ Այն ժամանակ պահապանների գլխաւորը ծառաներով գնաց նոցա ետևից և բերեց նրանց քահանայապետի առաջը. միայն ոչինչ բռնութիւն չգործածեց, որովհետև վախենում էր ժողովրդից։

Քահանայապետն ասաց ատեանի առաջին կանգնած առաքեալներին. «մենք ձեզ չարգելեցի՞նք ուսուցանելու այս անունով»։ (Նա այնպէս ասում էր Յիսուս Քրիստոսին, մինչև չէր կամենում արտասանել Նորա անուն անգամ)։ Իսկ դուք լցրիք ձեր ուսումով Երուսաղէմն և կամենում էք մեր գլխին բերել Այն Մարդու արիւնը»։

Սուրբ Պետրոսն և միւս առաքեալները պատասխանեցին. «Աստծուն աւելի պէտք է հնազանդենք, քան թէ մարդոց։ Մեր հայրերի Աստուածը յարութիւն տուեց Յիսուսին, որին, դուք խաչեցիք։ Աստուած բարձրացրեց Նրան Իր աջումն և դրեց Նրան մարդոց առաջնորդ և Փրկիչ. Նա կանչում է ամէն Իսրայէլացիներուն ապաշխարելու և մեղացը թողութիւն է տալիս։ Այս ամէն եղածների վկայ ենք մենք և Սուրբ Հոգին, որոնք Աստուած տուեց Իրեն հնազանդվողներին»։

Այս խօսքերն որ լսեցին քարձրագոյն ատեանի անդամները, զայրացան և կամենում էին սպանել Սուրբ Առաքեալներուն, բայց Փարիսեցինեցից մէկը՝ Գամաղիէլ անուանով, օրէնսուսոյց և պատուելի բոլոր ժողովրդեան մէջ, հրամայեց Առաքեալներին փոքր ժամանակով դուրս գնալ և ասաց ժողովին. «Ո՛վ Իսրայէլացիք, մտածեցէք նորա վերայ, թէ ի՞նչ պէտք է անէք այս մարդոց։ Զեզ յայտնի է, որ մի քանի ժամանակ առաջ մէկ Թեւդաս անունով մարդ երևեցաւ, որնոր թէպէտ իր անձնը մեծ մարդ էր քարոզում և մօտ չորս հարիւր հոգի կողմնակից գտաւ իրեն, բայց երբ ինքը սպանվեցաւ, բոլոր կողմնակիցներն էլ ցրուեցան և ամէն բան վերջացաւ։ Յետոյ յայտնվեցաւ Յուդա Գալիլացին, սա էլ շատ մարդիկ իր կողմը քաշեց, միայն սա էլ վախճանեցաւ ու բոլոր հետևողները նորա ցրուեցան։ Ուրեմն արձակեցէք այս մարդոց, թողէք զրանց հանգիստ։ Եթէ նոցա վարդապետութիւնն երկրաւոր է, ինքն իրեն կըքակվի. իսկ եթէ Աստուծմէ է, դուք չէք կարող նրան քակտել և գուցէ աստուածամարտ էլ դառնաք»։

Քարձրագոյն ատեանը հաւանեցաւ Գամաղիէլի առաջարկութեանը. բայց դեռ էլի չէին յանձնառու լինում արձակել Առաքեալներուն և առանց պատժի թողնել նրանց։ Այսպէս կանչեցին նրանց, ծեծեցին, արգելեցին խօսել Յիսուսի վերայ ու արձակեցին։ Առաքեալներն ուրախացան, որ արժանացան Տէրոջ Յիսուսի անուան համար նեղութիւն կրելու և շնայելով նոցա սպառնալիքներին տաճարներում և տներում չէին դադարում քարոզելու Յիսուսի Քրիստոսի վերայ։

ԳԼՈՒԽ ՃԳ.

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՑՆ

Գործ. զ. եւ. է.

Առաքեալների ընտրած եօթն Սարկաւագներն էին, Ստեփանոս, Փիլիպպոս, Պրոքորն, Նիքանորը, Timովնա, Պարմենա և Նիկողայոս՝ Անտիոքիայից եկածը։ Ստեփանոսն էր հաւատով և սուրբ հոգւով լի՝ քը մարդ. նա գործում էր մեծ նշաններ և հրաշքներ Յիսուսի Քրիստոսի անունով։ Օրէնսուսցներից շատերը վիճում էին նորա հետ, միայն ոչ ոք չէր կարողանում հակառակ կալ նորա իմաստութեան և Հոգւոյն, որնոր Ստեփանոսի շրթունքներով խօսում էր։ Օրէնսուսցներն ամաչած և զայրացած հրապուրեցին մի քանի սուտ վկաներու, որ ըսպարտեն Ստեփանոսին թէ նա հայհոյանքներ է խօսում Մովսէսի և Աստուծոյ վերայ էլ։ Այս միջոցով խառնվեցին ժողովրդին, որնոր բռնեց Ստեփանոսին և տարու առեանի առաջ։ Սուտ վկաներն իրենց ամբաստանութիւնը հաստատեցին աւելցնելով, թէ իրենք լսել են ինչպէս նա ասում էր, որ Նազովրեցի Յիսուսը այս տեղը կ՝քանդէ և Մովսէսի օրէնքները կ՝փոխէ։ Առեանի մէջ նստողներն ամենքը դարձրին իրենց հայեցուածքը Ստեփանոսի վերայ ու տեսան նորա երեսը հրեշտակի երեսի նման։

Այն ժամանակ քահանայապետը հարցրեց նրան։ «Ճշմարիտ է այն, ինչ որ սոքա քեզ վրայ ասում են։ Ո՞վ եղբարք և հարք, ականջ դրէք ինձ», ասաց Ստեփանոսը։ Համառօտաբար նա պատմեց հին ուխտի ամեն սրբազան անցքերն և այսպէս ապացուցեց, որ պաշտում է Աստծուն, յարգում է նորա մարգարէին՝ Մովսէսին, Աստուծոյ տաճարն և նորա օրէնքը. բայց մի և նոյն ժամանակ ապացուցանում էր, որ Իսրայէլացիներն

Աստծուն չեն սիրում սրտով։ Նա այս խօսքերով վերջացրեց խօսելը, թէ «ազգ խստապարանոց և սրտով անթլփատ, դուք միշտ հակառակէք Սուրբ Հոգուոյն։ Ինչ ձեր հայրերն էին անում, մի և նոյնը դուք էք գործում։ Մարգարէներից որը չհալածվեցաւ ձեզնից։ Ձեր հայրերը սպանեցին այն Արդարի գալուստը գուշակողներուն, որի դուք մատնիչն եղաք և սպանողը։ Դուք ստացաք օրէնքը հրեշտակների ձեռքով, միայն չկատարեցիք նրանց»։

Երբ այս լսեցին, բոլոր դատաւորները չարութիւնից կըրճտում էին ատամները։ Բայց Ստեփաննոսը Սուրբ Հոգուով լցված նայեցաւ երկինք և տեսաւ Աստուծոյ փառքն և Յիսուս Քրիստոսին, կանգնած Հօր աջ կողմումը։ Նա աղաղակեց, «ահա տեսնում ենք երկինքը բացված և մարդու Որդուն կանգնած Աստուծոյ աջ կողմումը»։ Բայց ամեն ներկայ գտնվողները բարձր ձայնով գոռացին, խցեցին ականջները և կատաղութեամբ ընկան Ստեփաննոսի վերայ։ Նրան տարան քաղաքից դուրս, հանեցին նորա շորերը, դրին մի երիտասարդի ոտի տակ, որի անունը Սաւուղ էր և սկսան քարկոծել։ Իսկ Ստեփաննոսն այս սարսափելի չարչարանքի ժամանակ աղօթք էր անում ասելով. «Տէր Յիսուս, ընդունիր իմ հոգիս»։ Յետոյ ծունր լիջնելով բարձրաձայն աղաղակեց. «Տէր, այս դոցա մեղք մի՛ հաշուիր»։ Այս էին նորա վերջին խօսքերն, որոնք արտասանեց և վախճանեցաւ։

ԳԼՈՒԽ ՃԳ.

ԵԹՈՎՊԱՑԻ ՆԵՐՔԻՆԻՆ ՄԿՐՏՈՒԹԻՆԸ

Գործ. Ը.

Ստեփաննոսի մահից յետո Քրիստոսի աշակերտների դէմ մեծ հալածումն ծագեցաւ։ Բացի առաքեալներից, որոնք մնա-

ցին Երուսաղէմում, ամենքը ցրուեցան Հրէաստանի և Սամարիայի քաղաքներում և գիւղերում։ Սաւղոսն էր Քրիստոնեաներուն հալածողներից ամենախիստը։ Նա մտնում էր տներն, ուր բնակում էին Յիսուսի հետևողները, դուրս էր քերում մարդոց և կանանց ու բանտը գցում։ Զանազան կողմեր ցրուելիս Քրիստոսի աշակերտները ճանապարհին աւետարանում էին ամենտեղ Աստուծոյ բանն. այսպէս նոյն իսկ հալածանաց օգնական եղաւ Քրիստոսի հաւատի տարածվելուն։

Եօթն սարկաւագներից մէկը՝ Փիլիպպոս եկաւ սամարիա, ուր քարոզում էր Յիսուսի Քրիստոսի Աւետարանն և բժշկում էր նորա անունով զանազան ախտեր։ Այս քաղաքի բնակիչները յաղգութեամբ և երկիրղածութեամբ լսում էին փրկարար վարդապետութիւնը, տեսնում էին հրաշքներն, որոնք Փիլիպպոս գործում էր, ու հաւատում էին Յիսուս Քրիստոսին։ Բոլոր քաղաքը ուրախութեամբ լցվեցաւ։

Երբ Առաքեալները լսեցին Սամարացւոց դառնալը, ղրկեցին Պետրոսին և Յովհաննէսին այս նոր մկրտված Քրիստոնեաների մօտ, որ նրանց էլ հաղորդեն Սուրբ Հոգւոյ շնորհքը։ Առաքեալներն, երբ հասան այն տեղ, իրենց ձեռքը հաւատացեալների վերայ դնելով աղօթում էին և նոքա ստանում էին Սուրբ Հոգւոյ շնորհքը։

Փիլիպպոսի վարդապետութիւնը հաստատելից և ժողովրդին Աստուծոյ բանը սովորցնելից յետո Առաքեալները դարձան Երուսաղէմ ճանապարհին Աւետարանը քարոզելով։

Սրանից յետոյ Աստուծոյ հրեշտակն երևեցաւ. Փիլիպպոսին և ասաց. «վեր կաց և գնա Երուսաղէմից դէպ՝ ի հարաւ Գազայի ճանապարհով»։ Փիլիպպոսը շուտով կատարեց հրեշտակի հրամանը։ Ճանապարհին նա տեսաւ մի հոյակապ կառք, որի մէջ նստած էր մի երևելի Եթովպացի։ Սա էր Եթովպիոյ Կանդակ թագուհու գանձապետն և գնում էր Երուսաղէմ տա-

ճարում երկրպագութիւն տալու։ Ցեռ դառնալիս նա իր կառքի մէջ կարդում էր Եսայի Մարգարէի գրութիւնները։ Սուրբ Հոգին ասդեց Փիլիպպոսին մօտենալ կառքին։ Երբ նա լսեց, որ մեծատունը կարդում է Եսայի Մարգարէութիւնը, քաղցրութեամբ հարցրեց. «Ինչ որ կարդում ես, հասկանո՞ւմ ես, թէ ոչ»։—«Ի՞նչպէս կարող եմ ես հասկանալ առանց ուրիշի առաջնորդութեան», պատասխանեց նա և խնդրեց Փիլիպպոսին, որ նստէ իր մօտ կառքում, Մարգարէի խօսքը, որոնք նա կարդում էր այն ժամանակ էին յեռագաներ. «Ինչպէս ոչխար ապանվելու վարվեցաւ. ինչպէս որոջը անմռունչ իր կտրչի առջեւը կանգնած է, այնպէս իր բերանը չէ բաց անում։ Խոնարհութեանը պատճառաւ նորա դատաստանը վերջացաւ և նորա ազգատոհմը ո՞վ կ՚պատմէ, որովհետև ջնջվում է երկրից երեսից նորա կեանքը։ *)

«Խնդրում եմ քեզ», ասաց Եթովպացին Փիլիպպոսին, «մեկնիր ինձ, ո՞ւմ վրայ է գրում այս Մարգարէն, իւր, թէ մի ուրիշի՞ վերայ»։ Այն ժամանակ Փիլիպպոսը սկսաւ մեկնել նրան Եսայիի մարգարէութիւնն և աւետարանել մեր Փրկչի Յիսուսի Քրիստոսի վերայ։ Եթովպացին լսում էր մեծ ուշադրութեամբ։ Այս միջոցումը մօտեցան մի գետի։ «Ահա՛ ջուր», ասաց մեծատունն, ի՞նչ արգելք կայ իմ մկրտվելուս»։—«Եթէ դու հաւատում ես բոլոր սրտով, կարող ես մկրտվել», պատասխանեց Փիլիպպոս։—«Հաւատում եմ, որ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է», աղաղակեց Եթովպացին։ Նա հրամայեց կառքը կանգնացնել, իջաւ ջրի մէջ և Փիլիպպոսը մկրտեց նրան։

Երբ Եթովպացին մկրտվեցաւ, Աստուծոյ Հոգին իջաւ նորա վերայ. իսկ հրեշտակը յափշտակեց Փիլիպպոսին նոր մըկըրտվածի աչքից, որոնք այս հրաշքից աւելի պարզ տեսաւ

*) Եսայ. ծգ. 7. 8.

Աստուծոյ բարութիւնն և ուրախութեամբ շարունակեց իր ճանապարհը։

Փիլիպպոսին տարաւ հրեշտակն Ազովտոս քաղաք, որտեղից նա գնաց Կեսարիա, ճանապարհին Աստուծոյ բանը աւետարանելով։

ԳԼՈՒԽ ՃԵ.

ՍԱՒՂՈՍԻ ԴԱՐՁԸ։

Գործ. Թ.

Փարիսեցիների աշակերտ Սաւղոսը, որնոր սրտով զայրացած ու հակառակ էր քրիստոնեաներին և աշխատում էր նրանց ջնջել, հալածում էր Քրիստոսի եկեղեցին, որնոր Երուսաղէմումն էր. բայց սրանով չբաւականանալով, գնաց քահանայապետի մօտ և խնդրեց նրանից հրաման, որ երթայ Դամասկոս, այն տեղ էլ հալածէ քրիստոնեաներին ու ամենուն՝ մարդոց և կանանց շղթաներով կապած ղրկէ Երուսաղէմ։

Սաւղոս մօտենում էր արդէն Դամասկոսին և ահա յանկարծ լոյս երկնքից փայլատակեցաւ նորա չորս կողմում։ Այս լոյսից կուրացած Սաւղոս ընկաւ գետնի երեսին ու լսեց ձայն, որնոր կանչում էր նրան, «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում Ինձ»։—«Ո՞վ ես դու, Տէր», հարցրեց Սաւղոս։—«Ես այն Յիսուսն եմ, Որին դու հալածում ես». պատասխանեց ձայնը։ Սաւղոս, զարմացած և ահից դողալով, հարցրեց. «Տէր, ի՞նչ կ՚հրամայես ինձ անել»։—«Վեր կաց», ասաց ձայնը, «դնա՛ քաղաքը այն տեղ դու կ՚իմանաս, ինչ պէտք է անես»։

Արդիւկն, որոնք Սաւղոսի հետ էին, կանգնած էին անշըշունջ. նոքա ամենքը լսում էին ձայնը, միայն ոչ ոքին չէին տեսնում Սաւղոսը վեր կացաւ գետնից. բայց արդէն ոչինչ չէր

տեսնում. նա կուրացաւ ու նրան այնպէս կոյր տարան Դամասկոս։ Այս տեղ նա երեք օր մնաց առանց ուտելու և խմելու։

Այս ժամանակ Դամասկոսումն էր Քրիստոսի աշակերտներից մէկն, Անանիա անունով։ Տէրն ասաց նրան տեսիլքում. «վեր կաց և գնա այն փողոցը, որնոր կոչվում է ուղիղ. այն տեղ Յուդայի տանը հարցրու Տարսոնացի Սաւղոսին։ Նա աղօթում է և տեսաւ տեսիլքումը Անանիային, որնոր գալով նորա մօտ ձեռք դրեց վրան, որ նորա աչքերին լոյս տայ։—Անանիան պատասխանեց. «Տէր, ես շատերից լսեցի այդ մարդու վերայ, թէ որչափ չարիք է հասցրել նա Քո սրբերիդ Երուսաղէմի մէջ և այստեղ էլ եկել է քահանայապետի հրամանով, որ ամենուն, ով Քո անունիդ հաւատում է, շղթայով կապէ»։—«Գնա նորա մօտ», ասաց Տէրը, «նա Իմ ընտրութեան անօթս է, նա կ՚վկայէ Իմ անուանս հեթանոսների թագաւորների և Իսրայելացիների առաջին։ Ես ցոյց կ՚տամ նրան, որչափ նա պէտք է չարչարվի Իմ անուանս համար»։

Անանիան գնաց Սաւղոսի մօտ և ձեռքը նորա վերայ դնելով ասաց. «Սաւուղ եղբայր, Տէր Յիսուսն, որնոր քեզ ճանապարհին երևեցաւ, ղրկեց ինձ քեզ մօտ, որ քո աչքերդ բացվին և լցվես Սուրբ Հոգուով»։ Նոյն րոպէին Սաւղոսի աչքերից ընկաւ մի բան իբրև կեղևանք, նա տեսաւ և մկրտվեցաւ։

Սրանից յետոյ Սաւղոս զօրացրեց իրեն կերակրով և գնաց Քրիստոսի աշակերտների մօտ, որոնք Դամասկոսումն էին ու մնաց նրանց մօտ մի քանի օր։ Նա իսկոյն սկսաւ քարոզել ժողովարաններում, թէ Յիսուս Աստուծոյ Որդին է։ Ամեն նրան լսողները զարմանում էին և ասում, «սա չէր, որ հալածում էր Երուսաղէմում ամենուն, ով որ համարձակվում էր արտասանել այս անունը։ Եւ այս տեղ նորա համար չեկաւ նա, որ Յիսուսի ամեն հետևողներուն, որոնք այս տեղ կան, կապած ղրկէ Երուսաղէմ քահանայապետի մօտ»։

Իսկ Սաւղոս աւելի և աւելի հաստատվում էր հաւատի մէջ և պարզ ապացուցանում էր Դամասկոս բնակող Հրէաներին, որ Յիսուս է նոյն իսկ Մեսիան, որին սպասում էին։ Դամասկոսի Հրէաները չկարողանալով նրան պատասխան տալ, վճռեցին սպանել Սաւղոսին. իսկ որ նա չփախչի քաղաքից, գիշեր և ցերեկ պահպանութիւն էին անում քաղաքի դռների մօտ։ Սաւղոս խնացաւ նոցա այս չար խորհուրդն. ուստի և Քրիստոսի աշակերտներն, որոնք Դամասկոսումն էին, գիշերով քաղաքի պարսից ներքև թողին նրան կողովով։ Դամասկոսից գնաց նա առաջ Արաբիա, իսկ յետոյ դարձաւ Երուսաղէմ, ուր Քրիստոսի աշակերտները վախենում էին նրանից և չէին հաւատում նորա դառնալուն։ Նրանցից մէկը, Բառնաբաս անունով, ընդունեց նրան իր տուն, տարաւ Առաքեալների մօտ և նա պատմեց նրանց ամենն, ինչ պատահել էր իրեն Դամասկոս գնալիս։ Այս ժամանակից սկսած Սաւղոս միշտ նրանց հետ էր Երուսաղէմում և մեծ ջերմեռանդութեամբ քարոզում էր Աւետարանը։ Երբ նա Երուսաղէմումը վտանգի մէջ ընկաւ, քրիստոնեաները տարան նրան Տարսոն։ Յետոյ իր բոլոր կեանքը նուիրեց նա քրիստոնէական հաւատը տարածելու հեթանոսների մէջ և արիութեամբ համբերում էր զանազան զժուարութեանց և չարչարանաց Քրիստոսի անունը փառաւորելու համար։ Նա իր եբրայական Սաւղոս անունը յետոյ փոխեց և ընդունեց նրան հռոմէական Պաւղոս անունը։

ԳԼՈՒԽ ՃԶ.

ԿՈՌՆԵԼԻՈՍ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻ ԴԱՐՁԸ

Գործ. ժ. եւ ժա.

Կեսարիայում բնակում էր մի մարդ Կոռնելիոս անունով և էր հարիւրապետ այն գնդի, որոնք Իտալացի գունդ էր կոչվում։

Այս զինուորականն և նորա բոլոր ընտանիքն էր բարեպաշտ, Աստուծմէ երկիւղած, աղքատներին ողորմած մարդ և շատ յաճախ աղօթք էր անում Աստծուն։ Մի անգամ տեսիլքումը կէսօրից յետոյ երևեցաւ նրան Աստուծոյ հրեշտակն, որնոր գոչեց. «Ով Կոռնելիոս»։ Կոռնելիոսը երբ նրան տեսաւ զարհուրեց։ «Ի՞նչ է, Տէր», պատասխանեց նա։ «Քո աղօթքներդ լսելի եղան և ողորմութիւններդ Աստուած յիշեց», ասաց հրեշտակը, «ղրկի՛ր Յոպպէ մի մարդ և կանչի՛ր քեզ մօտ Սիմոնին, որնոր Պետրոս է անուանվում։ Նա բնակում է ծովի մօտ մի Սիմոն անունով խաղախորդի (տապաղի) տանը։ Պետրոսը կ՚սովորցնէ քեզ, ինչ պէտք է անել, որ փրկվէք, դու և քո բոլոր ընտանիքդ»։ Այս ասելով հրեշտակն անհետացաւ։

Կոռնելիոս շուտ կանչեց իր երկու ծառաներուն և մի բարեպաշտ զինուորի, որնոր իր իշխանութեան տակն էր, պատմեց նրանց, ինչ լսել էր հրեշտակից և նոյն երեկոյին ղրկեց նրանց Յոպպէ։

Միւս օր կէսօրի մօտ Կոռնելիոսի ղրկած երեք մարդիկը մօտենում էին քաղաքին։ Այս ժամանակ Պետրոս Առաքեալը գնաց տանիք որ հանդարտ աղօթք անէ Աստծուն։ Յանկարծ հրաշալի տեսիլք տեսաւ։ Նա տեսաւ, որ երկինքը բացվեցաւ և ներքև իջաւ մի անօթ, որի մէջ կային զանազան կենդանիներ, որոնք անդործածելի էին ուտելու համար։ Մի և նոյն ժամանակ Պետրոս լսեց ձայն երկնքից, որ ասում էր նրան. «Պետրոս, մարթի՛ր և կե՛ր»։ Պետրոսը պատասխանեց. «Տէր, քաւ լեցի՛ր. որովհետև ես երբէք չեմ կերել խառնակ և անասուրբ բան»։ Ձայնն ասաց նրան. «անասուրբ մի համարի՛ր այն, ինչ որ Աստուած արքել է»։ Սրանից յետոյ անօթն էլի բարձրացաւ երկինք։

Այն միջոցին, երբ Պետրոսը մտածում էր, թէ ի՞նչ պէտք է նշանակէ այս տեսիլքն, եկան Կոռնելիոսի երեք մարդիկն և

խաղախորդի դրան մօտ կանգնած հարցնում էին. «այս տեղ է արդեօք Սիմոն Պետրոսը»։ Պետրոսը մտածմունքի մէջ ընկղմած էր, և ահա Աստուծոյ հոգին ասաց նրան. «այս տեղ եկել են երեք մարդիկ, քեզ են ուզում։ Գնա նոցա հետ առանց երկմտելու, որովհետև ես եմ նրանց ղրկել»։ Պետրոսը շուտ իջաւ ներքև եկողների մօտ և ասաց նրանց. «ես եմ նա, ումին դուք փնտռում էք. ի՞նչ էք կամենում»։

Եկողները պատասխանեցին. «Կոռնելիոս հարիւրապետն, որնոր յայտնի է բոլոր Հրէաստանում իր բարեպաշտութեամբ, հրաման ստացաւ Աստուծոյ հրեշտակից քեզ իր տուն կանչելու, որ լսէ քո վարդապետութիւններդ։ Պետրոսն եկողներուն տուն ներս հրաւիրեց, յարգեց նրանց, գիշերը թողեց իր մօտ և միւս օր առաւօտը վաղ նրանց հետ միասին ճանապարհ ընկաւ դէպի Կեսարիա։ Եղբայրներից մի քանիսը Յոպպէից գնացին նմանապէս Պետրոսի հետ։

Իսկ Կոռնելիոս, որնոր սպասում էր Պետրոսին, ժողովեց իր տուն իւր ազգականներուն և բարեկամներուն։ Երբ Պետրոսը մտեցաւ տանը, Կոռնելիոս շուտ նորա առաջ դուրս գնաց և ընկաւ ոտները։ Բայց Պետրոս նրան բարձրացնելով ասաց. «վեր կաց, ես էլ քո պէս մի մարդ եմ», և հետը խօսելով մտաւ տուն։ Այնպիսի մեծ ժողովը տեսնելով Պետրոսը ասաց. «դուք գիտէք, որ Հրէաներն երբէք չեն կարող օտարազգիների ժողովը մտնել կամ նրանց մերձենալ. բայց ինձ Աստուած ինքը սովորցրեց, որ ոչ մի մարդու խառնակ և անուրբ չհամարեմ։ Ահա ես այս պատճառաւ վարվելակերպ եկայ քո հրաւիրելովդ։ Այժմ կամենում եմ իմանալ, ինչո՞ւ համար դու ինձ կանչեցիր»։

Կոռնելիոս պատասխանեց. «չորս օր սրանից առաջ ես պահում էի և աղօթք էի անում կէսօրից յետոյ։ Աղօթքիս ժամանակ երևեցաւ մի պայծառ շորերով մարդ, որնոր ասաց ինձ. «Կոռնելիոս, քո աղօթքդ լսելի եղաւ և ողորմութիւններդ

յիշում է Աստուած։ Զրկիր ցոպպէ մի մարդ և կանչիր Սիմոնին, որնոր Պետրոս է անուանվում. նա բնակում է ծովի ափումը մի Սիմոն անունով խաղախորդի մօտ. նա կ՝սովորցնէ, թէ դու ինչ պէտք է անես։ Ես ղրկեցի քեզ մօտ և բարուք է, որ դու եկար։ Այժմ մենք ամենքս այս տեղ կանգնած ենք Աստուծոյ երեսի առաջին սպասելով, որ դու մեզ յայտնես Նորա կամքը»։

Այն ժամանակ Պետրոս ասաց, «ես յայտնի տեսնում եմ, որ Աստուած ակնառութիւն չունէ, այլ ամեն ազգերից էլ նա, ով որ Նրանից երկիւղած է և արդարութիւն է գործում, ընդունելի է Նրան։

Զեզ յայտնի է ինչ պատահեցաւ Գալիլիայի և բոլոր Հրէաստանի մէջ այն մկրտութիւնից յետոյ, որնոր Յովհաննէս քարոզեց։ Յիսուս Նազովրեցիին օծեց Աստուած Ինքն Իր Սուրբ Հոգով և զօրութեամբ. նա բժշկում էր ամեն ախտեր և ապառում ամենուն դեմ իշխանութիւնից. որովհետև Աստուած Նորա հետ էր. մենք վկայ ենք ամեն բաներին, որոնք նա գործեց Հրէաստանի և Երուսաղէմի մէջ։ Հրէաները սպանեցին Նրան խաչի վերայ բևեռելով. բայց Աստուած յարութիւն տուեց Նրան մեռելներից երրորդ օրում, մենք տեսանք Նրան կենդանի։ Ոչ բոլոր ժողովրդին երևեցաւ յարուցեալ Յիսուսն, այլ մեզ վկաներիս միայն, որոնց Աստուած յառաջագոյն ընտրեց։ Իր յարութիւնից յետոյ ոչ միայն երևում էր նա մեզ. այլ և խօսում և ուտում միասին։ Նա ղրկեց մեզ քարոզելու մարդոց և վկայելու, որ նա է Աստուծմէ նշանակած դատաւորը կենդանիների և մեռածների։ Նրան վկայում են ամեն Մարգարէներն ասելով, թէ ամեն Նրան հաւատացողներն իրենց մեղքերին թողութիւն կ՝ստանան»։

Պետրոսի խօսելու ժամանակ Սուրբ Հոգին իջաւ ամեն լսողների վերայ. սրա էլ ինչպէս Առաքեալները Պենտեկոստէ

օրը, երբ Սուրբ Հոգին իջաւ նոցա վերայ, սկսան խօսել զանազան լեզուներ և Աստծուն փառաւորել։ Պետրոսի հետ եկած Հրէաները զարմացան տեսնելով, որ Աստուած Սուրբ Հոգին հեթանոսների վերայ էլ ղրկեց։ Բայց Պետրոս ասաց. «ո՞վ կարող է արգելել ջրով մկրտել նրանց, որոնք մեզ նման Սուրբ Հոգին ընդունեցին»։ Նա վաղվաղակի մկրտեց նրանց Յիսուսի Քրիստոսի անունով։ Այս նոր քրիստոնեաները խնդրեցին Պետրոսին էլի մի քանի օր իրենց մօտ մնալ։

Առաքեալներն և միւս աշակերտներն, որոնք Երուսաղէմումն էին, լսեցին, որ հեթանոսներն էլ ընդունեցին Աստուծոյ բանն։ Երբ Պետրոս դարձաւ Երուսաղէմ, հաւատացեալ Հրէաներից մի քանիսը յանդիմանում էին նրան, որ այնքան ժամանակ հեթանոսների ժողովուրդը կեցաւ և մինչև նրանց քրիստոնեաների թուի մէջ անդամ ընդունեց։ Բայց Պետրոս պատմեց նրանց Կոռնելիոսի կանչելու պատճառը մանրամասնաբար, յիշեց այն էլ, ինչպէս քարոզութեան ժամանակ ունկնդիրների վերայ իջաւ Հոգին Սուրբ, և ասելցրեց էլի. «այս միջոցում ես յիշեցի մեր Տիրոջ խօսքը, թէ Յովհաննէսը մկրտեց ջրով, իսկ դուք կ՚մկրտվիք Սուրբ Հոգով։ Աստուած տուեց կռապաշտներին էլ նոյն պարգևն, որնոր մեզ հաւատացեալներիս. ի՞նչպէս կարող էի ես Աստուծոյ հակառակ կենալ»։ Սրանից յետոյ նոքա հանգարտեցան և փառաւորում էին Աստծուն, որնոր հեթանոսներին էլ ղրկեց ապաշխարութիւն և բացեց նրանց յաւիտենական կեանքի դուռը։

ԳԼՈՒԽ ՃԷ.

ՀՐԵՇՏԱԿԸ ԱԶԱՏՈՒՄ Է ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԲԱՆՏԻՑ

Գործ. ժբ.

Ոչ միայն Հրէաների ատելանն, այլ և ինքը Հերովդէս Հա-

լածում էր Քրիստոսի Եկեղեցին։ Հերովդէս սրով սպանեց Յովհաննէսի եղբօրը Յակոբին և տեսնելով, որ այս սպանութիւնը հաճոյ է Հրէաներին, հրամայեց բանտը դցել Պետրոսին էլ։ Այդ, որովհետև այդ ժամանակ վրայ էր հասնում պասէքի տօնը, նորա դատապարտութիւնն առ ժամանակ անկատար թողեց։

Քրիստոնեաների բոլոր եկեղեցին անդադար աղօթք էր անում Աստծուն Պետրոսի համար, նորա բանտարգելութեան ժամանակ։ Հասաւ արդէն վերջին գիշերն, որովհետև միւս օր Պետրոսին պէտք է դատապարտէին։ Նա հանգիստ ննջեցաւ, կապած երկու շղթաներով և պատած պահապաններով, որոնց երկուսը նորա մօտ էին բանտի մէջ, իսկ միւսները կանգնած էին դուրսը դրան մօտ և պահպանում էին բանտը։

Յանկարծ Աստուծոյ հրեշտակն երևեցաւ Պետրոսին և խաւար բանտը լուսաւորվեցաւ մեծ լուսով։ Հրեշտակը զարթացրեց Պետրոսին և ասաց. «շուտով վեր կաց»։ Նոյն րոպէում երկաթի շղթաները վեր ընկան նորա ձեռներից։ «Հագիր շորերդ և հողաթափդ». ասաց հրեշտակը։ Պետրոսը կատարեց հրեշտակի հրամանը։ «Այժմ եկ իմ ետևից». ասաց հրեշտակը։ Պետրոսը գնում էր և չգիտէր, ճշմարիտ էր այն, թէ տեսիլք էր միայն։

Նոքա անցան առաջին պահի մօտից, յետոյ երկրորդին էլ, և վերջապէս հասան երկաթի դռներին, որոնք քաղաքն էին մտցնում։ Դռները իրենք բացվեցան և նոքա մտան քաղաք։ Հրեշտակն էլի մի փողոց գնաց Պետրոսի հետ ու անհետացաւ նորա աչքերից։ Այն ժամանակ Պետրոսն աղաղակեց. «այժմ տեսնում եմ, որ Աստուած ղրկեց իր հրեշտակին ազատելու ինձ Հերովդէսի ձեռքից և նրանից, ինչ որ սպասում էր Հրէաների ազգը։

Սա լեքը երախտագիտութեամբ դէպի Աստուած գնաց

այն տուն, ուր սովորաբար հաւաքվում էին Քրիստոսի աշակերտներն։ Այս տեղ գուցէ նա շատերուն, չնայելով, որ գիշերը ուշ էր, նոքա աղօթք էին անում Պետրոսի համար։

Հռոդէ անունով աղախինը լսելով, որ դուռը բաղխում են, գուրս գնաց տեսնելու և ճանաչելով Պետրոսի ձայնն, ուրախութիւնից առանց դուռը բանալու վազեց սենեակ, ուր դտնվում էին աշակերտներն ու աղաղակեց. «Պետրոսը դրան մօտ կանգնած է»։ «Դու սխալվում ես. ասում էին աշակերտները։ Նա աւելի ևս պնդում էր, թէ ինքը ճշմարիտ է ասում։ Ուրեմն անպատճառ այն նորա հրեշտակն է», կրկնեցին նոքա։ Իսկ Պետրոսը չէր դադարում դուռը բաղխել. աշակերտները իրենք գնացին նրան բանալու և Պետրոսին տեսնելով զարմացան։ Պետրոսը նրանց նշան տուեց, որ լռեն, պատմեց ինչպիսի հրաշալի կերպով Տէրը ազատեց նրան, հրամայեց իմաց անել այս Յակոբին և միւս եղբայրներին (այսպէս կոչում էին այն ժամանակ ամեն քրիստոնեաները միմեանց) և գնաց, որ ապահով տեղ գտնէ իր համար։

Երբ օրը լուսացաւ պահապանները Պետրոսին չգտնելով բանտում սարսափեցան։ Նոքա չէին կարողանում հասկանալ, ինչպէս Պետրոսը բանտից դուրս է գնացել. որովհետև չէին տեսել այն, ինչը պատահեցաւ։ Երբ Հերոդէս իմացաւ Պետրոսի փախուստը, զայրացաւ յոյժ և հրամայեց նրան պահպանող զինուորներուն սպանել։

Սրանից յետոյ շուտ Հերոդէսը գնաց Երուսաղէմից Կեսարիա, ուր մի քանի ժամանակ մնաց։ Այս ժամանակ նա շատ անբաւական էր Տիւրոս և Սիդոն քաղաքներից։ Այս երկու քաղաքներն էլ դեսպան ղրկեցին նորա մօտ։ Դեսպանները գնացին Հերոդէսի սիրելի՝ Բղաստոսի մօտ և խնդրեցին նրան, որ յորդորէ թագաւորին նրանց խաղաղութիւն տալու. որովհետև Տիւրոսն և Սիդոնն իրենց ուտելիքը ստանում էին այն

երկրներից, որոնք Հերովդէսի իշխանութեան ենթարկվում էին։ Այն օր, որոր նշանակած էր դեսպաններուն ընդունելու համար, Հերովդէս, իր ճոխ թագաւորական զգեստները հագած, ընդունեց նրանց և առեւանում նստած սկսաւ ճառ ասել։ Ամէն ներկայ գոնվողներն աղաղակում էին. «այս խօսողն Աստուած է և ոչ թէ մարդ»։ Այս մարդելուզութիւն, որոր պէտք է Աստուծոյ հակառակ բան երևէր Հերովդէսին, շատ ընդունելի եղաւ նրան։ Բայց Աստուծոյ հրեշտակը պատժեց սնափառին, որոր չէր կամենում փառք տալ Աստծուն։ Հերովդէս կենդանի որդնալից եղաւ ու շուտ մեռաւ։

ԳԼՈՒԽ ՃԸ.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏԻ ՏԱՐԱԾՎԻԸ

Առաքեալները քարոզում էին Աւետարանն ամէն երկրներուն, որոնք յայտնի էին այն ժամանակ։ Ամէն մէկը նոցանից իր սուրբ կենցաղավարութեամբ, իր գործած հրաշքներով, քաշած չարչարանքներով և վերջապէս իրենց մահով վկայեցին Քրիստոսի վարդապետութեան ճշմարտութեանն։ Երուսաղէմի առաջին Եպիսկոպոսը՝ Սուրբ Յակոբը մնաց Երուսաղէմի մէջ։ Սուրբ Յովհաննէսը քարոզեց փոքր Ասիայում և Եփեսոսում ու հասաւ խորին ծերութեան. Սուրբ Պօղոս, որոր նոյնպէս Առաքեալների թուի մէջ է ընդունած, լի ջերմեռանդութեամբ Աստուծոյ բանը տարածելու համար և կենդանի հաւատով, գրեթէ բոլոր իր կեանքը անց կացրեց ծանր ճանապարհորդութեանց մէջ։ Նա քարոզում էր Աւետարանը, տարածում էր բարեպաշտութիւն և հիմնեց եկեղեցիներ Ասորոց, փոքր Ասիայի, Մակեդոնիայի, Յունաստանի և Իլլիրիայի մէջ և վերջապէս գնաց Հռոմ, ուր եկաւ Պետրոս Առաքեալն էր։ Հռոմից Սուրբ Պետ-

րոսը ղրկեց իր աշակերտին Սուրբ Մարկոսին եկեղեցի հիմնելու Աղեքսանդրիայում։

Հին աւանդութիւնն ասում է, որ Սուրբ Առաքեալն Անդրէաս, առաջին կոչած աշակերտը, ուսուցիչ և նախակոչ անուանված, քարոզեց Աւետարանը Սեւ ծովի մօտ և Սկիւթացւոց երկրում, իսկ Ռուսաց աւանդութիւնն ասում է, թէ նա հասաւ մինչև Դնեպրի բլուրներն ու այն տեղ, ուր այժմ Կիեւ քաղաքն է, կանգնեց խաչը 'ի նշան բարեպաշտութեան, որնոր նորա մարգարէութեամբ պէտք է ժամանակով լուսաւորէր այս երկիրն և այն տեղից պէտք է տարածվէր ընդարձակ երկիրների մէջ։

Առաքեալների աշակերտները հիմնեցին եկեղեցիներ Իտալիայի, Սիցիլիայի, Ափրիկայի, Սպանիայի և Գաղղիայի մէջ։

Աւետարանը քարոզելիս Առաքեալները շատ նեղութիւններ էին քաշում Նոքա միշտ ճանապարհորդութեան մէջ էին, կերակրվում էին կամ իրենց ձեռքի աշխատանքով կամ հաւատացեալների ողորմութեամբ։ Ամեն կերպի զրկոզութիւններ, հալածանք, տանջանք էին քաշում մեծ համբերութեամբ։ Հեթանոսներն ատում էին նրանց իբրև Հրէաներու. իսկ Հրէաներն ատում էին այն պատճառաւ, որ նոքա տարածում էին նոր վարդապետութիւն. նրանց զրկում էին և հալածում ամենքը։ Յիսուսի Քրիստոսի մարգարէութիւնը կատարվեցաւ նոցա վերայ, թէ ամենին ատելի կ'լինին Իր անուան համար։ Բայց մի և նոյն ժամանակ Սուրբ Հոգւոյ շնորհքը, որնոր նոցա վերայ իջել էր, զօրացնում էր նրանց ամեն թշուառութեանց մէջ։ Վերջապէս նոքա ամենքը բացի Սուրբ Յովհաննէսից, մարտիրոսական մահով կատարվեցան և արիութեամբ զոհեցին իրենց կեանքը Յիսուսի Քրիստոսի վարդապետութեան և անուան վկայութեան համար։ Սուրբ Պետրոսը խաչվեցաւ Հռոմում, Ներոն կայսեր ժամանակ, որնոր առաջինը Հռոմայեցւոց կայ-

սրբոներից սկսաւ հալածել քրիստոնեաներուն. իսկ սուրբ Պօղոսն իբրև Հռովմայ քաղաքացի գլխատուեցաւ և երկուսն էլ մեռան Հռովմի մէջ մի օրում, ինչպէս ասում է աւանդութիւնը։

Սուրբ Առաքեալների գործքերը, նոցա սխրագործութիւններն և աշխատանքն Աւետարանը տարածելու համար նկարագրեց սուրբ Առաքեալն և աւետարանիչը Ղուկաս, որնոր սուրբ Պաւղոս Առաքեալի ուղեկիցն էր։

Առաջին Աւետարանը գրեց Մատթէոս Առաքեալը. սրանից փոքր ժամանակ յետոյ Սուրբ Պետրոսի աշակերտը՝ սուրբ Մարկոսը գրեց Աւետարան, յետոյ գրեց սուրբ Ղուկասը, որի մէջ շատ անցքեր կան նկարագրած, որոնք առաջին երկու աւետարանիչները չեն յիշել։ Վերջապէս երեսուն երկու տարի Յիսուսի Քրիստոսի համբառնալից յետոյ գրեց Աւետարան սուրբ Յովհաննէս՝ Յիսուսի սիրելի աշակերտը։ Սորա մէջ մանաւանդ նկարագրած է զգալի գծերով Փրկչի աստուածութիւնը։

Ասպէս Յիսուսի Քրիստոսի կեանքն և վարդապետութիւնն ու նորա Եկեղեցւոյ նախկին վիճակը նկարագրած են Նոր ուխտի սուրբ գրքում։ Սորա մասերն են, սուրբ Աւետարանները՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի և Յովհաննէսի. Գործք Առաքելոց, եօթն ընդհանրական կաթողիկեայ թուղթ, որոնց երեքը գրեց Յովհաննէս, երկուսը Պետրոս, մէկը Յակոբոս, մէկը Յուդա և Պաւղոսի 14 թղթերը։ Բացի սրանցից Նոր Կտակարանի մէջ կայ մի մարգարէութեան գիրք՝ Յայտնութիւն անուանված, ուր սուրբ Յովհաննէս աստուածաբանը նկարում է եկեղեցւոյ ապագայ վիճակը։

ԳԼՈՒԽ ՃԹ.

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԱՒԵՐՈՒՄՆ

Այն ինչ Յիսուս Քրիստոսի փրկարար Արքայութիւնը հաս-

տատանում էր և տարածվում էր երկրիս վերայ ամեն ազգերի մէջ, Հրէաների թագաւորութիւնն, որնոր Աստուած թողել էր, քանդվելու վրայ էր։ Յիսուսի Քրիստոսի համբառնալից մօտ քառասուն տարի յետոյ Նորա մարգարէութեան համեմատ հեթանոսներն աւերեցին Երուսաղէմը։ Հրէաներն, որոնք իրենց Աստուծոյ ժողովուրդ էին համարում, չէին կամենում հեթանոսների իշխանութեան տակ լինել։ Նոքա ապստամբեցան Հռովմայեցւոց դէմ։ Այս ապստամբութեան համար նրանցից շատերն կոտորեցին զանազան տեղերում և վերջապէս Վեսպասիան կայսեր որդին Տիտոսը պաշարեց և առաւ Երուսաղէմը։ Պատերազմը շատ սաստիկ էր։ Մի միլլիոն և հարիւր հազար Հրէաներ կորցրին երեսց կեանքն և մնացածները գերի գնացին։ Տաճարը այրվեցաւ չնայելով, որ Տիտոս ցանկանում էր պահպանել այն. նրանից քար քարի վրայ չմնաց։ Երուսաղէմը բոլորովին աւերեցաւ։ Այսպէս Տէրը պատժեց այն քաղաքն, որնոր այնքան մարգարէների արիւն թափեց և վերջապէս խաչեց Իրեն Մեսիային՝ Յիսուսին Քրիստոսին էլ։ Հրէաները դարձան Հռովմայեցւոց գերիներ և յետոյ նոր ապստամբութեանց համար իրենց հայրենիքից աքսորվելով ցրուեցան երկրիս երեսին ու այս թշուառ վիճակի մէջ են մինչև ցայժմ էլ։ Այն ժամանակից յետոյ նոքա էլ երբէք չկարողացան միանալ և կազմել առանձին անկախ քաղաքական հասարակութիւն։

Այս ազգի վիճակումը յայտնապէս տեսնում ենք Աստուծոյ յաւիտենական խորհուրդների կատարումն մարդկային ազգի փրկութեան մասին։ Այն ազգից ծագեցաւ երկրիս վերայ ճշմարիտ հաւատի լոյսն, երևեցան առաքեալներ և ուրիշ վարժապետներ, որոնք սուրբ Հոգուն ընդունեցին։ Բայց Երուսաղէմի քանդուելից յետոյ ջնջվեցան արարողութիւններն և Իսրայէլացւոց ազգի քաղաքական օրէնքը։ Զոհերը վերջացան, նոյնպէս էլ աստուածութեան միւս ծէսերը մասամբ վերջացան,

մասամբ փոխվեցան քրիստոնէական հաւատի յարմարվելով։ Հրէաների քաղաքական օրէնքը յարմարացրած էր նոցա գրութեան, որոնք ունէին նոքա խոստացեալ երկրումը, ուրեմն քրիստոնեաները պարտական են կատարելու Հին Կտակարանից միայն այն, ինչ վերաբերում է բարոյականութեան, այսինքն այն, ինչ պէտք է կատարվի ամեն ժամանակ և ամեն երկրներում։

ԳԼՈՒԽ ՃԺ.

ՀԱՅԵՑՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱՑ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻՑ ՑԵՏՈՑ

Քրիստոնէական եկեղեցիներից, որոնք հիմնեցին Առաքեալները, Քրիստոսի վարդապետութիւնը փոքր առ փոքր տարածվեցաւ բոլոր երկրիս վերայ։

Հեթանոսները, տեսնելով յառաջադիմութիւնը քրիստոնէական հաւատի, որոնք ջնջում էր նոցա կռապաշտութիւնը, բոլոր զօրութեամբ զինուորվեցան նորա դէմ։ Երեք հարիւր տարի Քրիստոսի եկեղեցին հալածանքի մէջ էր։ Չկայ այնպիսի խիստ տանջանք, որով չարչարած չլինին քրիստոնէաները, որ տիպեն նրանց ուրանալ իրենց հաւատն և երկրպագութիւն տալ կռքերին։ Բայց քրիստոնեաները արիութեամբ համբերում էին ամեն խստագոյն տանջանքներին և իրենց արիւնով կնքեցին հաւատի ճշմարտութիւնը։ Այս քաշած թշուառութիւններից չյուսահատվեցան, որքան աւելի չարչարվում, այնքան աւելի ուրախանում էին, հաւատալով, որ կարճատև չարչարանքից յետոյ ապառում է նրանց երկնքում արդարութեան պսակը։

Այժմ Աւետարանն ամեն յայտնի լեզուներով թարգմանած է. նա քարոզվում է ամեն ազգերին և գրեթէ չկայ երկրիս երեսին տեղ, ուր քրիստոնեաներ չլինեն։ Եւրոպան, ուր բնակում էին առաջ կռապաշտներ, այժմ լեր է քրիստոնեա-

ներով. բոլոր Ասիաում ցրուած կան քրիստոնեաներ։ Քրիստոնէական հաւատը, որնոր քարոզվում է Ամերիկայի ընդարձակ երկիրներում, է միակ մի միութիւնը խնդձ սև գերիների։ Ափրիկայի այրող աւազանների մէջ էլ լսվում է Յիսուսի Քրիստոսի անունը։

Անթիւ են բարիք, որոնք սուրբ հաւատի բարեբար լոյսը ծագեց մեզ մեր այս երկրային կեանքի մէջ էլ։ Նա կակղեց ազգերի կոպիտ բարքերը. նա ազնուացնում է և բարձրացնում մարդուս բնական ընդունակութիւնները, մաքրում է բարոյականութիւնը, կրթում է մարդոց և առաքինութիւններ է ուսուցանում նրանց։ Նա սրբեց հասարակութեանց փոխադարձ կապերը, զարդարեց իշխանների թագը նոր գեղեցիկ լուսով, հպատակների սրտերը հպատակեցրեց նրանց. ամրացրեց ամուսինների կապն և որդոցը միաւորեց ծնողաց հետ սիրոյ և յարգութեան կապով։ Քրիստոնէական հաւատը տարածեց մարդոց մէջ իսկ լուսաւորութիւն։ Նա ստեղծեց նոր գեղեցիկ հոգևոր աշխարհ, ուր մենք երկրիս երեսին էլ կարող էինք կենալ բաղդաւորութեամբ, եթէ պահէինք Աւետարանի ամեն պատուերներն և հետևէինք կատարելապէս Քրիստոսի Փրկչի ուսմանը։ Աւետարանը բացեց մեզ ամենից երևելի և փրկարար ճշմարտութիւններն, ուստի և նա պէտք է հասարակաց գիրք լինի ու առաջինն ամեն Քրիստոնէի տան մէջ։

Ուրեմն, ո՛վ երեխայք, սիրով կապվեցէ՛ք Յիսուսի Քրիստոսի հետ և պահեցէ՛ք ձեր փորձութիւններից, որոնք այս աշխարհումն սպասում են ձեզ։ Նա, մեր Տէրն և Փրկիչը, թո՛ղ լինի ձեր առաջնորդը կեանքի մէջ, միջնորդը վշտերի մէջ, նեցուկը ծերութեան ժամանակ և յոյսը մահուան ժամին։ Նա կ՚ընդունէ ձեզ Իր երկնային արքայութեան մէջ, ուր պատրաստած է նրան սիրողներին յաւիտենական երջանկութիւն։

ԳՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՎԻԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Քրիստոսի հրամբառնալից յետո, երբ առաքեալներն և Փրկչի միւս աշակերտները սկսան քարոզել Նորա փրկարար վարդապետութիւնն աշխարհիս ամեն կողմերումն, նոցանից ոմանք եկան Հայաստան էլ։ Դեռ մեր Փրկչի Յիսուսի Քրիստոսի երկրիս վերայ լինելու ու Հրէից մէջ քարոզելու և հրաշագործելու ժամանակը, մեր Աբգար Թագաւորն, որնոր Միջագետքի Եդեսիա քաղաքում նստում էր, լսելով Նորա հրաշագործութեանց և արած հրաշալի բժշկութեանց համբաւը, հաւատաց Նրան և հրեշտակ ղրկելով Նորա մօտ խնդրեց Նրան, որ գայ իւր մօտ, բժշկէ իրեն այն ծանր հիւանդութիւնից, որով նա տանջվում էր երկար ժամանակ և ապրի իր քաղաքումն հանգիստ. մանաւանդ, որ լսել էր, թէ Հրէաները նեղացնում են Նրան և հալածում։ Բայց Փրկիչն, որ պէտք է մարդկութեան գործքը կատարէր Հրէաստանի մէջ, երանի տուեց նրանց, որոնք առանց տեսնելու կ'հաւատան Իրեն և խոստացաւ Իր համբառնալից յետո ուղարկել Իր աշակերտներից մէկին, որ բժշկէ Աբգարին և քարոզէ աւետարանը Հայոց մէջ։

Երբ Քրիստոս Իր յարութիւնից յետո փառքով համբարձաւ երկինք, Նորա հրամանով Թովմաս Առաքեալը իր եղբօրը Թադէոսին ղրկեց Եդեսիա Աբգարի մօտ, որ Նրան բժշկէ և մկրտէ ու քարոզէ Հայոց մէջ մարդոց փրկութիւնը մեղաց իշխանութիւնից Քրիստոսով։ Թադէոսը գալով Եդեսիա բժշկեց Աբգար Թագաւորին, ձեռքը նորա վերայ դնելով, քարոզեց քրիստոնէական հաւատը, մկրտեց Նրան և բոլոր Եդեսիոյ բնակիչներուն։ Սրանից յետոյ Թադէոսը, Ադդէին ձեռնադրելով եպիսկոպոս այս նոր քրիստոնեայ հաստատութեան համար Եդեսիոյ մէջ, գնաց մեծ Հայաստան, որ այնտեղ Սանատրուկին էլ, որնոր Աբգարի քեռորդին էր և Հայաստանի ու զօրաց

կառավարիչ նշանակած էր նրանցից, քարոզէ Քրիստոսի վարդապետութիւնն ու մկրտէ նրան։ Եւ յիրաւի յաջողեցաւ այս նրան։ Նա կարճ ժամանակուանից մկրտեց Սանատրուկին ու շատ իշխաններու էլ։

Ահա այսպէս կազմվեցաւ Հայաստանի մէջ գրեթէ առաջին մեծ քրիստոնեայ հասարակութիւնը Փրկչի համբառնալից յետոյ, միայն շուտով հանգամանքները փոխվեցան։ Աբգարը մեռաւ 35 տարի Քրիստոսի ծննդից յետ. իսկ նորա որդին և ժառանգը, չար Անանունը, թողնելով քրիստոնէութիւնը, վերականգնեց Եդեսիոյ մէջ կռոց երկրպագութիւնն ու մարտիրոսական մահով սպանեց Ադդէին։ Մի և նոյնը արաւ Սանատրուկ Հայաստանի մէջ նահատակելով Թադէոս առաքեալին Եաւարշան գաւառումն և իւր աղջկանը՝ Սանդխտին քրիստոնէութեան մէջ հաստատ մնալուն համար։

Թադէոսից յետոյ Հայաստանի մէջ քարոզեց աւետարանը Բարդուղիմէոս առաքեալն և հիմնելով եկեղեցիներ նոյնպէս մեռաւ մարտիրոսական մահով Ուրբանոս քաղաքումը։

Այսպէս Հայոց ազգի սրտերի ագարակի վերայ ցցվեցան քրիստոնէական հաւատոյ սերմերն, որոնք ժամանակով տվին առատ պտուղներ։

Այս դրութեան մէջ մնաց Քրիստոսի եկեղեցին Հայաստանումն, շատ ծանր ածելով, մինչև չորրորդ դարը, որի սկզբին Գրիգոր Լուսաւորչի առաքելական քարոզութեամբը մեր բոլոր ազգը մեր թագաւոր՝ Տրդատի հետ միասին ընդունեց Քրիստոսի փրկարար վարդապետութիւնն և կազմեց մի անկախ, սուրբ և առաքելոց քարոզութեան վերայ հիմնած քրիստոնէական եկեղեցի։ Սոյն այս ազատ և ուղղափառ եկեղեցին մեր, որոնք Գրիգոր Լուսաւորիչն Աստուծոյ օգնութեամբ համբերելով անտանելի չարչարանքներին, կազմեց զարդարած մեր այլ սուրբ հայրերից այլ և այլ սրբազան արարողութիւններով

և ծէսերով, որոնց շատերը սեփհական են միայն մեր եկեղեցին, տևում է մինչև ցայսօր անխախտ ջանքով և աշխատանքով եկեղեցականների և մանաւանդ ազգին, որնոր նորա պահպանութեան համար ամեն բան զոհեց, թէ իր քաղաքական անկախութիւնն և թէ իր բոլոր փառքն և հարստութիւնը, նրան միայն ամենաթանկագին և պատուական ժառանգութիւն համարելով. ուստի, ով սիրելի Հայ մանուկներ և օրիորդներ, սիրով կապվեցէք այս ձեր սուրբ, աստուածային և ձեր հայրերի ժառանգութեան հետ, յարգեցէք և սիրեցէք նրան այնպէս, ինչպէս մեր հայրերն են սիրել. որովհետև նա է մեր ամենից հոգևոր մայրը, նա է մեզ կենդանութիւն տուողը սկզբնական մեղաց իշխանութիւնից մկրտութեամբ։ Երբ դուք կ՝սիրէք ձեր եկեղեցին սրտանց, Քրիստոս մեր Փրկիչն էլ, որնոր նորա գլուխն է և հիմնադիրը, կ՝սիրէ ձեզ և արժանի կ՝անէ այն երջանկութեան և երանութեան, որնոր նա խոստացել է Իրեն հաւատացողներին։

Վ. Ե Ր Ջ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ (ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ) ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Գին Է	
		Ռ.	Կ.
1.	Ղուկասեանց դասագիրք ընթերցանութեան	—	40
2.	— Ընդհանուր Պատմութիւն Հատոր ա.	—	80
3.	— Հիմնական Դիզակիսական կանոններ	—	40
4.	Տէր Յակոբեանց՝ ընթերցարան մասն առաջին.	—	25
5.	— — Աղօթատետր	—	7
6.	— — Դասագիրք առաջ լեզուի	—	60
7.	Սիմէոնեանց Մ. դասագիրք թուաբանութեան	—	65
8.	— — Թուաբանական խնդիրներ մասն ա.	—	50
9.	— — — — — բ.	—	50
10.	— Պ. Սրբազան Պատմութիւն Հին Կտակարանի . .	—	60
11.	— — — — Նոր Կտակարանի . .	—	60
12.	— Ն. Ընդհանուր Աշխարհագրութիւն մասն ա. Նախագիտելիք.	—	35
13.	— — — — մասն բ. մասն աստուածաբանութիւն և բնական 31 պատկ.	—	60
14.	— — — — մասն գ. քաղաքական . .	—	60
15.	Բանիմաստեանց՝ քերականութ. աշխ. լեզուի	—	25
16.	Երէցեանց՝ Հայրապետական հրամանագրեր հրատարակեալ .	—	40
17.	— Դասագիրք Հայկական ճայնագրութեան	—	30
18.	— Մանկական երգարան առանց նոտաների	—	20
19.	Մելիքեանեանց՝ Ժողովածու	—	12
20.	Ալքիանց՝ Նոյա և Դամանանոի Ժարգ	—	20
21.	Նազարեանց՝ Զօրութիւնքերնալ Ժառանգ. մանկ.	—	20
22.	Կոնդրատենկոյ գծագրութիւնը (ռուսերէն).	—	40
23.	Շարժական առանց Հայերէն՝ Ամբիոնը	—	5
24.	— — կարգոնի վերայ կոցրած.	—	35
25.	Տարազանց.	—	5
26.	Մանդինեանց՝ Ազգ. բնտան. աշխ.	—	25
27.	— — Գիւղազ. աշխ.	—	30
28.	— Ճանապարհական աշխարհ.	—	65
29.	— Բացատրութիւն ազգ. բնտ. աշխարհ.	—	75
30.	Ազայեանց՝ Ա. սաուն Մայրենի Լեզուի	—	15
31.	— Մտոցաց Համար.	—	20
32.	Տեքնեցի Նշխարք Ե. դարու	1	—
33.	Տարրական Ֆիզիկա	—	60